«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ»
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА
ЗЕМЛЯЧЕСКИЙ СОЮЗ «ВАСПУРАКАН»

**АРУТЮН ТУРШЯН**

# СЛОВАРЬ
## ВАНСКОГО ДИАЛЕКТА

**Редакция и подготовка к печати – АЙКАНУШ МЕСРОПЯН**

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE
«VASPURAKAN» COMPATRIOTS' UNION

**HARUTYUN TURSHYAN**

# DICTIONARY
## OF VAN DIALECT

**Compiled and edited by Dr. HAYKANUSH MESROPYAN**

ЕРЕВАН – YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
«GITUTYUN» PUBLISHING HOUSE OF NAS RA
2017

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՇՅԱՆ

# ԲԱՌԱՐԱՆ
## ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ

Աշխատասիրությամբ
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ
ԳՄԴ

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

**Աշխատանքը հրատարակության են երաշխավորել**
բանասիրական գիտությունների թեկնածու
Արտակ Վարդանի Վարդանյանը
բանասիրական գիտությունների թեկնածու
Ժաննա Անդրանիկի Միքայելյանը

? ??? Հարություն Թուրշյան, Բառարան Վանի բարբառի / աշխատասիրությամբ Հայկանուշ Մեսրոպյանի: ՀՀ ԳԱԱ հնագիտ. և ազգագր. ինստ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, «Վասպուրական» հայրենակցական միություն. – Եր.: «Գիտություն» հրատ., 2017. – 268 էջ:

Վանի բարբառային բառապաշարն ընդգրկող այս բառարանն առաջին տպագիր բառարանն է: Տարբեր ժամանակներում տարբեր վանեցիներ կազմել են մայրենի բարբառի բառարաններ, սակայն տպագրել չեն հաջողել: Բարբառակիր վանեցու կազմած այս բառարանը, որը պարունակում է մոտավորապես 6800 բառահոդված, արժեքավոր աղբյուր է կորսված հայրենիքի և այդ տարածքում գործառող լեզվի մասին գաղափար կազմելու համար: Այն օգտակար կարող է լինել բանասեր-մասնագետներին, ազգագրագետներին՝ բարբառագիտական և բանագիտական ուսումնասիրություններ կատարելու, ինչպես նաև ուսուցիչների, Վանով ու Վանի բարբառով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ
ԳՄԴ

*Կազմի դարձերեսին.* Թուրշյանների ընտանիքը: Վան, 1908 թ.:

**ISBN 978-?-????-**

© «Վասպուրական» հայրենակցական միություն, 2017
© Գենյա և Իրինա Թուրշյաններ, 2017
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2017



Հարություն Թուրշյան
(1900 – 1978)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Հայկանուշ Մեսրոպյան*
Երկու խոսք VII

Համառոտագրություններ XIII

*Հարություն Թուրշյան*
Առաջաբան XIV

*Հարություն Թուրշյան*
Բառարան Վանի բարբառի 1

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Ժողովրդական բարբառներից օգտվելը ոչ թե դատապարտելի է, այլ հենց դա է բնական ճանապարհը կայտառ ու կենդանի լեզու ստեղծելու»:

Հովհ. Թումանյան

Հայերենի բարբառները մեր մայրենի լեզվի անկապտելի մասն են և նրա հարստությունը: Բարբառների ուսումնասիրությունը հայերենագիտության կարևորագույն ոլորտներից է: Այն խիստ անհրաժեշտ է բանասիրության, հայոց պատմության, ազգագրության, միջնադարյան ձեռագրերի տեքստաբանական վերլուծության տեսակետից: Հայերենի գիտական ուսումնասիրության համար կարևորելով բարբառների մեջ առկա լեզվական իրողությունները՝ իրանագետ Ռ. Աբրահամյանը շուրջ մեկ դար առաջ գրում է. «Ամեն մի ինտելիգենտ անձնաւորութիւն կարիք կը զգայ գաղափար կազմելու իր մայրենի լեզուի ամբողջութեան մասին. այդ գաղափարը կարելի է կազմել միայն բարբառաբանութեան տուեալներից»:[1]

Քերովբէ Պատկանյանը 1869 թ. «Ուսումնասիրութիւն հայոց լեզուի բարբառների մասին» աշխատության մեջ գանգատվում է, թե բարբառները անհետանում են՝ տեղի տալով Աստրախան-Երևանյան բարբառին, որ գրաբարի բառարաններում տեղ չգտած «հայ բարբառների բառամթերքը նույնպես խիստ արագ նվազում է և սպառնում է անհետ կորչել մոտավոր ապագայում»:[2]

Վերը բերված նկատառումները եզակի չեն, և առհասարակ հայերենի բարբառների գիտական ուսումնասիրության կարևորության մասին տարբեր ժամանակներում եղել են մտահոգված հիշեցումներ, որովհետև գրական լեզվի բուռն զարգացման և առաջընթացի պայմաններում հակադարձաբար թուլանում են բարբառների հետագա գոյատևման հիմքերը, վտանգ է առաջանում դրանց վերանալու և անհետացման:

Այդ մտահոգությամբ էլ հարկ համարեցինք հրատարակության պատրաստել պատմաբան Հարություն Թուրշյանի Վանի բարբառի սույն բառարանը: Նախ համառոտ ներկայացնենք հեղինակին:

---

1 *Ռուբէն Աբրահամեան*, Ի՞նչ կերպ հնարաւոր է հայերէնի գիտական ուսումնասիրութիւնը. – «Արարատ», 1912, ապրիլ, էջ 364-377:

2 К. Патканов, Исследование о диалектах армянского языка: филологичесский опыт, СПБ, 1869, с. 22.

Հարություն Գևորգի Թուրշյանը ծնվել է 1900 թ. սեպտեմբերի 29–ին Վանում:[3] 1915 թ. ինքնապաշտպանության օրերին նա եղել է կապավոր՝ Այգեստանի դիրքերից լուրեր տանելով շտաբ և հակառակը: Թուրշյանների ընտանիքը 1915 թ. հուլիսին գաղթում է Արևելյան Հայաստան՝ Էջմիածին, ապա Թիֆլիս: Այստեղ նա ուսումը շարունակում է Ներսիսյան դպրոցում: 1918 թ., լինելով ավարտական դասարանի աշակերտ, պատանի Հարությունն ընդունվում է սպայական դպրոց, ապա մեկնում է ռազմաճակատ՝ պաշտպանելու Հայրենիքը: Նա զինվորական ծառայությունն իրականացնում է Արարատի հարավային և հարավարևմտյան լանջերին: Այստեղ նա վիրավորվում է ոտքից ու տեղափոխվում է Երևան, աշխատում է շտաբում՝ որպես գրագիր: 1920 թ. Հ. Թուրշյանը գերազանց գնահատականներով ավարտում է Ներսիսյան դպրոցը: 1921 թ. մայիսին (մինչև դեկտեմբեր) Թուրշյանն աշխատանքի է անցնում Հայաստանի արտգործժողկոմատի ինֆորմացիոն բաժնում (վարիչի տեղակալ),[4] միաժամանակ աշխատում է հատկապես արևմտահայերի համար լույս տեսնող «Կարմիր օրեր» թերթում՝ որպես պատասխանատու քարտուղար, ապա և՝ խմբագիր: Կարսի պայմանագրի կնքումից հետո դուրս է գալիս Հայկոմկուսի շարքերից, ապա հեռանում է Երևանից և երկու-երեք տարի հայոց լեզու է դասավանդում Սև ծովի ափերին ծվարած համշենահայկական գյուղերում: Թիֆլիս վերադառնալուց հետո կոմկուսի Անդրերկրկոմի քարտուղար Ալ. Մյասնիկյանից առաջարկ է ստանում աշխատանքի անցնել նոր հիմնադրված Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի ուսումնասիրության նոր հիմնադրված գիտական ասոցիացիայում, շարադրել քեմալական շարժման պատմությունը: Մինչ Հարությունը մտմտում էր առաջարկի մասին, զոհվում է Ալ. Մյասնիկյանը: Թուրշյանը մեկնում է Բաքու և ուսումը շարունակում Ադրբեջանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում՝ միաժամանակ հայոց լեզու և գրականություն դասավանդելով Հովի. Թումանյանի անվան հայկական միջնակարգ դպրոցում: Այստեղ նրան աշակերտել են ապագա գրող Գարեգին Սևունցը, հետագայում ԽՍՀՄ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դերենիկ Ալավերդյանը, Հայկ. ՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիկոս Արտաշես Առաքելյանը, Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Սուրեն Մովսիսյանը, ասմունքող Թամարա Դեմուրյանը և այլք: 1931-1954 թթ. Հ. Թուրշյանն աշխատում է Երևանում՝ «Խորհրդային/Սովետական Հայաստան» օրաթերթում, որպես ոճաբան և թարգմանիչ:

[3] Կենսագրական տվյալներն ի մի են բերված Հարություն Մարությանի կողմից Հարություն Թուրշյանի «Հետսելջուկյան դարաշրջանի իրադարձությունները և «Սասունցի Դավիթ» էպոսը» (Երևան, 2013) աշխատության առաջաբանում:

[4] Տե՛ս նաև *Համո Սուքիասյան*, ՀՍԽՀ արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի գործունեությունը (1921-1922 թթ.). – Հայոց պատմության հարցեր. գիտական հոդվածների ժողովածու, թիվ 11, Երևան, 2010, էջ 299:

1940-60-ական թվականներին Հարություն Թուրշյանը ձեռնարկում է ռուս դասական մի քանի հեղինակների երկերի թարգմանությունը: Նրա հեղինակությամբ թարգմանաբար լույս են տեսնում Վ. Բելինսկու «Ընտիր երկերը» (1948 թ., 480 էջ), Ա. Գերցենի «Եղելություններ և խոհերը» (մասն Ա, 1952, 630 էջ, մաս Բ, 1953, 390 էջ, մեկ հատորով՝ 1954, 710 էջ), Մ. Գորկու «Գրականագիտական և հրապարակախոսական հոդվածները» (1950 թ., 478 էջ), այլ աշխատանքներ:[5] Հ. Թուրշյանի թարգմանչական արվեստը բարձր է գնահատել Ավետիք Իսահակյանը: 1954 թ. սեպտեմբերին Թուրշյանին ուղղված նամակում նա գրում է. «Սիրելի Հարություն: Այս քանի օր է, մեր տանը լարված կարդում ենք մեծատաղանդ Ա. Գերցենի՝ քո թարգմանած «Եղելություններ և խոհեր» անկրկնելի գործը: Գերցենը դժվար է թարգմանել, սակայն դու հաղթահարել ես: Կենդանի շունչ կա թարգմանությանդ մեջ, հարուստ և արտահայտիչ լեզու: Հայ ընթերցող հասարակությունը պիտի սիրե այս գործը: Ցանկանում եմ ավելի հաջողություն և եռանդ: Ջերմագին բարևներով՝ Ավետ. Իսահակյան»:[6]

Հարություն Թուրշյանը երկար տարիներ ջանասիրությամբ զբաղվել է հայ ժողովրդի պատմության ուսումնասիրությամբ:[7] 1947 թ. «Հայ-հաբեշական առնչությունները VII դարից մինչև XX դարը» թեմայով ատենախոսություն է պաշտպանում, ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Պատմագիտական պրպտումների արդյունքներից է 1965 թ. լույս տեսած «Սարդարապատի հերոսամարտը» արժեքավոր աշխատությունը, որն իր ժամանակին ըստ ամենայնի գնահատվում է ընթերցող հասարակայնության և մասնագետների կողմից: 1969 թ. ընդառաջելով ընթերցողների մեծ պահանջարկին, «Հայաստան» հրատարակչությունն իրականացնում է գրքի երկրորդ տպագրությունը՝ այս անգամ արդեն 10.000-ի փոխարեն 30.000 տպաքանակով: Երկու հրատարակություններն էլ սպառվում են սրընթացորեն:[8] Ինչպես նկատում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարդ-

---

[5] Մանրամասն տես *Հայկ Խաչատրյան* (կազմող), Գրական տեղեկատու, էջ 254: Հմմտ. *Հարություն Թուրշյան*, Թարգմանչի խոհեր. – Սովետական գրականություն, 1955, թիվ 11, էջ 128-135:

[6] *Ավետիք Իսահակյան*, Երկերի ժողովածու վեց հատորով, հատոր վեցերորդ, Երևան, 1979, էջ 387: Տե՛ս նաև *Հարություն Թուրշյան*, Վարպետը. – «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1975, թիվ 6, էջ 11:

[7] Տե՛ս, օրինակ. *Հ. Թուրշյան*, XI և XII դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից. – Արևելագիտական ժողովածու, II, Երևան, 1964, էջ 301-317: *Նույնի*, Շահ-ի-Արմեններ. – «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետ՝ ՊԲՀ), 1964, թիվ 4, էջ 117-134: *Նույնի*, Ջրօգտագործման սիստեմը Վասպուրականում. – ՊԲՀ, 1967, թիվ 2-3, էջ 246-253: *Նույնի*, Պահլավունիների վերելքն ու անկումը XI-XIII դարերում. – ՊԲՀ, 1974, թիվ 1, էջ 147-161: *Նույնի*, Սուրհանդակային սպասարկությունը միջնադարյան Արևելքում. – ՊԲՀ, 1978, թիվ 1, էջ 105-114: *Նույնի*, Սարդարապատի թիկունքը (Սարդարապատի հաղթանակի 60-ամյակի առթիվ). – ՊԲՀ, 1978, թիվ 2, էջ 67-73: *Նույնի*, Հետսելջուկյան դարաշրջանի իրադարձությունները և «Սասունցի Դավիթ» էպոսը, Երևան, 2013:

[8] *Վ. Միքայելյան*, Սարդարապատի հերոսամարտի առաջին մեկնաբանը. – «Երկիր», 26 մայիսի 1998 թ.:

գես Միքայելյանը, «Մի կարևոր վերապահում. 1960-ական թվականներին տակավին հնարավոր չէր Սարդարապատի հերոսամարտի մասին (և առհասարակ ազգային թեմաներով) գիրք հրատարակել՝ ոտնահարելով ժամանակի գաղափարական և քաղաքական պահանջները: Անկախ հեղինակի համոզմունքներից՝ նման գրքի լույս աշխարհ գալը հարկադրում էր տուրք տալ այդ պահանջներին: Դա այն ժամանակ նորմ էր, և Թուրշյանը չէր կարող բացառություն կազմել: Հ. Թուրշյանը, հարկավ, չէր կարող 36 տարի առաջ գիրք հրատարակել ժամանակակից դավանանքով: Բայց, բարեբախտաբար, գրքում գլխավորը գաղափարական սայթաքումները չեն, այլ հերոսամարտի այն լայնակտավ և ըստ ամենայնի լուսաբանումը, որի շնորհիվ ցայսօր պահպանվել է մենագրության պատմագիտական կարևորության թարմությունը»:[9] Հ. Թուրշյանը հայ պատմաբանների մեջ թերևս առաջինն էր, որ մատնանշեց հերոսամարտի ժողովրդա-ազատագրական բնույթը: Ինչպես գրքի առաջաբանում նկատում է խմբագիր, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, «Գրքի հեղինակը արձանագրում է այն իրողությունը, որ ըստ էության այդ ճակատամարտը 1918 թվականի թուրք-անդրկովկասյան «պատերազմի» դրվագներից մեկը չէր, այլ ժողովրդա-ազատագրական իսկական պատերազմ, որի շարժիչ ուժը թուրք ջարդարարների դեմ տարերայնորեն ոտքի ելած հայ ժողովուրդն էր»:[10]

Հարություն Թուրշյանը դեռևս 1959 թ. ավարտին է հասցնում «Բառարան Վանի բարբառի» աշխատությունը (ավելի քան 200 էջ ծավալով):[11] Այդ ձեռագիր բառարանը համալրել ենք Վանի բարբառին վերաբերող ձեռագիր նյութերից, որոնք գտնվում են ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում: Գիտական տառադարձման, բազմաթիվ բառերի և բնագրային օրինակների ընտրության հարցում մեզ համար հիմնականում հիմք է ծառայել Վան քաղաքի խոսվածքին նվիրված ձեռագիր աշխատանքը՝ կատարված «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» պահանջներին համապատասխան:[12] Բարբառային միավորը լրացրել է բարբառագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Մառլենա (Մարո) Հայրիկի Մուրադյանը, որի համար բարեբաստիկ կերպով որպես բարբառախոս է հանդես եկել ինքը Հ. Թուրշյանը: Այդ մասին Մ. Մուրադյանը 1977 թ. գրում է. «Վան քաղաքի բառային հատկանիշները լրացնելիս մեզ համար տեղեկատու է եղել Վան քաղաքի նախկին բնակիչ,

---

9 Նույն տեղում:

10 *Աշոտ Հովհաննիսյան*, Առաջաբան. – Հարություն Թուրշյան, Սարդարապատի հերոսամարտը, Երևան, 1969, էջ 6:

11 Տե՛ս նաև *Հայկանուշ Մեսրոպյան*, Վանի բարբառային բառագանձի երախտավոր գրառողները. – Հայաստանի մայրաքաղաքները: Գիրք I. Վան: Երևան, 2013, էջ 293-297:

12 Տե՛ս ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրապահոցի թիվ 7 բարբառային ձեռագիր աշխատանքը:

պատմաբան Հարություն Թուրշյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Ընկեր Թուրշյանը Վանից գաղթել է 1915 թվականին և հիմա պատկառելի ծերունի է: Բառային հատկանիշները լրացնելիս մենք օգտագործել ենք նաև ընկ. Թուրշյանի կազմած Վանի բարբառի բառարանի (ձեռագիր է) տվյալները»:

Պետք է նշել, որ Մ. Մուրադյանի ձեռագիր գրառումները մեզ շատ օգնեցին հատկապես գիտական տառադարձության հարցում, ինչը Հ. Թուրշյանի ձեռագրում արտահայտված չէ: Այս առիթով հարկ ենք համարում նշել, որ բարբառային տառադարձումը վստահելի է և արտահայտում է Վանի բարբառի հնչյունական իրողությունները:[13] Մարո Մուրադյանը, քաջատեղյակ լինելով Վասպուրականի տարածքի բարբառների և խոսվածքների հնչյունափոխական համակարգային օրինաչափություններին, անկասկած ճշգրտորեն է գրառել բարբառակիր Հ. Թուրշյանից լսած բարբառային նյութը: Բարբառագիտական ատլասի ծրագրին համապատասխան լրացված ձեռագիր աշխատանքում կան Հ. Թուրշյանի կողմից կազմված բազմաթիվ բարբառային նախադասություններ, որոնք ընդգրկել ենք սույն բառարանում՝ համապատասխան համառոտագրումով՝ Վն.:

Բառարանը համալրել ենք Վասպուրականի տարածքային տարբերակներին վերաբերող՝ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում առկա այլ ձեռագիր նյութերից ևս: Վան քաղաքի խոսվածքից բացի, ներառել ենք օրինակներ Վանին մերձակա գյուղերի խոսվածքներից՝ Լիմ (Արճակ),[14] Հուռթուկ (Խոշաբ),[15] Բոլորմարգ (Արճեշ),[16] Կոճերեր (Արծկե)՝[17] համապատասխան համառոտագրությամբ:

*Վանի բարբառի ընդհանուր բնութագիրը.* Բառարանը հրատարակության պատրաստելիս առաջնորդվել ենք նաև Հր. Աճառյանի «Քննություն Վանի բարբառի» աշխատությամբ:

«Վանի բարբառի քննությունը ձեռնարկել եմ Էջմիածնում 1898-1902 թվերին երբ Գևորգյան ճեմարանում տաճկերեն լեզվի ուսուցիչ էի: Ինձ աջակցում էին բարձր լսարանների տասնյակ ուսանողներս, որոնք բոլորը նոր էին գաղթել Վանից և շատ լավ գիտեին իրենց մայրենի բարբառը: ...Լինելով վանեցի՝ Մելիքսեթ Տեր-Ղազարյանը մասնագիտորեն տեղյակ է Վանի բարբառին, որի ընդարձակ և մասնագիտական բառարանն է կազմում»:[18]

---

13 Բարբառային գիտական տառադարձման մասին տե՛ս Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1977, էջ 19-24:

14 Տե՛ս ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրապահոցի թիվ 330 բարբառային ձեռագիր աշխատանքը:

15 Տե՛ս նույն տեղում, թիվ 333 աշխատանքը:

16 Տե՛ս նույն տեղում, թիվ 348 աշխատանքը:

17 Տե՛ս նույն տեղում, թիվ 379 աշխատանքը:

18 *Հ. Աճառյան*, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1953, էջ 5-6:

Վանի բարբառը պատկանում է արևմտյան խմբակցության բարբառների *կը* ճյուղին: Արևմուտքից այն սահմանակից է Մշո և Բաղեշի բարբառին, արևելքից՝ Ուրմիայի, Խոյի և Սալմաստի բարբառներին: Հարավում բնակվում էին քրդախոս և արաբախոս հայեր, որով Վանի բարբառը դառնում էր հայերենի հարավային սահմանապահը: Բարբառի հիմնական հատկանիշներից են. ձայնեղ բաղաձայնները դառնում են խուլեր, նրանց հաջորդող ձայնավորները հիմնականում քմայնանում են: Հ-ն դառնում է *խ*: Բարբառը չունի գրաբարյան հայցականի *զ* նախդիր: Բարբառում առկա են *ե* և *ո* երկբարբառներ, էօ, իւ երկհնչյուններ: Բացառական հոլովը կազմվում է *-ից*-ով:

Սույն բառարանում ընդգրկված են նաև պարսկերենից, արաբերենից և թուրքերենից կատարված բարբառային փոխառություններ: Դրանք հետաքրքիր են միևնույն տարածքում խոսվող լեզուների փոխազդեցության տեսանկյունից: Բառարանում կան նաև արդի գրական և խոսակցական հայերենում գործածվող մի շարք բառեր (*վերջնել, չայ* և այլն), որոնց կից բնագրային օրինակները հետաքրքիր և արժեքավոր են: Բառարանում ներկայացված բնագրային հետաքրքիր օրինակները, առածները և ասացվածքներն առանձնակի արժեք կարող են ներկայացնել ոչ միայն բարբառագետների, այլև ազգագրագետների, հայ ժողովրդի պատմությամբ զբաղվողների, ինչպես նաև Վանով ու վանեցիներով հետաքրքրվողների համար: Ահավասիկ դրանցից մի քանիսը՝

*Վա̈նըցու կաղ Հընդըսպան ի խասե:*
*Էրկու քʲո̈ւրդ մէյ քʲա̈րվան, էրկու կընիկ մէյ դիվան:*
*Քʲա̈րվընջու էթա̈լ-կʲա̈լը չեն խարցուցի, վասպակ կըխարցուցեն:*
*Քʲա̈նի կեր, պապանք չըկեր, վոր մեռավ, քʲումբեթ կապեցին:*
*Ֆըշնէն իկուց խան թա̈լ պո̈ւս, ֆուկարի վոպ՝ պընից:*

Բառարանը տպագրվում է հեղինակի մահից 40 տարի անց: Բառարանը հրատարակության նախապատրաստելու հարցում մեծ նախաձեռնություն ու հետևողականություն են ցուցաբերել ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, «Վասպուրական» հայրենակցական միության հիմնադիրներից Վանում ծնված երջանկահիշատակ Վարազդատ Հարությունյանը (ով հանդես է եկել նաև բարբառակիր խորհրդատուի դերում), Հ. Թուրշյանի քրոջ թոռը՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր, «Վասպուրական» միության փոխնախագահ Հարություն Մարությանը:

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ
*ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող,*
*բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ*

# Համառոտագրություններ

| | |
|---|---|
| ած. | ածական |
| Բմ. | Բոլորմարգ գյուղի բարբառային գրառումների տետրից |
| բ. | բայ |
| գ. | գոյական |
| դ. | դերանուն |
| թ. | թվական |
| ծան. | ծանոթություն |
| ծղր. | ծաղրական |
| կ. | կապ |
| կբ. | կրավորական սեռի բայ |
| Կճ. | Կոճերեր գյուղի բարբառային գրառումների տետրից |
| հզվդ. | հազվադեպ |
| Հթ. | Հութթուկ գյուղի բարբառային գրառումների տետրից |
| հյհ. | հայհոյական |
| հոգն. | հոգնակի |
| ձ. | ձայնարկություն |
| մկ. | մակբայ |
| մնկ. | մանկական |
| նբ. | ներգործական սեռի բայ |
| նխտ. | նախատական |
| շ. | շաղկապ |
| չբ. | չեզոք բեռի բայ |
| վ. | վերաբերական |
| Վն. | Վան քաղաքի բարբառային գրառումների տետրից |

# ԱՌԱՋԱԲԱՆ

Վանի բարբառի բառարան առաջինը կազմել են երեք հմուտ վանեցի՝ Ղևոնդ ծայրագույն վարդապետ Փիրղալեմյանը (1830-1891), Արսեն վարդապետ Թոխմախյանը (1843-1892) և Արիստակես վարդապետ Տևկանցը (1844-1896): Սակայն նրանց կազմած բառարանները, դժբախտաբար, չեն տպագրվել: Հայտնի է միայն, որ Երուսաղեմում վախճանված Ղևոնդ ծայրագույն վարդապետ Փիրղալեմյանի ձեռագրերը Երուսաղեմից ուղարկվել են Թիֆլիս՝ Գյուտ քահանա Աղանյանին, որն սկսել էր լույս ընծայել Դիվան հայոց պատմության արժեքավոր շարքը: Աղանյանի ֆոնդում, որ ներկայումս գտնվում է Գրականության և արվեստի թանգարանի արխիվում, Ղևոնդ Փիրղալեմյանի կազմած բառարանի ձեռագիրը չկա:

Արսեն վարդապետ Թոխմախյանի կազմած բառարանը, ինչպես ասացինք, նույնպես չի տպագրվել: Սակայն հայտնի է, որ նրա թափած ջանքերն օգտագործվել են Սահակ վարդապետ Ամատունու «Հայոց բառ ու բանում»: Ամատունու բառարանի «Յառաջաբանում» (էջ ԺԱ) կարդում ենք. «Բառակոյտ Հայկական լեզուի. ժողովեց Արսէն վարդապետ Թօխմախեան Վանայ կեդրօնական բանդում», ձեռագիր: Բառարանս մեզ ընծայեց մեծապատիւ պ. Խորէն Խրիմեանը, – հանգուցեալ Մկրտիչ կաթուղիկոսի եղբորորդին՝ Տփխիսում, 1909 թուին»: Էջմիածին հասած և օգտագործված այս ձեռագիրը այժմ գտնվում է Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում: Տևկանցի ձեռագրի հետքը չգտանք:

Ղ. ծ. վրդ. Փիրղալեմյանի և Ա. վրդ. Թոխմախյանի գրական գործունեության տարիներին Վանի բարբառի բառարան կազմելու ջանքեր է գործադրել նաև Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձտյանը (1840-1892): Նրա «Համով-հոտով» և «Մանանա» երկերի վերջում զետեղված են Վանի և Մշո բարբառների համառոտ բառարաններ:

Թե՛ Գ. արքեպիսկ. Սրվանձտյանը, թե՛ Ա. վրդ. Թոխմախյանը, ինչպես նաև Փիրղալեմյանը նույն սերնդի գրական գործիչներ են: Նրանք ստեղծագործել են 1860-1890-ական թվականներին, այսինքն՝ այն տասնամյակներին, երբ գրապայքարը վերջանում էր աշխարհաբարի հաղթանակով: Գ. արքեպիսկ. Սրվանձտյանն ու Ա. վրդ. Թոխմախյանը, հավանաբար նաև Ղ. ծ. վրդ. Փիրղալեմյանը, իրենց դիտել են որպես գրապայքարի ջերմ մասնակիցներ և Վանի բարբառի բառարանը կազմելով՝ ցանկացել են այդ բառագանձը փրկել մոռացությունից և ներմուծել աշխարհաբար: Նրանք սրբագրել են բարբառի առանձին բառեր, աշխարհաբարացրել, որպեսզի դրանք, որպես վերականգնված հայերեն բառեր, մտնեն նոր լեզ-

վի մեջ: Օրինակ՝ Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձտյանը գրել է *ակահ-արթուն, զգաստ,* թեև չէր կարող չիմանալ, որ վանեցին այդ բառն արտասանում է «ակյախ»: Արսեն վարդապետ Թոխմախյանը գրում է «ճիստել»,[1] այնինչ նրան քաջ հայտնի է եղել, որ վանեցին այդ բառն արտասանում է «ծըվլըոթել» (=ծվատել): Արսեն վարդապետ Թոխմախյանին նույնպես քաջ հայտնի էր, որ իր մայրենի բարբառում «ճ» հնչյունը վերածվում է «ծ»-ի, բայց գրում է «ճախիկ», «ճանճրել», երբ պետք է գրեր «ծախիկ», «ծանծրել»: Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձտյանը «զիկ»-ի (=ինձ) փոխարեն գրում է «ծիկ», և հարգելով նրա հեղինակությունը, բոլորն էլ գրում են «ծիկ»: Այս «ծիկ»-ն այնքան է տարածված, որ շփոթում է անգամ Գևորգ Շերենցը, որը երբեմն գործածում է «զիկ» ձևը, երբեմն «ծիկ» տարբերակը:

Ղևոնդ ծայրագույն վարդապետ Փիրղալեմյանից, Գարեգին արքեպիսկոպոս Սրվանձտյանից և Արսեն վարդապետ Թոխմախյանից մեկ-մեկուկես տասնամյակ հետո հանդես է եկել Գևորգ Շերենցը (1848-1921): Բնիկ վանեցի այս հեղինակը շրջագայել է գավառից գավառ, գյուղից գյուղ ու արժեքավոր նյութեր է հավաքել իր «Վանա սազ» և «Պանդուխտ վանեցին» ժողովածուների համար: Ժողովածուների վերջում նա զետեղել է բարբառային բառարաններ: Տպագրական որոշ վրիպակներ խաթարում են նրա բառարանների լիարժեքությունը:

Հայ մշակութային զարթոնքի նշված ներկայացուցիչներից զատ Վանի բարբառով մեր [20-րդ – Հ.Մ.] դարում զբաղվել է Հրաչյա Աճառյանը: Ոչ ոք այնպիսի մեծ ծառայություն չի մատուցել Վանի բարբառի ուսումնասիրությանը, որքան մեծ գիտնականը: Ինչ խոսք, Վանի բարբառի ուսումնասիրության գործում մեծ աշխատանք է ներդրել ակադ. Հ. Աճառյանը,[2] սակայն անձամբ Վանը տեսած չլինելու, բարբառը տեղում լսած չլինելու և այդ իսկ պատճառով սոսկ իր աշակերտների կամ պատահական անձանց գիտեցածով բավարարվելու հետևանքով նրա ներդրումը անթերի չէ:

Հ. Աճառյանն իր «Հայերէն գաւառական բառարանի» մեջ, օրինակ, գրում է. «*Շուր(ա)հաս*, Վն. «գարնանը հասնող մրգի տեսակ, տանձ»:[3] Նախ՝ գարնանը Վանում ոչ մի տեսակի տանձ չի հասնում: Բայց վանեցու բառարանում *շուրահաս* բարդ բառը ոչ միայն չկար, այլև չէր կարող լինել, որովհետև, ինչպես այդ քաջ հայտնի էր մեծ գիտնականին, վանեցու բառարանում ոչ *շուր* բառը կար, ոչ էլ *հաս*-ը: *Շուր*-ի փոխարեն վանեցին

---

1 Տե՛ս «Հայոց բառ ու բան», աշխատասիրեց Սահակ վարդապետ Ամատունի, Վաղարշապատ, 1912, էջ 417:

2 Տե՛ս, մասնավորապես *Հ. Աճառյան*, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1953:

3 *Հ. Աճառեան*, Հայերէն գաւառական բառարան. – Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 644:

ասում էր *շուր*, իսկ *հաս*-ի փոխարեն՝ *խաս, խասնել, խասուկ*: Ուրեմն, եթե նման բարդ բառ գոյանար, ապա այն պիտի հնչեր՝ *շուրախաս*: Բայց այդպիսի բառ նույնպես գոյություն չի ունեցել վանեցու բառարանում: Հազվագյուտ կանայք միայն, այն էլ օրիորդաց դպրոցներում սովորածներից, կասեին *շուրախասուկ*. կանանց մեծ մասը ոչ թե կասեր, այլ ասում էր *թեզխասուկ*, իսկ տղամարդիկ (եթե նրանք դեռ արևմտահայ գրական լեզվով չէին խոսում), առանց դես ու դեն ընկնելու՝ ասում էին՝ *թեզլագյան* տանձ: Այս օտար բառը մինչև անգամ դարձել է տանձի վաղահաս տեսակի անուն:

Վանի բարբառով խոսում էր ավելի քան հարյուր հազար մարդ: Քաղաքամերձ գյուղերի, ինչպես նաև Հայոց Ձորի, Արճակի և Թիմարի գավառների հայերը խոսում էին Վանի բարբառով: Այդ բարբառի խոսվածքներով էին խոսում նաև Բերկրու, Արճեշի և Ալջավազի հայերը: Վանի վիլայեթի հարավում՝ Ոստանի, Կարկառի, Գյավաշի, Կարճկանի, Շատախի, Մոկսի ու Ոզմի հայերը խոսում էին Մոկաց բարբառով:

Քաղաքի բառապաշարը տարբերվում էր գյուղերի բառապաշարից: Քաղաքի ներսում էլ տարբեր էին ինչպես հայ բնակչության տարբեր խավերի, այնպես էլ տղամարդկանց ու կանանց բառապաշարները: Այսպես, պաշտոնատար հայերի, ինչպես նաև իրենց զբաղմունքի բերումով կառավարական մարմինների և շուկայի հետ առնչվող հայերի բառարանում գերակշռում էին թուրքերեն բառերը: Ռափայել Պատկանյանի «Մայրաքաղաքում կրթված հայ երիտասարդը և հայ օրիորդը» հանրածանոթ բանաստեղծության մեջ խարազանված ցավը XIX դարում տարածված էր նաև Վանում: Այդ խավերը հայերենը համարում էին «կըեղըցու» լեզու: Նրանց բառապաշարում մնացել էին միայն ընտանեկան կյանքին և կրոնին առնչվող սակավաթիվ հայերեն բառեր: Սակայն աշխատավոր վանեցու բառարանը հարուստ էր հայերեն բառերով, թեև այնտեղ էլ մուտք էր գործել թուրքերենը:

Հատկանշական է, որ հայերենն ավելի անաղարտ էր պահպանվել գյուղերում: Օրինակ, ոռոգման համար նվազ աղբյուրներից ծորացող ջուրը կուտակելու արհեստական ջրամբար-լճակը, մանավանդ Վանից հյուսիս ընկած գյուղերի գյուղացին անվանում էր *վոփ*: Մեծոփա վանք ասելով՝ Արճեշ գավառի հայ գյուղացին հասկանում էր այն վանքը, որի արտերը ոռոգվում էին արհեստական մեծ վոփի (ջրամբարի) ջրերով: Իսկ քաղաքում և քաղաքամերձ վայրերում ոռոգման համար կուտակված արհեստական ջրամբար-լճակներն արդեն կոչվում էին *գյոլ*:

*Յուղ* բառը Վանի և հարակից այլ վայրերի բառապաշարում պահպանվել էր *եղ* ձևով: «*Յաղ* թուրքերեն բառը փոխառյալ է հայերեն *եղ* ձևեն

և հետո իր փոխված ձևով վերադարձված է հայերենին»։[4] Ձվածեղ պատրաստելու և այլ նպատակով քիչ քանակությամբ յուղ հալելու համար Վանում շատ գործածական էր տեղական արտադրության փոքրիկ ամանը, որ կոչվում էր *եղախալ* (յուղ հալել)։ Այդ տարիներին կարի և այլ փոքրիկ մեքենաներն արդեն հասել էին Վան ու տարածվել։ Այդ մեքենաների յուղն արդեն չէր կոչվում *եղ*, այլ թուրքերեն ձևով՝ *յաղ*, իսկ ամանը՝ *յաղդան*։

Ըստ Վանում պահպանված ավանդության՝ Արծրունի իշխանուհիներից մեկը ապարանջանի տրամագծի չափով ջուր էր նվիրել Վարագա վանքին։ Այդ աղբյուրը մինչև 1915 թվականը կոչվում էր *Ապարանջան ճխպըր*։ Ինչպես տեսնում ենք, այս անվան մեջ *աղբյուրը* դարձել է *ճխպըր*, իսկ *ապարանջանը* մնացել է անփոփոխ։ Գոմ-ախոռները մաքրելու համար ինչպես գյուղերում, այնպես էլ քաղաքում շատ գործածական էր ամուր շիվերից կապված ցախավելը, որի կոթն ամրացվում էր երկու-երեք կապով։ Այդ կապերը կոչվում էին *արպընջան*։ *Ապարանջան* բառը, ինչպես տեսնում ենք, դարձել է *արպընջան*, իսկ կանանց բազուկին (թուրքերեն՝ *բըլակին*) հագցվող արծաթե կամ ոսկե ապարանջանը, որ պատրաստվում էր միայն հայ ոսկերիչների ձեռքով և՛ գյուղերում, և՛ քաղաքում կոչվում էր *բըլազուկ*։

Հայերենը համեմատաբար անաղարտ էին պահում կանայք։ Նրանք տանից հազվադեպ էին դուրս գալիս, չէին շփվում արտաքին աշխարհի հետ, շուկայի երես չէին տեսնում։ Ինձ ծանոթ էին օր ծերության հասած պառավ կանայք, որոնք իրենց կյանքում թուրք չէին տեսել, սակայն դուրս ու ներս անող ամուսինների խոսքի ազդեցությամբ թուրքերեն բառեր էին գործածում։ Նույն հարկի տակ ապրող տղամարդկանց բառարանում թուրքերեն բառերի քանակը հասնում էր երբեմն 40 տոկոսի, իսկ կանանց բառապաշարում՝ հազիվ 10 տոկոսի։

XIX դարի 50-60-ական թվականների ազգային մշակութային զարթոնքի և ապա 70-80-ական թվականներին սկսված ազգային-ազատագրական շարժման շնորհիվ, երբ սկսվեց ընդլայնվել դպրոցական ցանցը, վանեցու բառարանի մեջ հայերեն բառերն ավելացան, և այն էլ ոչ թե վանեցու առոգանությամբ, այլ արևմտահայ գրական լեզվով։ *Կաֆաղար*-ը (գաղափարական, համախոհ) գործածությունից դուրս եկավ՝ տեղը զիջելով *գաղափար* բառին, այն էլ պոլսահայությանը բնորոշ *քաղափար* ձևով։ Ազատագրական շարժման նախակարապետները 1870-ական և հատկապես 1880-ական թվականներից շատ էին սիրում հանդես գալ բեմերից,

---

[4] *Հ. Աճառյան*, Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն. – Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Թիֆլիս, 1902, էջ 243։

տեղի-անտեղի դասախոսություններ կարդալ: Դրա հետևանքով վանեցու խոսակցական լեզվում *բեմը* մտավ *փեմ*, իսկ *դասախոսությունը*՝ *թասախոսություն* պոլսահայ ձևով:

Քսաներորդ դարում դպրոցական ցանցն այնքան էր ընդարձակվել, որ դպրոցներն իրար հետ մրցում, երբեմն էլ ուղղակի կռվում էին ավելի շատ աշակերտ ունենալու համար. իրարից աշակերտ խլելը սովորական երևույթ էր դարձել: Վանում ոչ մի վիճակագրություն չի եղել, և ես չեմ կարող հենվել վիճակագրական որևէ տվյալի վրա: Բայց բավական եմ գտնում ասել, որ ես այժմ յոթանասունյոթ տարեկան եմ և ոչ թե իմ, այլ իմ հոր և մոր տարիքի ոչ մի անգրագետ մարդ չկար Վանում: Դպրոց կար բոլոր քիչ թե շատ մեծ գյուղերում: Վանքերը, որոնց թիվը շատ մեծ էր, գրագիտության օջախներ էին: Վարագն ու Աղթամարը սեփական օրինակելի դպրոցներ ունեին: Քաղաքի 22-25 հազար հայ բնակչությունն արդեն ուներ երեք արական և երկու իգական միջնակարգ դպրոց և մեկ վարժապետանոց. հիմնվել էր ևս երկու միջնակարգ դպրոց, որոնք դեռ շրջանավարտ չէին տվել:[5] Քաղաքում հրատարակվում էր մեկ եռօրյա թերթ, մեկ շաբաթաթերթ և մեկ ամսաթերթ:[6] Գրագիտության և ընթերցասիրության տարածումը վանեցու բարբառից դուրս էր մղում օտար բառերը, օրինակ՝ *ռախխամ*-ը դարձել էր *թվաբանություն*, *ջողրաֆա*-ն՝ *աշխարհագրություն* և այլն: Դպրոցավարտներն արդեն խոսում էին գրական լեզվով, սակայն բարբառը դեռ չէր մեռնում, այլ իր բազմերանգ նրբություններով հարստացնում էր խոսակցական լեզուն:

Վանեցու խոսակցական լեզվի ճոխությունը, բարբառի ճկունությունը ցույց տալու համար բավականանանք միայն մեկ օրինակով: *Մեռնել* բայի համար վանեցին ուներ ավելի քան երկու տասնյակ արտահայտության ձև ու բառ: 1) *Մեռալ* ասվում էր սովորական մարդու մահվան համար, 2) *վախճանվեց* հոգևորականների և լավ մարդկանց համար, 3) *խանգ՛ավ*, 4) *ննջեց*՝ առաքինի մարդկանց համար, 5) *խանգյափացավ*՝ երկար տառապած մարդկանց համար, 6) *ծեռից կընաց*՝ երբ կարելի էր փրկել, բայց անտերությունից և անփութությունից մահը վրա է հասել, 7) *պան սյունն ընկավ*՝

---

[5] 1903 թ. Վանում կար 25 դպրոց, որից 10-ը՝ հայկական (1680 աշակերտներով), 6-ը՝ ամերիկյան (820 աշակերտներով) և 9-ը՝ ֆրանսիական (817 աշակերտներով): Մանրամասն տե՛ս «Բիզանդիոն» (օրաթերթ, Կ.Պոլիս), 1903, 15/28 ապրիլ, թիվ 1997: Հղվում է ըստ *Հ. Մ. Պողոսյան*, Վասպուրականի պատմությունից (1850-1900), Երևան, 1988, էջ 320-321: Հեղինակը նշում է նաև (էջ 314), որ «XIX դարի վերջում դպրոցների թիվը ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղերում ավելացավ՝ հասնելով 136-ի, որից 30-ը՝ Վանում»: [Ծան. Հ. Մ.]

[6] 1905-1914 թթ. Վանում լույս էին տեսնում 24 անուն թերթեր: Տե՛ս Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցուցակ (1794-1980), կազմեց՝ Մ. Ա. Բաբլոյան, Երևան, 1986, էջ 346-347: [Ծան. Հ. Մ.]

երբ մեռնողը տան կերակրողն էր, 8) *ճըրաք'ը մարեց*՝ երբ մեռնողը տվյալ ընտանիքի վերջին ներկայացուցիչն էր, 9) *պաղեց*, 10) *վոտները փըռեց*, 11) *խոկ'ին պըվեց*, 12) *ճո՛չ ք'ուն ք'ընեց*՝ երբ հայտնողը չէր համակրում մեռնողին, 13) *սատկեց*՝ անասունների, թուրքերի, գող ավազակի և վատ հայի համար, 14) *խատավ*՝ անասունների, թուրքերի և հատկապես քրդերի համար, 15) *դարդավարամ էլա՛վ*՝ վշտից մահացավ, 16) *ճըմեց*՝ մեծահարուստ վատ հայի համար, 17) *շանսատակ էլա՛վ*՝ գող, ավազակի համար, 18) *նագյատտան ընկավ-մեռավ*՝ սովորական մարդու հանկարծամահ լինելու համար, 19) *պըթաց*՝ վատ մարդու հանկարծամահ լինելու համար, 20) *թօջկեց*՝ տեռորի ենթարկվեց և, վերջապես, 21) *Քրիստոս կանչեց*՝ Վանում օրըստօրե շատացող բողոքականների համար:

Այսպես հարուստ են Վանի բարբառի արտահայտչական միջոցները:

Կազմելով սույն բառարանը՝ ես ունեցել եմ միայն մեկ նպատակ:

Իմ ծննդավայրը, որ հազարամյակներ շարունակ շողշողացել է ոչ միայն հայոց պատմության մեջ, այլև դրանից էլ շատ առաջ, այսօր սոսկ երազ ու հուշ է դարձել նրա հարազատ զավակների համար: Նրա լավագույն գրական գոհարները, որոնք ուրույն տեղ են գրավում հայ բանահյուսության մեջ, վանեցու ներկա սերնդին հասկանալի դարձնելու համար լրացուցիչ բացատրության կարիք ունի: Վանեցին այսօր կա ու բազմանում է, և այս բառարանը Վանի հուշարձանն է, այդ ժողովրդի բազմերանգ լեզվի հուշարձանը:

Ֆրանսիայում բարձրագույն կրթություն ստացած, ֆրանսերենին և թուրքերենին հմուտ, 1918 թվականին Բաղդադ ընկած և արաբերեն սովորած, այնուհետև Նոր Ջուղա անցած և պարսկերեն սովորած ուսուցիչ Արմենակ Մաքսապետյանը 1954 թվականին Թեհրանում պրոֆ. Ռուբեն Աբրահամյանի խմբագրությամբ լույս է ընծայել «Փարսի և արաբ բառերը Վանի բարբառի մեջ» ուշագրավ աշխատությունը, որտեղ ապացուցում է, որ օտար շատ բառեր ոչ թե թուրքերենից են մտել Վանի բարբառի մեջ, այլ շատ ավելի հին են և Վանի բարբառի մեջ մտել են պարսկերենից ու արաբերենից: Իմ ուժերից վեր համարելով բառերի ծագման մասին խոսելը՝ ես աշխատել եմ տալ միայն Վանի բարբառի լուսանկարչական պատկերը, որ մնացել է իմ մեջ: Գուցե ուրարտերեն և այլ հին լեզուներ իմացողները հնագույն լեզուների վերապրուկներ գտնեն Վանի բարբառի մեջ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՇՅԱՆ
[1977]

# Ա

**Ա̈Բ**, *գ. Հաբ:* Հէքʸիմ զիկ կըլոր իաբ տըվեց, աղեյցա:

**Ա̈ԲԱ̈**, *գ. Բրդյա հաստ վերարկու:* Վա̈նա̈ խօջէն՝ ա̈բէն վըրէն:

**ԱԲԱՍԵԿ**, *գ. Տանձի տեսակ:*

**Ա̈ԲԱ̈Ր**, *ձ. Զարմանք արտահայտող բացականչություն:* Ա̈բա̈ր, էդկանդար սուտ կէլնի՞:

**ԱԲԵԹ**, *գ. Կայծքարից բռնկվող դեղնավուն հատուկ հեղուկով ներկված բամբակ՝ փաթաթված երիզով (զայթանով), որ վանեցին անվանում էր նաև* շուկի կավ:

**Ա̈ԲՈՎ**, *գ. Հույսով:* Մնացի ի̈նօր ա̈բով, համա պա̈ն տո̈ւս չէկավ:

**ԱԲՈՒԿԱԹ**, *գ. Փաստաբան, դատապաշտպան:* Աբուկաթի սարմէն սուտն ի:

**ԱԲՈՒՀԱՅԱԹ**, *գ. Կենաց ջուր: Ծան. – Գործ է ածվում* աբուհայաթ սույի *ձևով: Ոռոգման ցանցի կարևոր առուների հատուկ անուն:*

**ԱԲՈՒՂԱ** *(նաև՝ Լիմ), գ. Միզափամփուշտ, միզապարկ:* Մարթու շըռապարկ, կօվու աբուղա *(Լիմ):*

**ԱԲՈՒՌ**, *գ. 1) Բառացի՝ երեսի ջուր: 2) փխբ. Պատվի, ամոթի զգացում:*

**ԱԲՈՒՌ-ՃԸՊՈՒՌ**, *մկ. Վայրիվերո:* Աբուռ-ճըպուռ տո̈ւս տալ, *Վայրիվերո, անպատկառ խոսել:*

**ԱԳՅԱՐ**, *շ. Եթե, որ:*

**Ա̈ԴԱ̈Բ**, *գ. Հարգանք, պատկառանք:*

**Ա̈ԴԱ̈ԲՍԸԶ**, *ած. Անպատկառ:* Ա̈դա̈բսըզին մէյն ի, ի՞նչ ասես:

**Ա̈ԴԱ̈Թ**, *գ. Սովորույթ:*

**ԱԴԱՄ**, *գ. Մարդ: Ծան. – Շատ տարածված էր* «Ադամ էօլդնարան կուրթալտի, փէնջարադան բախն կաչսրա դուշտի» *արտահայտությունը, որ նշանակում է՝ «մարդասպանը պրծավ, ազատվեց, սակայն պատուհանից նայողը՝ անմեղը, փորձանքի մեջ ընկավ»:*

**ԱԴԱՇ**, *գ. Անվանակից, միևնույն անունն ունեցող:* Մեր տըրկըցի լաճու խետ ես ադաշ եմ:

**ԱԴԱՐ**, *վ. շ. Եթե որ:* Ադար, կնիկըս ասըլզատա էլնի, էլ էտ պա̈ն չանի:

**Ա̈ԴՅՈՒՄ**, *գ. Քայլ:*

* Ուչ ադյում, *1) Բառացի՝ երեք քայլ: 2) Տղաների խաղի մի տեսակ, որի մեջ ցատկի սահմանը երեք քայլ էր:*

**ԱԴՕ**, *գ. Ավետիք անձնանվան կրճատ ձևը:*

**Ա̈ԴՕ̈**, *Բմ. գ. Մայր:* Ա̈դօ̈ն ուր ճըժին պաքʸեց *(Բմ.):*

**Ա̈ԶԱ̈Բ**, *ած. գ. Ամուրի։* Ա̈զբըրներ էկան ու նըստան։

**Ա̈ԶԱ̈ԲԲԱ̈ՇԻ**, *գ. Հարսանիքի ամուրիների ավագ, որը ղեկավարում է հարսանյաց հանդեսի գեղարվեստական մասը, իսկ ավանդական մասը ղեկավարում է քավորը։*

**Ա̈ԶԱ̈Թ-ԻՔՐԱՄ**, *գ. Պատվելը, մեծարելը։*

**Ա̈ԶԱ̈ԹԼԱՄԱ**, *գ. Ազատագրություն։* Ա̈զա̈թլամա տըվին *(բանտից արձակեցին)։*

**ԱԶԱԼԻ**, *գ. Հին տիպի հրացան, որը գնդակի փոխարեն լիցքավորվում էր կապարի մանր գնդիկներով։*

**Ա̈ԶԱ̈ՄԱ̈**, *ած. 1) Շատ մեծ, խոշոր։* Էն ա̈զա̈մա̈ մարթ ի՞նչըխ ինկ՚ավ-մեռավ։ *2) Վեհաշուք, վեհ։*

**Ա̈ԶԱ̈Ն**, *գ. Մինարեի գլխից մոլլայի կարդացած աղոթքը։*

**Ա̈ԶԱ̈ՉԻ**, *գ. Դեղագործ։*

**Ա̈ԶԱ̈ՐԼԱՄԻՇ ԱՆԵԼ**, *Սաստել, հանդիմանել։*

**ԱԶԱՓ**, *գ. Հարսանիքում փեսային շրջապատող ամուրի երիտասարդներ։* Փէսի կօխքին ազափներ էն կայնե *(Կճ.)։*

**Ա̈ԶԲԱ̈ՆԸՍՏՈՒՄ**, *գ. Հարսանյաց հանդեսի նախօրեին ամուրիների համար՝ հարսանեկան պարերը ղեկավարող ազաբբաշի՝ ամուրիների պետ, ընտրելու համար։*

**Ա̈ԶԲԱ̈Ր ԱՆԵԼ**, *1) Անգիր անել։ 2) Հափշտակվել, գլուխը կորցնել։*

**ԱԶԳ**, *հթ. գ.1) Տոհմ։ 2) Գերդաստան։ 3) Ազգական։*

**Ա̈ԶԻԱ̈Թ**, *գ. Նեղություն։* Տո̈ւ ա̈զիա̈թ միա̈ ք՚աշի։

**Ա̈ԶԻԶ**, *ած. 1) Հարազատ։ 2) Սուրբ, մաքուր։*

**Ա̈ԶԻԶ-ՄԱ̈ԶԻԶ**, *ած. 1) Գեղեցիկ, վայելչատես։ 2) Պատվական, առաքինի։* Փէսէն գոված, ա̈զիզ-մա̈զիզ ջահել ի։

**ԱԶԻՐ-ՎԱ̈ԶԻՐ**, *գ. Իշխանության ղեկավարներ, մեծավորներ։*

**ԱԶԼԸՂ**, *գ. Ծխամորճ։*

**ԱԶՄԻՇ ԷԼՆԵԼ**, *Կատաղել, բորբոքվել։* Էտ վոր լսեց, ընկած ազմիշ էլա̈վ։

**ԱԶՈՒԼԻ**, *ած. Կատաղի, վայրագ։*

**ԱԶՐԱՀԻԼ**, *տե՛ս* **ԱԶՐԱՅԻԼ**։

**ԱԶՐԱՅԻԼ**, *գ. 1) Մահմեդականների Գաբրիել հրեշտակը, հեթանոս հայերի գրողը, որ մահվան հունձն է կատարում։ 2) Փխբ. անսանձ, անընկճելի, դիվահար։* Ազրայիլ է տա̈րցե մեր կ՚ըլխին։

**ԱԶՔՈՒՏԱԿ**, *գ. Ամբողջ տոհմը։* Ազքուտակով խուր ին իկ՚է։

**ԱԹԱՄՈՐԹԻ**, *գ. Մարդ։*

**Ա̈ԹԱ̈Ք**, *գ. Քղանցք, եզր։*

**ԱԹԼԱՄԱ**, *գ. Ցատկելով խաղի տեսակ, ցատկախաղ։*

**ԱԹՈՌՔ[3]**, *գ. Կամավոր պաս, որ բարեպաշտ կանայք պահում են օրինական պասի նախորդ շաբաթից։*

**ԷԹՐԱՖ**, *գ. Փեշ, բոլորտիք։*

**ԷԹՐԱՖ-ԹԱՐԱՖ**, *մկ. Շուրջբոլորը։*

**ԱԺԴԸՀԱՐ**, *ած. Աժդահա, վիթխարի։*

**ԱԺԵԼ**, *չբ. Արժել, արժենալ։*

**ԱԺՆԱՄԱԿԱՆ**, *ած. Ժամանակակից, այժմյան։*

**ԱԼ**, *ած. Կարմիր։*

**ԱԼԱՋԱՆԴ**, *գ. Տագնապ, շտապողականություն։*

**ԱԼԱԹ**, *գ. Առտնին անհրաժեշտ պարագաներ՝ գործիքներ, հարմարություններ, իրեր։*

**ԱԼԱԼԵԼ**, *նբ. Տարածել, չար լուրերը ընդհանրացնել։*

**ԱԼԱՄ**, *գ. Ժողովուրդ, ընդհանրություն։*

**ԱԼԷՄ-ԴԷՍՏԱՆ**, *ած. Աշխարհին ծաղրելի։* Թակավուրու լաճ զիկ արաց ալէմ-դէստան։

**ԱԼԷՄ-ԱՇԽԱՐՀԸ**, *գ. Ամբողջ աշխարհը։*

**ԱԼԱՆԴ**, *գ. 1) Տագնապ։ 2) Հոգեվարք։*

* Ալանդ ընկնել, *Տագնապի, հոգեվարքի մեջ ընկնել։*

**ԱԼԱՆԻ**, *ած. Հայտնի, բացահայտ։*

**ԱԼԱՇ**, *գ. Մաջառ, որով ծածկում են գերանների վրա շարված մարդակները, ապա հող լցնում վրան, որպեսզի անձրևաջուրը տանիքից ներս չկաթի։*

**ԱԼԱՇ-ԿԱԼԱՇ**, *ած. Վառվռուն, զվարթ, կայտառ։*

**ԱԼԱՇ-ՄԱԼԱՇ**, *ած. Սիրունատես և բարձրահասակ։*

**ԱԼԱՊԸՍՏՐԱԿ**, *կճ. գ. Նապաստակ։*

**ԱԼԷՋԷ**, *ած. 1) Խայտաբղետ, գույնզգույն, խայտաճամուկ։ 2) Կիսահաս միրգ։* Ծիրանն ի խասե, խավողն՝ ալէջէ։

**ԷԼԷՎ**, *գ. Բոց։*

**ԷԼԷՐ**, *գ. Ծուլություն։*

**ԷԼԷՐԵԼ**, *չբ. Ծուլանալ, հուլանալ։* Էլէրեց, տեղից վեր չէլավ, վոր պէրև տար։

**ԷԼԷՐԿՈՏ**, *ած. Ծանրաշարժ։*

**ԷԼԷՐԿՈՏԵԼ**, *չբ. Դժվարությամբ, դժկամությամբ շարժվել։*

**ԷԼԱՓ**, *գ. Անասնակեր, եմ։*

**ԱԼԱՖՐԱՆԿԱ**, *ած. Եվրոպական ոճի։*

**ԷԼԲԷԱԼ**, *մկ. Իսկույն, անմիջապես, ձեռաց։* Էխչիկ էլբէալ կիմնա։

**ԷԼԴԸՐՄԻՇ ՉԷԼՆԵԼ**, *Ականջ չդնել, չլսել։*

**ԱԼՐՏՈՒՆ**, *գ. Ջրաղացի մաս, որտեղ թափվում է աղացված ալյուրը։*

**ԱԼԹ-ՈՒՍԹ**, *ած. Տակնուվրա, խառնափնթոր։*

**ԱԼՂԼՇ**, *գ. Խառնակություն, շփոթ։*

**ԱԼԻՇ-ՎԵՐԻՇ**, *գ. Առևտուր։*

**ԱԼ-ԿԱԲԱՎՈՐ**, *Կարմիր կապա հագած. այդպես են հագնված հեքիաթի հերոսները։*

**ԱԼՀԸՍԸԼ**, *մկ. Վերջապես, կարճ կտրած, ասած։*

**ԱԼՄԱՍՏ**, *գ. Ադամանդ։* Ալմաստն անտաշ չի պըսպըղա։

**ԱԼՆԱԽ**, *գ. Թաշկինակ։* Փարեն կըկապի ալըխի ճոթ։

**ԱԼՆԻ**, *ած. Անալի։* Ճաշին աղ չես թըլե, ալնի ի։

**ԱԼՈՃ**, *Վն. գ. Սնձենու պտուղ։* Ալոճ աշնան կըխասնի *(Վն.)։*

**ԱԼՈՒՃ**, *տե՛ս* **ԱԼՈՃ**։ Էթընք Նըվկէն (սրբավայր), ալուճ պէրենք *(Կճ.)։*

**ԱԼՈՒՉԱ** *(նաև՝ Հթ. Լիմ), գ. Սալոր, շլոր։* Տանձ՝ միս, խընձոր՝ թիս, ալուչէն՝ տեռ, ծիրան՝ ցեռ։

**ԱԼՓԻ**, *գ. Աղբյուրների ալիք առ ալիք հոսելը։* Ապարանջան ըխպո՛ւր ալփի կաթ։

**ԱԼՕ-ԲԸԼՕ**, *գ. Վիրավորական արտահայտության մաս։* Նա տո՛ւ ինոր ասա ալօ, նա էն քյ՛ի ասի բըլօ *(ոչ դու նրան անվանիր ալօ, ոչ էլ նա քեզ անվանի բլօ, այսինքն՝ առիթ մի՛ տուր, որ նա քեզ վիրավորի)։*

**ԱԼՕՉԱ**, *Բմ. գ. Սնձենու պտուղ։* Ալօչան մէշէն կէղէր *(Բմ.)։*

**ԱԼՕՋԻ ԿՅԸԼ**, *Անասուննե-րը սեռական հասունացման հասնել։*

**ԱԽ**, *Վն. Բմ. գ. Երկյուղ։* Ջանըս ախ //վըխ ինգյըվ *(Վն.)։*

**ԱԽԱԽՈՐԵԼ**, *չբ. Սարսափել, ահաբեկվել։* Ախախորեց, ծէն ին-գյըվ փոր։

**ԱԽԱԽՈՐԵԼ-ՋԱԽԱԽՈՐԵԼ**, *տե՛ս* **ԱԽԱԽՈՐԵԼ**։

**ԱԽԱՆԵՍ**, *գ. Հովհաննես։* Ախա-նէս աղէն էտ պընից հազ չի անի։

**ԱԽԱՎԵԼ**, *չբ. Կուշտ ուտելուց հետո ախորժակը փակվել։*

**ԱԽԱՐ**, *վ. Վերջիվերջո, ոչ ապաքեն, չէ՞ որ։*

**ԸԽԲԸԲ**, *ած. գ. Մտերիմ, ըն-կեր, գաղափարակից։* Ինոնք ըխբըբ են, քըսան տարվա ըխբըբ։

**ԱԽԸՆԹԻ**, *գ. Հոսանք, ջրի հո-սելու թեքություն։*

**ԱԽԸՐ**, *վ. Վերջիվերջո, ոչ ապաքեն, չէ՞ որ։*

**ԱԽԼԱՎԻՆ**, *գ. Առաջին կալ։* Ախլավին ցորենը, Աստված օխ-նի, Աստծուն *(իմա՝ եկեղեցուն, վանքին)*, վորպէվէրուն, եթըմին։

**ԱԽԿՅԸՏ**, *Լիմ, ած. Աղքատ։*

**ԱԽԿԸԼ**, *գ. Խելք, ուղեղ։*

**ԱԽԿԼԱԶՂԵՂ**, *ած. Ուշագրավ, Հափշտակիչ:* Ընկուն խօրօտ ու անկալատ տըներ շիներ ին, վոր մարթ ախկլազղեղ կէղնի:

**ԱԽՄԱԽ**, *ած. Հիմար, տխմար:* Էրկէն մարթեր ախմախ կէլնին, կօլօտ մարթեր՝ չախմախ:

**ԱԽՇԱՄ**, *գ. Իրիկուն:*

**ԱԽՇԱՄԼԱՄԻՇ ԱՆԵԼ**, *Նստել մինչև երեկո և օրը մթնեցնել պարապաբանությամբ՝ խոսելով, խմելով և այլն:*

**ԱԽՈՒ**, *գ. Վախից, երկյուղից:* Ախու ծէն չի խանի:

**ԱԽՉԱ**, *գ. Պլիկ, 1/3 կոպեկի հավասար մանր պղնձադրամ Թուրքիայում:* Ախչէմ տըվինքյ պէրան պացինքյ, տասը տըվինքյ՝ չկոծիցինքյ *(=չփակեցինք):*

**ԱԽՉԻԿ**, *գ. Աղջիկ:* Ախչըկան վոր թողնեն, կէրթա զուռնաչի կառնի: Ախչըկա տէրը մէյ դարդ ունի, լաճուն՝ էրկու: Ախչիկ օտարի ճըրաքյ ի:

**ԱԽՉԸԿՈՒ ՏԱԿՅ**, *Լիմ, Փիփերթ:* Ախչըկու տակյի սէրմը խատի պես ի *(Լիմ):*

**ԱԽՊՐԱՆՑ ԱՐՈՒՆ**, *Շատ կարմիր ծաղկի տեսակ:*

**ԱԽՊՈՒՐ**, *գ. Աղբյուր:* Մարթ մ՛որ ախպըրէ ճուր խըմի, ինոր ինէ քյար չըթալէ *(իմա՝ լավություն անողի նկատմամբ ապիրատ չեն լինի):*

**ԱԽՏԵՑ**, *գ. 1) Հաղթանակ: 2) Աչք դիպչելը, աչք առնելը:* * Ախտէց առավ, *Աչք դիպավ:*

**ԱԽՓ**, *գ. Աղբ:*

**ԱԽՔՅԱՏ**, *գ. Մուրացկան:* Ախքյըտի ծեռ կուտըմ տէսան: Ախքյըտի վէրէն շոր տէսան, ասին՝ վո՞րտեղից, զանգընի վէրէն շոր տէսան, ասին՝ բարով վայելես: Ախքյատն վոր վոսկի պըռնի, խող կըտանոնա, զանգինը վոր խող պըռնի, վոսկի կըտանոնա: Ախքյըտի մախը չեն լա:

**ԱԾԱՆ**, *ած. Աճող:* Աճան խավ կըչկըչան կէլնի:

**ԱԾԻԿ**, *գ. Խոնավացրած արմտիք:*

**ԱԾԿԱԾ**, *ած. Խոնավացրած:*

**ԱԾՈՒ**, *գ. Մարգ (հոգն.* աճուքյ, աճվըներ*):*

**ԱԿ**, *գ. 1) Ակունք:* Քյայրէգի ակ: *2) Անիվ:* Սայլի ակ, կամրջի ակ *և այլն:*

**ԱԿԱԽ**, *Բմ. Լիմ, ած. Ագահ:*

**ԱԿՅԱԽ**, *ած. 1) Արթուն, զգաստ:* Էրէխէն ակյախ ի, խա, վաղունց ի ակըխէ: *2) Տեղյակ:*

**ԱԿԱՆԱՏ**, *Լիմ, գ. Սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պատուհան:*

**ԱԿԱՆԿԱԼ**, *գ. Թոնրի օդանցքը՝ ակը, փակելու շոր, քուրջ:*

**ԱԿԱՆՈՒՑ ՅԱՐԱ**, *Մաշկի անբուժելի հիվանդություն:*

**ԱԿԱՆՋ**, *գ. 1) Մարդու կամ կենդանու ականջ: 2) Ծախարակի մասերի, կամուրջի գլխակապի, սայլի լծափայ-*

*տի, արորի լուծի համապատասխան մասերի անունները:*

**ԱԿԱՆՋԿԱԼԷՔՅ**, *գ. Բարի լուր բերողի նվեր:*

**ԱԿԱՆՋՓՈՐՈՒԿ**, *գ. Ականջի մեջ սողոսկող որդ:*

**ԱԿԱՆՋՔՅՇՈՒԿ**, *գ. 1) Մանկական խաղի տեսակ: 2) Նորածին տղա ունեցած հոր ականջները քաշելը:*

**ԱԿՅԸԽՑԵԼ**, *չբ. Զարթնել:*

Վէր մյէ ին ակյըխյել աշխարի ալամով, *Բովանդակ աշխարհ զարթնած մեզ էր նայում:*

**ԱԿԸՆՃԿԸԼԱ, ԱԿԸՆՋԿԸԼԱ**, *Վն. Լիմ, գ. Աչքալուսանք, բարի լուր հաղորդելու վարձատրություն:* Ակընջկըլա ուզեց, տըվին *(Վն.)*: Ձի ակընջկըլա տոյա *(Լիմ)*:

**ԱԿԸՌԿԵԼ**, *չբ. Դեմ առնել, կառչել, խանգարվել:* Փէշս ակըռկեց ճոչ պիպոին:

**ԱԿԸՌՓԻ**, *գ. Հյուսիսային կողմից Այգեստանին կպած թրքաբնակ գյուղ:*

**ԱԿԸՌՓՈՒ ՔՅԱՐ**, *Ագռավաքար, սուրբ մատուռ, սրբություն:*

**ԱԿՅԻ**, *Վն. Լիմ, գ. Հագուստի քղանցք: Ծան. – Քիչ գործածական է (Վն.):*

**ԱԿԻՑ**, *գ. 1) Ագի: 2) Քղանցքի ծայր:*

**ԱԿԻԾ**, *Վն. գ. Տաշտաքերիկ:* Տաշտի խըմոր ակիշօվ կըքյերեն *(Վ.)*:

**ԱԿԻՉ**, *տե՛ս* **ԱԿԻԾ**:

**ԱԿԼԱ ՏԸՆԵԼ**, *Դարան մտնել հանկարծակի հարձակման համար:* Կատուն ակլա ի տըրէ, վոր մուկ պըռնի:

**ԱԿԼԱՏԻՋ**, *գ. 1) Փետրազարդ սոխ, որ կախում էին թոնրատան առաստաղից: Մեծ պասի յոթ շաբաթների հաշիվը ճիշտ պահելու համար սոխի մեջ խրած յոթ փետուրները մեկ-մեկ հանում էին յուրաքանչյուր երկուշաբթի: 2) Երեխաներին վախեցնելու երևակայական կենդանի:*

**ԱԿԼԵ-ԴԸՐԿԼԵ**, *ձ. Խաղի ընթացքում իրերից ընտրություն կատարելու, վիճակ հանելու կամ որևէ պատմություն անելիս ասվող արտահայտություն.* Ակլե-դըրկլե տընազա, էծիկ-մէծիկ մօղրէզա, խարբաբա, խարբաբա. *և շփոթեցնելու համար մատը տարուբերելով դնում էին զանազան առարկաների վրա:*

**ԱԿՆԱՏ**, *գ. Թակարդ:* Կյընա տըրկըցից մեր մըկան ակնատն ուզի, մուկ ի իրիվցե:

**ԱԿՈԼԵԼ**, *նբ. Քանդել:* Աստված քյո տուն չակոլի, ճոյրն իկյեր ի, ճայղայչն ի տարե, տոյ ինգյեր ես, չախչախ կուրոնես:

**Ա̈Կʲ Ո̈ԻԿʲԱ**, *գ. 1) Թոնրի ական վրա դրվող կավե շրջանակ, որպեսզի՝ վառելիքը թոնրի օդանցքը՝ ակը չփակի: 2) Տգեղ աղջկա հասցեին ասվող խոսք:* Աչքերը փոս, քիթն ա̈կʲո̈ւկʲա, ինչ վոր ասեն, վէրէն կուկʲա̈:

**ԱԿՌԱ**, *Վն. Հթ. Կճ. գ. Սեղանատամ:* Տէքʲերկընգʲան ակռէն// ատամ կըցավէր *(Վն.)*: Ակռէքօվ կըծամեն *(Կճ.)*:

**ԱԿՌԱԺԱ̈ԺԻԿ**, *գ. 1) Մի կտոր ժաժիկ: 2) փխբ. Ձնչին կաշառք:*

**ԱԿՐԱՍՏ, ԱԿՌԱՍՏ**, *Բմ. գ. Նախաճաշ: Ծան. – Առավոտյան զարթնելուն պես մի թեթև բան էին ուտում. դա կոչվում էր* խաց *կամ* ակրաստ: *Տնից դուրս գալիս և աշխատանքի գնալուց առաջ ուտում էին տաք կերակուր, որ կոչվում էր* ճաշ: *Կեսօրին ուտում էին հիմնավորապես. կեսօրվա ճաշը կոչվում էր* խրամենց, *երեկոյան ճաշը կոչվում էր* հընթրիս. *քնելուց առաջ կերած մածունը կամ մածնաբրդոշը կոչվում էր* պաշիվ:

**ԱԿՕ**, *Վն. գ. Հակոբ:*

**ԱՀԱՆ**, *վ. Ահա, ահավասիկ:*

**ԱՀԱՆՔ**, *տե՛ս* **ԱՀԱՆ**:

**ԱՀԴ ԱՆԵԼ**, *Ուխտել:*

**Ա̈ՀʲԼÖՐ**, *Վն. գ. Աքաղաղ:* Ա̈հʲլöր խավխուսուն կըկանչի// կըխուսա *(Վն.)*:

**Ա̈ՀՎԱԼ**, *գ. Վիճակ:* Կընստի ու կըպատմի ուր ա̈հվալն:

**ԱՂԱ**, *գ. Պարոն, տեր: Հոգն.՝* Աղեյտեր:

**ԱՂԱՂ**, *գ. Դաբաղների օգտագործած գխտորի ջուր:*

**ԱՂԱՂԻԼ**, *նբ. Սրտաշարժ անել:*

**ԱՂԱՂԻՆՔ**, *Բմ. գ. Խխունջ:* Աղաղինջ կէղնի ճըրէրի մէչ *(Բմ.)*:

**ԱՂԱՂՎԵԼ**, *գ. Գխտորի ջրի մեջ դրվել ( կաշին):*

* Քիթն աղաղվեց, *Քիթն արյունաշաղախ եղավ:*

**ԱՂԱ-ՅՕԼԱ**, *մկ. ած. Աղային վայել:*

**ԱՂԱՆԱԿ**, *1) մկ. Աղայավարի: 2) գ. Որդի տեսակ:*

**ԱՂԱՆԱԿʲ**, *Լիմ, գ. Ծիածան:*

**ԱՂԱՆՁ**, *գ. Բոված ցորեն:*

**ԱՂԱՎԸՂԵԼ**, *նբ. 1) Աղավաղել, փոփոխել: 2) Սրտաշարժ անել:* Վերջ ընքʲուռ-ընքʲուռ կուլա, կաղավըղի խօր:

**ԱՂԱՎԸՐԵԼ**, *չբ. Աղաչել, խնդրել, պաղատել:*

**ԱՂԲԱ**, *գ. Փոխը, փոխարենը:*

Աղբէն քʲե էլնի//աղբէն վէրէտ էլնի,
*Դու ես արժանանաս միևնույն լավ բանին:*

**ԱՂԷԿ**, *ած. Լավ:* Տղեյները խօ խիվանդ չեն, աղէ՛կ են: Աղեկն ասին վայ ի, կʲէշն ասին՝ վավելեր ի: Աղէկ ապրանքʲ վոր էլնէր, խօր տուն չէր մնա:

**ԱՂԷԿՆԱԼ**, *Կճ. չբ. Առողջանալ:*

**ԱՂԷԿՆԵՐ**, *գ. Չար ոգիներ:* Աղեկները կուկ'ան, կըլըցվեն վէր ինոր կ'ըլխուն:

**ԱՂԷՂՆԱԿ**, *Բմ. գ. Ծիածան:*

**ԱՂԷՅՆԱԼ**, *Լիմ, չբ Առողջանալ:*

**ԱՂՈՐԹ**, *մկ. ած. Ճիշտ, իրավամբ:* Աղո՛րթ ի վարտապետի վախճանվելը: Ավչին աղորթ կասեր *(Վն.):*

**ԱՂՈՒ**, *գ. Թույն:* Կճգճր աղու խըմավ, մեռավ *(Վն.):*

**ԱՂՈՒՋ**, *Բմ. Լիմ, գ. Դալի փափուկ, ջրալի տեսակ:* Տալ պինդ կըլի, աղուզ՝ կակուղ *(Լիմ):*

**ԱՂՈՒՅՈՏ**, *ած. Թունավոր:*

**ԱՂՈՒՆ**, *գ. Ջրաղաց տարվող մաքրած ցորեն:* Ես աղա, տո՛ւ աղա, հապա մեր աղուն վո՞վ պիտի աղա:

**ԱՂՈՒ ՏԱԼ**, *Թունավորել:* Ջճդուն թակավորի ախչկան աղու տըվեց *(Վն.):*

**ԱՂՈՒՐ**, *գ. Անվահետք, որ ճանապարհազուրկ երկրում կամաց-կամաց դառնում էր ճանապարհ:*

**ԱՂՊՐԱՆՑ**, *գ. Դաշտային կարմիր ծաղկի տեսակ:* Աղպրանց արուն մէչ ք'արերուն:

**ԱՂՋԸԿՈՒՏԱԿ**, *գ. Սեզի նման մոլախոտ: Ծան. – Մոլախոտի տեսակներն էին՝* կովաճայտիկ, խապպուկ, կառն, փիփիոթ, իշօուկաթնուկ, կորիստ, մատուկ, փուշ, ամանկոտրուկ, շան գյոզ, ամիրաղխամ, պառվու մէզօր, սարի սըխտոր, պառէզ, գ'էլուկ:

**ԱՂՋՈՒՐ**, *գ. Սոմախ, սոմախի թուփ:*

**ԱՂՎԵՋ**, *Բմ. գ. Աղվես:*

**ԱՂՎԸՂԵԼ**, *չբ. Նստվածք տալով զուլալվել (կերակրի, յուղի մասին):*

**ԱՂՏՈՐԵՆԻ**, *գ. Սոմախ, սոմախի թուփ:*

**ԱՂՕԱՄ**, *գ. Ոչխարի տուրք:*

**ԱՂՕԹԱՐԱՆ**, *գ. Բողոքականների եկեղեցի:*

**ԱՂՕԹՐԱՆ**, *գ. 1) Արշալույս, արևի առաջին ճառագայթների երևալը:* Աղօթրան պճցվեց: *2) Արևելք: 3) Կճ. Վաղ առավոտ:*

**ԱՂՕՇ**, *գ. Խաղողի որթ, վազ:*

**ԱՂՕՐԹ**, *Լիմ, ած. մկ. Ճիշտ, իրավացի:*

**ԱՃԱՌ**, *գ. Արջառ:*

**ԱՃԱՐ**, *գ. Հաճար:*

**ԸՃԸՂՃՎԵԼ**, *կբ. Լղոզվել, կեղտոտվել:* Տըղի տայ մաք'րիցի, ծեռըս ճճըղճվավ:

**ԱՃԸՂ ՏԱԼ**, *Աճ տալ, ավելանալ:*

**ԱՃԿԵԼ**, *Լիմ, չբ. Նայել:*

**ԸՃՈՂԵԼ**, *Վն.* **ԸՃՕՂԵԼ**, *Հթ. նբ. Հաջողել:*

**ԱՃՊԱՏԵՍ**, *ած. Շատ տգեղ:* Էն աճպատեսին ի՞նչըխ ի առէ:

**ԱՃՕՂՈՒԹԵՆ**, *Լիմ, գ. Հաջողություն:*

**ԱՄԱԳ**, *գ. Երախտիք, ջանք, վաստակ:* Նա վըր զիկ ամագ ունի:

**ԱՄԱԳԼԻ**, *ած. Վաստակավոր, երախտավոր:*

**ԱՄԱԼ**, *գ. Գործ, աշխատանք:*

**ԱՄԱԼԻԵ**, *գ. Աշխատող, բանվոր:*

**ԱՄԱԼԻԵ ԹԱԲՈՒՌԻ**, *Բանվորական գումարտակ. 1915 թվականի ապրիլյան ինքնապաշտպանության ամրաշեն ջոկատ:*

**ԱՄԱ՜Ն**, *ձ. Զանձրույթ, զզվանք, հուսահատություն, կսկիծ արտահայտող, օգնություն հայցող բացականչություն:*

**ԱՄԱՆԱԹ**, *գ. Ավանդ, ուրիշի պահպանությանը հանձնված իր:* Կ'առը տըվին կ'էլուն ամանաթ:

**ԱՄԱՆԼԸՎԻԿ**, *գ. Շորի կտոր, որով աման են լվանում:*

**ԱՄԱՆԿՈՏՐԻԿ**, *գ. Բույսի տեսակ:*

**ԱՄԱՆ-ՉԱՄԱՆ**, *գ. Ամանեղեն:*

**ԱՄԲԱԽ-ՋԱՄԲԱԽ**, *մկ. Դատարկախոսելով, շաղակրատելով:*

**ԱՄԲԱՐ**, *գ. Պահեստ, շտեմարան:*

**ԱՄԲՐԱԲ**, *գ. Արմավ:*

**ԱՄԲՐԱՎ**, *Լիմ,* **ԱՄԲՐԱՎ**, *Հթ. գ. Արմավ:*

**ԱՄԸՅՏԵՐ, ԱՄԸՀՅՏԵՐ**, *Լիմ, գ. Ամաններ:*

**ԱՄԸՆՏԵՂ**, *մկ. Աննպատակ:*

**ԱՄԸՆՏԵՂ-ՋԱ ՄԸՆՏԵՂ**, *տե՛ս* **ԱՄԸՆՏԵՂ**: Ամընտեղ-զամընտեղ միա կարտա:

**ԱՄԸՌՆՈՒԿ**, *գ. Ամառային վաղահաս միրգ:*

**ԱՄԸՐ**, *գ. Հրաման:*

**ԱՄՄԱ**, *շ. Բայց, սակայն, թեպետև:*

**ԱՄՈԹՈՒ**, *գ. Ամոթից:*

**ԱՄՈԹՈՒԹԵՆ**, *գ. Ամոթ:* Վէրէն շոր չըկա, ամոթութնէ տո՛ւս չէլնէ:

**ԱՄՈԼ**, *գ. Գութանի առաջին լուծը:*

**ԱՄՈԼՎԱՐ**, *գ. Գութանի առաջին լուծը քշող:*

**ԱՄՉԸՆԱԼ**, *չբ. Ամաչել:*

**ԱՄՉԸԿՈՏ**, *ած. Ամոթխած:*

**ԱՄՊԱԿԱԼԵԼ**, *չբ. 1) Ամպել: 2) փխբ. Տխրել:*

**ԱՄՊԵՂ-ՋԱՄՊԵՂ**, *ած. մկ. Անմիտ:* Ամպեղ-զամպեղ տո՛ւս միա տա:

**ԱՄՊՇՈՂ**, *ած. Նոսր ու ցրիվ ամպերով ծածկված:*

**ԱՄՊ ՈՒ ՋԱՄՊ**, *ած. Ամպամած:*

ԱՅԾՄ, *գ. 1) Դար: 2) Ժամանակ:* Էս այծմի մարդ չի:

ԱՅԾՐ, *գ. 1) Թամբ, համետ: 2) ժամացույցը կամ այլ սարք լարելը: 3) Ոսկեղենի, արծաթեղենի մաքրության աստիճան:*

Այծր զծնել, *Որոշել ոսկեղենի կամ արծաթեղենի մաքրությունը:*

ԾՅԲԾ, *գ. Խուրջինն ուսին կամ գրաստի վրա դնելու երկճղանի բրդե պարկ:*

ԱՅԵՂ, *ած. Ջգաստ, թեև ալկոհոլ խմած, սակայն չհարբած:*

ԱՅԻԲ, *գ. Ամոթ:*

ԱՅԻՆ-ՕՅԻՆ, *գ. Անլուրջ բան, մանրուք:*

ԾՅԼԱՄԻՇ ԷԼՆԵԼ, *Զբաղվել որևէ բանով (պտույտ, խաղ, նվագ և այլն):*

ԱՅԼԱՅԼԵԼ, *չբ. Գունատվել, անճանաչելի դառնալ:*

ԾՅԼԱՋԷԲ, *ած. Տգեղ, անճոռնի, այլանդակ:*

ԱՅԼՈՋԵԼ-ՊԱՅԼՈՋԵԼ, *նբ. Զորթանը տրորել, ջրիկացնել:*

ԾՅՀԼՈՐ, ԱՅԼՕՐ, *Հթ. Լիմ,* ԾՅԼՕՐ, *Բմ. գ. Աքաղաղ:* Առատուն այլծր խօսեց *(Հթ.):* Այլծր աղօթըրնին կըխուսի *(Լիմ):*

ԱՅՆԱ, *գ. Մեծ հայելի: Տան. – Փոքր հայելուն ասում էին* խայլիկ:

ԱՅՎԱՋ, *գ. 1) Ծառա, սպասավոր: 2) Զինակիր:*

ԱՅՎԱՆ ՕԹԱԽ, *Օրօսպաց (=երեսը բաց) կալատուն, որտեղ ձմռանը կերակրում են ոչխարներին, իսկ աշնանը չորացնում անժամանակ ցրտի պատճառով շուտ քաղած կիսահաս ցորենը:*

ԱՅՎԸՆԷԿ, *ած. Անխոս, անլեզու, խեղճ, թշվառ (երեխա):* Քյո ջուխտակ այվընէկ ծծքյեր կուցկուց արտսունքյ կըթծփեն:

ԱՆԱԴԱՆ ԴԱԼՄԱ, *1) Բառացի՝ մորից ծնվածի պես մերկ, չլուտ: 2) փխբ. Ի ծնէ աղքատ ու խեղճ:*

ԱՆԱՆԱԿ, *գ. Ծիածան:* Անանակ էլծվ//կապեց *(Վն.):*

ԱՆԱՆՕԽ, *Կճ. գ. Անանուխ:*

ԱՆԱՍՈՒՄ, *գ. Խոշոր և մանր եղջերավոր անասուն, որի միսն ուտելի է: Տան. –* Հծյվծն *ավելի լայն իմաստ ունի. ոչ միայն նշված իմաստը, այլև շուն, կատու և այլն մտնում են* հծյվծն *հասկացության մեջ (Վն.):*

ԱՆԱՎԱՏ, *ած. Անհավատ:*

ԱՆԱՏԱԿ, *ած. Անհատակ:*

ԱՆԲ, *գ. Ամպ:*

ԱՆԲԱԺԵՌ, *ած. Նոսր ամպերով ծածկված:* Անբաժեռ օր:

ԱՆԲԵԼ, *չբ. Ամպել:*

**ԱՆԲԾՈՂ**, *ած. Ամպամած, բայց լուսավոր ու տաք օր։*

**Ա̈ՆԳյԱ̈Լ**, *ած. 1) Ծույլ։ 2) Անդամալույծ։*

**ԱՆԳԸՃԿԸԼԱ̈**, *գ. Աչքալուսանք։* Անգըճկըլա̈ պէրին Սարքըսին, ւոր տըղէն բանակից էկեր ի *(Կճ.)։*

**Ա̈ՆԳՅՈՒ-Ա̈ՆԳՅՈՒ**, *մկ. 1) Բառացի՝ անկյունից անկյուն։ 2) փխբ. Խաղացնելով, ձեռ առնելով։*

**Ա̈ՆԳՅՈՒՄԱՆ**, *1) մկ. Անսպասելի, անհավանական, հանկարծակի։ 2) ած. Անտեղյակ, անիրազեկ։*

**ԱՆԳյՈԹՔյ**, *Հթ. ած. Ագահ։*

**Ա̈ՆԴԱ̈ՁԱ**, *գ. 1) Երկարության չափ։ 2) Հագուստի ձևվածքը թղթի վրա։*

**ԱՆԴԻՕՐ**, *գ. Ընտանիք, կին։*

**ԱՆԵՁԱԿԱՆ ԱՁԸ**, *Աստծո ձեռքը։*

**ԱՆԵՂ**, *գ. 1) Աղեղ։ 2) Բուրդ ու բամբակ գզող աղեղնաձև գործիք։*

**ԱՆԷՍՔյ**, *Հթ. գ. Անեծք։*

**ԱՆԷՐԾԱ̈Քյ**, *Վն.*, **ԱՆԵՐԾԱ̈Ք**, *Կճ. գ. Աներորդի։* Փէսէն աներծա̈քին կանչեց տուն *(Կճ.)։*

**ԱՆԸՂՆԱԿ**, *Կճ.*, **ԱՆԸՂՆԱԿյ**, *Հթ. գ. Ծիածան։* Անձրեվ տա̈թրավ, անըղնակյ տո̈ւս իկավ *(Հթ.)։*

**ԱՆԸՅՏԵՐ**, *գ. Անուններ։*

**ԱՆԸՍԿյԱ̈Մ**, *ած. Անզգամ։*

**ԱՆԸՍՊԵՌ** *(նաև՝ Հթ.)*, *ած. Լկտի, լիրբ, անզգամ։*

**ԱՆԹԱՐԻ**, *գ. Լայն քղանցքով կանացի երկար զգեստ։*

**ԱՆԹԵՂ**, *գ. 1) Կիսավառ փայտ, փթիր, որ թողնում են մոխրի տակ՝ կրակը հարատև դարձնելու համար։ 2) Կճ. Ածուխ։* Անթեղ կըխօրինք, յետո թունիր կըվա̈ռինք *(Կճ.)։*

**ԱՆԹԵՂԵԼ**, *նբ. Անթեղով կրակը վառ պահել։*

**ԱՆԹԻԿԱ**, *գ. Հնություն։ Ծան. – Վանում հաճախ գործածվում էր ծաղրական իմաստով։* Անթիկայի մէյ։

**ԱՆԹԻԿԱՁԻ**, *գ. Հնություններ հավաքող, գնող։*

**ԱՆԹՐՈՑ**, *գ. Կրակխառնիչ։*

**ԱՆԹՕԼԿԵԼ**, *նբ. Արմունկով հրել։*

**ԱՆԺԱ̈Ժ**, *ած. Անշարժ։* Թյուքյ ու մըրի մէչ մնաքյ անժա̈ժ։

**ԱՆԺԱ̈ՄԱ̈Կ**, *ած. մկ. Ուշ։*

**ԱՆԺԵՆԴԸՌ**, *տե՛ս* **ԱՆԺԵՌ**։

**ԱՆԺԵՌ**, *ած. Անհամ, անյուղ (կերակուր)։*

**ԱՆԺՈՒՌ**, *Հթ. ած. Նիհար։*

**ԱՆԼԻ**, *Բմ. ած. Անալի։*

**ԱՆԽԱՐԱՄ**, *ած. Մաքուր, անարատ։*

**ԱՆԽԵՂ**, *ած. Չխեղաթյուրված, ազնիվ։*

**ԱՆԽԸԼԻՍ**, *ած. Անհատնում:*

**ԱՆԽՈՒՆ**, *ած. Անսահման, մեծ:* Տո̈ւ քյո անխուն աստված սիրես:

**ԱՆԽՈՒՆԱՐ**, *ած. Ապաշնորհ:* Անխունար մարդու լէզո̈ւն էրկէն կէլնի:

**ԱՆԾԵՂ**, *գ. Կաչաղակ:* Անծըղան վոր մընա, իր ծա̈քյուց սիրուն չըկա:

**ԱՆԿԱ̈ԼԱ̈Տ**, *1) ած. Կատարյալ, անթերի: 2) գ. Իգական անձնանուն:*

**Ա̈ՆԿՅԱ̈Խ**, *մկ. Ուշ:* Ա̈նկյա̈խ տուն կուկյա̈, խա սարխօշ ի:

**Ա̈ՆԿՅԱ̈Խ-ԱՆՊԱԽ**, *մկ. Անժամանակ:* Մէկէլ տեսար կէլնի կուկյա̈ տունըդ, չի ասի ա̈նկյա̈խ-անպախ դո̈՞ր կէրթա̈մ:

**Ա̈ՆԿՅԱ̈Ն**, *մկ. Ուշ:* Մարէն մեռնի իր լաճուն, ա̈նկյա̈ն ի, տոա̈ւն արե:

**ԱՆԿՅԷՏ**, *ած. Անգրագետ:* Անկյէտին քամակս առիցի, ասաց՝ տիր կյետին, վոտքյըս կըցավի:

**Ա̈ՆԿՅԸՆՆԱԼ**, *չբ. Ուշանալ:* Մեր լեղին կըկտրի, եփ քյո թուղթն *(=նամակ)* ա̈նկյըննա:

**ԱՆԿԸՋԿԸԼԱ**, *հթ. գ. Աչքալուսանք:*

**ԱՆԿՅԻՆ**, *գ. Անդունդ:*

*նութի կեղտը ավլում էին ու պահում պարկերի մեջ, և երբ մի քանի տարուց հետո բավականաչափ կեղտ էր հավաքվում, կալջին լվանում էր այդ կեղտը և մետաղային մնացորդը հալում բարձր ջերմության պայմաններում: Հատուկ քուրա էր պատրաստվում անկիզելի կավից, չորս կողմից փուքսերով վառում էին փայտյա ածուխը, և կալջին հսկում, ղեկավարում էր կալը: Շիկացած հեղուկի երեսից սրբում, վերցնում էր* քյըլքը, *որ գոյացած էր լինում ոչ ազնիվ մետաղներից: Կալջին պետք է մեծ փորձի և հմտության տեր լիներ: Վանում կային այդ արհեստին առնչվող ազգանուններ, որ վերջին տարիներին գրում էին* գիմ *տառով՝* Գալճյան: *Քաղաքի հայտնի ընտանիքներից էին* Գալճյանները, *որոնց ազգանունը վանեցին արտասանում էր* Կալջյան:

**ԿԱԼԱ**, *գ. Բերդ:*

**ԿԱԼԱԲԱԼԸՂ**, *գ. 1) Ամբոխ, բազմություն: 2) Ժխոր:*

**ԿԱԼԱԹ**, *գ. Ջանցանք:*

**ԿՅԱ̈ԼԱ̈ԽՆՈՒԿ**, *ած. Պինդ:* Կյա̈լա̈խնուկ շըրիթ *(Վն.):*

**ԿԱԼԱԾ**, *նբ. ած. Փակված:*

**ԿԱԼԱԾ-ԿԱՊԱԾ**, *ած. Հագնված:*

**ԿԱ̈ԼԱՄ**, *գ. 1) Երեգնագրիչ: 2) Փորագրիչ գործիք: 3) Դեղդիր:*

* Կա̈լմի տէր, *Գրագետ, եղեգնագրիչ բանեցնող:*

**ԿԱ̈ԼԱՄՔԱՇ**, *ած. Դեղդիրով քաշած:* Ընքվերը կա̈լամքյաշ ախչիկ:

**ԿԱԼԱՄՔՅԱՐ**, *գ. Փորագրող. Վանում շատ տարածված ոսկերիչներին օգնող և արծաթեղենի վրա փորագրություններ կատարող արհեստավորներ:*

**ԿԱԼԱՄՔՅԱՐԵՆՔ**, *գ. Կալամքարյանները:*

**ԿԱԼԱՆ**, *գ. 1) Թուրքերին հատկացված ղալիմ: 2) Փեսայի կողմից աղջկա հորը վճարվող գլխագին:*

**ԿԱԼԱՏ**, *գ. 1) Պակասություն, թերություն:* Ինոնց ախչիկ անկալատ չի: Անկալատ մէնակ Աստված կէլնի: *2) Սխալ:*

**ԿԱԼԱՏԻՋ**, *գ. Կալսող անասունների զույգ:*

**ԿՅԱ̈ԼԱ̈Ր**, *գ. Գալար: Փորհարինքի պատճառած ցավը ստամոքսում և աղիքներում:*

**ԿԱԼԲ**, *ած. Կեղծ:*

**Կ̂Ա̈ԼԲ**, *Լիմ, ած. Ծույլ:*

**ԿԱԼԲԱՂԱՆԳ**, *ած. Կեղծարար, դրամանենգ, խարդախ:*

**ԿԱԼԴԸՐԸՄ**, *ած. գ. Սալահատակ:* Մեր փօղան կալդըրըմ չի:

**ԿԱԼԷՄԱՂ** *(նաև՝ Հթ. Բմ. Կճ.), գ. Մեծ անցքերով մաղ, որ գործածվում է ցորենը, գարին ծղոտից անջատելու համար։* Կալէմաղ ծակվավ *(Վն.)։*

**ԿԱԼԷՄԱՍՏ**, *գ. 1) Կալապտուղ։ 2) Կալից քահանայի, թռչունների և այլոց համար վերցվող բաժինը։*

**ԿԱԼԸԲ**, *գ. Կաղապար։*

**ԿՅԱ̈ԼԸՐԵԼ**, *չբ. Գալարվել։* Փորըս կըկյա̈լըրի։

**ԿԱԼԽԱՆ**, *գ. Վահան։*

**ԿԱԼԿԸԼՎԵԼ**, *կբ. Փակվել, լցվել, ծածկվել։* Կալէմաղ կըկալկըլվի։

**ԿԱԼՄԱԿԱԼ** *(նաև՝ Հթ.)*, **ԿԱ̂Լ-ՄԱԿԱԼ**, *Կճ. գ. Աղմուկ, վիճաբանություն։*

**ԿԱԼՆԸՎԵԼ**, *կբ. Փակվել, ծածկվել։* Ցարէն կըկալնըվի։

**ԿՅԱ̈ԼՈՍ**, *գ. Գալուստ։* Խյուս Կյա̈լոսենց կյա̈լոսը խատավ։

**ԿԱ̂̈ԼՁԱ̈**, *Բմ. գ. Ագդր։*

**ԿԱԼՋԻ**, *գ. Արծաթագործի խանութի փաթոնները հալեցնող։*

**ԿԱԼՕ**, *գ. Կարո, Կարապետ։*

**ԿԱԼՕՇ**, *գ. Կաշվե կամ ռետինից կրկնակոշիկ։*

**ԿԱԼՕՇ-ՓՕԹԻՆ**, *գ. Կրկնակոշիկն ու կոշիկը։*

**ԿԱ̈ԼՖԱ**, *գ. 1) Վարպետացու արհեստավոր։ 2) Ուսուցիչ։*

**ԿՅԱ̈Խ**, **ԿԱ̈Խ**, *Հթ. գ. Ժամանակ, պահ։* Ծըծղալու կյա̈խ ատամներ կէրէվէն *(Հթ.)։* Քյէլէլու կյա̈խ կը թօփիլէր *(Հթ.)։* Էն կա̈խ խասանքյ, վօր խառսին տարան *(Հթ.)։*

**ԿՅԱ̈ԽՏԻ**, *Լիմ, ած. Գաղտնի։*

**ԿՅԱ̈ԽՏԻԿ**, *ած. Գաղտուկ։* Տընէն կյա̈խտիյ կընա̈ց *(Վն.)։* Կյա̈խտիկ ուր պա̈ն կանէր *(Վն.)։*

**ԿՅԱ̈ԽՏՈՒԿ**, *Վն. ած. Գաղտնի։*

**ԿՅԱ̈ԿՅԱԹ**, *գ. 1) Գագաթ։ 2) Գլուխ։* Չօռ քյո խօր կյա̈կըթուն։ Ինոր կյա̈կյա̈թ զա̈րթրուն էր *(Վն.)։*

**ԿԱԿԱԼՕԼՕ ԿԱՐՏԱԼՈՎ**, *Խաբխբելով գործն առաջ տանելով։*

**ԿԱԿԸՋԵԼ**, *չբ. Կակազել։* Ախու կակըզեց *(Վն.)։*

**ԿԱԿՂԱՆ**, *գ. ած. Ոսկոր չպարունակող փափուկ միս։*

**ԿԱ̈ԿՂԱ̈ՆԱԼ**, *Վն. չբ. Փափկել։*

**ԿԱԿՂԵԼ**, *չբ. 1) Փափկել։ 2) փխբ. Մեղմանալ, գիջող դառնալ։*

**ԿԱ̈ԿՂԸՆԱԼ**, *տե՛ս* **ԿԱ̈ԿՂԱ̈ՆԱԼ**։ Խող կա̈կղըցիր էր *(Վն.)։*

**ԿԱԿՂԸՆԱՍԻ**, *գ. Մածնաբրդոշ, որ թուրք պաշտոնյան հարկադրաբար պիտի ուտեր հայ գյուղացու տանը։ Ծան. – Թուրք պաշտոնյան հայ գեղջկուհուն հրամայում էր հավ մորթել ու տապակել, փլավ եփել։ Հայ գեղջկուհին պատասխանում էր, որ ոչինչ չունի, բացի* կակղընասիից։ *Ի*

վերջո պաշտոնյան կակղում էր ու համաձայնում ուտել իրեն անհայտ ու հետաքրքրող կակղընասին։ Պարզվում էր, որ դա սովորական մածնաբրդոշ է։

**ԿԱԿՈՒՂ** (նաև՝ Կճ.), ած. Փափուկ։ Կակուղ խաց, պա̈ռց (Վն.)։

**ԿԱԿՈՒՂ-ՏԱՏԱ**, ած. գ. Փափկասիրտ, կանացի տղամարդ։

**Կ̂ԱՀԻՄ**, Լիմ, ած. Ամուր։

**ԿԱՀՐԱՄԱՆ**, գ. Հերոս։

**ԿԱՂԱՄԱՐ**, գ. Թանաքաման։

**ԿԱՂԱՆԴ**, Վն. գ. Նոր տարի։ Կաղանդի խա̈մա̈ր ա̈մբրա̈վ, չամիչ, պընդո̈ւկ, գʲո̈զ առան//առին (Վն.)։

**ԿԱՂԾԻՆ**, գ. Կավ, որից թոնիր և խեցեղեն էին պատրաստում ու թրծում։ Ծան. – Վանում կավ ասելով հասկանում էին միայն ցեխ։

**ԿԱՂՊԱ**, գ. Պոռնիկ։

**ԿԱՂՊՈՒԹԵՆ**, գ. Պոռնկություն։

**ԿʲԱ̈Ճ**, գ. Գայլ։ Ծեր տուն կʲա̈ճի՞ր եա։

**ԿԱ̈ՄԱ̈**, գ. Դաշույն։

**ԿԱՄԱԶ**, ած. Բանսարկու։ Աստված ավիրէր կամազ մարթու տուն։

**Կ̂ԱՄԱԶ**, Կճ., **ԿԱՄՄԱԶ**, Հթ. ած. Անպիտան, հիմար։

**ԿԱՄԻՇ**, գ. Եղեգն։

**ԿԱՄԿԱԽ**, ած. Անվճռական, կամազուրկ։

**ԿԱՄՇԻ**, գ. Մտրակ։

**ԿԱ̈ՅԴԱ̈**, գ. Եղանակ, ձև։

**ԿԱ̈ՅԴԱ̈ԼԻ**, ած. Կարգ ու կանոնով։

**ԿԱՅԵՂ**, գ. Նավակ, մակույկ։

**ԿԱ̈ՅԹԱՆ**, գ. Երիզ, ծոպ։

**ԿԱՅԻԼ**, մկ. Հավան, համաձայն։ Ծան. – Վանի բարբառում գործածվում է գլխավորապես նա՛ կայիլես ձևով, որ նշանակում է՝ հապա ի՞նչ էիր սպասում։

* Կայիլ էլնել, Գոհ մնալ։

**ԿԱ̈ՅԻՄ** (նաև՝ Հթ. Կճ.), **Կ̂ԱՅԻՄ**, Կճ. ած. Պինդ։ Վորտեղ նըստես, էնտեղ կա̈յիմ կաց։ Կա̈յիմ խող քʲըլունգʲօվ կըփորեն (Վն.՛)։

* Կա̈յիմ կըճիր, Առողջ և ամրակազմ մարդ։

**ԿԱՅԻՇ**, **Կ̂ԱՅԻՇ**, Բմ. գ. Գոտի։

**ԿԱՅԼԱ**, գ. Պարզ կերակրատեսակ։

**Կ̂Ա̈ՅԼԻ**, Լիմ, գ. Իր հյութի և յուղի մեջ տապակած միս, որ կճուճների մեջ պահում են որպես ձմռան պաշար։

**ԿԱՅԼՕՆ**, Հթ. գ. Ծխամորճ։

**ԿԱՅՂԸՉԻ**, գ. Մակույկավար։

**ԿԱՅՄԱ**, գ. Թղթադրամ։

**ԿԱՅՄԱԽ(Ղ)**, գ. Եփած կաթի սեր։

**ԿԱՅՄԱԿԱՄ**, գ. 1) Գավառապետ։ 2) Սպայական ոստիկան (ասքյար, օնբաշի, չաուշ,

*միլաչիմսանի, միլաչիմ էվել, յուզբաշի, կայմակամ, բին-բաշի, լիվա փաշա, փաշա, ֆերիկ, միրալայ, մուշիր)։*

**ԿԱՅՆԵԼ**, *չբ. Կանգնել։*

**ԿԱՅՆԱԹՄԻՇ ԱՆԵԼ**, *Զոդել, միացնել։*

**ԿԱՅՍԻ**, *գ. Գյոկչա, սալորի քաղցր տեսակը։*

**Կ³Ա̈ՅՏԵԼ**, *չբ. Գանգատվել։*

**ԿԱՅՐԻ**, *ած. Զատ։* Ինձնից կայրի։

**ԿԱՅՖԱ**, *գ. Սուրճ։*

**ԿԱ̈ՅՖԱ̈ԽԱՆԱ**, *գ. Սրճարան։*

**ԿԱՆԱԼ**, *չբ. Կարողանալ։* Էն պըստիկ ի, չի կանա էտ պա̈ն անել։

**ԿԱ̈ՆԱ̈ՀԱ̈Թ**, *գ. Գոհունակություն։*

* Կա̈նա̈հա̈թ անել, *Բավականանալ, գոհանալ։*

**ԿԱՆԱՉԻԿ**, *գ. Կանաչ լաքով պատած խեցեղեն աման։*

**ԿԱՆԱՉ-ՄԱՏՈՏ**, *գ. Կանաչ մեծ մողես։*

**ԿԱՆԱՓ**, *Հթ.*, **ԿԱՆԱՄՓ**, *Բմ. Կճ. գ. Կանեփ։*

**ԿԱՆԱՓԱ**, *գ. Բազմոց։*

**ԿԱՆԱՓՆՈՑ**, *գ. Կանեփ ցանելու արտ։*

**ԿԱՆԱՓՏՈՒ**, *գ. Կանեփի գույն։*

**ԿԱՆԱՓԱՏ**, *Լիմ, գ. Կանեփ։*

**ԿԱՆԱՖԻԼ**, *գ. Մեխակ։*

**ԿԱ̈ՆԱ̈ՖԻԼ**, *Բմ. գ. Քթի զարդ։*

**ԿԱՆԱՆՉ-ԿԱՐՄԻՐ**, *Հթ. գ. Ծիածան։*

**Կ³Ա̈ՆԳԱ̈Տ**, *Լիմ, գ. Գանգատ։*

**Կ³Ա̈ՆԳԸՏՎԵԼ**, *Կճ. նբ. Բամբասել։* Խարս կիսրոչ մոտէն կըկ՚ա̈նգըտվի *(Կճ.)։*

**Կ³Ա̈ՆԿԸՏՎԵԼ**, *չբ. Գանգատվել։* Ճընճղուկները թըռան կընա̈ցին պերթի տանիս կ՚ա̈նկըտվելու խա̈մա̈ր։

**ԿԱՆԴԱԽՈՐԵԼ**, *չբ. Ծերությունից ցնդել, ցնորել։*

**ԿԱ̈ՆԴԱ̈Ր**, *գ. Չափ։*

**ԿԱՆԴԿԸԼՈՒՋ**, *գ. Մեծ ու փոքր երեխաներ։*

**ԿԱՆԵԼ**, *նբ. Մանել։* Ք՚ա̈նի՞ առչկան թել կանիցիր։

**ԿԱՆԹ**, *Վն. Կճ. գ. Ունկ։* Կըճուճի կանթ կոտրեր ի *(Վն.)։* Ճըլօրի կանթ կոտըրվավ *(Կճ.)։*

**ԿԱՆԹԱՐ**, *գ. Մեծ կշեռք, որով շուկայում սայլ են կշռում՝ վրայի ապրանքով։*

**ԿԱՆ Կ³Ա̈Լ**, *1) չբ. Զբոսնել։* Էն տեղեր, վոր տու կան կուկ՚ա̈ս։ Կ՚ընաց կան էկավ *(Լիմ) 2) նբ. Որոնել։* Շատ կան էկա, չըկ՚ընդա̈ *(Լիմ)։*

**ԿԱ̈ՆՃՐԱ̈Կ**, *գ. Կաթնատու հունդ։* Կա̈նճըրկի ճաշ։

**ԿԱՆՄԻՇ ԷԼՆԵԼ**, *1) Համոզվել։ 2) Հասկանալ։*

**ԿԱՆՋՕ**, *գ. Ծովահավ, Վանա ծովակի եզերքին ապրող հավանման թռչուն։*

**ԿԱՇԱԹԵՎ**, *Հթ. գ. Չղջիկ։* Կաշաթեվ կիշեր կը թըռնի *(Հթ.)։*

**ԿԱՇԱՂՈՒ**, *գ. Ջիու քերոց:*

**ԿԱՇԱՂԵԼ**, *նբ. Կաշաղուով քորել անասունին:*

**ԿԱՉԱԽՉԻ**, *ած. գ. Մաքսախույս:*

**ԿԱՊԱԼ**, *գ. Որոշ պայմանով որոշ ժամկետում կատարվող գործ:*

**ԿԱՊԱՐՈՒԿ**, *ած. 1) Շատ խակ միրգ: 2) Զարաճճի երեխա:*

**ԿԱՊՈՏ**, *ած. Կապույտ:* Կապոտ էրկինքյ *(Վն.)*:

**ԿԱՊՍՕԼ**, *գ. Կոճգամ:*

**ԿԱՊՏԱԺԵՌ**, *ած. Կապտավուն:*

**ԿԱՊՈՒԼ**, *գ. Ճարմանդ, կոճակ:*

**Կ$^{3}$Ա̈Ռ**, *կճ. ած. Խուլ:*

**ԿԱ̈ՌԱ̈ՀՕՎ**, *գ. Սաստիկ քամի:*

**ԿԱՌԸՇԸՂ**, *ած. Խառն:*

**ԿԱՌՄԱԿԱՌԻՇ**, *ած. Խառնիխուռն:*

**Կ$^{3}$ԱՌՇԷԼ**, *ած. Գարշելի:*

**ԿԱ̈ՍԱԲ** *(նաև՝ Հթ.)*, **Կ̂ԱՍԱԲ**, *կճ. Լիմ, գ. Մսագործ: Ծան. – Վանեցու կարծիքով մսագործը հաստափոր չի լինում, որովհետև անընդհատ աշխատում է (Վն.):*

**ԿԱՍԱԲԹՈՒՐԱ**, *գ. Մսագործի մեծ դանակ:*

**ԿԱ̈ՍԱԲԽԱՆԱ**, *գ. Սպանդանոց:* Վոր սանահաթ սովրելն կոլայ էներ, կա̈սաբխանի շընները կասաբ կէլնին:

**ԿԱ̈ՍԱ̈ՖԱ̈Թ**, *գ. Հոգս, մտատանջություն:* Մալուլ-մըռութ կյինի կամ կա̈սա̈ֆա̈թի մեջ:

**ԿԱՍ-ԿՈՒԴՐԱԹ**, *ած. Շիփ-շիտակ, պատրաստի:*

**ԿԱՍՏ ԱՆԵԼ**, *Համարձակվել, հանդգնել:*

**ԿԱՍՏԸՄ**, *գ. Երդում:*

**ԿԱՎ**[1], *գ. Ցեխ:* Ինոր սօլ մընա̈ց կավի մէչ *(Վն.)*:

**ԿԱՎ**[2], *գ. Աբեթ:* Շուկի կավ:

**ԿԱՎԱՁ**, *գ. Պահապան, հյուպատոսների սպասավոր:*

**ԿԱՎԱԼ**, *գ. Սրինգ:*

**ԿԱՎԱՆՕՁ**, *գ. Թիթեղյա տուփ:*

**Կ$^{3}$ԱՎԱՌ**, *գ. Բանջարեղենի տեսակ:*

**Կ$^{3}$ԱՎԱՌԻԿ**, *գ. Վաղահաս ցորենի տեսակ:*

**ԿԱՎԿՈՒԼԱ**, *գ. Գինու կավե շատ փոքրիկ թաս, որով խմում էին հին և բուրավետ գինի:*

* Բըղըրի լուսին մէրդ ես իկյե, կավկուլա՝ քյո քյեռըստանք, *Լիալուսին՝ կլորիկ դեմքով մորդ ես քաշել, բուրմունքով՝ քեռիներիդ:*

**ԿԱՎԼԸՌ**, *գ. Մեկ տարեկան ոչխար:*

**ԿԱՎՈՏԵԼ**, *նբ. Ցեխոտել:* Վոտըս կավոտի:

**ԿԱ̈ՎՈՒՐՄԱ̈**, **Կ̂ԱՎՈՒՐՄԱ**, *Բմ.*, **ԿԱՎՈՒՐՄԱ**, *Հթ., գ. Իր հյութի և յուղի մեջ տապակած միս, որ կճուճների մեջ պահում են որպես ձմռան պաշար:* Կիհյտեր կա̈վուրմա̈ իփիցին *(Վն.)*:

**ԿԱՏԱՆ**, *գ. Գզրար:*

**ԿԱՏԻԿ**, *գ. 1) Նավակատիք, կրոնական տոն, երբ պաս չէին պահում, սակայն միս էլ չէին ուտում. բավարարվում էին ձվով ու կաթնեղենով: 2) Կատարինե կանացի անունը չունևորների համար դառնում էր* Կատիկ, *իսկ ունևորների համար՝* Կատարինե խաթուն:

**ԿԱՐԱ**, *ած. 1) Սև: 2) Խենթուկ, խև:*

**ԿԱՐԱԳՅՈԶ**, *1) ած. Սևաչյա: 2) գ. Խամաճիկով գործող թուրքական ժողովրդական թատրոնի գործող անձ:*

**ԿԱՐԱԴԱՇ**, *գ. Ծանրության կշռի չափ, քաղաքացիական օխկա, որ փոքր-ինչ ավելի էր մեկ կիլոգրամից:*

**ԿԱՐԱ-ԽԱԲԱՐ**, *գ. Սև լուր, գույժ:* Թակավոր էսա կարա-խաբար վոր կըլըսի, ախն ուր կըպըռնի:

**ԿԱՐԱՍԱ̈ՎԴԱ̈**, *գ. Սևամաղձություն:*

**ԿԱՐԱՎՈԼ**, *գ. Պահակ:*

**ԿԱՐԱՐ**, *գ. 1. Պայման, դաշինք: 2. Բանտարկության վճիռ, որոշում:* Քյ՚ննի տարի կարար տըլվին:

**ԿԱՐԱՉԻ**, *ած. Անզգամ, բոռբոռացող:*

**ԿԱ̈ՐԱ̈Ր**, *գ. Մեծ ջվալ:* Արդի կա̈րա̈ր շըլկեր ի:

**ԿԱՐԱՓՇԻԿ**, *գ. Սև կատու:* Վա՛յ կարափշիկ, վա՛յ կարափշիկ, քյո մէրն ուտի քյո թըշիկ:

**ԿՅԱ̈ՐԸՆՑԱՆ**, *գ. Գարնանացան:*

**ԿԱՐԻԲ**[1], *ած. գ. Պանդուխտ:*

**ԿԱՐԻԲ**[2], *հթ.*, **Կ̂ԱՐԻԲ**, *կճ. Լիմ, ած. Օտարական:*

**ԿԱՐԿԱԲՈՒՌՆՈՒ**, *գ. Ոսկերչական գործիք՝ սուր ծայրով, թելքաշ:*

**ԿԱՐԿԸՎԵԼ**, *կճ. չբ. Ամուսնանալ:*

**ԿԱՐ-ԿՈՒԹ**, *գ. Կար:* Կիյտեր կոլոնվել են մէյտեղ, կար-կութ կանեն, խարսնիս ի:

**ԿԱՐՄԻՐ ՔՅԱՄԻ**, *Մարմնի որոշ մասերի կարմրելն ու կարծրանալը:*

**ԿԱՐՄՐԱԺԵՌ**, *ած. Կարմրավուն:*

**ԿԱՐՄՐԵՆԻ**, *գ. ած. Խաղողի տեսակ:*

**ԿԱ̈ՐՏԱ̈ՑՎՈՐ**, *1) ած. Գրագետ, ընթերցասեր:* Կա̈րտա̈ցվոր ի փէյդա էլէ կյըլխիս: *2) գ. Կախարդ, հմայող:*

**ԿԱՐՔՅԵԼ**, *նբ. Ամուսնացնել:* Ուրիշ կյեղից ախչիկ պիրին, ուրենց լաճուն կարքյիցին:

**ԿԱՐՔՅՎԵԼ**, *չբ. Ամուսնանալ:*

**ԿԱՐՈՍ**, *գ. Մաղադանոս, պետրուշկա:*

**ԿԱՓԱԹՄԻՇ ԱՆԵԼ**, *Փակել, գոցել, ծածկել:*

**ԿԱՓԱՂ**[1] *(նաև՝ հթ.)*, **Կ̂ԱՓԱՂ**, *կճ. գ. Կափարիչ:*

**ԿԱՓԱՂ**$^{2}$, *Բմ. գ. Ընկույզի, նշի, ծիրանի կորիզի պատյան։*

**ԿԱՓԱՄԱ**, *գ. Երկարուկ աթոռ, նստարան՝ նախատեսված 4-5 հոգու համար։*

**ԿԱՓԱՄԱՁԻ**, *գ. Ատաղձագործ, կափամա պատրաստող։*

**ԿԱՓԱՄԱՁՅԱՆ**, *գ. Ատաղձագործյան։*

**ԿԱՓԼԱՆ**, *գ. Ինձ, վագր։*

**ԿԱՔԱՎ**, *գ. Գութանի մաս։*

**ԿԱՔԱՎՈՒ ՏՈՏԻԿ**, *Բույսի տեսակ։*

**ԿԱՖԱ**, *գ. Գլուխ։*

* Ինոր խամմար կաֆեյտ ի բօշ, *Դրա համար է ձեր գլուխները դատարկ։*

**ԿԱՖԱԴԱՐ**, *ածն. Մտերիմ, համախոհ գաղափարական։*

**ԿԱՖԱՍ**, *գ. Վանդակ։*

**Կ$^{3}$ԵՂ**, *գ. Գյուղ։* Կ՚եղը կայնի, կ՚էրանդի կըկոտրի։ Ակօն կ՚եղ կըմընա *(Վն.)։*

**Կ$^{3}$ԵՂԱԿԱՆ**, *ածն. Գյուղական։*

**Կ$^{3}$ԵՂԱՄԷՋ**, *գ. Գյուղի կենտրոն։* Բէնամուս էլա կ՚եղամէչ։

**Կ$^{3}$ԵՂՎԱՆՔ**, *գ. Գյուղեր։*

**Կ$^{3}$ԵՂԱՎԸՐԱ**, *մկ. Գյուղականորեն, հարևանցիորեն։* Կ՚եղավըրա շինեց-տըվեց, պիրին տուն։

**ԿԵՆՈՎ-ԿԵՆԴԱՆԻ**, *ածն. Ողջ և առողջ։* Ք՚անի վոր տո՛ւ ու ես կենով-կենդանի ենք՚, մէյ մէկու տերն ենք։

**ԿԵՌԹ**, *գ. Բույս, որի արմատից սարի ծամոն էին պատրաստում։* Կեռթէ ծամոն։

**ԿԵՌԻԿ**, *գ. Կոկորդ։*

* Կեռիկը կապվել, *Ախորժակից ընկնել։*

* Կեռիկը փայվել, *Պապանձվել։*

**ԿԵՌԱԿԱՊՎԵԼ**, *չբ. Ահից պապանձվել։*

**ԿԵՍՐԷՐ, ԿԷՍՐԷՐ**, *հթ. գ. Սկեսրայր։* Կեսրէր ուր խարսին// խարսուն շատ կըխամ‌փէր// կուզէր// կըսիրէր *(Վն.)։*

**Կ$^{3}$ԵՏ**, *գ. Գետ։*

**Կ$^{3}$ԵՏԻՆ**, *գ. Գետին։*

**ԿԵՐԿՈՒԽ**, *ածն. Շատ ուտելուց հիվանդացած։*

**ԿԵՐՑԱՎ**, *գ. Տիրամոր յարա՝ վերք, փտախտ։*

**Կ$^{3}$ԷԼ**, *գ. Գայլ։* Մարդըմ առանց փարայի, կ՚էլըմ առանց ատամի։ Կ՚էլն անօթութենէ սար չէլնե, կասեն՝ կըշտութենէ կըպատռի։ Տէրովին տէրն ի տարե, անտէրին՝ կ՚էլն։ Կ՚էլն ու ոչխարը մէյ օր են ծընվե։

**Կ$^{3}$ԷԼ-Կ$^{3}$ԱԶԱՆ**, *գ. Գայլ-գազան։* Տարցիր ի կ՚էլ-կ՚ազան։

**Կ$^{3}$ԷԼ Ի ՑԻՆԵ**, *Լիմ, Արև եղանակին տեղատարափ անձրև։*

**Կ$^{3}$ԵԼՎԱԶ**, *գ. Վանա ծովակի վրա հարավ-արևելքից փչող քամի։*

**Կ$^{3}$ԵԼՈՒԿ**, *գ. Բույս, որ փաթաթվում է ծառերին ու խեղդում։*

**ԿԷԾԱԿ**, *գ. Կայծակ։*

**ԿԷԾԷԼԿԸՐԱԿ**, *գ. Վառ կրակ։*

**ԿԷԾԿԸԼՏԱԼ**, *չբ. Կայծկլտալ։*

**ԿԷԿԱՃ**, *ած. Եռանկյունաձև։* Յորենի կէկաճ ջըվալ շըլկել, ք՚առ-սուն մատ էրկէն թարանջէն էլնել ու թագիր շուռ տալ։

**ԿԷԿԷՆ**, *գ. Երեխայի ոտքի կանգնելը։*

**ԿՅԷՃ**, *ած. Գեջ, թաց։*

**ԿԷՃԱԿ**, *Վն. գ. Եռանկյունաձև պարկ։*

**ԿԷՄԱՌ**, *գ. Փայտյա կեռ կամ ճանկ, որ կապում են թոկի ծայրին և ձգում թոկը՝ բեռ բարձելիս։* Կէմառ չըվըընի ծէր կէ-ղէր *(Կճ.)։*

**ԿՅԷՄԷՇ**, *Լիմ, գ. Գոմեշ։*

**ԿՅԷՇ**, *ած. Գեշ։* Էշն ինչ կ՚իտի՝ կ՚էշն ինչ ի։ Կ՚էշ օրըդ էսօր էլնի։

**ԿԷՍԻԿ**, *գ. ած. Քաղցր սալոր։*

**ԿԷՍ ՉԱ̈Փ**, *Լիմ, գ. Հացահատիկ չափելու փայտե աման։*

**ԿՅԷՐԱԿՈՒԼ**, *Լիմ, գ. Կերակուր։*

**ԿՅԷՐԱՆ**, *գ. Գերան։*

**ԿՅԷՐԷԶՄԱՆ**, *գ. Գերեզման։* Կ՚էրէզմըընի ք՚ար կենդանանոց կը-պիրին։ *Ծան. – Վանում շի-նաքար չկար։ Բերդապարս-պի համար, ինչպես պարզել է գերմանացի գիտնական Լեման Հաուպտը, ուրարտա-ցիները քարը ծովով բերել են Մանազկերտից։ Վանե-ցին տունը կառուցում էր հում աղյուսով, իսկ գերեզմանա-քարը բերում էր Հայոց ձոր գավառակի Կենդանանանց գյուղի քարհանքներից։*

**ԿՅԷՐԷԶՄԱՆԱՏՈՒՆ**, *Վն., գ. Գերեզմանատուն։* Մեռելոցին կիհ՚տեր կընացին կ՚էրէզմանատուն *(Վն.)։*

**ԿՅԷՐԷԶՄԸՆՈՑ**, *տե՛ս* **ԿՅԷՐԷԶ-ՄԱՆԱՏՈՒՆ**։

**ԿԷՐԸՆԴԻ**, **ԿՅԷՐԸՆԴԻ**, *Հթ., գ. Գերանդի։*

**ԿԷՐ-ՉԸԿԷՐ**, *Լինում է, չի լի-նում։*

**ԿԷՕՐՕՎՐԵԼ**, *նբ. 1) Գորովել։ 2) Քաղցրությամբ համոզե-լով ճանապարհել։ 3) Երեխա-ների սիրտն առնել։*

**ԿԸԴԻ՛-ԿԸԴԻ՛**, *ձ. Այծ, ոչխար կանչելու ձայնարկություն։*

**ԿԸԴԻ ՏԱԼ**, *Կճ.,* **ԿԸԴԻ-ԿԸԴԻ ՏԱԼ**, *Լիմ, Խուտուտ տալ։*

**ԿԸԴԻԿ**, *գ. Խուտուտ, խտղտոց։*

* Կըդիկ անել, *Խուտուտ տալ։* Ընթի տակ կըդիկ կանէր, կըծըըծղա-ցուցէր։ Կըդիկ մի անե, չեմ կանա չըծըըծղա։

**ԿԸԴՐԱՆՈՑ**, *գ. Կշռաքար, տասներկու նուկի։*

**ԿԸՁ**, *գ. Թուրք օրիորդ։*

**ԿԸՁԱՐԹՄԱ**, *գ. Ճաշատեսակ, նման եվրոպական բիստրո-գանի (բառացի՝ աղջիկ, մի՛ ավելացնի)։*

**ԿʲԸԶԵԼ**, *նբ. Գզել։*

**ԿԸԶԿԸԶԵԼ**, *Հթ. նբ. Պատառոտել։* Էտա անտէր շուն իմ ֆըստանի փեշ կըզկըզեց *(Հթ.)*։

**ԿԸԶՄԸԶՏԱԼ**, *չբ. Կաղկանձել։*

**ԿԸԶՎԵԼ**, *չբ. Կռանալ։*

**ԿԸԶՏԻԿ**, *գ. Փոքր երեխայի չոր կղկղանք։*

**ԿԸԹԱՆ**, *ած. գ. Կաթնատու (կով, էգ գոմեշ)։* Տանը չորս կըթան կէր։

**ԿԸԹԽԱ**, *գ. Բաժակ, գավաթ։* Ծով քʲե կʲինի, գյամին քʲե կըթխա, տո̈ւ լից, տո̈ւ խըմի, աստված քʲե կուտա։ ***Ծան.*** *– Ասում էին նրան, ում գործերը շատ հաջող էին ընթանում։*

**ԿԸԹՈՑ** *(նաև՝ Հթ. Կճ. Լիմ), գ. Կովկիթ։* Կըթոց առեց//առավ, կընա̈ց բէր. կընա̈ց, վոր կօվ ու վըչխըրներ կըթի *(Վն.)*։ Կըթոց առավ, կընա̈ց կօվ կըթի *(Կճ.)*։ Կըթօց կըլօրավ, կաթ թա̈փավ *(Հթ.)*։ Կըթոց վիրու, կʲընա̈ կօվ կըթի *(Լիմ)*։

**ԿԸԹՈՒԿ**, *նբ. ած. գ. 1) Արդեն կթված կով, գոմեշ, ոչխար։ 2) Բերքը հավաքված այգի։*

**ԿԸԹʲՈՒՆ, ԿԸԹՈՒՆ**, *Բմ. գ. Ընկույզի միջուկ։* Քʲո ուտածը նուշ, շաքար, գʲո̈զի կըթʲուն։ Գʲո̈զի կըթնօվ ու մեղրով կօզինախ կըշինեն *(Վն.)*։

**ԿԸԺԱԼ**, *չբ. 1) Կոկորդային ձայներ հանել։ 2) Ականջը շշել, կանչել։*

**ԿԸԺԿԸԺԱԼ**, *տե՛ս* **ԿԸԺԱԼ**։

**ԿԸԺՈՑ**, *գ. Աղմուկ, ժխոր։*

**ԿԸԺԸՐԿՏԱԼ**, *չբ. Խառնիխուռն ձայներ հանել։*

**ԿԸԺԸՐԿՏՈՑ**, *չբ. Խառնիխուռն ձայներ, ժխոր։*

**ԿԸԺՎԸԺՈՑ**, *գ. Խառնակ ձայներ։*

**ԿԸԼԱԹ ԽԸՆՁՈՐ**, *Խլաթի խնձոր, նման բելֆլորին։*

**ԿԸԼԱՅԿՈՒՆ**, *ած. Կլայեկած, անագապօծած աման։*

**ԿԸԼԱՎ, Կ̂ԸԼԱՎ**, *Կճ. ած. Գեր։* Կըլավ վոչխար//վոխչար, կըլավ մարթ *(Վն.)*։

**ԿԸԼԱՎՆԱԼ**, *չբ. Գիրանալ, չաղանալ։* Կընիկըտ կըլավցեր ի։

**ԿԸԼԵՊ**, *Վն. գ. Կեղև։* Փա̈թա̈թէզի կըլեպ *(Վն.)*։

**ԿԸԼԸԳՕԶԻ**, *Հթ. գ. Գլուխկոնծի։* Խօտի վըրէն կըլըգօզի տըվեց *(Հթ.)*։

**ԿԸԼԸԴԱ**, *գ. Գլխարկի, գդակի կապ, որ անցնում է ծնոտի տակով։*

**ԿԸԼԸՂ**, *գ. 1) Հագուստ։ 2) Կերպարանք, տեսք։*

**ԿԸԼԸՂՍԸԶ**, *ած. 1) Վատ հագնված։ 2) Վատ տեսքով։*

**ԿԸԼԸՂ-ԿԻԱՖԱԹ**, *գ. Հագուստ-կապուստ, արդուզարդ։* Թակավորն ուր կըլըղ-կիաֆաթ կըփոխի։

**ԿԸԼԸՄԲՕԶ** *(նաև՝ Լիմ)*, **ԿԸԼԸՄԲՈ̈Զ**, *Հթ. գ. Ճակնդեղ։*

Կըլըմբօզ կըխաշեն, կուտեն *(Վն.)*։ **Ծան.** – *Այգեստանում սպիտակ ճակնդեղ չի եղել։*

**ԿԸԼԸՆԴՐԷԿ**, *ած. 1) Ողորկ։ 2) Գեր ու սիրուն երեխա։*

**ԿԸԼԸՆԴՕԶ**, *ած. Ճաղատ, անմազ։*

**ԿԸԼԸՋ**, *գ. Թուր։*

**ԿԸԼԹԿԸԼԹԱԼ**, *չբ. 1) Նեղվիզ ամանից ջուր խմելիս ձայն լսվել։ 2) Կերակուրը եփվելիս, խմորը թթվելիս ձայն արձակել։*

**ԿյԸԼԽԱՎԱՐ**, *գ. Արտի գլխի վար։*

**ԿյԸԼԽԱԿՈՐԻ**, *գ. Բույսի տեսակ։*

**ԿԸԼԿԸԼԻԿ**, *գ. Նեղվիզ ջրաման, փարչ։*

**ԿԸԼՈԾ**, *Հթ., ԿԸԼՕԾ, Լիմ, գ. Բաղարջ։*

**ԿԸԼՈՐԵԼ**, *Վն. նբ.* Քյար կըլորիցին, պիրին տան ա̈ռա̈ճ *(Վն.)*։

**ԿԸԼՈՐՎԵԼ**, *կբ. Գլորվել։* Կըլորվէ խուփ, կընդէ պուտուկ։

**ԿյԸԼՈՒԼԻԿ**, *գ. Քյուֆթա։*

**ԿԸԼՈՒՉ**, *գ. Փոքր երեխա։*

**ԿԸԼՑՈՒՑԵԼ**, *Հթ. նբ. Կուլ տալ։*

**ԿԸԼՊՈԿԵԼ**, *նբ. Կեղևել։* Փա̈թա̈թէզ կըկըլպոկեն։ Փա̈թա̈թէզ կըլպոկիա̈, տիա̈ սեղնին։ Իփի, կըլպոկի, տիր սեղանին։ **Ծան.** – Կըլպոկել *հիմնականում ասվում է ձեռքով մաշկահան անելուն, իսկ* կըճպել՝ *դանակով կամ ձեռքով մաշկահանելուն։*

**ԿԸԼՎԱՏ**, *ած. Թլվատ, թոթով։*

**ԿյԸԼՕ̈Խ**, *գ. Գլուխ։* Կյըլօ̈խն անցավալ չեն տըընի ավիտրանի տակ։ Կյըլօ̈խը եղի, ճամբխու տիր։ Կյըլօ̈խ տազ ի, մախչա կուզի։ Կյըլօ̈խըտ կըկոտրեմ, խաթրըդ չեմ կոտրի։

* Կյըլօ̈խն առնել ու փախչել, ***Հուսահատությունից գնալ, կորչել։***

* Կյըլօ̈խը լըվալ, ***Խաբել։***

* Կյըլօ̈խը ծանրացիր ի, ***Հիմարություններ է անում, որ պատժեն, գլխատեն։***

* Կյըլօ̈խից ծէռ քյաշել, ***Մահն աչքն առնել։***

* Կյըլօ̈խին ծո̈ւն տըրեց, ***Փորձանք բերեց գլխին։***

* Կյըլօ̈խը կյըլօ̈խի, ***Միասնաբար, խորհրդակցելով։***

* Կյըլօ̈խ իըմէն քյարի զա̈րնել, ***Ամեն միջոցի դիմել։***

* Կյըլօ̈խին նըստել, ***Բռնանալ։***

* Կյըլօ̈խովս շատ պա̈ն ի ընցէ, ***Ամեն բան տեսել եմ։***

* Կյըլօ̈խ պահել, ***Դասալքել, իրեն փորձանքից հեռու պահել։***

* Կյըլօ̈խ չեմ կանա քյորե, ***Բոլորովին ժամանակ չունեմ։***

* Կյըլօ̈խը սանդը տըընել ու ծիծել, ***Աղաչել-պաղատելով զահլա տանել։***

* Կյըլօխ տանել, *Զանձրացնել, Հոգնեցնել:*

* Կյըլխից տո՛ւս տալ, *Շաղակրատել:*

* Կյըլխին տալ, *Ծեծել:*

* Կյըլօխ տայցի, *Հարբել է:*

**ԿԸԼՕՃ**, *գ. Ջեկած խմորից եփված հաց, որ հատկապես թխում են Ջրաղացում՝ նոր աղացված ալյուրից:*

**ԿԸԼՕՐ[1]**, *գ. Սեխ: Ծան. – Վանում բուծվող սեխն Արարատյան դաշտում կոչվում է* ջարջառ: Կարապետ աղա, կըլօր-ծըմրո՛ւկ պըրծեր ի, Կուկազի խայտուն ասեմ մէյ սէյըրմ էլ ճա՛մբխի:

**ԿԸԼՕՐ[2]**, *ած. Կլոր:* Կըլօր ծըմրո՛ւկ *(Վն.):*

**ԿԸԼՕՐԷԿ**, *գ. Տանձի տեսակ:*

**ԿԸԽՏԻԿ**, *ած. Շատ գեր, փոքր երեխա:*

**Կ[3]ԸԽՏՈՐ**, *գ. Կաշի դաբաղելու գխտոր:*

**ԿԸԾԵԼ**, *Վն. նբ. Խայթել:* Դըզգէզ կըծեց *(Վն.):*

**ԿԸԾԷԾ**, *գ. Նախանձ:*

**ԿԸԾԻԿ ՏԸՆԵԼ**, *Փախչել:* Էտ բասի վէրէն կըծիկ տըրեց *(այդ գրույցի պահին փախավ):*

**ԿԸԾՂԵԼ**, *չբ. Ցորենի և գարու արտերը խիստ հասունանալով չորանալ, հատիկները թափթփվել:* Հունձ ա՛նկյընցեւ (վէրէն ընցեւ), արտեր կըծղիր են (կըծղե):

**ԿԸԾՎԸԾԱԼ**, *չբ. Մրմռալ կծու տաքդեղից, սոխից, սխտորից:* Վոր սոխ չես կիրե, հապա ինչի՞ կըկըծվըծաս: Սոխից ինոր աչկեր կըկըծվըծին *(Վն.):*

**ԿԸՃԱ**, *գ. Թրքուհի:*

**ԿԸՃԱՏ**, *գ. ած. Փոքր, կիսատ մոմ, ավել, մորուք և այլն:* Կըճատ ավլով զա՛րզամի տուն կավլի: Եսիր տա՛ռնամ քյո էտ կըճատ մուրուսին:

**ԿԸՃԸՄԹԵԼ**, *Լիմ, նբ. Կճմթել:* Թեվ կըճըմթեց, տեղ կապուտսավ *(Լիմ):*

**ԿԸՃԻԿ**, *գ. 1) Շատ փոքր աման: 2) Մետաղադրամ հավաքելու հատուկ աման:*

**ԿԸՃԻՐ**, *ած. Ամրակազմ:* Կա՛սաբ կըճիր կէլնի *(Վն.):*

**ԿԸՃԼԵՏԻԿ**, *գ. 1) Շորի փոքր կտոր: 2) Շատ կարճ շոր:*

**ԿԸՃՄԸՏԵԼ**, *Վն. նբ. Կճմթել:* Թեվ էնըսկըա՛ կըճմըտիր էր, վոր տեղ կապտիր էր *(Վն.):*

**ԿԸՃՊՈՐԵԼ**, *նբ. Փորփրել:* Ի՞նչ մարդ ի, առտվընէ ականջ կըկըճպորի:

**ԿԸՄԸՇԵԼ**, *չբ. Խնայել, ափսոսալ:*

**ԿԸՄՈՒՆՔ**, *գ. Քիմք:*

**ԿԸՆԱ̈Լ**, *Վն. չբ. Գնալ:* Կընա՛ց խարսնիս *(Վն.):*

**ԿԸՆԱՄԻՇ ԷԼՆԵԼ**, *Պարտավորվել:*

**ԿԸՆԱՐԻՖ ՏԱՆԾՈ**, *ած. Գնա+ հարիֆ (անփորձ, ագնիվ, միամիտ, տխմար) մարդ։*

**Կ$^3$ԸՆԱՐՓՈՒԿ**, *գ. Հոտավետ ծաղիկ, գինարբուկ։*

**ԿԸՆԳՅԱԼ**, *չբ. Մի քիչ քնել։*

**ԿԸՆԳՅՈՒԽ**, *գ. Կնգուղ։*

**ԿԸՆԴԵԼ**, *նբ. Գլուխը խուզել։*

**Կ$^3$ԸՆԴԵԼ**, *նբ. Խմորը գունդ-գունդ անել։*

**Կ$^3$ԸՆԴԼԻԿ**, *ած. Գեր, սիրուն երեխա։*

**ԿԸՆԴԸԼԻԿ$^3$ ՏԱԼ**, *Լիմ, Գլխակոնծի տալ։* Ճըժեր կընդըլիյ կուտան *(Լիմ)*։

**ԿԸՆԴԸՆԵԼ** *(նաև՝ Հթ.)*, **Կ$^3$ԸՆԴՆԵԼ, Լիմ, ԿԸՆԴՆԵԼ**, *Վն., նբ. Գտնել։* Կորուկյ կյա̈ռ կընդա̈վ *(Հթ.)*։ Կօվ կուրիսիր էր, կյընդա̈ *(Լիմ)*։ Կօվ կուրիսիր էր, մօ̈շի մէչ կընդա̈ն *(Վն.)*։

**ԿԸՆԻԿ**, *գ. Կին։* Շէն կէնէր մեր տընիկ, անուշ կէնէր մեր կընիկ։ Մարթ-կընկա մէչ մէյ պիտի էյնի զա̈նգյա̈կ, մէկէլը՝ պա̈մբա̈կ։ Պառավ կընիկ, ջահէլ իրիկ, ինչըխ շուն վէր պաղին աղանձ ուտի։

**ԿԸՆԻՔՄ ԱՌՆԵՄ**, *Մի քիչ քնեմ։*

**ԿԸՆՔԻԿԸՄ**, *գ. 1) Մի կյանք։ 2) Մի պահ քուն առնելը։*

**ԿԸՇԵԼ**, *նբ. Քշել։*

**ԿԸՇԼԱ**, *գ. 1) Բառացի՝ ձմեռանոց։ 2) Ջորանոց։*

**ԿԸՇՊԵԼ**, *նբ. Կշտամբել։*

**ԿԸՇՏԱՀԱՄ**, *ած. ծղր. Կուշտ լինելու պատճառով կերակրին դրված անուն։*

**ԿԸՊԵԼ**, *նբ. 1) Կպչել, զոդվել։ 2) Վառվել։* Փէտը թաց էր, համա կըպավ։ Կընիկ էյա̈վ, ճըրաքյ կըպուց։

**ԿԸՊՆԵԼ**, *Վն. չբ. Կպչել։* Փուշ կըպիր էր ինոր փէշին։

**ԿԸՊՉԱՆ**, *գ. Վառելու ընթացքն արագացնող չոր խոտ, տաշեղ, կյազ, փաչավրա, յուղոտ կամ ձեթոտ լաթ։*

**ԿԸՊՈՒԿ**, *չբ. ած. 1) Միացված։ 2) Կպած։ 3) Վառված։* Սօբէն *(=վառարան)* կըպուկ ի՞։

**ԿԸՊՈՒՑԵԼ**, *նբ. 1) Սոսնձով որևէ բան միացնել։ 2) Վառարանը, թոնիրը, մոմը վառել։*

**ԿԸՊՕՑ**, *Հթ. գ. Կաթսայի մեջ մնացած կերակրի տականք։* Պուտկի կըպօցի խա̈մա̈ր ճըժեր կըռվան *(Հթ.)*։

**ԿԸՌԱԼ**, *ած. 1) Հարուստ։ 2) Թագավոր։*

* Կըռալ կըտրել, *Հարստանալ։* Էտ մարթ կըռալ կըտրեց։

**ԿԸՌԱԼ-ԿԸՌԿԸՌԱԼ**, *չբ. Ագռավը, կռունկը քանիցս կանչել։*

**ԿԸՌԱՆԱԹ**, *գ. Կլարնետ։*

**ԿԸՌԱՅԱՂ**, *գ. Քառասունոտանի երևակայական գազան։*

**ԿԸՌԷԹ**, *գ. Հողի կոշտուկ։*

Անձրև էկավ, կլռէթն ինգ՚ի ք՚արի դարդ կանի։

**ԿԼՌԼՄ**, *գ. Ջարդուկի։*

**ԿԼՌԼՆԹՃ**, *ած. Շատ ծեր, ամեն պահ մահվանը մոտ։* Էլեր ենք՚ կլռլնթճ, մեր մէյ վոտ կ՚էրէզմրնի մեչ ի։

**ԿԼՌԼՆԿԱՆ ՎԱՆՔ**, *Կռունկի վանք։ Վանից Աղթամար տանող ցամաքային ճանապարհին գտնվող մի բարձրադիր վանք, որի կանթեղի ձեթը, ըստ ավանդության, սպառվում է, սակայն մի կռունկ հեռվից ձեթ է հասցնում, և վանքի եկեղեցին լուսավորվում է։ Ծան. – Վասպուրականի մյուս հայտնի վանքերն էին՝ Աղթամարա Սուրբ Նշան, Լիմ կղզու վանքը՝ Սուրբ Գևորգ եկեղեցիով, Կտուց կղզու վանքը՝ Սուրբ Կարապետի եկեղեցիով, Առտեր կղզու վանքը՝ Սուրբ Աստվածածնի եկեղեցիով, Սալնապատի կամ Սուրբ Գրիգորի վանքը, Վարագա վանքը, Կարմրավորա վանքը, Կարմրակ վանքը, Տիրամոր վանքը, Եղիշեի գերեզմանի վրա կառուցված Ջաղար Սուրբ Նշան վանքը, Հոգվոց վանքը, Փութկի Սուրբ Գևորգի վանքը, Սորադերի վանքը (Արծրունիների նախկին Էջմիածինը), Դերնկա վանքը, Նախավկայի վանքը, Թադեի վանքը, Բարդուղիմեոսի վանքը, Մեծ Օփի վանքը Արճեշում և Խեգ վանքը Հայոց ձորում։ Քաղաքում գործում էին առաջնորդանիստ Սուրբ Նշան եկեղեցին (Քաղաքամեջում), Հայկավանքի, Անգյուսներա, Սուրբ Հակոբի, Արարուց և Նորաշենա եկեղեցիները։*

**ԿԼՌԼՆՁԿԼՏԵԼ**, *նբ. չբ. Թելը, մազը խառնել։*

**ԿԼՌԹՃՆ**, *գ. Թուխս։* Կլռթճն ճետ կլխանա *(Կճ.)։*

**ԿԼՌԹԻԿ**, *Հթ. գ. Կոճիկ։* Ճիժ կլռթիկ կուտէր *(Հթ.)։*

**ԿԼՌԹԿԼՌԹԻԿ**, *ած. 1) Լավ եփած ու չորացած հաց, որ ատամի տակ կլռթ-կլռթ ձայն է հանում։ 2) Տնական պաքսիմատ։*

**ԿԼՌԻԿ**, *գ. Ագռավ։* Որ աստված կլռկան ծէն լըսի, վճրտէվըրին ծոնն կլտրընի։

**ԿԼՌԻՆՁ**, *Լիմ, ած. Գանգուր։* Ծամեր կլռինձ ի *(Լիմ)։*

**ԿԼՌԿԵՐԷՆ**, *գ. ած. Ագռավերեն, Վանում տարածված ծածկալեզուներից մեկը։ Ծան. – Կային նաև* ճընճըղկերեն, գորտերեն, բըլբուլերեն։ *Ամեն ձայնավորից առաջ ագռավի, ճնճղուկի, գորտի կամ սոխակի ձայնին համապատասխանող երկու բաղաձայն հնչյուն էր ավելաց-*

*վում, և բառը երկարում էր: Ձմեռվա երկար գիշերներին նստում էին քուրսու շուրջը և բլբլացնելով նորանոր ծաձկալեզուներ հորինում: Տարածված էր նաև Թարսերեն, երբ բառը վերջից էին արտասանում:*

**ԿԸՌՃԱՆԱ**, *գ. Մոմակալ, փոքրիկ աշտանակ:*

**ԿԸՌՃԷԼ**, *գ. ած. Տարօրինակ ատամներ ունեցող մարդ:* Շունըս ըլնես, ատլավոր կըռճէլ:

**ԿԸՌՃԵՄ**, *գ. Վատ աղացված արմտիքի թեփ:*

**ԿԸՌՃԻԿ**, *գ. Փափուկ ոսկոր:*

**ԿԸՌՃՈՆ**[1], *գ. 1) Խոտի կոշտ մասեր, որոնք անասունը չի կարողանում ուտել և թողնում է մսուրի մեջ: 2) փխբ. Մեծ հրավերքից մնացած ուտեստ:*

**ԿԸՌՃՈՆ**[2], *Լիմ, գ. Կրակ անելու կպչան:*

**ԿԸՌՃՈՒԽ**, *ած. Փոքրիկ, սիրուն:*

**ԿԸՌՃՈՒԽԻԿ**, *գ. ած. Հաջող կարված և շատ հարմար նստած հագուստ:*

**ԿԸՌՄԱ**, *ած. Դարսավոր, պլիսե:*

**ԿԸՌՄԵԼ**, *չբ. 1) Թմբել:* Վոտըս կըռմեր ի: *2) Կուչ գալ:*

**ԿՅԸՌՆԱԿ**, *Վն. գ. Գրտնակ:*

**ԿԸՌՆԱՆԿՕՏ**, *գ. Կրիա:* Կըռնանկօտ ուշիկ կէթա̈ *(Բմ.)*:

**ԿՅԸՌՆԷԼ**, *գ. Ձեռնաքարշ սայլակ:*

**ԿԸՌՉԱԼ**, *չբ. Հոդերը կոտրվելու ձայն հանել:*

**ԿԸՌՎԸՑՈՒՑԵԼ**, *նբ. Կռվեցնել:* Տըրկըցի կընիկ էնքʸան արավ, չում խարսին ու կեսրոչ կըռվըցուց:

**ԿԸՌՏԱՆ**, *1) ած. Ներքինացված: 2) գ. Կրտած գոմեշ, որ հեզանում է և դառնում բանող անասուն:*

**ԿԸՌՏԵԼ**, *նբ. Ներքինացնել:*

**ԿԸՌՈՒԹ**, *գ. Հասկ:* Ցօրնի կըռթըներ կըթա̈փեն *(Կճ.)*:

**ԿԸՌՈՒՆՁ**, *Վն. Կճ. ած. Գանգուր:* Էրեխի մազեր կըռունձ// քանքուր են *(Վն.)*:

**ԿԸՌՈՒՆՁ-ԿԸՌՈՒՆՁ**, *ած. Գանգուր, գռուզ մազեր:*

**ԿԸՌՕՆ**, *գ. Կերպաս:*

**ԿԸՍԱ ԱՆԵԼ**, *Պատմել:* Ամեն մէյ իր կʸըլխուն կʸացած կըսա կանի:

**ԿԸՍԱՆ**, *Վն. թ. Քսան:*

**ԿԸՍՄԱԹ**, *գ. Բախտ:*

**ԿԸՍՄԱ̈Թ**, *Հթ.*, **Կ̂ԸՍՄԱԹ**, *Կճ.*, **Կ̂ԸՍՄԱ̈Թ**, *Լիմ, գ. Հասանելիք հաջողություն:*

**ԿԸՎԿԸՎԱԼ**, *չբ. Հավը, կաքավը կանչել:*

**ԿԸՎԿԸՎՈՑ**, *գ. Հավի, կաքավի կանչը:*

**ԿԸՏԱԿ**, *գ. Գդակ:*

**ԿԸՏԵՆԻ**, *գ. Թոնրի կողից թափված և կրակ ու մոխրի*

*մեջ այրված-եփված գունդ հաց, որ կերցնում էին օրիորդներին ու հարսներին, որպեսզի նրանց աղիքներում քիչ գազ գոյանար։*

**ԿԸՏԷԼ, ԿԸՏԵԼ,** *հթ. գ. Գդալ։* Ուղտ կտէլո՞վ կըճըրեն։

**ԿԸՏԸՄ,** *դ. Կենտ, մի, մեկ հատ։*

**ԿԸՏԸՐՎԵԼ,** *չբ. Միսը, բանջարեղենը կիսաեփ մնալու հետևանքով պնդանալ ու շատ դժվարությամբ եփվել։*

**ԿԸՏԸՐՏՎԵԼ,** *կբ. 1) Կոտրատվել։ 2) Մորմոքել։* Էտ վոր լըսի, ջանըս կըտըրտվեց։

**ԿԸՏԻԿ ԱՆԵԼ,** *չբ. Խուտուտ տալ։*

**ԿԸՏԻՐ** *(նաև՝ Լիմ), գ. Ոչխարի հոտ։* Խոչխարի կըտիր տա՛շտ կարաձա *(Լիմ)*։

**ԿԸՏԿԸՏ,** *գ. Հավերին կանչելու ձայն։*

**ԿԸՏԿԸՏԱԼ,** *հթ. չբ. Կչկչալ։*

**ԿԸՏՐԵԼ,** *հթ. 1) նբ. Հատել։ 2) նբ. Թալանել։ 3) չբ. Փսորվել։ 4) նբ. Զրկել։* Ինոր խացից պիտի կըտրէր *(Վն.)*։

**ԿԸՏՈՐ-ԿԸՏՈՐ ԷԼՆԵԼ,** *1) Շատ նազուտուզ անել, կոտրատվել, սեթևեթել։ 2) Անեծք. կտոր-կտոր լինել։*

**ԿԸՏՎԵԼ,** *չբ. Ոջիլ ջարդել։*

**ԿԸՏՐԱՄԱՆ,** *գ. Կտուրի վրայով առչկան մանող կին։*

**ԿԸՏՐՈՑ,** *գ. Պատանեկան խաղ։*

**ԿԸՏՐՈՒԿ,** *ած. 1) Վճռական։ 2) Սրամիտ։ 3) Բանիմաց։*

**ԿԸՏՈՒՑ ՀԱՆԵԼ,** *Գործի սկիզբը դնել։*

**Կ³ԸՐԱԽԿԱԼ,** *գ. Եկեղեցու գրակալ։*

**ԿԸՐԱՂ,** *հթ.,* **ԿԸՐԱՂ,** *կճ. Լիմ, մկ. 1) Մի կողմի վրա, դուրս։ 2) Շուրջը։*

**ԿԸՐԱՄՈՒԽԻՐ,** *գ. Թոնրից արտաքնոցները տարվող մոխիր։ Ծան. – Արտաքնոցները փակ շինություններ էին, որոնք հետևի կողմից բացվում էին սալահատակված փոսի վրա։ Արտաքնոցում դրվում էր սրտաձև անցքով սալաքար, որի երկու կողմերում լցվում էր մոխիրը։ Պետքը հոգալուց հետո երկու բահ մոխիր էր թափվում սրտաձև անցքի մեջ։ Մոխրի և մարդկային կղկղանքի, այսպես կոչված գիշերային ոսկու խառնուրդը լավագույն պարարտանյութն էր դառնում և բարեբեր դարձնում Վանի՝ ցանքի համար ոչ այնքան պիտանի հողը։*

**ԿԸՐԱՅՏԱՐՈՑԻԿ,** *գ. Կրակտարոցիկ, Վանի պատանիների սիրած խաղ։*

**ԿԸՐԱՐ,** *գ. 1) Պայման, դաշինք։ 2) Բանտարկության որոշում, վճիռ։*

**Կ³ԸՐԵԼ,** *նբ. Գրել։*

**ԿԸՐԸՐԱ, ԿԸՐԻՐԱ**, *Հթ. Լիմ, գ. Կրիա։* Տըղէյներ կըրըրա ին պըռնե *(Վն.)*։ Ծըժեր կըրիրա են պըռնե *(Լիմ)*։

* Կըրըրէն ուր կօտից փա՞խս ի, *Կրիան իր պատյանից հրաժարվո՞ւմ է, այսինքն՝ քարացած սովորությունից դժվար է հրաժարվել։*

**ԿʸԸՐԿԵԼ**, *նբ. Գրկել։*

**ԿԸՐԿԷՆԻ**, *Վն. գ. Բաղարջ։*

**ԿԸՐԿԸՉԱԼ**, *չբ. Թռչունները ձայն հանել, դայլայլել։*

**ԿԸՐԿԸՏԱԼ**, *չբ. Ցավ զգալ։* Ծեռներըս կըկըրկըտան։

**ԿԸՐԿԸՏԵԼ**, *չբ. Ոսկորը սաստիկ ցավել։*

**ԿԸՐԿԸՐԱԼ**, *չբ. Բարձրաձայն ծիծաղել։*

**ԿԸՐԿՈՒՏ**, *գ. Ոսկրացավ, հոդացավ։*

**ԿԸՐՄԸՋԻ**, *ած. Կարմիր։*

**ԿԸՐՆԱՆԿՕՏ**, *Բմ. գ. Կրիա։*

**ԿԸՐՅԱՆՑ**, *ած. Գրագետ։* Մեր Արթէնն էլ կըրյանց ի, համա չըկըրա զի քʸաշէ։

**ԿʸԸՐՈՂ**, *գ. Գրող, հոգեառ հրեշտակ։*

**ԿʸԸՐՈՑ-ՊԸՐՈՑ**, *գ. ած. 1) Մտավորական։ 2) Գործնական մարդ։* Նա կʸըրոց-պըրոց ի, ինոր պա՛ն մի խարցուցե։

**ԿԸՐՎԸՐԱԼ**, *չբ. 1) Կաքավը դայլայլել։ 2) Ուրախանալ։*

**ԿʸԸՐՏՆԱԿ**, *գ. Գրտնակ։*

**ԿԸՐՈՒԿ**, *նբ. ած. Տեղափոխված, փոխադրված։* Ալուրը հըմէն կըրուկ ի։

**ԿԸՑԻՊ**, *ած. Դժվար ջարդվող։* Գուզ կըցիպ ա *(Կճ.)*։

**ԿԸՑՄԵԼ**, *Հթ. չբ. Ցրտից մատները կուչ գալ։*

**ԿԻԾԵՊ**, *Հթ. Լիմ, գ. Մանր որդեր, որոնք լինում են մսի, լեշի վրա ճանճեր նստելուց հետո։*

**ԿԻՐԻՐԱ**, *գ. Կրիա։* Ծըժեր կիրիրա պըռնին *(Կճ.)*։

**ԿԸՃՈՒՃ**, *Վն. գ. Յուղի, պանրի, ղավուրմայի միջին չափի աման։* Սաթօն կըճուճի մէչ յեղ ու պանիր կըպախէր *(Վն.)*։

**ԿʸԸՆԴՆԵԼ**, *Լիմ, նբ. Գտնել։*

**ԿʸԸՌՏԸՆԱԿʸ**, *Հթ. գ. Գրտնակ։*

**ԿʸԸՏԷԼ**, *Լիմ, գ. Գդալ։*

**ԿԻԱՄԱԹԻՆ**, *ած. 1) Հավիտյան։ 2) Չլինելիք։*

**ԿԻԴԸՐ**, *գ. 1) Կշռաքար, տասներկու նուկի։ 2) Լիտր, 12 նուկի, նախկին 400 գրամը. ամեն մի նուկին համարյա հավասար է մեկ կիլոգրամի։*

**ԿԻԼ**, *գ. Փափուկ քար, որ գործ էր ածվում լվացքի, մանավանդ ձեռքերը լվանալու ժամանակ։*

**ԿԻՄԱ**, *գ. Ծեծած, մանր կտրատած մսից պատրաստված կերակուր։*

**ԿԻՄԱ-ԿԻՄԱ**, *ած. Պատառ-պատառ։* Կիմա-կիմա կանեն, մեծ պրտուճ ականջ կըթողնեն։

**ԿԻՅՄԱԹ**, *գ. Արժեք, գին։*

**ԿԻՅՏԵՐ**, *գ. Կանայք։*

**ԿԻՆԵԼ**, *չբ. Վիճակվել, ստացվել։* Քյե կինի շինել իմ ժամ *(դու պիտի կառուցես իմ եկեղեցին)։*

**Կ$^{3}$ԻՆԻ**, *գ. Գինի։* Կʲինուց էլած քʲացախ սայթ կէլնի։ Կʲինի չունես, կʲինու կարաան ի՞նչ կանես։

**Կ$^{3}$ԻՆՁ**, *գ. Գինձ։*

**ԿԻՇԽԵԼ**, *չբ. Համարձակվել, իշխել։*

**ԿԻՍՏԱԽԱՄ**, *գ. Կիսով չափ դատարկ կարասի անախորժ հոտ։*

**ԿԻՍՐԱՐ**, *Վն. գ. Արտատեր և արտում աշխատող շինական, որոնք կիսում էին ստացված բերքը՝ դառնալով կիսրար։* Կիսրարներ պերքʲ խալալ կէս կանին *(Վն.)։*

**ԿԻՏՆԱԼ**, *նբ. Գիտենալ։*

**ԿԻՏՆԱՎՈՐ**, *գ. Գիտնական։*

**ԿԻՏՈՍԻԿ**, *ած. Շատ գիտուն, սոփեստ։*

**Կ$^{3}$ԻՐ**, *գ. Նամակ։* Կʲիր էկավ։

**ԿԻՐԱՅՄՈՒՏ**, *գ. Շաբաթ երեկո։*

**ԿԻՔ$^{3}$**, *ած. Պինդ, ամուր։* Կի՛քʲ կապիցիր։

**ԿՅԱ̈Ջ**, *գ. Կպչան ծառայող փշատերև բույս։ Կա երկու տեսակի կյազ՝* կարմիր կյա̈զ *և* թըստան կյա̈զ։ Տըկլոզ քʲամկով կյա̈զ կըկրես։

**ԿՈԴՐԱԹ**, *գ. Կարողություն, հարստություն։*

**ԿՈՁԱԿ**, *գ. Ձոխ։* Խավըրծըլի կոզակ *(միջուկն ուտվում է)։*

**ԿՈՁԲԱՆԴ**, *գ. Նորափեսայի պարեգոտ։*

**ԿՈՁԿԵԼ**, *նբ. Ձոխը մաքրել, կլպել։*

**ԿՈԹ**, *Հթ. գ. Ծղոտ։* Ցօրնի կօթեր կանեն հա̈րթ *(Հթ.)։*

**ԿӦ ԹԻ**, *Հթ. ած. Ծույլ։*

**ԿՈԹԸՂՔՈՒՆ**, *ած. Հուժկու, թիկնավետ (մարդ)։*

**Կ$^{3}$ӦԼ**, *Հթ. 1) ած. Գոլ։* Կʲӧլ ճӧւր։ *2) գ. Տաքություն։ 3) գ. Գոլորշի։*

**ԿՈԼԱՑ**, *ած. Հեշտ։*

**ԿՈԽԿԸՌՃԵԼ**, *նբ. Կոխոտել, տրորել։*

**ԿՈԾ**, *ած. 1) Գոց, փակ։* Տӧւռը կոծ ի։ *2) Անգիր արած։* Տա̈սը կոծ ի արե։ *Ծան. – Այսինքն՝ գիրքը գոցել, փակել է, դասը կարդացել է։*

**ԿՈԾԵԼ** *(նաև՝ Լիմ), նբ. Փակել։* Տӧւռ կոծիա̈, տիա̈ *(Լիմ)։*

**ԿՈԿՈՃԻԿ**, *գ. Փոքր շերեփ։*

**ԿՈԿՈՒԿ**, *նբ. ած. Հարթված։* Տախտակը կոկուկ ի։

**Կ$^{3}$Ӧ Ղ**, *ած. գ. Գող։* Կʲӧղը կʲӧղից կʲӧղցավ, աստված վէրէն զարմա-

ցավ: Կյո̈ղը չամչընա, կյո̈ղ ասողը կամչընա:

**ԿՈՂԱԿ**, *գ. Վանա գետակներում ապրող ձուկ:*

**ԿՈՂ-ԿՈՒՇՏ**, *գ. Շրջապատ, շրջակայք:*

**ԿյՈ̈ՂՆԱԼ**, *նբ. Գողանալ:* Կյո̈ղցած սապոնը շոտ կըտըրորվի:

**ԿՈՂԻՆՁ** *(նաև՝ Լիմ), գ. Կորիզ:* Ծիրնի կողինձ *(Վն.)*: Տանձի կողինձ *(Վն.)*: *Ծան. – ձմերուկի և սեխի սերմ:* Ծըմրո̈ւկի սերմ *(Վն.)*:

**ԿՈ̈ՂՏՈ̈ԽԿյ**, *Հթ. ած. մկ. Գաղտնի:*

**ԿՈՂՔԱՎԵՐ**, *գ. Ամանի տեսակ:*

**ԿՈՃ[1]**, *գ. Ծառի արմատ, որն ամբողջությամբ հանվում էր և օգտագործվում որպես վառելիք, որովհետև վառելիքը Վանում շատ սուղ էր: Շրջապատում անտառ չկար, վառելափայտը նավով բերում էին ծովակի հարավային ափերից և վաճառում* չագրակով:

**ԿՈՃ[2]**, *գ. Կորիզ:* Ծիրնիմ կոճ *(Բմ.)*:

**ԿՈՃԵԼ**, *նբ. Հունցել:* Խմորը զոռով կոճիցինք:

**ԿՈՃՂԷՁ**, *գ. Գետնախնձորի տարատեսակ, որ նույնպես ուտվում էր հում-հում:*

**ԿՈՄԲՈՒՌՆՕ**, *ած. մկ. Կոշտ ու պռոշտ, կոշտ ու կոպիտ:*

**ԿՈՆ[1]**, *Վն. գ. Հնձելիս գերանդու բերանից ընկած խոտի, ցորենի յուրաքանչյուր շերտը:* Մէյ կոն խոտ *(Վն.)*:

**ԿՈՆ[2]**, *գ. Մեծ վրան:*

**ԿյՈ̈Ն** *(նաև՝ Լիմ), գ. Գույն:* Ախչիկ ամօթից կըկարմըրի, կյո̈ն կուտա, կյո̈ն կառնի:

**ԿՈՆԴԻԿ**, *գ. ած. Քիստ չունեցող ցորենի տեսակ:*

**ԿյՈ̈ՆԸՍԿյՈ̈Ն**, *ած. Գույնզգույն, խայտաբղետ:*

**ԿՈՇԿԵԼ**, *Վն. նբ. Կոճակել:* Խալվի կօփչաներ կոշկեց *(Վն.)*:

**ԿՈՉ**, *Հթ.*, **ԽՕՉ**, *Լիմ, գ. Արու ոչխար, խոյ:*

**ԿՈՊԸՌՆԱՏ**, *ած. Բիրտ, կոպիտ, անտաշ:*

**ԿՈՌԱԴԱՐ**, *ած. Անտեր, անտոհմ: Ծան. – Քրդերեն բառացի՝ որևէ զանցանքի համար տոհմից մերժված, վտարված: Վանում գործածվում էր որպես անեծք: Բառացի իմաստը մոռացության մատնված լինելու պատճառով տարածված էր նաև* կոռադար ուտիս *ձևը:*

**ԿՈՌԱԿՈՒՏՈՇ**, *1) գ., ած. Ջարությունից կոտոշը մի տեղ խփած ու ծռած (անասուն): 2) ած. Ըմբոստ, անհնազանդ:*

**ԿՈՌԿյԸԼՈՒԽ**, *ած. գ. Դավ նյութող անձ:*

**ԿՈՌԻ**, *գ. Կալսելու համար պարանով իրար կապված մի*

***քանի անասուն, որոնք շրջան են գործում կալի մեջ։***

**ԿՈՌԾԵԼ**, *նբ. Ծածկելու նպատակով որևէ իր կամ աման շուռ տալ։* Կա̈դա̈լիկը կոռծեց պըստիկ պուտուկի վէրէն։

**Կ³ՈՌԾԵԼ** *(նաև՝ Հթ.), նբ. Հյուսել։*

**Կ³ՈՌԾԸԼԻ**, *գ. Փայտածուխ։*

**ԿՈՌՃ**, *Հթ. Կճ. Լիմ, գ. 1) Կեղև։* Ծառի կոռճ, փա̈թա̈թէզի կոռճ *(Կճ.)։ 2) Ընկույզի, նշի, ծիրանի կորիզի պատյանները (Կճ. Լիմ)։* Գըզի կոռճ թա̈փեց *(Կճ.)։*

**Կ³ՈՌՏ**, *գ. Գորտ։* Կʲոռտան իրեւ թըքʲիցին, ասաց՝ փառք քեզ, ասպա̈ծ, անծրև կուկʲա̈։

**ԿՈ̈ՌՏԸՆՈՒԿ³**, *Հթ. գ. Գորտնուկ։*

**Կ³ՈՎԵԼ**, *նբ. Գովել։* Կʲովիցին Լալուխան, էլա̈վ, քʲաքʲեց պատխատ։ Տէրն կʲովեց, թոա̈ղ, փախիա̈, էլըն կʲովեց, աա̈ռ, փախիա̈։

**ԿՈՏ**, *Կճ. Լիմ, գ. Հացահատիկ չափելու փայտե աման։* Կօտօվ ցօրէն չա̈փին *(Կճ.)։*

**ԿՈՐ**, *ած. Կույր։ Ծան. – Երբ կույրը խեղճ ու համեստ մարդ էր, ասում էին, օրինակ,* տեր Մարկʲըրենց կորը *կամ* կոր Վարտան, *իսկ երբ կույրը իրեն համեստ չէր պահում, ասում էին* քյօռ։ *Բայական ձևը՝* կուրանալ։ Տա̈րպըՆի լաճ կուրցավ։

**ԿՈՐԴԻՆ**, *տե՛ս* **ԾԷԹՐԷՆ**։

**ԿՈՐԹ**, *ած. Պինդ (հողի մասին)։*

**ԿՈՐԾԵԼ**, *Վն. Կճ. նբ.։ Նույնն է՝* **ԿՈՌԾԵԼ**։ Վըլացուկ ամըհʲտեր կործեց արեվի տակ, վոր չորնան *(Վն.)։*

**ԿՈՐԿՈՏ**, *Վն. գ. Թրջած, թեփը ծեծելով հանած ցորեն։* Ծա̈վա̈րն ու կորկոտ ցորնից կըշինեն *(Վն.)։*

**ԿՈՐՃ**, *Վն. գ. Նույնն է՝* **ԿՈՌՃ**։ Գʲո̈զի կորճ *(Վն.)։*

**ԿՈՐՎԵԼ**, *Բմ. չբ. Կքել։*

**ԿՈՐ ՊՈ̈Ւ**, *Վն.,* **Կ̂ՈՐ ՊՈՒ**, *Լիմ, գ. Բու։* Կոր//քʲոռ պո̈ւն ցէրէկ պա̈ն չի տիսնա *(Վն.)։*

**ԿՈՐՑԸՆԸՆԷԿ**, *գ. Ցին, գիշատիչ թռչուն։*

**Կ³ՈՑ**, *ած. Փակ։* Կʲոց պէրան ճանճ չի մըտնե։

**ԿՈՓ**, *գ. Մուրճի տեսակ։*

**ԿՈՒ** *(նաև՝ Հթ. Կճ.), գ. Խոշոր եղջերավորների կղկղանք։* Նախիր ընցավ, փուղոց կույօվ զա̈րտըրեց *(Վն.)։* Տավրի, էշի, ծᵃիու կու *(Կճ.)։* Փա̈գյա̈ղ *(=գոմ)* հըլին կու ի *(Հթ.)։ Ծան. – Վառելափայտի սակավության և թանկության պատճառով կուն օգտագործվում էր ոչ թե որպես պարարտանյութ, այլ որպես վառելիք։ Կուից պատրաստում էին փթիր և տառթ ու վառում թոնրի մեջ։*

*Վառարանում (սօբա) վառում էին միայն փայտ։*

**ԿՈՒԲԱ**, *գ. 1) Գմբեթ։ 2) Պատշգամբ։* Քյոշկի կուբից կասի *(=պատշգամբից ձայն կտա)։*

**ԿՈՒԲԱ̈**, *Բմ. գ. Այժմյան ոճի տանիք։*

**ԿՈՒԲՐ**, *գ. Ձյութ։* Կըբրե կարաս։

**ԿՈՒԲՐԻ**, *ած. Սև։* Բըլբուլն ասաց կուբրի խավքնուն։

**Կ³ՈՒՁ ԱՆԵԼ**, *Հանցավորի նման լուռումունջ նստել։*

**ԿՈՒԶԻԿ**, *Կճ. ած. Կորամեջք։*

**ԿՈՒԶԼԱՆ** *(նաև՝ Լիմ) ած. Կուզ։* Կուզլան պառավ *(Վն.)։* Քյա̈մակյ կուզլան ի *(Լիմ)։*

**Կ³ՈՒԹԱՆ**, *գ. Գութան։ Ծան. – Գութանի ամբողջ կազմը կոչվում է սարվածք՝* Լըծենք սարվածք, էրթա̈նք կյութան։

* Կյութնի ակներ, ***Իրարից բարձր ու ցածր և փոքր ու մեծ երկու անիվներ։***

* Կյութնի առատամ (խոփտոուն), ***Գութանի մաս, որի վրա ամրացված է խոփը։***

* Կյութնի բնադա, ***Գութանի լծերին կապվող հաստակուռ երկաթե շղթա։***

* Կյութնի էշ, ***Գութանի փոքր-ինչ երկար ու կորացած, ծուռ փայտ։***

* Կյութնի թուր, ***Գութանի էշի և առատամի միջև ընկած փայտ։***

* Կյութնի լուծ, ***Զույգ եզների կամ գոմեշների պարանոցին դրվող ամուր փայտ։***

* Կյութնի խարազան, ***Գութանի էշի ամրացման տեղը։***

* Կյութնի խոփ, ***Հողը պատռող երկաթ։***

* Կյութնի կաքյավ, ***Գութանի տախտակն ամրացնող լեզվաձև փայտ։***

* Կյութնի ձնիչք, ***Խոփի առջևի երկաթը։***

* Կյութնի ճամբարակ, ***Գութանի մասերն իրար կապող կաշվե փոկ։***

* Կյութնի մաճն ու ծոմանճը, ***Ղեկաձև փայտ, որ մաճկալը բռնում ու ղեկավարում է վարը։***

* Կյութնի ոտն ու ոտնախպերը, ***Էշն ու առատամն իրար միացնող փայտ։***

* Կյութնի սամի, ***Երկաթե կամ շիմշատ փայտե երկու ամուր ձող, որ հագցնում են եզների կամ գոմեշների վզին և կապում լուծին։***

* Կյութնի սըռնի, ***Մաս, որի ծայրերին ամրացված են անիվները։***

* Կյութնի տախտակ, ***Խոփի պատռած հողը շրջող տախտակ։***

***Ծան. – Վանի հողը պինդ էր և վարուցանքի համար դժվարին։ Վարը կատարվում էր 3-5 լուծով, այսինքն՝ վեցից մինչև տասը գոմեշներով ու***

եզներով: Առաջին լուծը կոչվում էր ամոլ, որին պետք է լծված լինեին ուժեղ գոմեշներ: Առաջին լուծի վրա նստող մշակը կոչվում էր ամոլվար: Երկրորդ լուծը կոչվում էր սարծիլ, երրորդը՝ ուժտուն, չորրորդը՝ խուրիկ, հինգերորդը՝ խաղնառաջ: Տարբեր դաշտերում վարը տարբեր խորությամբ պիտի կատարվեր, և ամեն գավառակ կամ գյուղախումբ իր վարպետն ուներ, որը տվյալ վայրին համապատասխան խորությամբ վար անող խոփ էր պատրաստում:

**ԿՈՒԹԻ** (նաև՝ Հթ.), **ԿՈՒ̂ԹԻ**, Կճ. Լիմ, գ. Արկղ, տուփ (ծխախոտի, զարդեղենի):

**ԿՅՈՒԹՆԱԾ**, նբ.ած. Հերկած և վարած արտ:

**ԿՈՒԹՆԻ**, ած. Մետաքսյա: Խարսըն արժան ի կութնի դէօշկի, Բուրսայի պա̈րցի:

**ԿՈՒԼՈՒԼՈՒ**, գ. Երեխաներին պատուհասվող կապույտ հազ:

**ԿՈՒԼՈՒՂ**, **ԿՈՒԼԼՈՒՂ**, գ. Ծառայություն:

**ԿՈՒԿՈՒ**, Բմ. գ. Կկու:

**ԿՅՈՒՀԱԶ**, գ. Թանկարժեք կտորեղեն:

**ԿՈՒՃՈ՛Ւ-ԿՈՒՃՈ՛Ւ**, ձ. Հավերին կամ շներին կանչելու ձայնարկություն:

**ԿՈՒՃՈՒՌԻԿ**, գ. Աղաման, կավե փոքրիկ աման:

**ԿՈՒՄԱՆԱՅՈՎ**, մկ. Ընկերակցությամբ: Ծան. – Շատ էր տարածված կումանայով՝ հավասար դրամ դնելով Վարագա վանք գնալը և խնջույք անելը: Կումանան հավանաբար առաջացել է «կոմունա» բառից, մանավանդ որ այդ երևույթը տարածված էր ազատագրական շարժմանը զինվորագրված գաղափարական երիտասարդության մեջ:

**ԿՈՒՄԱՇ**, գ. Մետաքս:

**ԿՈՒՄԱՐ**, գ. Բախտախաղ:

**ԿՈՒՄԱՐԲԱԶ**, գ. ած. Բախտախաղով տարված խաղամոլ:

**ԿՈՒՄԲԱՐԱ**, գ. Հրթիռ, ռումբ:

**ԿՈՒՄԿՈՒՄԱ**, գ. Օղու փոքրիկ բաժակ:

**ԿՈՒՄԲԱ**, գ. Մանկական խաղ: Ծան. – Պնակաձև կավը՝ կումբան ուժգին զարկում է գետնին, պնակի միջի օդը պատռում է պնակը ու ցրում կավը:

**ԿՈՒՄՓԱՍ**, գ. Կողմնացույց:

**ԿՈՒՅԱԽՈՏ**, գ. Կուփ հոտ: Ինորից կույի խոտ կուկյա̈, Նա գյուղացի է, շինական, վըռըշիկ:

**ԿՅՈ̈ՒՅՆՈՑ**, գ. Գոգնոց:

**ԿՈՒՅՈՒՄՋԻ**, գ. Ոսկերիչ:

**ԿՈՒՅՈՒՄՋԻԲԱՇՅԱՆ**, գ. Ոսկերչապետյան:

**ԿՈՒՆԱՐԿ**, *գ. Կուր՝ անասունների աղբի աղբանոց։*

**ԿՈՒՆԴԱ̈Խ**, *Կճ. գ. Բարուր։* Ճըժի կունդա̈խ պա̈ցեց *(Կճ.)։*

**ԿՈՒՆԴՈՒԿԸԾԻԿ**, *ած. Ահից կամ հիվանդությունից կուչ եկած։*

**ԿՈՒՆԴՈՒՄԻՍ**, *գ. Գիրացած և անշարժության դատապարտված։*

**ԿՈՒՆԴՈՒՌԱ** *(նաև՝ Կճ.)*, **ԿՈՒՆԴՈՒՐԱ̈**, *Կճ., գ. Շատ ամուր, բարձրակրունկ, սրաքիթ ծանր կոշիկ, որ հագնում էին հատկապես քրդերը։* Քյըրթերաց կիհյտեր լէն կունդուռա կըխայնեն *(Վն.)։* Թիժա̈ խարսին կունդուրա̈ խաքուցին *(Կճ.)։*

**ԿՈՒՆԴՈՒՌԱՁԻ**, *գ. Կունդուռա կարող, կոշկակար։*

**ԿՈՒՆԻԿ**, *գ. Կունարկ, անասունների աղբի կուտակման վայր։*

**Կ$^3$ՈՒՆՔ$^3$**, *գ. Մի պահ քնելը։*

**ԿՈՒՇ** *(նաև՝ Հթ.)*, **ԿՈ̂ՒՇ**, *Կճ. Լիմ, գ. 1) Թռչուն։* Կո̂ւշէր թըռան, էկան *(Կճ.)։ 2) Աղեղնափայտ։*

**ԿՈՒՇԹՈՒՅԻ**, *գ. Աղվամազ, փետուր։*

**ԿՈՒՇՏ**, *1) ած. Կերած-խմած։ 2) մկ. Քով, մոտ։* Էրէխէն մօր կուշտն ի։

**ԿՈՒՌ**, *գ. 1) Թև։ 2) Բազուկ։ 3) Ազդր։* Խավի կուռ տռա̈ւր զիկ։

**ԿՈ̂ՒՌԹ**, *Բմ. գ. Ումպ։* Մէ կ՚ուռթ ճո̈ւր խըմեց *(Բմ.)։*

**ԿՈՒՌԻԿ**, *գ. Գինու կավե թաս։*

**ԿՈՒՌԿՈՒՇՈՒՄ**, *գ. Հրացանի, ատրճանակի գնդակ։*

**ԿՈՒՌՄԻՇ ԱՆԵԼ**, *Լարել։* Սըխաթ կուռմիա̈շ արա, վոր պա̈նի։

**ԿՈՒՌՆԱՋ**, *ած. Խորամանկ։*

**ԿՈՒՌՈՓ**, *գ. Կուրի մեծ գունդ։*

**ԿՈՒՌՈՒԽՉԻ**, *գ. Հանդի պահակ։*

**ԿՈՒՌՈՒՇ**, *գ. Դրամի միավոր։*

**ԿՈՒՌՕ**, *գ. Քրդի տղա։*

**ԿՈՒՌՕՆ**, *գ. Կերպաս։*

**ԿՈՒՍՈՒՐ**, *գ. Թերություն։* Էտ շորը կուսուր չունի։

**ԿՈՒՍՓ**, *գ. Կտավատի դիրտը՝ ձիթհանքում ձեթը հանելուց հետո։*

**ԿՈՒՎԱԹ**, *գ. Ուժ։*

**ԿՈՒՎԱԹԼԻ**, *ած. Ուժեղ։*

**ԿՈՒՎԱԹՍԸԶ**, *ած. Անուժ, թույլ։*

**ԿՈՒՏ**, *գ. 1) Թռչունների կեր։* Մեր տուն կուտ կուտի, տըրկըցի տուն ծո̈ւ կածի։ *2) Տանձի, խնձորի, սերկևիլի և այլնի կորիզ (Կճ.)։* Ծըմէրկի կուտ, ծիրանի կուտ *(Կճ.)։ 3) Դրամ։* Էտա մարթ կուտ չունի ուր ծեռ *(Վն.)։ 3) Թոնիրն ընկած և մոխրի մեջ խանձվելով եփված հաց (Հթ.)։*

**ԿՈՒՏ$^2$**, *Հթ. գ. Կալի հացահատիկի տականք։*

**ԿՈՒՏԱՊ**, *գ. Մեջը ոսպ ու սոխ դրած բոքոն։*

**Կ[Յ]ՈՒՏԻԿ**, *գ. Վարդապետի կամ քահանայի գլխարկ։*

**ԿՈՒՏՈՇ** *(նաև՝ Հթ. Լիմ) գ. Եղ-ջյուր։* Կօվու կուտոշներաց մէյն ինգ[յ]իր// ընգ[յ]իր էր *(Վն.)*։

**ԿՈՒՐԲԱԹ**, *գ. Պանդխտություն։* Ուր յար-յաթաղ կըժողվի, կըկապի ծիու թարք[յ], թա՞րկ դունիա կանի էս աշխըրին, կերթա կարիբ-կուրբաթ։

**ԿՈՒՐԲԱՆ**, *գ. Մատաղ։* Կուրբան էլնեմ իմ լաճուն։

**ԿՈՒՐԲԱՆ ԲԱՅՐԱՄԻ**, *Մահ-մեդականների տոն։*

**ԿՈՒՐԻՍ**, *ած. Կորած։* Էտ փարէն, վոր տըվիր, կուրիս չի։

**ԿՈՒՐԻՍԵԼ** *(նաև՝ Հթ. Բմ.)*, **ԿՈՒՐՍՎԵԼ**, *Բմ. նբ. չբ. Կորց-նել, կորչել։* Կ[յ]ընաց կուրիսավ վէր ուր տան։

**ԿՈՒՐԿՈՏ**, *գ. Կորկոտ։* Անխամ, անխոտ, ալնի կուրկոտ։

**ԿՈՒՐՏԻԿ**, *գ. Բաճկոնակի նման անթև կարճ վերնազ-գեստ։*

**ԿՈՒՐՈՒՋՈՒ**, *գ. Բողկանման մանր պալարներով քաղցր բույս։*

**ԿՈՒՑ**, *գ. Բուռ։* Մէյ կուց կուտ թա՞լ խավերաց։ Մէ կուց ճո՞ւր, մէ կուց ցօրէն *(Կճ.)*։

**ԿՍԱՆ**, *Վն. թ. Քսան։*

**ԿՕՁ**, *գ. Թղթախաղի հաղթա-կան թուղթը։*

**ԿՕԼ**[1], *գ. Վն. Բութ մատի և ցու-ցամատի միջև եղած բացված-քը։* Իմ կօլ շա պըստիկ ի *(Վն.)*։

**ԿՕԼ**[2], *գ. Խաղողի որթի ճյու-ղերը։*

**ԿՕԼԱԼՈՒՆ**, *ած. Օսլայած։*

**ԿՕԼԱՅ**, *ած. Հեշտ, դյուրին։*

**ԿՕԼԹՈՒՂ** *(նաև՝ Հթ.)*, *գ. Թևատակ, անութ։*

**ԿՕԼՁԻ**, *գ. 1) Արտերի պահակ։ 2) Մաքսանենգներին ստու-գող։*

**ԿՕԼՕՆ**, *գ. Դեզ, կույտ, շեղջ։*

**ԿՕԼՕՆԵԼ**, *նբ. Դիզել, հավա-քել։* Վըռա՞զ-վըռա՞զ սեղան պա՞ց արին, մեր տո՞ւռ-տըրկեց, պա՞րե-կամ ու խընամիք[յ] մրչման պես աչխ-փոց կ[յ]ա՞խ էկան, կօլօնվան։

**ԿՕԽԵԼ**, *Հթ. 1) նբ. Տրորել։ 2) նբ. Խոթել, մտցնել։ 3) չբ. Առաջանալ (մութը)։*

**ԿՕԽԸՐԺԵԼ**, *Լիմ, նբ. Տրորել։*

**ԿՕԽՊԷՍ**, *Բմ. Լիմ, գ. Կողպեք։*

**ԿՕԽՏՈՒԿ**, *Կճ. ած. Գաղտնի։*

**ԿՕԾՕԾ**, *Բմ. գ. Գորտնուկ։*

**ԿՕԿՌՕՇԱՆԱԼ**, *չբ. Մեծամ-տանալ, պարծենկոտ դառնալ։*

**ԿՕԿՕԼ**, *Կճ. ած. Անպոչ։*

**Կ[Յ]ՕԿ[Յ]ՎԵԼ**, *Հթ. չբ. Երես առ-նել։*

**ԿՕԿՕՆ**, *գ. մնկ. Գլուխ։*

**ԿՕՂԻՆՁ**, *Հթ.. գ. Կորիզ։*

**ԿՕՆԱԽ**, **Կ̂ՕՆԱԽ**, *Կճ. Լիմ, գ. Հյուր։*

**ԿՕՆԴԱԽ**, *գ.* **ԿՕՆԴԱ̈Խ**, *Հթ.*, **Կ̂ՕՆԴԱ̈Խ**, *Լիմ 1) Խանձարուր:* Կօնդա̈խ պա̈ց, տես՝ լա̈՞ճ ի, թէ՞ ախչիկ[յ] *(Հթ.): 2) Հրացանի խզակոթ:*

**ԿՕՆԴՈՒՐԱ̈**, *Բմ., գ. Շատ ամուր, բարձրակրունկ, սրաքիթ ծանր կոշիկ, որ հատկապես հագնում էին քրդերը:*

**ԿՕՆՈՒՇՄԻՇ ԷԼՆԵԼ**, *Տեսակցել, զրուցել:*

**ԿՕՉ**, **Կ̂ՕՉ**, *Կճ. գ. Խոյ:*

**Կ̂ՕՉԱՂՈՒԹ[Յ]ՈՒՆ**, *Կճ. գ. Քաջություն:*

**ԿՕՊԱԼ**, *գ. Մահակ:*

**ԿՕՋԱՄԱ**, *ած. 1) Մեծ, խոշոր: 2) Փարթամ: 3) Հաղթ:*

**ԿՕՌ¹**, *1) գ. Ձեռնափայտ: 2) ած. Կոր, կորացած, թեքած:*

**ԿՕՌ²**, *Հթ. Լիմ, գ. Փայտյա կեռ կամ ճանկ, որ կապում են թոկի ծայրին և նրանով ձգում թոկը՝ բեռ բարձելիս:* Կօռ կընա̈ պէ, պէռներ կապենք[յ] *(Հթ.):*

**ԿՕՌՎԵԼ**, *1) չբ. Կռանալ: 2) կբ. Ծռվել:*

**ԿՕՌՏԻԿ**, *գ. Կանացի անթև հագուստ:*

**ԿՕՌՈՒԿ**, *ած. Ծռված:* Էտա փէտ կօռուկ ի:

**ԿՕՌՕՎԱ**, *գ. Սալորի լավաշ, որ ձմռանը գործածվում էր կերակրի մեջ շլորաչրի փոխարեն: Ծան. – Թթու սալորը եփում էին և մածուցիկ վիճակում լցնում սկուտեղի մեջ, չորացնում:*

**ԿՕՎԻԿ** *(նաև՝ Լիմ)*, **ԿՕՎԻԿ[Յ]**, *Հթ. գ. Ջագար:* Կօվիկ[յ]օվ կինի լըցեց կուլիկի մէչ *(Հթ.):*

**ԿՕՎՈՒ ՃԱՅՏԵԿ**, *Բույսի տեսակ:*

**ԿՕՏ¹**, *Վն. գ. Հացահատիկ չափելու փայտե աման:* Մէյ կօտըմ ցորեն տըվի փոխ *(Վն.):*

**ԿՕՏ²**, *գ. 1) Գլուխ, գանգ: 2) Արմտիքի չափ, մեկ չափի քառորդը: 3) Կրիայի, ոստրեի պատյանը:*

**ԿՕՏԻԿ¹**, *Կճ. գ. Ջուր խմելու կավե աման:* Խողէ կօտիկօվ ճո̈ւր կըխըմենք *(Կճ.):*

**ԿՕՏԻԿ²**, *Կճ. գ. Գոտի:* Կօտիկ շորից էր *(Կճ.):*

**ԿՕՏԻԿ³**, *գ. Փայտե կամ պղնձե բարակ շրջանակ, որ կանայք դնում էին գլխին՝ լաչակի վրա:*

**ԿՕՏՈՃ**, *Հթ. գ. Եղջյուր:*

**ԿՕՐԴՕՆ**, *գ. Ոսկյա կամ արծաթյա շղթա՝ կանանց վզից, ժամացույցից և այլ իրերից կախելու համար:*

**Կ[Յ]ՕՐՈՎՐԵԼ**, *նբ. Սփոփել, սիրտն առնել:*

**ԿՕՓՉԱ**, *գ. Կոճակ:*

# Հ

**Հ’Ա̈ԲԱ̈**, *Լիմ, գ. Կապա:*

**ՀԱ̈ԴԼԷ**, *գ. Պարեղանակ:* Ես հա̈դլէ, տո̈ւ հա̈դլէ, հապա պա̈ն վո՞վ պա̈նի:

**ՀԱ̈ԴՐԱ̈**, *գ. 1) Ընծա, պարգև: 2) փխբ. Անախորժություն:*

**ՀԱ̈Ջ ԱՆԵԼ**, *Ախորժել, համակրել:*

**ՀԱ̈ՋԸՐ**, *ած. Պատրաստ:*

**ՀԱ̈ՋԸՐԼԸՂ**, *գ. Հրավերքի պատրաստություն:*

**ՀԱ̈ՋԸՐՎԵԼ**, *չբ. Պատրաստվել, հագնվել-զարդարվել:*

**ՀԱԹԱԹԱ**, *գ. Սպառնալիք:* –Հաթաթա տալ, *Սպառնալ:*

**ՀԱ̈Լ**, *գ. Վիճակ, դրություն:* Ինոր հա̈լ-վա̈խտը լավ ի: Ասեմ՝ չէլնե, չասեմ՝ չէլնե, մօլօրվիր եմ մէչ իմ հա̈լին:

**ՀԱ̈ԼԱ̈**, *մկ. Դեռ, տակավին:*

**ՀԱ̈ԼԱ̈ԼԱ̈, ՀԱ̈ԼԱ̈-ՀԱ̈ԼԱ̈**, *եղ. 1) Դեռ տեսե՛ք: 2) Ի՞նչ եք սպասում:*

**ՀԱ̈ԼԲԱԹ**, *եղ. Իհարկե, անշուշտ:* Հա̈լբաթ մեր դօրն կուկյա̈:

**ՀԱ̈ԼԲՈՒՔԻ**, *շ. Մինչդեռ, սակայն և այնպես:*

**ՀԱ̈ԼԻՄԱՆ**, *ած. Հեզ, խոնարհ:*

**ՀԱ̈ԼԿԱ**, *գ. Օղակ:*

**ՀԱԽ**, *գ. 1) Իրավունք: 2) Վարձատրություն:* Կանա՞ս իմ հախէն կյա̈ս:

**ՀԱՀԱՆՋ**, *եղ. Ահա, ահավասիկ:*

**ՀԱՂ**, *տե՛ս* **ՀԱԽ**:

**ՀԱՄԱ**, *շ. Բայց, սակայն:* Արի ծուռ նըստենք, համա դուզ խօսինք:

**ՀԱՄԱՄ**, *գ. Բաղնիք:*

**ՀԱՄԱՄՉԻ**, *գ. Բաղնեպան:*

**ՀԱՄԱՆ**, *մկ. Իսկույն, անմիջապես:* Համան արեա̈, տոա̈ւր:

**ՀԱՄԲԱԼ**, *գ. Բեռնակիր:*

**ՀԱ̈ՄՇԱ̈ՐԻ**, *գ. Հայրենակից, համաքաղաքացի:*

**ՀԱ̈ՅԱ̈**, *գ. Ամոթ, պատկառանք:*

**ՀԱ̈ՅԱ̈ՍԸՋ**, *ած. Անպատկառ, անամոթ:* Հա̈յա̈սըզին մէյն ի:

**ՀԱՅԲԱ**, *գ. Խուրջինն ուսին կամ գրաստի վրա դնելու երկկողմանի բրդե պարկ:*

**ՀԱՅԴԵ**, *ձ. Վե՛ր կաց, շարժվի՛ր, դե՛:*

**ՀԱՅԴԵՊՐԷ**, *մկ. Անմիջապես, իսկույն, առանց հետաձգելու:* Հայդեպրէ սյուրգյուն արին:

**ՀԱ̈ՅԻՖ**, *եղ. Ափսոս:*

**ՀԱՅԿԱՐԱ**, *գ. Աղաղակ, գոչյուն:*

**ՀԱՅԿԱՐԱՋԻ**, *ած. Աղաղակող, ճչան, աղմկարար:*

**ՀԱՅ-ՀՈՒՅ**, *ձ. Բացականչություն:*

**ՀԱ̈ՅՎԱ̈Ն, ՀԱՅՎԱՆ**, *Լիմ, գ. Անասուն, շուն, կատու և այլն*

*մտնում են* հւյվան *հասկացության մեջ*: Ինոր կըսան կ՚ըլօխ հւյվան կէր *(Վն.)*: Չի քըսան խա(տ) հւյվան կա *(Լիմ)*:

ՀԱՆ, *եղ. Ահավասիկ, ահա*:

ՀԱՆԳ³ԱՄԱ, *գ. Պարագաներ*: Էտրա հանգ՚ամէն ուրիշ հանգ՚ամա ի:

ՀԱՆՋ, *Նույնն է՝ ՀԱՆ*:

ՀԱՇԱՆ, *գ. Կալատեղ բերված հնձած արմտիք*: Սէլէրն էկան, հաշանը պերին:

ՀԱՋԱԹ, *գ. 1) Գործիք: 2) փխբ. Առնանդամ*: Ինոր հաջաթ ուրիշ պան ի *(շատ մեծ է)*:

ՀԱՋԻ, *գ. Մահտեսի, մըղդըսի, մուխսի*:

Հ'ԱՌԷՃ, *Լիմ, մկ. Առջև*:

Հ'ԱՌԻՔ, *Կճ.*, ՀԱՌԻՔ³, *Հթ. գ. Առաստաղ*: Հ'առիք մըրոտ ի *(Կճ.)*:

ՀԱՌՉԸՆԷԿ, *Հթ. գ. Առաջնեկ*:

ՀԱՍԸԼ, *գ. Առաջ գալը, արդյունք տալը*:

ՀԱՍԼԻ, *մկ. Վերջապես*:

ՀԱՎԱ, *գ. Օդ, եղանակ*:

ՀԱՎԱԴԻՍ, *գ. Ավետիս, բարի լուր*:

ՀԱՎԱԺՈՐ, *գ. Կարմիր արմատ ունեցող բույս*:

ՀԱՎԱՐ ԱՆԵԼ, *Օգնության կանչել: Ծան. – Վանում տարածված էր վարժապետ Խաչատուր Լևոնյանի «Տարվա տասներկու ամիսները» բանաստեղծությունը, որտեղ փետրվար ամսվա համար ասված էր. «Փետրվար՝ փետեր հավար...», այսինքն՝ վառելափայտը վերջանում է.*

ՀԱՎԱՐԱՋԻ, *ած. Անտեղի օգնության ճիչ արձակող, անտեղի տագնապ հարուցող*: Ախչիա, դու հավարաջի ե՞ս:

ՀԱՎԱՖԸՇԱՆԳ, *գ. Հրթիռ*:

Հ'ԱՎԸԼՆՈՐԹ, *Լիմ, ած. Ավելորդ*:

ՀԱՏ-ԲՈՒՏ, *գ. Դեռևս չբուսած աշնանացան, երբ հատիկները մնում են ձյան տակ՝ գարնանը բուսնելու համար*:

ՀԱՐԱԿԱՇ, *Կճ. մկ. ած. Կիսաբար, կիսովի*: Հարակաշ կըպաննին, ստացած խավասար կըկիսին *(Կճ.)*:

ՀԱՐԱՄ, *գ. տե՛ս ՀԱՐԷՄ*:

ՀԱՐԱՄԶԱԴԱ, *ած. Վատորակ մարդ, տմարդ*:

ՀԱՐԱՐԱԹ, *գ. Տապ, մարմնի բարձր ջերմություն*: Հարարաթի մէչ կըվառվի խիվանդը:

ՀԱՐԱՔ³ԱԹ, *գ. Ուժ, կարողություն*:

ՀԱՐԷՄ, *ած. Պիղծ վայր, կանանոց: Ծան. – Հնում բնակավայրերից քիչ հեռու օթևաններ էին շինվում, որտեղ կանայք գնում էին ամսականի օրերին և ծննդաբերելու ժամանակ: Տղամարդու համար դա հարամ, անմաքուր վայր*

*էր, որտեղ նա իրավունք չուներ ոտք դնելու։ Հարէմում սպասարկում էին միայն տարեց կանայք։ Բազմակնության տարածման հետ կանանոցը կոչվեց հարեմ՝ պիղծ վայր, տուն, որտեղ տղամարդը, անգամ տերը, իրավունք չուներ մուտք գործելու։ Վանում թուրքերը մեծ հարէմներ չունեին և սևամորթ ներքինիներ չէին պահում։ Կանանոց դարձած հարէմները ղեկավարում էին հիմնականում երկրորդ կանայք։ Առաջին կինը մեծ մասամբ անզոր էր կառավարելու հարէմը։*

**ՀԱ̈ՐԹ**, *գ. Հարդ։* Հա̈րթը քյոն չի, հա̈րթամանը խո քյո՞ն ի։

**ՀԱ̈ՐԹԱՄԱՆ**, *գ. Հարդանոց։*

**ՀԱ̈ՐԻՖ**, *ած. գ. 1) Անփորձ, միամիտ մարդ։ 2) Ազնիվ ընկեր։ 3) Տխմար։*

**ՀԱՐԿԱՎՈՐ**, *գ. Զուգարան։*

**ՀԱՐՑԱՆՈՂԱՑ**, *գ. Հարցնողներին, հետաքրքրվողներին։ Ծան. – Նամակները վերջանում էին «ամենայն հարցանողաց շատ պա̈րև» վերջաբանով։*

**ՀԱՓ ԱՆԵԼ**, *Բերանը լայն բաց անել և միանգամից կուլ տալ մեծ կտորը։*

**ՀԱՓՍ**, *գ. Բանտ։*

**ՀԱՖԹԱԼԸՂ**, *գ. Շաբաթավարձ։*

**ՀԷ՛Յ ԳԻԴԻ ՀԷ՛Յ**, *ձ. Բացականչություն, ո՜, ո՜հ։*

**ՀԷՅՎԱ՛Խ**, *ձ. Ավա՛ղ։*

**ՀԷՅՐԱՆ ԷԼՆԵԼ**, *Զմայլվել, սքանչանալ։*

**ՀԷՉ**, *1) դ. Ոչինչ։ 2) մկ. Բնավ։*

**ՀԷՍԱԲ**, *գ. Հաշիվ։*

**ՀԷՍԷ**, *գ. Ժառանգության բաժին։*

**ՀԷՐՎԱՐ**, *մկ. Աշխատանքի ավարտի ժամանակը, երեկոյան։* Օրը հէվարի ի։

**ՀԷՐ** *(նանև՝ Լիմ), գ. Քարայր։* Կըմըռտնեն հէրիմ մէչ։

**ՀԷՐԱՆ**, *գ. Կալսվածը քամուն տալը՝ քյառէշտով հացահատիկը հարդից առանձնացնելու համար։*

**Հ'ԷՐԿՆՈՒԹԵՆ**, *Լիմ, գ. Երկարություն։*

**ՀԷՐՍ**, *գ. Բարկություն, ցասում։*

**ՀԷՐՍԼԱՄԻՇ ԷԼՆԵԼ**, *Բարկանալ։*

**ՀԷՐՍՈՏ**, *ած. Բարկացկոտ։*

**ՀԷՐՍՕՏԵԼ**, *հթ.,* **ՀԵՐՍՈՏԵԼ**, *Բմ. չբ. Բարկանալ։*

**Հ'ԷՐԹԻՍ**, *Կճ.,* **ՀԷՐԹԻՍ**, *հթ. գ. Երդիկ։* Հ'էրթըսից մուխ կըլնի *(Կճ.)։*

**ՀԷՐՏՈ̈ՒՄ**, *հթ. գ. Երդում։*

**Հ'ԷՔԻ**, *Բմ. գ. Այգի։*

**ՀԷՔՄԱԹ**, *գ. Սքանչելիք։* Էսըսկընա հէքմաթի պա̈ն, մարդ իսա ոա̈չ տիսե, ոա̈չ լըսե։

ՀԷՕԴԱ, *գ. 1) Բառացի՝ սենյակ։ 2) Գյուղերում ախոռների մի անկյունում շինված բարձրություն՝ սաքու՝ գյուղական ակումբ, որտեղ ձմռան երկար գիշերներին հավաքվում էին գյուղացիները և լսում աշուղների երգն ու նվագը, հեքիաթասացների կամ քաղաքից եկած մարդկանց պատմությունները։*

ՀԷՕՌԱՆԱԼ, *չբ. Փարթամորեն աճել, բայց անպտուղ մնալ։*

ՀԷՕՔ, *գ. 1) Օգնություն։ 2) Հնձի ժամանակ գյուղացիների միմյանց օգնելը, հէօք գնալը։*

ՀԸԼԻՆ, *Հթ.*, Հ՚ԸԼԼԻՆ, *Լիմ, ած. Լիքը։* Ջըվա̈լ հըլին ցօրեն ի *(Հթ.)։*

ՀԸՄԷՆ, *գ. Ամեն, ամենքը։* Հըմմէն օր էծու իտևն ի պա̈ց, մէյ օր էլ մաքՙու իտևն էլնի պա̈ց։

ՀԸՆԴԻՅԱՄԱՆ, *գ. 1) Հնդկաստան։ 2) փխբ. Շատ հեռու վայր։* Կՙընա̈ց խասավ Հընդիյաման։

ՀԸՆԴՈՒԽԱՎ *(նաև՝ Կճ.) գ. Հնդկահավ։* Հընդուխավ բա̈կ ման կուկՙա̈ *(Կճ.)։*

ՀԸՆԹԵԼ, *նբ. Անթել, անթատակ առնել, թևի տակ առնել։*

ՀԸՆԹԻՏԱԿ³, *Հթ.*, ՀԸՆԹԻ ՏԱԿ, *Կճ. գ. Թևատակ։* Գ՚իր հընթի տակ կընա̈ց վա̈րժա̈տուն *(Կճ.)։*

ՀԸՆԹՐԻՍ, *Վն. Հթ. գ. Ընթրիք, երեկոյան ճաշ։* Իրիկուն նըստան հընթրիսի *(Վն.)։*

ՀԸՆՈՒԿ, *գ. Ծառի, որթատունկի հնացած արմատներ, որ հավաքում և գործածում էին որպես վառելիք։*

ՀԸՐՍՈՏԵԼ, *Կճ.*, ՀԸՐՍՈՏՎԵԼ, *Լիմ, տե՛ս* ՀԷՐՍՕՏԵԼ։

ՀԻԼԱ, *գ. Նենգություն, խարդախություն։*

ՀԻԼԱՋԻ, *ած. Նենգ, խարդախ։*

ՀԻԼԱՋՆՈՒԹԵՆ, *գ. Նենգություն, խարդախություն։*

ՀԻԿ³Ի, *Հթ. գ. Այգի։*

(Հ)ԻՄԱՆՍԸՋ, *ած. Անհավատ։*

ՀԻՄԴԱՏ, *գ. Օգնության հասնելը։*

(Հ)ԻՆԳԷՐ, *Բմ. գ. Ընկերք։* Կօվ ծընեց, (հ)ինգէր ւորթկա խետ էկավ, ինգՙա̈վ *(Բմ.)։*

ՀԻՇՈՒՆՑ, *Հթ. գ. Հայհոյանք։*

Հ՚ԻՐԱ̈Ր ՏԱԼ, *Կճ., Շարժել։* Քար տէղից հ՚իրա̈ր տըվեց *(Կճ.)։*

ՀՅՈՒ-ՀՅՈ՛Ւ, *ձ. Անհամաձայնություն արտահայտող բացականչություն։*

ՀՅՈՒՆԹ, *գ. Անութ, թևատակ։*

ՀՅՈՒՋՈՒՄ, *գ. Հարձակում։*

ՀՅՈՒՔԸՄ, *գ. Վճիռ։*

ՀՅՈՒՔԸՄ ԱՆԵԼ, *Իշխել։*

ՀՅՈՒՔԸՄ ԿԸՏՐԵԼ, *Վճիռ արձակել, վճռել։*

**ՀՈԼ**, *գ. Գնդակախաղ:*

**ՀՈԼՏՈՒՆ**, *գ. Հոլ խաղալու վայր:*

**ՀՈՆ**, *գ. Հնձվորներից յուրաքանչյուրի տեղամաս, տարածք, որի չափը որոշում էր հնձվորների ավագը՝ հոնածը:*

**ՀՈՆԱԾ**, *գ. Հնձվորների ավագ, որի հոնը ամենալայնն էր:*

**ՀՈՆԱԾ-ԱԽՊԵՐ**, *գ. Հնձվորների ավագին անմիջապես հաջորդողը:*

**ՀՈՆԱԾ-ՊՈՉՐԱՐ**, *գ. Առավել երիտասարդ և անփորձ հնձվոր, որի հոնը ամենանեղն էր:*

**ՀՈՐԹԿԸՆԹՈՂ**, *գ. Հորթերը կաթից կտրելը:*

**ՀՈՒՄԱ**, *գ. Տիֆ:*

**ՀՈՒՄԱՅՈՒՆ**, *տե՛ս* **ՀՈՒՄԱ**:

**ՀՈՒՆԱՐ**, *գ. Շնորհք:*

**ՀՈՒՇՏ** *ԸԼՆԵԼ*, *Խրտնել, վախենալ:* Ճö̈չ խարս տուն էկավ թէ չէ, հըմէնին հուշտ արավ, փախցրեց:

**ՀՈ՞ՒՍՏ**, *դ. Որտեղի՞ց:* Իմ ախպոր խӓмӓр կընիկ հո՞ւստ ճարեմ:

**Հ’ՈՒՍՏԸԿԵԼ**, *Բմ. նբ. Հյուսել:*

**ՀՈՒՐԻ-ՄԱԼԱՔ**, *գ. ած. Սևաչյա գեղեցկուհի, որ անդրաշխարհյան կյանքում երջանկացնում է հերոսացած մահմեդականին:*

**ՀՈՒՐԻԿ**, *գ. Գութանի չորրորդ լուծը:*

**ՀÖՒՐÖՒՇ**, *Հթ. դ. Այլ, ուրիշ:*

**ՀՕ՛-ՀՕ՛**, *ձ. Կով, տավար քշելու ձայնարկություն:*

**ՀՕՅՆԱՐ**, *գ. Պարի և երգի եղանակ:*

**ՀՕ՛Շ՛**, *ձ. Ձին, էշը առաջ վարելու ձայնարկություն:*

**ՀՕՏ**, *Կճ. գ. Խաղողի մատերից էտած ճյուղերը, որոնք օգտագործում են որպես վառելիք:* Խավողի հօտ *(Կճ.)*:

**ՀՕՏԱՂ**, *Վն. գ. 1) Անասուն պահող: 2) Գութանի լծին նստող:*

**ՀÖՔ³ Կ³ÜԼ**, *Օգնել:*

**ՀՕՔՈՒՏ**, *Հթ. գ. Օգուտ:*

# Ձ

**ՁԻ**, *Լիմ, դ. Ինձ:* Ձիյ մէ խատ ծի կա *(Լիմ)*:

# Ղ

ՂԱԲՈՒԼ, *ած. Ընդունելի։*

ՂԱԴԱ, *գ. Ցավ, նեղություն։*

ՂԱԴԻ, *գ. Դատավոր։*

ՂԱԴԸՐ, *գ. Արժանիք, նշանակություն։*

ՂԱԶ, *գ. Սագ։* Քյե գյո̈լի ղազ ենք պիրե, լէզո̈ւն գյազ ենք պիրե *(հարսանիքի օրը հարսի մասին սկեսրոջն ուղղված երգից)։*

ՂԸ̈ԶԸ̈Լ, *գ. Տերև։*

ՂԸ̈ԶԸ̈Ն, *գ. Կաթսա։*

ՂԱԶԱՆՉԻ, *գ. Պղնձագործ։*

ՂԸ̈ԹԸՐ, *գ. Ջորի։*

ՂԱԼԱԲԱԼԸՂ, *գ. Աղմուկ, իրարանցում։* Ղալաբալըղից հազ չեմ անե։

ՂԱԼԱԹ, *գ. Ջանցանք։* Էլ վոչ մէյ ղալաթ չեմ անի։

ՂԱԼԲ, *ած. Կեղծ։*

ՂԱԼԲԱՂԱՆԳ, *ած. գ. Կեղծարար, դրամանենգ, խարդախ։*

ՂԱԼՄԱՂԱԼ, *գ. Աղմուկ, ժխոր։*

ՂԸ̈ՀՐԸ̈ՄԸ̈Ն, *գ. Հերոս։*

ՂԸ̈ՂՊԱ, *ած. գ. Պոռնիկ։*

ՂԸ̈ՄԸ̈Զ, *ած. Բանսարկու։*

ՂԸ̈ՄԻՇ, *գ. Եղեգն։*

ՂԸ̈ՄՇԻ, *գ. Մտրակ։*

ՂԸ̈ՅԹԱՆ, *գ. Երիզ։*

ՂԱՅԻՄ, Ղ̂ԱՅԻՄ, *Կճ., ած. Ամուր, պինդ։*

ՂԸ̈ՅԻՇ, Ղ̂ԱՅԻՇ, *Կճ. գ. Գոտի։* Ղ̂այիշ կաշվից էր *(Կճ.)։*

ՂԱՅՖԱ, *գ. Սուրճ։*

ՂԱՅՖԱԼԹԻՆ, *գ. Սուրճով նախաճաշ։* Մէյ խատ ղայֆալթին անենք։

ՂԸ̈ՅՖԸ̈ԽԱՆԱ, *գ. Սրճարան։*

ՂԱՅՖԱՋԻ, *գ. Սրճարանատեր։*

ՂԸ̈ՆԹԱՐ, *գ. Մեծ կշեռք, որով շուկաներում բարձված սայլ են կշռում։*

ՂԱՆՄԱԶ, *ած. Հիմար, չհասկացող։*

ՂԱՆՋԸՂ, *ած. Լիրբ, անպատկառ։*

ՂԱՇԱՆԳ, *ած. Սիրունատես, վայելչատես։* Շատ ղաշանգ ջահել ի։

ՂԱՉԱԽ, *գ. ած. Ավազակ, անօրեն։*

ՂԱՌԹ, *գ. ած. 1) Տարիքով անասունի դժվարությամբ եփվող միս։ 2) Շատ հնացած հաց։*

ՂԱՍԱԲ, *գ. Մսագործ։*

ՂԸ̈Վ, *գ. Աբեթ։*

ՂԸ̈ՎԸ̈Լ, *գ. Սրինգ։*

Ղ̂ԱՎՈՒՐՄԱ, *Կճ. գ. Իր հյութի և յուղի մեջ տապակած միս, որ կճուճների մեջ պահում են որպես ձմռան պաշար։* Ծըմըռվա խամար ղ̂ավուրմա կանեն *(Կճ.)։*

**ՂԱՐԱՉԻ**, *ած. Անզգամ, բոռբոռացող։*

**ՂԱՐԻԲ**, *գ. ած. Պանդուխտ։*

**ՂԱՓԱՂ**, *գ. Կափարիչ։* Ղափաղ իտիր վէր պուտկին *(Վն.)։*

**ՂԵՎԱՆԴ**, *գ. Թեքությամբ վրա արհեստականորեն ստեղծված հարթություններ՝ ցանք կատարելու և ծառեր տնկելու համար։*

**ՂԷՅՐԱԹ**, *գ. Կորով։*

**ՂԷՅՐԱԹԼԻ**, *ած. Առույգ, ուժեղ։*

**ՂԷՅՐԱԹՈՎ**, *Նույնն է՝ ՂԷՅՐԱԹԼԻ։*

**ՂԷՋԱՂ**, *ած. Եռանկյունի։*

* Ղէջաղ իրիշկալ, *Խեթ նայել։*

**ՂԸԺԲԸԺԱԼ**, *չբ. Վխտալ։*

**ՂԸԺՎԸԺԱԼ**, *չբ. Խառնակ ձայներ հանել։*

**ՂԸԺՎԸԺՈՑ**, *գ. Ժխոր, աղմուկ։*

**ՂԸԼԹՂԸԼԹԱԼ**, *չբ. Կերակուրը եփվելիս, խմորը թթվելիս ձայն արձակել։*

**ՂԸՄԸՇԵԼ**, *չբ. Խնայել, ափսոսալ։*

**ՂԸՇԼԱ**, *գ. 1) Բառացի՝ ձմեռանոց։ 2) Զորանոց։*

**Ղ̂ԸՌՃԻԿ**, *Կճ. գ. Կոճիկ։* Ճիժ ղ̂ըռճիկ կուտի *(Կճ.)։*

**ՂԸՍՄԱԹ**, *գ. Բախտ։*

**ՂԸՍՐԱԽ**, *գ. Ջամբիկ։*

**ՂԸՐԱՂ**, *մկ. Մի կողմ։* Խօր մօր կըռվի կյ՚ախ տըղէն ղըրաղ կայնեց։

**ՂԸՐՈՒՇ**, *գ. Դրամի միավոր։*

**ՂՈՒԼԱՄ**, *գ. 1) Ծառա։ 2) Զինվոր։*

**ՂՈՒՄԱՐ**, *գ. Բախտախաղ։*

**ՂՈՒՄԱՐԲԱԶ**, *գ. ած. Բախտախաղով տարված խաղամոլ։*

**ՂՈՒՇ**[1], *գ. Թռչուն։*

**ՂՈՒՇ**[2], *գ. Աղեղնափայտ։*

**ՂՈՒՇԹՈՒՅԻ**, *գ. Աղվամազ, փետուր։*

**ՂՈՒՌՈՒՄՍԱՂ**, *ած. Անբան, ապիկար։*

**ՂՕԼԱՅ**, *ած. Հեշտ, դյուրին։*

**ՂՕՆԱՂ**, *գ. Հյուր։* Ղօնաղը ղօնաղից հա՚զ չանե, տանտէրն էլ՝ էրկըսեն։

**ՂՕՉ**, *գ. Խոյ։*

# Ճ

**ՃԱԹ**, *գ. Ցնցոտի։*

**ՃԱԹԼԵԽ**, *գ. Քուրջ, գզգզված հնամաշ շոր։*

**ՃԱԹՈՏ**, *ած. Ցնցոտիներ հագած։* Ճաթոտ խա՚լըշկներով էրթա՚մ կայնեմ թակավորու տուռ։

**ՃԱԹՌՈՏ**, *ած. Քնձռոտ, արհամարհելի։*

**ՃԱԹ-ՃՈՒԹ**, *գ. Ցնցոտիներ, հինումին շորեր։*

**ՃԱԼԱԽ**, *գ. Քրդերի՝ թաշկինակին փոխարինող շապիկի*

*երկարած թևը, որը ծալում, խցկում էին թևքի մեջ։*

**ՃԱԼԱՔ-ԲԱԼԱՔ**, *ած. Խայտաբղետ։*

**ՃԱԽ**, *գ. Ձիթաճրագի տակի կավե պնակը։*

**ՃԱԽԱՊԷՐԱՆ**, *ած. 1) Լայն ու ծուռ բերան ունեցող։ 2) Վատաբանող, հերյուրող։*

**ՃԱԽԵԼ**, *նբ. չբ. Բերանը ծռել։*

**ՃԱԽՐԱԿ, ՃԱԽՐԱՅ**, *Վն. գ. Ճախարակ։* Ճախրակօվ թել կըմանեն *(Վն.)*։ Ճախրայ մանօղ *(Վն.)*։

**ՃԱԽՐԱՄԱՆԻԿ**, *գ. Մի տեսակ փոքրիկ թռչուն։*

**ՃԱԿ**, *գ. Ձենք։*

**ՃԱԿԸՏՆՈՑ**, *գ. Զարդոսկիներով զարդարված կանացի ասեղնագործ կամ ոսկեթել գլխակապ։*

**ՃԱ̈ՂԱՑ**, *գ. Ջրաղաց։ Ծան. – Ջրաղացի մասերն էին՝* ճըռտուն, ալըրտուն, վազ, տըժոխքի տո̈ւռ։ Ճո̈ւրն իկյե ճա̈ղա̈ցն ի տարե, տո̈ւ ինգյեր ես չախչախ կըփընտռես։ Ճա̈ղա̈ց առանց ճըրի աղուն չի աղա։

* Ճա̈ղչի թօզ, *Լիմ, Ջրաղացի շուրջբոլորը նստած ալյուրի փոշի։*

* Ճա̈ղչի կըլօճ, *Վն. Բաղարջ։* Կըլոճ//կըրկէնին առանց խորըսի կիփեն *(Վն.)*։ *Ծան. – Այս խմորեղենը թխում էին ջրաղցում, առանց թթխմորի և աղի՝ ջրաղացի թոնրի մեջ։*

* Ճա̈ղչի ուղոմ, *Լիմ, Փայտյա հարմարանք, որի միջով ջուրը, սրընթաց վայր հոսելով, պտտեցնում է ջրաղացի անիվը։*

* Ճա̈ղչի քյար կըռանել, *Ջրաղացքարն ատամնավորել։*

**ՃԱՄԱՍՈՒԽ**, *գ. Սայլի մաս։*

**ՃԱՄԲԱ̈Խ** *(նաև՝ Կճ.)*, **ՃԱ̈ՄԲԱ̈Խ**, *Վն. Հթ. Բմ. գ. Ճանապարհ։* Ճա̈մբա̈խ մö̈շի մէչօվ կէրթէր *(Վն.)*։ Ճամբա̈խ մեր գ'եղի միչօվ կէ(ր)թա̈ *(Կճ.)*։ Էտա ճա̈մբըխօվ կընա̈ցիր ի մեր տուն *(Հթ.)*։

**ՃԱ̈ՄԲԱ̈ՐԱ̈Կ**, *Վն. գ. Լծափայտը կապելու կաշվե թոկ։*

**ՃԱ̈ՄԲԻԽԵԼ**, *նբ. Ուղարկել։*

**ՃԱ̈ՄԻԽԵԼ**, *նբ. Ճանապարհ դնել, ուղևորել։*

**ՃԱՄՊԱՐԱԿ**, *գ. Լծափայտը կապելու կաշվե ամուր թոկ։*

**ՃԱՑՏԻ**, *գ. Ճակատի։*

**ՃԱՆ**, *գ. 1) Վեգ։* Էրեխէքյ ճան կըխաղին *(Վն.)*։ *2) Բարձիկով ասեղնագործության կախովի մաքոք։*

* Ճանը ճուկ ի, *Գործը հաջող է։*

**ՃԱՆԳ**, *Բմ.*, *ՃԱՆԳՅ*, *Հթ. գ. Բուռ։*

**ՃԱՆԳԸՌԻԿՅ**, *Հթ. գ. Փոցխ։*

**ՃԱՆԿԸՌԹԱՆ**, *ած. Ճանկռող։* Մեր կատուն ճանկըռթան ի։

**ՃԱՆԿԸՌԹԵԼ**, *նբ. Ճանկռել, եղունգներով վնաս հասցնել:*

**ՃԱՆՇՆԱԼ**, *Լիմ, նբ. Ճանաչել:*

**ՃԱՆՑՎՈՐ**, *գ. ած. Ճանաչ, ծանոթ մարդ:*

**ՃԱՇ**, *գ. Ալյուրից, երբեմն էլ աղացած կորկոտից (և ոչ ձավարից) ջրով կամ բաց արած ըռբով (դոշաբով) պատրաստված ճաշ (ռուսական՝ կաշա), որ վրան յուղ, իսկ պաս օրերին՝ ձեթ լցնելով ուտում էին: Ծան. – Վանում տարածված ճաշերն էին՝* մածնէ թան, չորթընէ թան, թանխյուս, քյալագյոշ, վոռշ, վոսպնէսպաս, մսով ճաշ՝ *վրան բրդած* սիրկիվիլ, խընծոր *կամ* փռթոթէգ, սամիր, խարիսա, փռչռ, ծռռկ *(միայն տառեխ)*, ծվածեղ, պըրընծէ փըլավ, ծռվրի փըլավ՝ ձիթով *կամ* յուղով, չամչով *կամ* ամբրաբով պըրընծի փլավ, ափրոչ, տօլմա, մըխլա, բորանի կանաչ ֆասուլիայի, դըդմի, կանաչ պատընջանի, կյալյա, չըխըրթմա, քյանքաբ, յախնի, քյուլբոստի, կաբուսկա, *ինչպես նաև* պարչայիս ռսպ, գյըլոլ պռշյռ, ֆասուլիա *(միայն խոշոր, սպիտակ, ուրիշ գույնի և մանր տեսակներ Վանում չկային):*

**ՃԱՇՈՑ**, *գ. Ճաշի ժամ, կեսօր:*

**ՃԱՇՔ**, *գ. Արտը կամ պարտեզը ջրելու ժամանակահատված: Ծան. – Յուրաքանչյուր քյահրեզի ջուր բաժանվում էր 120 ճաշքի. մեկ ճաշքը ճաշքատիրոջն իրավունք էր տալիս մայիս, հունիս, հուլիս ամիսներին ամիսը երկու անգամ երեք ժամով այգին ջրել: Ճաշքը պարսկերեն* թաս-ի-միս-*ի թարգմանությունն է: Ժամացույցի չգոյության պայմաններում նուրբ անցք ունեցող պղնձե թաս էր դրվում դեպի արտը կամ այգին հոսող ջրի վրա: Ժամանակի ընթացքում այդ նուրբ անցքից ջուրը կամաց-կամաց լցվում էր թասի մեջ և խորասուզում այն: Դա տեղի էր ունենում ժամանակի մեկ միավորի՝ երեք ժամվա ընթացքում: Ճաշք ջուր ունենալ նշանակում էր 15 օրը մեկ տվյալ քյահրեզի ջուրը այգու վրա կապելու իրավունք ստանալ:*

**ՃԱՇՔԱՏԵՐ**, *գ. Այս կամ այն քյահրեզի ճաշք ունեցող, աղբյուրի ջրի փայատեր:*

**ՃԱՊԱԼԵՂ**, *ած. մկ. Երեսնիվայր գետին փռված:*

**ՃԱՊԱՂ**, *Լիմ, ած. Կճատ քիթ:*

**ՃԱՊՂԵԼ**, *չբ. Ճապաղել:*

**ՃԱՊԸՂՎԵԼ**, *չբ. Տարածվել, ցրվել (հեղուկը):* Կերակուրը թափվեց, ճապըղվեց սեղանին:

**ՃԱՎ**[1], *գ. Խցանի կապ:*

* Ճավերը պարզել, *փխբ. Իրավունքներ բանեցնել:*

**ՃԱՎ²**, *գ. Ճակնդեղի տերև։*

**ՃԱՎԵՐ**, *տե՛ս* **ՃԱՎ²**։

**ՃԱՎԻԿ**, *Բմ. տե՛ս* **ՃԱՎ²**։ Բ’ŭզու-կի ճավիկ թըլթո՛ւ տըրինք *(Բմ.)*։

**ՃԱՐԵԼ**, *նբ. Դժվարությամբ ձեռք բերել։*

**ՃԱՐ-ՃՈՒՄԲՈՒԽ**, *գ. Միջոց, ելք։* Ճար-ճŭմբŭխ չըմընŭց, վոր չը-խարցուցի։

**ՃԱՐ-ՃԱՐԱՆՔ**, *գ. Հնարավորություն։*

**ՃԱՐՄԱՐ**, *գ. Կալի գործիք, ջարջառ։*

**ՃՈՒՐՏԵԼ**, *նբ. Ջարդել։* Փէտ ճŭրտեց։

**ՃԱՐՈՒԿ¹**, *գ. Գոտի։*

**ՃԱՐՈՒԿ²**, *ած. Գտնված։*

**ՃԵՂ**, *Բմ. գ. 1) Կոճիկ։ 2) գ. Ձիղ։ 3) ած. Ձլուտ, ամուր։* Ճեղ փետ, միս, հաց։

**ՃԵՂ-ԾԱՄՈՆ**, *1) գ. Չփսորվող ծամոն։ 2) փխբ. ած. գ. Ուրիշի օձիքին կպչող մարդ։* Ճեղ-ծամոն տŭրցավ ու կըպավ իմ յախէն։

**ՃԵՂՎԵՐ**, *գ. Ազդր։*

**ՃԵՂՔՈՒԿ**, *նբ. ած. Ճեղքված։*

**ՃԵՆՃ**, *գ. Ճարպ։*

**ՃԵՆՃԵ**, *ած. Ճարպյա։* Ճենճե մոմ։

**ՃԵՆՃՈՏ**, *ած. 1) Ճենճով կեղտոտված։ 2) փխբ. Ողորմելի, թշվառական։*

**ՃԵՆՃՈՏՎԵԼ**, *չբ. կբ. Ճարպոտվել, կեղտոտվել։*

**ՃԵՆՃՈՒԿ**, *գ. ած. Վաղահաս տանձի տեսակ։*

**ՃԵՆՃԸՌԹԱՆ**, *ած. Տաք։* Ճեն-ճըռթան արև։

**ՃԵՏ**, *գ. Վառեկ։*

**ՃԷԼԱՏ-ՓՈԼԱՏ**, *ած. Կիսատված, պակասեցված։* Ամանը ճէ-լատ-պոլատ ի։

**ՃԷՆՋ**, *Վն.*, *ՃԵՆՋ*, *Լիմ*, *տե՛ս* **ՃԵՆՃ**։ Իծու ճէնջօվ մըրսածի մէչկ կըտըրորեն *(Վն.)*։ Էծու ճենջ կանեն սապոն *(Լիմ)*։

**ՃԷՐ**, *գ. ած. Պարզկա, անամպ օր։*

**ՃԷՐԵԼ**, *չբ. Ամպերը ցրվել և երկինքը պարզվել։*

**ՃԷՐԵՐԱԼ**, *չբ. Հավը կտկտալով պտտվել։*

**ՃԷՕԼՏԸՐՎԵԼ**, *չբ. Վզահան լինել։*

**ՃԷՕԿ**, *ած. Առանձին, զատ։*

**ՃԷՕԿԵԼ**, *նբ. Ընտրել, առանձնացնել, զատել։*

**ՃԷՕՂ**, *գ. Ճյուղ։* Ծառի ճէօղերը կախվիր են։

**ՃԸՁՄԸՁԵԼ**, *նբ. չբ. Խազմզել, գրոտել։*

**ՃԸՁՎԸՁԱՑՆԵԼ**, *չբ. Անհաջող նվագել լարային գործիք։*

**ՃԸՁՏԱԼ**, *չբ. Մկան նման ձայն հանել։*

**ՃԸԹԱԼ**, *նբ. Թույլ տալ հասնել։*

**ՃԸԹԱՆԱԼ**, *չբ. Ողկույզ կապել։*

**ՃԸԹՈՑ**, *գ. Թույլ ձայն։*

**ՃԻՋՎԻԹ**, *գ. Եզվիտ, կաթոլիկ։*

**ՃԸԺ-ՎԸԺ**, *գ. Կաթը կթելիս լսվող բնաձայնություն։*

**ՃԸԺՕՎ**, *Կճ. ած. Հղի։* Ճըժօվ կընիկ *(Կճ.)*։

**ՃԸԼԷՋ**, *ած. Նվազ երեխա, մարդ։* Էրեխէն իշթա̈խ չունի, ինոր խա̈մա̈ր ճըլէզ ի մընա̈ցե *(Վն.)*։

**ՃԸԼԷ-ՄԸԼԷ**, *ած. Փոքրամարմին։*

**ՃԸԼԸԹՐԵԿ**, *գ. Ցուցամատով հասցված հարված։*

**ՃԸԼԸԽԹԸՐԱԼ**, *1) չբ. Պայթել։ 2) գ. Պայթյունի ձայն։*

**ՃԸԼՏՈՒՋ**, *ած. գ. Նիհար (մարդ)։*

**ՃԸԼՈՒԼ**, *գ. Երկարակտուց թռչուն։*

**ՃԸԼՊԸԼՏՈՒՆ**, *ած. Գույնզգույն, խայտաբղետ։* Ճըլպըլտուն օցըմ էկավ։

**ՃԸԼՕԹ**, *գ. Ապտակ։* Ճըլօթըմ կերավ, նըստավ տեղ *(Վն.)*։ Էնպէս ճըլօթըմ կէրա, վոր չում մըկա իրեսս կըվա̈ռվի։

**ՃԸԼՕԹԵԼ**, *չբ. Թառամել։*

**ՃԸԼՕՐ** *(նաև՝ Կճ.)*, *գ. Կճուճ, փոքրիկ պուտուկ։* Ճըլօրի մէչ ճաշ կէփինք *(Կճ.)*։

**ՃԸԽԿԵԼ**, *Հթ. նբ. Ճեղքել։*

**ՃԸԽՏԵԼ**, *նբ. 1) Մի կերպ մտցնել, լցնել։ 2) Սեղմել։*

**ՃԸԿԻԿ**, *գ. Դռան վրա դրսից ամրացված մետաղյա մուրճիկ, թակ՝ դուռը ծեծելու համար։*

**ՃԸԿՈԹ**, *գ. Ճկույթ։* Ճըկոթ արնոտիր էր *(Վն.)*։

**ՃԸԿՈՏ**, *Լիմ, տե՛ս* **ՃԸԿՈԹ**։

**ՃԸԿՌԱՆ**, *ած. գ. Ոտքերը կոր մարդ, երեխա, ռախիտավոր։*

**ՃԸԿՌԱՑՆԵԼ**, *չբ. Նստած ուղտի վրա հեշտությամբ բարձրանալ, հեծնել։*

**ՃԸԿՌԵԼ**, *չբ. Ծանրության տակ կամ սարսափից ոտքերը ճապաղած նստել կամ կիսականգնել։* Պեռան տակ հա̈մբա̈լ ճըկռիր էր *(Վն.)*։

**ՃԸՂԱԿՈՏՈՐ ԱՆԵԼ**, *Ճյուղերը կոտրել։* Ա՛ղա̈ա̈, խասիա̈, կյո̈ղերը ծառը ճըղակոտոր արին։

**ՃԸՂԱՔ**[3], *Հթ. գ. Ճեղք։*

**ՃԸՂԸՐՏԵԼ** *(նաև՝ Կճ.)*, *նբ. Բզկտել, պատառոտել։* Կյիրը ճըղըրտեցի ու թա̈լեցի։ Շուն փօստէ քօլօզ ճըղըրտեց *(Կճ.)*։

**ՃԸՂԻՋ**, *Հթ. գ. Գիծ։*

**ՃԸՂԻԿ**, *Վն. գ. Լուսատտիկ։* Մըթան մէչ ճըղիկ թըռնօղ պէծի պէս ի *(Վն.)*։

**ՃԸՂԼԱԾ**, *ած. գ. Ցավից կուչ եկած և փոքրացած հավ։*

**ՃԸՂԼԱԿ**, *ած. Երկճղանի 1) Օձի լեզու։ 2) Սաղավարտ։ 3) Եպիսկոպոսական թագ։ 4) Մրգով ծանրացած ճյուղի տակ դրվող փայտե նեցուկ։*

ՃԸՂԼԱՎՋԻԿ, *գ. Նորածին երեխային լողացնելիս վիզը ձգելով մի քանի անգամ օդի մեջ գլխիվայր կախելն ու ճոճելը: Ծան. – Դա գեղձախտի դեմ պայքարելու ավանդական միջոց էր:*

ՃԸՂՈՆ, *Կճ. գ. Ճեղք:*

ՃԸՂՕՐ, *Կճ.,* ՃԸՂՈՐ, *Լիմ, գ. 1) Ճոճանակ:* Էրեխէն նըստիր էր ճըղօրի մէչ, կէրթէր կուկ՚էր *(Վն.)*: Ախչիկ ճըղօր ա նըստե *(Կճ.)*: *2) Սյունից սյուն, ծառից ծառ պարանով կապած օրորոց:* Ճըղօր կապին սընից սուն *(Կճ.)*:

ՃԸՂՕՐԵԿ, *գ. Ճլորթի:*

ՃԸՂՕՐԻԿ, *Հթ. տե՛ս ՃԸՂՕՐ:*

ՃԸՃԱՆ, *ած. գ. Երկար ու խառն մազեր:*

ՃԸՃԸՌՆԵԼ, *չբ. Կապվել, փակչել:*

ՃԸՃԸՌՆԷԿ, *գ. Ճպուռ:*

ՃԸՃԿԵՐՔ, *գ. Առնանդամն ու ամորձիքը միասին:* Էրէխի ճըճկերք լըվա, վոր խանգ՚իստ ք՚ընի: Տաճիկն իբրեղն առե, կէրթա՛ վոռն ու ճըճկերք լըվանալու, վոր նամազ կըռմիշ անի:

ՃԸՃԿՈՐ, *գ. Աչքի հիվանդություն, կոնյուկտիվիտ:*

ՃԸՄԵԼ, *1) նբ. Առվի բերանը ճիմով պատել: 2) չբ. Մեռնել:*

ՃԸՄԸՌԹՈՒԿ, *ած. Ճմռթված, տրորված:*

ՃԸՄՈՒՌ, *գ. 1) Տաքացրած յուղի կամ ձեթի մեջ բրդած հացով կերակուր: 2) փխբ. Աղքատ ուսանող:*

ՃԸՄՈՒԿ, *Վն. ած. Կճատ:* Թոռ ճըմուկ ք՚իթ ունէր *(Վն.)*:

ՃԸՄՔԸՎԵԼ, *կբ. չբ. Սեղմվել:* Քիչըմ ճըմքըվի, զիկ տեղ՚ն արա:

ՃԸՅՆԱՎՈՐ, *գ. Ճգնավոր:* Անուն տըրե ճըյնավոր, վա՚նից խավեր կուտի:

ՃԸՅՐԸՆԿԱԼ, *չբ. Երեխաների կիսաբերան լալը, չէ՛, չեմ ուզում անելը:*

ՃԸՆԱԿ, *գ. Ջրառատ ցեխ:*

ՃԸՆԱՍՏ, *Կճ. գ. Հավի կրծքի երկճղի ոսկոր:* Ճընաստով մարջ էկան *(Կճ.)*:

ՃԸՆԳԸՌԹԵԼ, *նբ. Եղունգներով քերել:*

ՃԸՆՃԸԽԵԼ, *նբ. Ջախջախել:* Ք՚արով տըվի, օցի կ՚ըլօխ ճընճըխիցի:

ՃԸՆՃԸՂԿԵՐԵՆ, *գ. Վանում տարածված ծածկալեզուներից մեկը:*

ՃԸՆՃԸՌԹԱԼ, *չբ. Ճենճի մեջ տապակվելու ձայն հանել:*

ՃԸՆՃԿԸՐԵԼ, *նբ. Ջրկել, հարստահարել:*

ՃԸՆՃՈՑ, *գ. Սեղանը, գրատախտակը մաքրելու լաթ:*

ՃԸՆՋԸԽԵԼ, *Լիմ, նբ. Ջախջախել:*

ՃԸՆՋԸԽԿՈՒ ՊԱՇԱՐ, *Հթ. Փիփերթ:* Ճընջըխկու պաշարի սէրմեր կօճկի նըման ի *(Հթ.)*:

**ՃԸՆՁՈՒՂ**, *կճ. գ. ճնճղուկ:*

**ՃԸՊԵՌՏՔ**, *գ. Աչքի հիվանդություն, ճիպռ, կոնյուկտիվիտ:*

**ՃԸՊԿԵԼ**, *նբ. Պոկել, փետել, փրցնել:*

**ՃԸՊՈԹ**, *գ. Ճիպոտ, մտրակ:*

**ՃԸՊՃԸՊԱՑՆԵԼ**, *հթ. չբ. Թարթել:*

**ՃԸՊՌՈՏ**, *ած. Աչքերը ճիպռով լցված:* Ճըպռոտ աչկերըտ պաքյեմ, վոր վէր խացիս կարաքյ քըսես:

**ՃԸՌՃԸՌ**, *գ. Մոմած նոր կոշիկի հանած ձայն:*

**ՃԸՌՃՅՈ̈ՒՐ**, *գ. Պահոց կերակրատեսակ:*

**ՃԸՌՄԸՌԹԵԼ**, *նբ. Հագուստը, կտորը շատ ճմռթել:*

**ՃԸՌՎԸՌԱԼ**, *չբ. Ճռճռալ:* Կօշիկներըս կըճըռվըռան:

**ՃԸՌՓԵԼ**, *Վն. նբ. Պլոկել:* Ծառի կորճ ճըռփեց *(Վն.)*:

**ՃԸՌՓԸԿԵԼ**, *նբ. Պոկել:* Ծառի կոռճը ճըռփըկեց:

**ՃԸՏՆՈՑ**, *Լիմ, գ. Վզից կախվող զարդարանք:*

**ՃԸՐԱՇԷՆ**, *գ. Լայնաբերան մեծ կուժ:*

**ՃԸՐԱՊԸՍՏԻԿ**, *գ. Ջուր ցանելու գործիք:*

**ՃԸՐԱՔՅ**, *գ. Ճրագ:* Ճրաքյն իր տակ լոս չի տա:

**ՃԸՐԱՔՈՒ**, *կճ.*, *ՃԸՐԱՔՅՈՒ*, *հթ. գ. Ճարպ:* Էծի ճըրաքուն քըսին խիվընդի դօշին *(կճ.)*:

**ՃԸՐԽԱՏ**, *գ. Ջրաղացում ջուր հատող գործիք:*

**ՃԸՐՃԸՐՈՒԿ**, *գ. Մի տեսակ վերք:*

**ՃԸՐՊԱ̈ԺԱ̈Ն**, *կճ. գ. Ջրաբաշխ:* Ճըրպա̈ժա̈ն ճըրի դօր մեզ տըվեց *(կճ.)*:

**ՃԸՐՊԱ̈Շ**, *Վն. հթ. Լիմ, գ. Ջրաբաշխ:* Ճըրպա̈շ դըզեց ճըրի սըրէն *(Վն.)*:

**ՃԸՐՎՈՐ**, *հթ. գ. Ջրաբաշխ:*

**ՃԻԺ** *գ. 1) (նաև՝ կճ.) Մանուկ, երեխա:* Ճիժ կուլա̈ *(կճ.)*: Ճիժը ճո̈ճըցե, սանդըր զա̈րկե բեխեր, կայնե ա̈ռճեվըս: **Ծան.** – *Այսպես էին ասում, երբ ուզում էին տան մեծ երեխաներին հասկացնել, որ իրենց ամուսնանալու ժամանակը հասել է: 2) Վն. Մասնավորաբար չարաճճի, ճվճվացող, վազվզան երեխա:*

**ՃԻԺ-ՊԻԺ**, *գ. Մանուկներ:*

**ՃԻԼ**[1], *հթ. գ. Ջիղ:*

**ՃԻԼ**[2], *գ. Խսիր գործելու բարակ եղեգ:*

**ՃԻԿ ԱՆԵԼ**, *Գաղտագողի նայել դուռը, պատուհանը կիսով չափ բանալով, վարագույրը թեթևակի քաշելով:*

**ՃԻԿ-ԲՈ**, *ձ. Օրորոցային երեխային զվարճացնելու ձայնարկություն:* **Ծան.** – *օրորոցի մի կողմից* ճիկ *էին անում, իսկ մյուս կողմից՝ փոքր-ինչ բարձր ձայնով* բո *ասում:*

**ՃԻԿՎԻԿ**, *գ. Պահմտոցի, բացխփիկի խաղ:*

**ՃԻԿՎԻԿ ԱՆԵԼ**, *տե՛ս* **ՃԻԿ ԱՆԵԼ**:

**ՃԻՄ**, Վն. *գ. Բահով կտրած բուսախառն հողի շերտ:* Ճըմօվ ճըրի տէմն առան *(Վն.)*:

**ՃԻՆԻՆԻ ԱՆԵԼ**, *Ախորժակը գրգռելու համար որևէ ուտելիք, հատկապես քաղցրեղեն կամ միրգ ցույց տալ, սակայն չտալ:*

**ՃԻՆԿՕ**, *գ. Սիրունհի:*

**ՃԻՊԿԵԼ**, *նբ. Պճկել:*

**ՃԻՏ** *(նաև՝ Հթ.), գ. Պարանոց:*

**ՃՈ̈ՉՃԸՂՎԵԼ**, *չբ. Արևի առաջին ճառագայթները բարձր սարի ետևից երևալ:*

**ՃՈԹ**, *գ. 1) Կտորի տեսակ, չիթ: 2) Ծայր:* Աչքի ճոթով մարդ կըղաղի: *3) Քղանցք:* Ճոթ առավ պիպռան// պիպռին, շոր ճըղվավ *(Վն.)*:

**ՃՈԹՌել**, *նբ. Ճղել, հագուստը պատռել:*

**ՃՈՂԵԼ**, *նբ. Մազերը սանրելիս բաժանել երկու և ավելի ճյուղերի:*

**ՃՈՂԼՈՂԱՆ**, *ած. գ. Շատախոս կին կամ աղջիկ:*

**ՃՈՂՎԱԾՔ**, *գ. Աղեթափություն:*

**ՃՈՂՈՒԿ**, *ած. Աղեթափությամբ տառապող:*

**ՃՈՆ**, *ած. Ընկույզի գույնի, փոքր-ինչ դարչնագույն, կինեմոնագույն:*

**ՃՈ̈Չ** *(նաև՝ Հթ.), ած. Մեծ:* Ճո̈չը ծուռ, պըստիկը ծուռ, ուրուրոցին կասի՝ ես չանց հըմէն ծուռ: Ճա̈մ(փ)խու վէրէն մէյ ճո̈չ քյար կէր *(Վն.)*: ***Ծան.*** – Ճո̈չ*-ը գործածվում է շատ մեծ առարկա ցույց տալու համար:*

**ՃՈ̈ՉԱԿՅԸԼՕԽ**, *ած. 1) Մեծգլխանի: 2) փխբ. Հիմար:*

**ՃՈ̈ՉԱՆԱ**, *գ. 1) Պապ: 2) Պապի անունը կրող թոռ:*

**ՃՈ̈ՉԱ̈ՆԱԼ, ՃՈ̈ՉԸՆԱԼ**, *Հթ. չբ. Մեծանալ:* Կյեղ ճո̈չա̈ցե *(Վն.)*:

**ՃՈ̈Չ ՄԱՄ, ՃՈ̈Չ ՄԷՐ**, *Հթ. **Տատ:*** Իմ ճո̈չ մէր խա̈րիր տարէկան ի *(Հթ.)*:

**ՃՈ̈ՉՈՒԹԵՆ**, *Լիմ, գ. Մեծություն:*

**ՃՈՌ**, *գ. Ամանի, կթոցի կիսախողովակաձև բերան, որ հարմար է հեղուկ լցնելու համար:*

**ՃՈՌԹԵԼ**, Վն. *նբ. Պատառոտել:*

**ՃՈՌԹԿԱԼ**, *չբ. Մի բանի դեմ առնելով՝ հագուստը պատռվել՝ ձայն արձակելով:*

**ՃՈՌԹՈՒԿ**, *ած. գ. Ճռթված, ճղված հագուստ:*

**ՃՈՌԻԿ**, *գ. Կիսակլոր բերանով կավե փոքրիկ աման:*

**ՃՈՌԿԱԼ**, *գ. Կթոցի կիսակլոր բերանի փական:*

**ՃՈՌԿԸԹՈՑ**, *գ. Ճոռ կթոց՝ կաթ կթելու համար:*

**ՃՕ̈ՐԻ**, *գ. Ջորի։*

**ՃՈՐՈՎ**, *մկ. Հազիվհազ, դժվարությամբ։*

**ՃՈ՛Խ-ՃՈ՛Խ**, *ձ. Հավ կանչելու ձայնարկություն։*

**ՃՈՒԹ**, *գ. 1) (նաև՝ Հթ.) Ողկույզ։* Մեյ ճութ խավող տոմա զիկ *(Վն.)։ 2) Ժանյակ։* Ճութով զմըրտըրուն շապիկ կըխայնի։ *Ծան. – Նախքան ամերիկյան միսիոներների գալը ճութը ասեղնագործական արտադրանք էր։ Միսիոներները սովորեցրին բարձիկով ճութ գործել։ Բարձիկից կախում էին մաքոքաձև ճաներ՝ վրան կոճի (մախառնայի) թել փաթաթած։ Այնուհետև բարձիկի վրա խրում էին գնդասեղներ և ճաները շարժելով հյուսում, գործում էին ուզած ձևի ճութ՝ ժանյակ։*

**ՃՈՒՂ**, *գ. Ոչխարի հոտ։* Օխչըրի ճուղ կընäց սար *(Կճ.)։*

**ՃՈՒՃ**, *գ. Առնանդամ։*

**ՃՈՒՃԻԿ³**, *Լիմ, գ. Քարկտիկ։* Ճուճիկ՚ խիյ ք՚ըրօվ կըխաղան *(Լիմ)։*

**ՃՈՒՃՈՒ**, *գ. Հավ։*

**ՃՈՒՃՈՒՂԻԿ**, *գ. Փոքրիկ թռչուն, ճնճղուկ։*

**ՃՈՒՄ**, *գ. Մարմնի որևէ մասի ընդարմացում։*

**ՃՈՒՌ**, *Վն. Լիմ, գ. Ազդր։*

**ՃՕ̈ՒՐ**, *գ. Ջուր։*

* Ճըրերն ինգ՚նել, *Մեկի շնորհին արժանանալ, մեկի բարյացակամությունից օգտվել։*

* Էրկըսի ճö̈ւր մէյ առվօվ չէրթä, *Տարբեր բնավորություններ ունեն, հաշտ չեն կարող լինել։*

* Ճö̈ւրն իր ճäմբխօվ կէրթä, *Ամեն ինչ իր լուծումը կգտնի։*

* Էսա պäն շատ ճö̈ւր կըվէրցնի, *Դեռ նոր բաներ կհայտնվեն, դրա դատը երկար կտևի։*

* Ճըրի կ՚ին, *Շատ էժան։*

* Ճö̈ւր կըծիծի, *Ապարդյուն աշխատանք է կատարում։*

* Ճըրի ճäմբäխ, *Բանուկ ճանապարհ։*

* Ճö̈ւր կըտանի, ծարավ կըպիրի, *Կխաբի, խաբեբայություն կանի։*

* Ճö̈ւր տու քըշի կանի, *Գործը շտապելով, անբարեխղճորեն կկատարի։*

**ՃՕԼՏԵԼ**, *նբ. Գլխատել։*

**ՃՕԼՕՏՐԱՆ**, *Վն. գ. Ջրհորդան։*

**ՃՕՂ**, *Վն. գ. Ճյուղ։*

**ՃՕՇ-ԿԵՅԲԱԹ**, *գ. Բամբասանք։*

**ՃՕՃԻԿ³**, *Հթ. գ. Ճոճք։*

**ՃՕՊԱՆ**, *գ. Հաստ պարան։* Ճօպան խաստ տէսակն էր *(Կճ.)։*

**ՃՕՌԱԹԱՆ**, *Հթ.*, **ՃՕՌՕԹԱՆ**, *Վն. Լիմ, գ. Ջրհորդան։* Ճօռօթան փէտից կըշինեն *(Վն.)։*

**ՃՕՌՆԸԿԱԹ**, *տե՛ս* **ՃՕՌԱԹԱՆ**։ Ճօռնըկաթ փէտից կըշիքին *(Բմ.)։*

# Մ

**ՄԱ**, *գ.* Մայր *բառի կոչական ձևը:*

**ՄԱ̈**, *շ. Կամ:* Ես մա̈ տո̈ւ:

**ՄԱԲԷՅ**, *գ. Սրահ, միջանցք:* Մաբէյի մուսանդարան *(=պահարան):* Թակավուրու լաճ կյա̈խտիկ մըտեր ի մաբէյի մուսանդարան, վոր լըսի ինոնց:

**ՄԱԳՈԳ**, *գ. տե՛ս* **ՄԸՔՈՒՔ**:

**ՄԱ̈ԴԱ̈Ն**, *գ. Հանք:*

**ՄԱԴԱԹ**, *գ. Օգնություն:* Ծյո̈ն ծըմեռ, ոչ մարդ կա, ոչ մադաթ:

* Հա՛յ մադաթ, *Օգնությա՛ն հասեք:*

**ՄԱԴԻԱՆ**, *գ. Մատակ:*

**ՄԱ̈ԴՐԱ̈ՍԱ̈**, *գ. Մահմեդականների կրոնական դպրոց:*

**ՄԱԴՈՒՌ**, *ած. Կույր:*

* Քյոռ մադուռ, *Կույրի կույր:*

**ՄԱ̈ՁԱ̈**, *գ. Աղանդեր, օղի խմելուց (թալելուց) հետո բերանը քաղցրացնելու համար գործածվող չիրուչամիչ և այլ քաղցրեղեն:* Արադ վոր պիրես, մա̈զեն խետոն էլնի:

**ՄԱ̈ՁԱ̈Թ**, *գ. Աճուրդ:*

**ՄԱ̈ՁԱ̈ԹԼԱՄԱ**, *գ. Աճուրդ:* Խեղճ մարթու եղած-չեղածը մա̈զա̈թլամա են խանե:

**ՄԱ̈ՁԱ̈ՆԴԱ̈**, *գ. Շուկայական առուծախի հարաբերակցությամբ որոշված սակագին:* Ոսկի փարայի մա̈զա̈նդեն քյա̈նի՞ ի:

**ՄԱ̈ՁԴԱԿ**, *գ. Ծամոն պատրաստելու խեժ:* Մա̈զդակ ծամոն պիտ էլնի, վոր ծամեմ:

**ՄԱՁԷՓՈՍԻԿ**, *գ. Մանկական խաղի տեսակ հողի հետ:*

**ՄԱՁ ԹԱ̈ԼԵԼ**, *հթ. Արմատակալել:*

**ՄԱՁԼՈՒՄ**, *ած. 1) Հեզահամբույր: 2) Տխուր, տրտում:*

**ՄԱՁՐԱԿԱ**, *գ. Լավաշ թխելու բարձիկ:*

**ՄԱ̈ԹԱԼԻԿ**, *գ. Երկու կոպեկի կամ տասը փարայի արժողության պղնձե մանրադրամ:*

**ՄԱԹ**

* Մաթ էլնել, *1) Ապշել, զարմանալ: 2) Հիանալ:*

* Մաթ-մաթ իրիշկել, *Զարմանքից ապուշ կտրած երկար նայել:*

**ՄԱԹԻԼ**, *գ. Մանր ոջիլ:*

**ՄԱԹՐԱԹ**, *գ. Կավե մեծ աման:*

**ՄԱԹՐԱԲԱԾ**, *գ. Առևտրով զբաղվող գնչու: Ծան. – Վանի հարավարևմտյան կողմում ապրում էին քրդախոս գնչուներ, որոնց հայերն անվանում էին* մըդրըբներ, *իսկ թուրքերը`* մյութրյուբլար: *Գնչուներն ընդհանրապես քրդախոս չէին, ունեին իրենց լեզուն: Գնչուների մի մա-*

*ալ* բէքիրնէր *(պառաված ձի-եր) էր պահում և Այգեստանի արտաքնոցների գիշերային կեղտն էր փոխադրում այգի-ներն ու արտերը, մյուս մասը տնետուն ընկած մաղ էր ծա-խում և ձեռքի հետ գողու-թյուն անում։ Փոքր մասն էլ առևտուր էր անում և խաբում առևտրի մեջ։ Դրանց անվա-նում էին* մաթրաբաշնէր։

**ՄԱԺԱԺՈՐԵԼ**, *չբ. Հիվանդի նման լինել, վատ զգալ։*

**ՄԱԺԵԼ** *(նաև՝ Հթ. Կճ.), նբ. Նրբորեն շփել, տրորել։*

**ՄԱԼ** *(նաև՝ Բմ. Կճ.), գ. 1) Մանր և խոշոր երջերավոր անա-սուն։ 2) Ապրանք, ունեցվածք։* Մալին՝ տէր, վորթուն՝ խէր։

**ՄԱԼԱ**, *գ. Ծեփիչ։*

**ՄԱ̈ԼԱ̈ՄԱԹ ԷԼՆԵԼ**, *Խայտա-ռակվել, անունը դուրս գալ։*

**ՄԱԼԱՉԵԿ**, *գ. Ուշ աշնանային տանձատեսակ, որ նման է Ջաքաթալայի տանձին. հա-մով տարբերվում է Երևանի մալաչայից։*

**ՄԱԼԵՁ**, *գ. Ալրի ճաշի չորա-ցած մնացորդներ պուտու-կի պատերին, երբ ճաշը շատ եփվելուց և խյուս դառնալուց կպչում է պատերին։*

**ՄԱԼ-ԹԱՄԱՐ**, *գ. Ստացվածք, ապրանք, կարողություն։*

**ՄԱ̈ԼԻԱԹ**, *գ. Արժեք։* Մա̈լիաթ չունի։

**ՄԱԼՈՒԼ-ՄԸՌՈՒԹ**, *ած. Տխուր-տրտում։*

**ՄԱԼՕՉԷԿ**, *գ. Ուշ աշնանային տանձի տեսակ՝ համով նման Երևանի մալաչային։*

**ՄԱԽ**, *գ. Մահ։*

**ՄԱԽԱՌՆԱ**, *գ. Կարի մեքե-նայի վրա անցկացվող կոճ։*

**ՄԱԽԲՈՒԼ**, *ած. 1) Հարգար-ժան, հարգի։ 2) Հաճելի։ 3) Ուշագրավ։*

**ՄԱԽԹԵԼ**, *նբ. Գողանալ։* Էնըս-կընա̈ մախթեցի, վոր վոչ օվ պա̈ն չիմցավ։

**ՄԱԽԼՈՒԽ**, *գ. 1) Բազմություն, ամբոխ։ 2) Ժողովուրդ։*

**ՄԱԽԿԱԼ**, *գ. Մկրատ։*

**ՄԱԽԿՈՒԼ Ի**, *Հարգի է։*

**ՄԱԽՌՈՏ**, *ած. Մաղձոտ։*

**ՄԱԽՍ**, *Կճ. Լիմ, գ. Մաղձ։*

**ՄԱԽՍՈՒՍ**, *մկ. 1) Դիտ-մամբ։ 2) Հատուկ։* Մախսուս քʹե խա̈մա̈ր եմ կարե։

**ՄԱԽ-ՏԱՐԱԺԱՄ**, *գ. Անժա-մանակ մահ։*

**ՄԱԾՆԻ ՇՈՐ**, *Վն. Մածնի վրա գցելու հատուկ շոր։ Ծան. – Վանում մածունը տոպրա-կով չեն քամել. մածնի վրա շոր էին փռում, վրան մոխիր լցնում, որը մածնի ջուրն իս-կույն ներծծում էր։* Մածնի շոր պիպռից կախուկ էր *(Վն.)։*

**ՄԱ̈ԿԱ̈ՏՈՒՁ, ՄԱԿԱՏՈՒՁ**, *Լիմ, գ. Խխունջ։* Նա̈մ տեղ մա̈կա̈տուզ

շատ կէլնի *(Վն.)*։ Մակատուզ, ականջ խան տո՛ւս, Քե տսկի կինդ եմ պիրե *(Լիմ)*։

**ՄԱԿԲՈՒԼ**, *ած. Ընդունելի։*

**ՄԱ̈ՀԱ̈ՆԱ**, *գ. Պատրվակ։*

**ՄԱՀԻԼ-ՄԷՀԻԼ ՄՆԱՑԱԾ**, *Հիացած։*

**ՄԱ̈ՀԼԱ̈**, *գ. Թաղ, թաղամաս։*

**ՄԱ̈ՀԼԱ̈ԲԱ̈ՇԻ**, *գ. Թաղապետ։*

**ՄԱ̈ՀԼԱ̈ԲԱ̈ՇՅԱՆ**, *գ. Թաղապետյան։*

**ՄԱ̈ՀԼԱ̈Մ**, *գ. Սպեղանի։*

**ՄԱՀՐԱՄԱ**, *գ. Սրբիչ։*

**ՄԱՀՐՈՒՄ**, *գ. Սև ջուր, աչքի հիվանդություն, որ հանգեցնում է կուրության։*

**ՄԱԽՈՒՄԵՌ**, *գ. Անասելի դժվարություն։*

**ՄԱՂԱՋԱ**, *գ. Գետնահարկ մառան, մթերանոց։* Ծըմըռնուկ տանձն ու խընձո՛րը մաղազի մէչ փըռուկ հա՛րթի մէչ կը պախին։

**ՄԱՂԱՐԱ**, *գ. Քարայր։*

* Ջըմփ-զըմփ մաղարա, ***Ուրարտական թագավորների երկրորդ նստավայրը Վանում, Անգյուսներա թաղի վրա իշխող սարի՝ Թոփրաք (=հողե) կալեի (=բերդի) լանջին արհեստականորեն փորված քարայրում։***

**ՄԱՂԴԱ**, *գ. Ճաշակ, ախորժակ։* Վի՛ր խացի մաղդա կա։

**ՄԱՂԱԴԱՆՈՍ**, *գ. Կարոս, կանաչու տեսակ։*

**ՄԱՂԴԱՆՈՍ**, *գ. տե՛ս* **ՄԱՂԱԴԱՆՈՍ**։

**ՄԱՂԵԼ**, *1) նբ. Մաղել, մաղով անցկացնել։ 2) նբ. Ընտրություն կատարել։* Մաղեց-մաղեց, էտրան կըլնդավ։ *3) չբ. Բարակ անձրև տեղալ։*

**ՄԱՂԿՏԱՎՈՐ**, *ած. Փայլփլուն։*

**ՄԱՂՄԸՂՎԵԼ**, *1) կբ. Քանիցս մաղվել։ 2) չբ. Լուսանալ։ Ծան. – Վաղ առավոտյան, երբ արևի ճառագայթները կարծես մաղվում են, վանեցին ասում էր՝* Աղօթարանը կըմաղմըվի – *Արևելքը լուսանում է։*

**ՄԱՂՄԸՏՎԵԼ** *չբ. Լռելյայն լալ։*

**ՄԱՂՉԱ**, *գ. Կանանց ճակատի զարդ։*

**ՄԱՃԱՌ**, *գ. 1) Արևի տակ չորացրած տառեխ։ 2) Դեռ չթթված գինի։*

**ՄԱՄ**, *գ. մնկ. Մայր։*

**ՄԱՄԱ**, *տե՛ս* **ՄԱՄ**։

**ՄԱՄԷ**, *գ. Տատ։* Մամէս խարիր տարէկան էր *(Կճ.)*։

**ՄԱՄԻԿՅ**, *Լիմ, տե՛ս* **ՄԱՄԷ**։ Մամիկյ խարիր տարէկան ի *(Լիմ)*։ Մամիկյ, մէ խէկյա՛տ ասա *(Լիմ)*։

**ՄԱ̈ՄԼՅԱ̈ՔՅԱԹ**, *գ. Երկիր, հայրենիք, տերություն։*

**ՄԱՄՈՒԽԻԿ**, *ած. 1) Քծնող։ 2) Թուլամորթ, կանացի։* Մամուխիկ մարթ ի։

**ՄԱՅԱ**, *գ. 1) Մերան։ 2) Թթխմոր։ 3) Դրամագլուխ։*

*4) Ընդհանուր դրամագլխի մեջ մեկ անհատի բաժինը:* Քո մայեն ի՞նչ ի:

ՄԱՅԱՍՈՒԼ, *գ. Թումբ, թմբիկ:*

ՄԸՅԹԸԲ, *գ. Թուրքական դպրոց:*

ՄԱՅԻԼ, *գ. Զմայլանք:*

ՄԱՅԻԼ ՄՆԱԼ, *Հիանալ, սքանչանալ:*

ՄԱՅԼԵԼ, *չբ. Հիանալ, սքանչանալ:* Խոտով անմախական մայլա յես:

ՄԱՅՀԼԱ, *գ. Թաղամաս:*

ՄԱՅՀԼԱԲԱՇԻ, *գ. Թաղապետ:*

ՄԱՅՀԼԱԲԱՇՅԱՆ, *գ. Թաղապետյան:*

ՄԱՅՀԼԱՄ, *գ. Սպեղանի:*

ՄԱՅՄՈՒՆ, *գ. Կապիկ:*

ՄԱՅՈՐԱՏ, *գ. Ժառանգության հատկացում ավագ որդուն: Ծան. – Վասպուրականի քրդերի մեջ շատ էր տարածված մայորատը. մեռնողի ամբողջ հարստությունը ժառանգություն էր մնում միայն առաջին կնոջից (քրդերը կարող էին բազմաթիվ կանայք ունենալ և ունեին) ծնված անդրանիկ զավակին: Քանի որ քրդի անդրանիկ որդուն էր մնում հոր ամբողջ հարստությունը (հիմնականում ոչխարներ, կովեր, գոմեշներ և ձիեր), հարստությունից զրկված մյուս որդիները դառնում էին ավազակ, ապրում սարերում և հարձակումներ գործում նստակյացների (հիմնականում՝ հայերի և ասորիների) գյուղերի վրա, կողոպտում նրանց քարավանները և կողոպուտը (հիմնականում՝ ոչխարներ) առժամանակ հանձնում էին նստակյաց հայ գյուղացու: Հայ գյուղացին գոհ էր մնում դրանից, քանի որ ոչ միայն օգտվում էր իրեն հանձնված կանթատու անասուններից, այլև վայելում էր քուրդ ավազակի հովանավորությունը: Քուրդն այդ ճանապարհով բավականին հարստություն դիզելուց հետո դիմում էր նոր նշանակված կառավարչին և արժանանում համաներման:*

ՄԸՅՐԸՄԸ, *գ. Սրբիչ:*

* Թյուլի մըյրըմմը, *Խավոտ սրբիչ:*

ՄԱՆԱ, *գ. Փորձանք, դժբախտություն:*

ՄԱՆԳԸՂՈՆ, *գ. Փոքր մանգաղ:*

ՄԸՆԳՅԸՆԸ, *գ. Մամլակ, մամուլ:*

ՄԸՆԳՅԸՂԵԼ, *նբ. Մանգաղով քաղել, հնձել:*

ՄԸՆԳՅԸՐ, *եղ. Մի՞թե:*

ՄԸՆԴԸԿ, *գ. Վայրի կանաչի, որ ուտում են ձվով ու յուղով տապակելով, ինչպես նաև թթու են դնում:*

**ՄԱՆԴԻԼ**, *գ. Թաշկինակ:*

**ՄԱ̈ՆԵ**, *բ. Մի՛ անիր:* Ես արի, տո̈ւ մաա̈նե:

**ՄԱՆԵԼ**, *Վն. չբ. Նմանել:*

**ՄԱՆՁԻԼ**, *գ. 1) Նետի, գնդակի հեռաձգության չափ, նետընկեց տարածություն: 2) փխբ. Ուժ և կարողություն:* Քյո մանզիլն ի՞նչ ի որ:

**ՄԱՆԹԱՌ**, *Վն. գ. Խցան:* Մանթառով փարչի պէրան փակեց *(Վն.):*

**ՄԱՆԻՉՔ**, *գ. Բարձած սայլը ամրացնելու կլոր փայտ:*

**ՄԱՆԾԿԵՐՏ**, *գ. Մանազկերտ:*

**ՄԱՆԿԱԼ**, *գ. Կրակարան:*

**ՄԱՆԿՅԵՌ, ՄԱՆԳՅԵՌ**, *Լիմ, գ. Փոցխ:* Մանգյեռով խոտ կըժօղվէն *(Լիմ): Ծան. – Կա և փոցխ:* Փոցխօվ ցըվրած խոտ իրար պիրեց//ժօղվեց *(Վն.):*

**ՄԱՆԿՅԸՌԵԼ**, *նբ. Փոցխել:*

**ՄԱՆՂԱԼ**, *գ. տե՛ս* **ՄԱՆԿԱԼ**:

**ՄԱՆՃ**, *գ. Մաճ:*

**ՄԱՆՃԿԱԼ**, *գ. Մաճկալ:*

**ՄԱՇԱ**, *գ. Ունելի:*

**ՄԱՇԱԼԼԱ**, *եղ. Կեցցես:*

**ՄԱՇԿԱԼ**, *գ. Ցուղոտ հին լաթ, ջնջոց, որ օգտագործվում էր որպես կպչան:*

**ՄԱՇԿՈՒԿ**, *գ. Պատիճավոր վայրի բույս ցորենի արտերում, որ կանաչ վիճակում ուտվում էր:*

**ՄԱՇՏԵՄ**, *եղ. Տեսնես, արդյոք:*

**ՄԱՇՈՒԿ**, *ած. Մաշված:* Սաքօն մաշուկ ի *(=վերարկուն մաշված է):*

**ՄԱ̈ՋԱ̈Լ ՏԱԼ**, *Ժամանակ, հնարավորություն տալ:*

**ՄԱՋԻԴ**, *գ. Մզկիթ:*

**ՄԱ̈ՋԻԴԻԱ̈**, *գ. Մոտավորապես երկու ռուբլի արժողությամբ արծաթյա դրամ:*

**ՄԱ̈ՋԼԻՍ**, *գ. 1) Ժողով, հավաքույթ: 2) Թուրքական պառլամենտ:*

**ՄԱ̈ՋԼԻՍԻ**, *ած. Ասող, խոսող, երգող ու նվագող, ընկերական ու մարդամոտ:*

**ՄԱ̈ՌԱ̈Խ**, *գ. 1) Մտածմունք, հոգս, մտատանջություն: 2) Հետաքրքրություն:*

**ՄԱ̈ՌԱ̈ԽԼԻ**, *ած. Սիրով, հետաքրքրությամբ գործ կատարող:*

**ՄԱՌԱ**, *գ. Սեղան:*

**ՄԱՌԱՆ**, *գ. Ձմեռային պաշարը պահպանելու սենյակ՝ շինված տանտան (=թոնրատան) կողքին:*

**ՄԱ̈ՍԱ̈Բ**, *գ. Հավատ, դավանանք, կրոն:*

**ՄԱ̈ՍԱ̈ԲՍԸԶ**, *ած. 1) Անհավատ, սրբություն չճանաչող: 2) փխբ. Փոփոխամիտ:*

**ՄԱՍԱԹ**, *գ. Հեսան սրելու գործիք:*

**ՄԱՍԱԼ**, *գ. Ժողովրդական զրույց, հեքիաթ։*

**ՄԱՍԱԼԱ**, *1) գ. Որևէ գործի վերաբերյալ եղած խոսակցություն։* Էտ մասալէն ի՞նչ էլավ։ *2) եղ. Խոսակցության ընթացքում հնչող արտահայտություն, միջարկություն՝ օրինակ։* Մասալա, քյե ասեմ։

**ՄԱՍԼԱՀԱԹ**, *գ. Զրույց, երկար խոսակցություն։*

**ՄԱՍԽԱՐԱ**, *գ. Խեղկատակ։*

**ՄԱՄՆԸՎԵԼ**, *կբ. Հաղորդություն ստանալ, եկեղեցում հաղորդվել։*

**ՄԱՍՏԱԿ**, *գ. Ծամոնի ընտիր տեսակ։*

**ՄԱՍՏԻԿԱ**, *գ. Հունական օղի։*

**ՄԱՍՐԱ**, *գ. Մըքուքի միջի իլիկ, մըքուքի կամ մաքոքի միջուկ, որի վրա փաթաթված է լինում թելը։*

**ՄԱՍՐԱԹ**, *գ. Աչքի բիբ։*

**ՄԱՍՐՈՒՖ**, *գ. Ծախս, օրապաբենի գնման ծախս։*

**ՄԱՎԻ**, *ած. Մուգ կապույտ։*

**ՄԱՎԻՋԵՐ**, *գ. Տասկրականոց ատրճանակ։*

**ՄԱՎՆԱ**, *գ. Նավակ։* Մավնանեբով ավազ կըկըրենք։

**ՄԱՎՈՒՋԵՐ**, *տե՛ս* **ՄԱՎԻՋԵՐ**։

**ՄԱՏ**, *գ. 1) Մատ։ 2) Խաղողի շիվ։*

* Խինգ մատն էլ մոմ շինել, վառել, *Ուժից վեր խնամք տանել։*

**ՄԱՏԱԿ**, *գ. Էգ ձի։ Ծան. – Գոմշի էգին ասում էին* էքյ։

**ՄԱՏԱՂԱՑՈՒ**, *գ. Մատաղ անելու անասուն, որի վրա աղոթում են, ապա մորթում կամ մորթելուց առաջ օրհնած աղ են կերցնում։*

**ՄԱՏԱՏ**, *վն. գ. Բարալիկ, նուրբ մողես։*

**ՄԱՏԸՄ**, *ած. 1) Շատ քիչ, մի պտղունց։ 2) Շատ փոքր։*

**ՄԱՏԽՈՂԵԼ**, *1) նբ. Մատով կերակրի համը ստուգել։ 2) չբ. Ամեն բանի միջամուխ լինել։*

**ՄԱՏՆԱԽԸՐԵԼ**, *նբ. Մատանին հանդիսավորությամբ մատին անցկացնել։*

**ՄԱՏՆԻԿ, ՄԱՏՆԻԿ**[3], *Լիմ, գ. Մատանի։*

**ՄԱՏՆԻՍՏԱՆ**, *գ. Մատանիներ։*

**ՄԱՏՆՈՒԿ**, *նբ. ած. Մատնված։*

**ՄԱՏՈՏ**, *տե՛ս* **ՄԱՏԱՏ**։

**ՄԱՐԱԳ**[3], *գ. Հարդանոց։*

**ՄԱՐԱԶ**, *գ. Ցավ, նեղություն։*

* Միրազ կէլնի մարազ, *Օժիտը ցավ ու դարդ, հոգս կդառնա փեսայի համար։*

**ՄԱ̈ՐԱ̈ԺՕԿ**[3], *Լիմ, գ. Ծնեբեկ։*

**ՄԱՐԱԼ**, *գ. Եղջերու։*

**ՄԱՐԱԿԱ**, *գ. Ձմեռվա պաշար։*

**ՄԱՐԱՂ**, *գ. Դարան։*

**ՄԱՐԱՂ ՄՏՆԵԼ**, *Թաքնվել հանկարծակի հարձակում գործելու համար։* Կատուն մարաղ ի մտե, վոր մուկ պըռնի։

**ՄԱՐԱՄ**, *գ. Նպատակ, ձգտում։*

**ՄԱՐԱՆԳՅՈՋ**, *գ. Ատաղձագործ։*

**ՄԱՐԱՆԴԻՋ**, *գ. Երկրաչափ։*

**ՄԱՐՋԱ**, *տե՛ս* **ԾԷԹՐԷՆ**։

**ՄԱՐԷ**, *գ. 1) (նաև՝ Լիմ)* Մայր *բառի կոչական ձևը։* Մարէա̈, արիա̈ մօ զիկ *(Վն.)։* Մարէա̈, արեա̈ մօ ձի *(Լիմ)։ 2) Հթ. Կճ. Մայր։* Մարէս կըսա̈ կէնի *(Կճ.)։* Մարէ, խաց կուզեմ *(Լիմ)։*

**ՄԱՐԹ**, *գ. Մարդ։* Մարթուց վոր էշ չէլնի, իշու կյին կէլնի խա̈զա̈ր վոսկի։ Մարթուց էշ, իշուց՝ մարթ։ Մարթուց շուն կէլնի, շընից մարթ չէլնի։

* Մարթ-մուրթ չկա, *Մարդ արարած չկա։*

* Մարթ աստուծո, *Ո՛վ մարդ։*

* Մարթու կընա̈լ, *Ամուսնանալ։*

* Մարթ ի տա̈րցե, *Սեփական վաստակի տեր է դարձել։*

* Մարթի տեղ տընել, *Հարգել, պատվել ըստ արժանվույն։*

* Մարթատեղ տընել, *Տղամարդ հաշվել։*

* Մարթամեչ մըտնել, *Հասարակության մեջ մտնել։*

**ՄԱՐԹԱԽՈՏ**, *գ. Մարդու հոտ։ Ծան. – Հեքիաթներում կախարդները մարթահոտ են առնում և բռնում պատահաբար իրենց տարածքն ընկած մարդկանց։*

**ՄԱՐԹԱԽՈՒՆ**, *ած. Մարդակործան, մարդ մոլորեցնող։*

**ՄԱՐԹԱՑՈՒ**, *գ. ած. Հասած աղջիկ։*

**ՄԱՐԹԿԸՆԵՐ**, *գ. Մարդիկ։*

**ՄԱՐԹՈՒԿԸՆԻԿ**, *գ. Ամուսիններ։* Ինոնք մարթուկընիկ են։

**ՄԱՐԻՖԱԹ**, *գ. Շնորհք, ձիրք, հնարիմացություն։* Փախնելն էլ մարիֆաթ ի։

**ՄԱՐԻՖԱԹԼԻ**, *ած. Շնորհալի։*

**ՄԱՐԻՖԱԹՍԸԶ**, *ած. Ապաշնորհ։*

**ՄԱՐԽՕՇ**, *ած. Թմփլաշ։*

**ՄԱՐԿԸՐՅԻՏ**, *գ. Մարգարիտ։* Անծակ մարկըրյիտ մախկուլ ի։

**ՄԱՐՀԱՄԱԹ**, *գ. Գթություն։*

**ՄԱՐՁԸԹԻ**, *գ. Կաղնու տեսակ։*

**ՄԱՐՄԱՐԱԿԱՆ**, *ած. Մարմարի նման սպիտակ։* Մարմարական ջան ունի։

**ՄԱՐՏԱԿ**, *գ. Գերանների վրա շարվող ուռենու բավական հաստ ու լավ չորացած ճյուղեր, որոնց վրա փռվում էր եղեգ, ապա միայն հողի հարդախառն շաղախով ծածկվում էր տանիքը։*

**ՄԱ̈ՐՔՅԱ̈ՄԱ̈**, *գ. 1) Կառավարչատուն։ 2) Դատարան։*

**ՄԱՓՍ**, *գ. Բանտ։*

**ՄԱՔՅԻՆԱ**, *գ. Մեքենա։*

**ՄԱՔԻՆԻ**, *գ. Մաքու բանած կաշի։*

**ՄԱՖԱՐ**, *գ. Կարողություն։* Էլ վէր մյե մաֆար չըմընաց։

**ՄԵ**, *Լիմ, դ. Մեզ։*

**ՄԵՂՐՈՒԿ**, *գ. Վաղահաս տանձի տեսակ։ Ծան. – Տանձի մյուս տեսակներն էին՝* թէզլագյան, թթռ̈ի տանձ, աբասեկ, մարտիրոս, մոկաց, մալաչէկ, դըղդըղէկ, մալաղէկ, փաշէք, թըռսուկ, ճենճուկ։

**ՄԵՌԸԼԻ ԱՐԵՎ**, *1) Անձրևի ժամանակ արև։ 2) Վերջալույսի արև։ 3) Վերջալույսին ամպերին անդրադարձվող ճառագայթներ։*

**ՄԵՌԿԸՏԵԼ**, *չբ. Ծուլանալ։*

**ՄԵՌՆԵԼ**, *չբ. Մահանալ։ Ծան. – 1)* Մեռավ՝ *ասում էին սովորական մարդու սովորական մահվան դեպքում, 2)* վախճանվեց՝ *հոգևորական կամ բարեպաշտ ազնիվ մարդ, 3)* խանգ՚ավ, *4)* ննջեց՝ *խոր ծերության հասած առաքինի մարդ, 5)* խոկ՚ին տըվեց՝ *ոչ առաքինի մարդ, 6)* խանգ՚ըստացավ՝ *երկարատև հիվանդությունից տառապած մարդ, 7)* ծեռից կընաց՝ *երբ կարելի էր փրկել մարդու կյանքը, բայց անտերությունից ու անփութությունից մահը վրա էր հասել, 8)* տան սունն ինգ՚ավ՝ *երբ մեռնողը տան միակ կերակրողն էր, 9)* ճըրաք՚ը մարեց՝ *երբ մեռնողը տվյալ ընտանիքի վերջին ներկայացուցիչն էր, 10)* պաղեց, *11)* ոտները փըռեց, *12)* թընչկեց, *13)* ճո̈չ ք՚ուն ք՚ընեց՝ *երբ հայտնողը չէր համակրում մեռնողին, 14)* սատկեց՝ *անասունների, թուրքերի և վատ հայերի համար ասվող, 15)* խատավ՝ *թուրքերի և հատկապես քրդերի համար, 16)* դարդավարամ էլավ՝ *վշտից մահացավ, 17)* ճըմեց՝ *մեծահարուստ վատ հայ, 18)* շանսատակ էլավ՝ *գող, ավազակ, 19)* թընջկացրին, *20)* շան սատակ արին՝ *երբ մարդը տեռորի էր ենթարկվում վատ գործունեության համար, 21)* պըթաց՝ *վատ մարդու հանկարծամահ լինելու մասին, 22)* նազ՚աստան ինգ՚ավ մեռավ՝ *սովորական մարդու հանկարծամահ լինելու մասին, 23)* մեռցրին՝ *երբ ընտանեկան ներքին և արտաքին վատ պայմանները արագացնում են մահը, 24)* Հիսուս կանչեց՝ *օրեցօր բազմաթիվ դարձող բողոքականների համար ասվող արտահայտություն։*

**ՄԷԱՆԱ**, *գ. Ախոռի մեջ հյուրերի համար շինված սենյակ։*

**ՄԷՋԱՐ**, *գ. 1) Բրդե գոգնոց։ 2) Սփռոց։ 3) Կապոցի՝ բօխչայի թաշկինակ։*

**ՄԷՋԵԼ**, *չբ. Մոմոալ։*

**ՄԷԽԱ**, *մկ. Մի անգամ։* Մէխա իրիշկամ։

**ՄԷԽԱՏԻԿ³**, *հթ. գ. Ծնողների միակ զավակ։* Իմ մէխատիկ՚ լաճուն տի փըսակեմ *(հթ.)*։

**ՄԷԿԱՆՑ**, *մկ. Մեկեն:*

**ՄԷԿԷԼ**, *դ. Մյուս:*

**ՄԷԿ ԷԼ**, *մկ. Կրկին, դարձյալ, մի անգամ ևս:*

**ՄԷԿԷԼՕՐ**, *մկ. Երկու օր առաջ կամ հետո:* Էրէկ չէ, մէկէլօր, վաղը չէ, մէկէլօր:

**ՄԷԿԸՋՄԷԿՈՒ**, *դ. Միմյանց, իրար:*

**ՄԷԿԸՍՄԷԿ**, *մկ. Հանկարծակի, անսպասելի:* Մէկըսմէկ տո՞ւռը ծիծեց:

**ՄԷԿՈՒԾԱՐ**, *Լիմ, գ.ած. Ծնողների միակ զավակ:*

**ՄԷԿՈՒՑ**, *մկ. Մեկեն:*

**ՄԷՀԻԼ**, *գ. Ջմայլանք:* Էրկէն բաժիդ մէհիլ տըվի:

**ՄԷՀՄԱՆԴԱՐ**, *ած. Հյուրընկալ:*

**ՄԷԾԿԱՊ**, *Լիմ, գ. Գոտի:*

**ՄԷՅ**, *թ. Մեկ: Ծան. – Թվականներ`* էրկու, իրեք[յ], չորս, խինգ, վեց, յոթ, ութ, ինը, տաս, տըսնըմէկ, տըսվէրկու, տըսվիրեք[յ], տըսնըչորս, տըսնըխինգ, տըսնըվեց, տըսնըյօթ, տըսննութ, տըսննին, կըսան, եռսուն, ք[յ]առասուն, իսուն, վաթսուն, յեթմիշ, սայսան, դոխսան, խարիր, խա՞զա՞ր:

**ՄԷՅԴԱՆ**, *գ. Հրապարակ:*

**ՄԷՅԼԱՐ**, *մկ. Մեկ շնչով, առանց հանգստանալու:* Մէյլար վա՞զեց չուր տուն:

**ՄԷՅԽԱՆԱ**, *գ. Գինետուն:*

**ՄԷՅԽԱՆԱՋԻ**, *գ. Գինետան տեր:*

**ՄԷՅ ԿՈՒՆՔ ԱՌՆԵՄ**, *Մի քիչ քնեմ:*

**ՄԷՅՄԷԿԵԼՈՒ** *ԽԵՏ, Իրար հետ:*

**ՄԷՅՄԸԿԵԼ**, *նբ. Մաքրել, քարերը, որոմները հանել ձավարի, բրնձի միջից:*

**ՄԷՅՄԸԿՎԵԼ**, *կբ. Իրարից բաժանվել, առանձնանալ:*

**ՄԷՅՄԷՅ**, *Լիմ, մկ. Մեկ-մեկ:*

**ՄԷՅՆԵ**, *դ. Մեզանից:*

**ՄԷՅՏԵՂ** *(նաև` Հթ.), մկ. Միասին:* Մէյտեղ ք[յ]աղ կանին *(Վն.)*:

**ՄԷՅՏԵՂՎԵԼ**, *չբ. Միանալ:*

**ՄԷՇԱ՞**, *Հթ.. Բմ. Կճ. գ. Անտառ:* Գ’[կ]ընա՞ցին մէշա՞ փէտ բ’էրեն *(Կճ.)*:

**ՄԷՇԻՆ**, *գ. Կոշիկի երեսի կաշի:*

**ՄԷՇԿԻ ՋԸՆՋԻԼ**, *Հթ., ՄԷՇԿԻ Ջ[ը]ԸՆՋԻԼ, Կճ. Ողնաշար:* Մէշկի զընջիլ կոդրե *(Կճ.)*:

**ՄԷՉԿ**, *Վն. գ. Ողնաշար:* Մէչկ կոտրիր էր *(Վն.)*:

**ՄԷՉԿԱՊ**, *գ. Ծերունիների շալե գոտի:*

**ՄԷՉԿ ՏԱԼ**, *Վն. Թիկնել:* Մէչկ տըվիր էր պա՞ռցին *(Վն.)*:

**ՄԷՋԲՈՒՐ**, *մկ. Հարկադրյալ:*

**ՄԷՋԻԴ**, *գ. Մզկիթ:*

**ՄԷՋԼԸՍԻ**, *Վն. ած. Զվարթ:*

**ՄԷՎ**, *գ. Խաղողի մատերից էտած ճյուղեր, որոնք օգտա-*

*գործում են որպես վառելիք (Բմ.)։*

**ՄԷՐ** *(նաև՝ Հթ.), գ. Մայր։* Մօր անէծք տեղ կըխասնի։ Մէր ուր էրեխին կըկէրցուցէր *(Վն.)։*

**ՄԷՐԱՄԵՌ**, *ած. Անեծք՝ մայրդ մեռնի։*

**ՄԷՐԱՆ**, *գ. 1) Մակարդ։ 2) Կողովի կողքի ուղղահայաց փայտիկներ, որոնց վրա հյուսվում է կողովը։* Ուսկոռն արին կողվի մէրան։

**ՄԷՐԱՆՑ**, *գ. Մոր տուն։* Հարսը գնում էր խէրանց կամ մէրանց։

**ՄԷՐԻԿ**, *գ. Մայրիկ։*

**ՄԷՕԼԱ**, *գ. Սվաղ։*

**ՄԷՕԼԵԼ**, *նբ. Ծեփել։*

**ՄԷՕԼԸՐԵԼ**, *չբ. Մոլորվել։*

**ՄԷՕՀԼՕՎ**, *մկ. 1) Անշտապ։ 2) Կամքով, հաճույքով։*

**ՄԷՕՀՌԻՐ**, *գ. Կնիք։*

**ՄԷՕՀՐԵԼ**, *նբ. Կնիքով կնքել։*

**ՄԷՕ̈ՇԱ**, *տե՛ս* **ՄԷՇԱ̈**։

**ՄԷՕՐՄԸՆՔՎԵԼ**, *չբ. Մորմոքել։*

**ՄԸԴՐԸԲ**, *գ. Քրդախոս գնչու։*

**ՄԸՋԵՂ**, *Կճ. Լիմ, գ. Արմատ։* Ծառի մըզեղ *(Կճ.)։*

Մըզեխ տալ, *Բմ., Արմատակալել։*

**ՄԸՋԿԻ**, *գ. Ճախարակի առանցք։*

**ՄԸՋՄԸՋ**, *ած. 1) Կծծի։ 2) Դանդաղաշարժ։*

**ՄԸՋՄԸՋԱԼ**, *տե՛ս* **ՄԸՋՄԸՋՏԱԼ**։

**ՄԸՋՄԸՋՏԱԼ**, *չբ. Սաստիկ ցրտից կամ սուր դանակով կտրվելուց մարմնի որևէ մասը՝ առավելապես մատները, սուր ցավ զգալ։*

**ՄԸՋՐԱԽ**, *գ. Նիզակ, տեգ։*

**ՄԸՋՐԸԲ**, *Բմ. գ. Իրիկնապահ։*

**ՄԸԹԱՆ**, *մկ. Մութ ժամանակ։*

* Պըրտո̈ւճ մը մըթան, արժի կովըմ կըթան, *Մութ պահին բերան տարած մեկ պատառը արժե մի ամբողջ կթան կով։ Ծան. – Ջխոսկան հարսները միայն մթության մեջ կարող էին կուշտ ուտել։*

**ՄԸԹԷԼ**, *գ. Բրդե վերմակի միջուկն առանց սավանի ու երեսի։*

**ՄԸԹԸՆԴԵԼ**, *չբ. 1) Մթնել։ 2) փխբ. Երեսը կնճռոտել, տխուր տեսք ստանալ։*

**ՄԸԹՌԵԼ**, *չբ. Տխրել։*

**ՄԸԺ**, *գ. Մառախուղ։*

**ՄԸԺԻԿ** *(նաև՝ Բմ.),* **ՄԸԺԻԿ**[3], *Հթ. գ. 1) Մոծակ։ 2) Մժեղ։*

**ՄԸԼԵԼ** *(նաև՝ Լիմ), նբ. 1) Մղել։ 2) Խոթել, մտցնել։*

* Ծակը մըլել, *Բանտարկել։*

**ՄԸԼԸՇԿԵԼ**, *նբ. 1) Հրել։ 2) Հրելով մտցնել։*

**ՄԸԼԻԿ**, *գ. Փայտոջիլ։*

**ՄԸԼՋԸԽԱԿԱԼԵԼ**, *Կճ. չբ. Արմատակալել։*

**ՄԸԼԸՇԿԵԼ**, *Բմ. Լիմ, նբ. Հրել։*

**ՄԸԼԽԱ**, *գ. Բանջարեղենով ճվածեղ։*

**ՄԸԼՀԱՄ**, *գ. Սպեղանի։*

**ՄԸԼՈՒԼ ՏԱԼ**, *Դանդաղել, գործը ծուլորեն կատարել։*

**ՄԸԽԵՄ**, *նբ. Տեսնեմ, մեկ տեսնեմ։*

**ՄԸԽԼԱ**, *գ. Բանջարեղենով ճվածեղ։*

**ՄԸԽԼԱՆՏՈՒՋ**, *գ. Մագնիս։*

**ՄԸԽԿԱԽԱՄ**, *գ. Խոնավությունից ու կեղտից մրգին, ընդեղենին կպած անախորժ համ։*

**ՄԸԽԿԵԼ**, *չբ. Բորբոսնել։*

**ՄԸԽՄԵԼ**, *գ. Կանացի սավանանման վերնազգեստ։*

**ՄԸԿԱ** *(նաև՝ Կճ. Լիմ) մկ. Այժմ, հիմա։* Մըկա դո̈՞ր կէրթա̈ս *(Վն.)։*

**ՄԸԿԱՎԱՆ**, *ած. Հիմիկվա։*

**ՄԸԿԱՎԸՆԷ**, *մկ. Հիմիկվանից։*

**ՄԸԿԸՆՔՈՂ**, *գ. Մկան պոչի նման խարտոց։*

**ՄԸԿԸՐ**, *գ. 1)* Մակար *անձնանվան համառոտում, որ տարածված էր Վանում։ 2) Թագվորի (փեսայի) ամուրի ընկերներ հարսանյաց հանդեսին։ 3) Աղջիկ առևանգողի ընկերներ։*

**ՄԸԿԼԱԼՈՒԾ**, *հթ.*, **ՄԸԿՆԱԼՈՒԾ**, *հթ., գ. Սնձենու պտուղ։*

**ՄԸՀԱԳ**, *գ. Փորձաքար։*

* Մըհագ զա̈րկել, *Որոշել ոսկեղենի կամ արծաթեղենի մաքրության աստիճանը։*

**ՄԸՀԱՆԱ**, *գ. Պատրվակ։* Արտ՝ խախուտ, մըհանեն՝ կարկուտ։ Ժա̈մ կանեն մըհանա, կէրթա̈ն կընըստեն մէյխանա։

**ՄԸՂԿԸՏԱԼ**, *չբ. Մորմոքել։*

**ՄԸՂԿԸՏՈՑ**, *գ. Մորմոքելու կամացուկ ձայն։*

**ՄԸՃԸՃԵԼ**, *չբ. Շփոթվել, խճճվել, մտածմունքի մեջ ընկնել։*

**ՄԸՃԻՐ**, *գ. Փայտածուխի մանրուք, փոշի։*

**ՄԸՃՈՒՌ**, *գ. Հացի միջուկ յուղի հետ։*

**ՄԸՆՁՈ̈ՒՐ**, *գ. Նոր գոյացած մոխիր։* Փէտ վա̈ռվավ, էլա̈վ մընձո̈ւր//մոխիր//քյո̈ւլ *(Վն.)։*

**ՄԸՆՁԸՐԵԼ**, *չբ. 1) Այրվել։ 2) Փոշիանալ։ 3) Մրկել։*

**ՄԸՆՋԵԼ**, *չբ. Լռել։*

**ՄԸՆՋԻԿ**, *ած. Լռակյաց, համեստ։*

**ՄԸՇԱԽՈՏ**, *գ. Այրված շորի հոտ։*

**ՄԸՇԵԼ**, *չբ. Շորը առանց բոցի այրվել։* Ութուն տաք էր, շորը մըշավ։

**ՄԸՇԸՐՏՎԵԼ**, *չբ. կբ. Փշրվել։*

**ՄԸՇԿԱՊ**, *հթ. Բմ. գ. Գոտի։* Մըշկապ շո̈րից էր *(Բմ.)։*

**ՄԸՇԿԸԼԵԼ**, *Վն. նբ. Հրելով մտցնել։* Ինոր մըշկըլեց տուն ինե։

**ՄԸՇՄԸՇԱԼ**, *չբ. Երեխան մուշմուշ քնել։*

**ՄԸՇՄԸՇՈՑ**, *գ. Կաթ ծծող քնած երեխայի մուշ-մուշ ձայն։*

**ՄԸՇՏԻԿ**, *գ. Հորթի զարկ մոր ստինքին։ Ծան. – Հորթը մոտեցնում են կովի դատարկված ստինքին։ Հորթն ստիպված գլխով զարկում է կովի ստինքին, որպեսզի կաթն առատանա։*

**ՄԸՇՐԵԼ**, *նբ. Փշրել, մանրել։*

**ՄԸՇՈՒՐ**, *գ. Մանրուք, փշրանք։*

**ՄԸՇՕՇ**, *գ. Բազուկով, գազարով, դդումով, ոսպով, ծիրանի չրով և սոխով պատրաստված խառը կերակուր։*

**ՄԸՌ**, *գ. Բմ. Ցեց։*

**ՄԸՌՋԱՄ**, *գ. Բռնիչ։ Ծան. – Ոսկերիչներն արծաթի կտորներ զոդելուց առաջ դրանք բռնում ու սեղմում էին երկաթե բռնիչներով։*

**ՄԸՌԹԵԼ**, *չբ. Տխրել։*

* Մռութը կախել, *Դժգոհել։*

**ՄԸՌԹՈՒԽՍ**, *գ. Աղքատ ուսանող։*

**ՄԸՌԺԵՄ**, *Հթ. Կճ. գ. Մրջյուն։*

**ՄԸՌԺԻԿ**, *գ. Շատ մանր պալար, որ հում-հում ուտում են։*

**ՄԸՌՄՈՒՌ**, *Բմ. Կծու։*

**ՄԸՌՄԸՌՈՒՆ**, *ած. Կծու։* Մըռմըռուն բիբար։

**ՄԸՌՄԸՌՔ³ԱԼ**, *չբ. Քթի տակ փնթփնթալ։*

**ՄԸՌՋԱՆ**, *գ. Մարջան, բուստ։*

**ՄԸՌՓԱԼ**, *չբ. Բարկանալ, զայրանալ։*

**ՄԸՍԱՄՈԼ**, *գ. Աչքի հիվանդություն, աչքի վրա դուրս եկած միս։*

**ՄԸՍԱՖԻՐ**, *գ. Հյուր։*

**ՄԸՍԱՖՐԻ ՕԴԷՆ**, *Հյուրասենյակ։*

**ՄԸՍԵԼ**, *չբ. Մրսել։* Ցուրտ ի, կըմըսեմ *(Վն.)*։

**ՄԸՍԸՐԹԱՎՈՒՂ**, *Լիմ, գ. Հնդկահավ։* Մըսըրթավուղ կանեն խուրուղու *(Լիմ)*։

**ՄԸՏԱՓՈՒԽ**, *ած. Հղի։ Ծան. – Հաճախ հղի կինը հրաժարվում էր լավ կերակուրներից, մտքափոխվում՝ նախընտրելով փայտածուխ, հող։*

**ՄԸՏԻԿ³ ՏԱԼ**, *Լիմ, Նայել։* Էս դեխ մըտիկʲ տու *(Լիմ)*։

**ՄԸՏԽՈՋԵԼ**, *նբ. Խուզարկել։* Ծոցըս, ջեբս մըտխոզիցին։

**ՄԸՏՈՒՑԵԼ** *(նաև՝ Լիմ)*, *նբ. Մտցնել։* Մատ մտուցի ինոր պէրան, ուսկորը խանիցի։Ծեռ մըտուց ճըրի մէչ *(Լիմ)*։ Ծեռ մըտուց ճո̈ւր ինե։

**ՄԸՐԱԽ**, *Հթ. գ. Մրափ։*

**ՄԸՐԱԽ ԹԸ̈ՓԱՎ**, *Հթ. չբ. Մրափել։*

**ՄԸՐԴԸԽԵԼ**, *չբ. նխտ. Քնել։*

**ՄԸՐԻԲԱ**, *մկ. Կիսրար։*

**ՄԸՐԻԲԱՑՈՒԹՅՈՒՆ**, *գ. Կիսավի աշխատելը։ Ծան. – Մրի-*

*բայության պայմաններն էին. աղան տալիս էր իր հողը և սերմացուն, իսկ հայ գյուղացին իր տավարով, աշխատուժով, գութանով և դազգյահով վարում էր, ցանում, հնձում ու կալսում և արդյունքը կիսում էր աղայի հետ։*

**ՄԸՐԿԵԼ**, *չբ. Ջրի պակասից այրվել, տոչորվել, չորանալ։* Պէրանս մըրկավ։ Իկʼիները մըրկան։

**ՄԸՐՃԵՄ**, *տե՛ս* **ՄԸՌՃԵՄ**։

**ՄԸՐՃԻԿ**, *գ. Բույսի տեսակ։*

**ՄԸՔՅՈՔ**, *տե՛ս* **ՄԸՔՈՒՔ**։

**ՄԸՔՈՒՔ**, *գ. Կտավագործության մեջ այն փոքրիկ մակույկը, որ թելը տանում ու բերում է հինածի մեջ։*

**ՄԻԱՄՕՐԻԿ**, *ած. Ծնողների միակ զավակը։* Միամօրկին պա̈շխիցին Վա̈րա̈կʼա̈ վա̈նքʼին։

**ՄԻԼԱԹ**, *գ. 1) Ժողովուրդ, ազգ։ 2) Տոհմ։* Ծեր միլաթ հէչ մեր կողմեր չի կʼա̈։

**ՄԻԼԱՂ**, *գ. Կախան։*

**ՄԻԼԱՅԻՄ**, *ած. Մեղմ։*

**ՄԻՆԱ**, *գ. Արծաթեղենի էմալապատում, որ հայտնի էր Վանի ոսկերիչներին։*

**ՄԻՆԱԼԻ**, *ած. Էմալապատ։*

**ՄԻՆԱՐԱ**, *գ. Մինարեթ, մզկիթի աշտարակ։*

**ՄԻՆԴԱՐ**, *գ. Փոքրիկ ներքնակ։*

**ՄԻՇՄԻՇ**, *գ. Ծիրանի տեսակ։*

**ՄԻՇԿ**, *գ. Մուշկ, հոտավետ օծանելիք տվող կենդանի։*

**ՄԻՋԱՆ**, *գ. Վերմակի և ներքնակի միջի բուրդ։*

**ՄԻՋՆԱՀԱՆ**, *գ. Միջին որակի բուրդ։*

**ՄԻՍԻՐԹԱՎՈՒՂԻ**, *բժ. գ. Հնդկահավ։*

**ՄԻՍՕ**, *գ. Շրջազգեստ։*

**ՄԻՐԱՂ**, *գ. Ժառանգություն։*

**ՄՅԸԳԼԵԼ**, *չբ. 1) Մգլել, բորբոսնել։ 2) Երկինքը ամպել։*

**ՄՅՈՒԴՈՒՐ**, *գ. 1) Տեսուչ։ 2) Գավառապետ։*

**ՄՅՈՒՄՔՅՈՒՆ**, *գ. Կարելիություն, հնարավորություն։* Էլ ինչ մյուքʼուն վոր կանի, ծոցից տո̈ւս չի խանե։ Մէյ մյումքʼուն չընցնէ ինոր թևի տակից։

**ՄՅՈՒՍԱԲԱԹ**, *գ. Քաղցր խոսակցություն։*

**ՄՅՈՒՐԻԴ**, *գ. Մահմեդականների մոնթ։*

**ՄՈԽՐԻԿ**, *գ. Մոխիր։*

* Մոխրիկ քʼե պաշար, *Անեծք. պաշարդ մոխիր լինի։*

**ՄՈԿԱՑ ՏԱՆՁ**, *Տանձի տեսակ, որ հավանաբար Այգեստան է բերվել Մոկաց աշխարհից։*

**ՄՈՄԱՌ**, *գ. Բևեռ։*

**ՄՈՄԴԱՆ**, *գ. Մոմակալ, աշտանակ։*

**ՄՈՄ Ի**, *Պատրաստ է, սիրահար է։*

**ՄՈՄՊԱՏ**, *գ. Մեղրամոմի կծիկ: Ծան. – Քանքանները քյահրեզ՝ գետնուղի փորելիս մոմպատի աղոտ լույսով էին աշխատում:*

**ՄՈՄՌԵԼ**, *նբ. Բևեռել:*

**ՄՈՆ**, *ած. Չարահոգի, վատ:* Ինոր կընիկ շատ մոն ի:

**ՄՈՆԱՆԱԼ**, *չբ. Թշնամանալ:*

**ՄՈՌՊԱՏԸՆՋԱՆ**, *գ. Բադրիջան:*

**ՄՈՌՑՈՒԿ**, *ած. Մոռացված:*

**ՄՈՐԼՅԱՆ**, *գ. Մսուրի առջևի հաստ գերան, որից կապում են անասուններըը:*

**ՄՈՒԲԱՐԷՔ**, *ած. Շնորհավոր:*

**ՄՈՒԹՆՈՒԼՈՒՍՈՒՆ**, *մկ. Արևածագից քիչ առաջ:*

**ՄՈՒԺԲԱՆԱ**, *գ. Կորիզը հանած և երկու տապակ արած ծիրանի չիր:*

**ՄՈՒԺԴԱ**, *գ. Ավետիս, բարի լուր:*

**ՄՈՒԺԴԱՆԱ**, *գ. Աչքալուսանքի, ավետիսի վարձատրություն:*

**ՄՈՒԼԱԽ**, *գ. Երկրորդ վարից առաջ արտը ջրելը՝ հեշտությամբ հերկելու համար:*

**ՄՈՒԽ**, *Վն. Կճ. գ. ծուխ:* Թաց փէտ վոր վառեն, մուխ շատ կուտա *(Վն.)*:

**ՄՈՒԽԸ ՄԱՐԵԼ**, *Կործանել:*

* Մուխըտ մարի, *Անեծք. քո տանն այլևս օջախ չվառվի, մուխ չբարձրանա քո տնից:*

**ՄՈՒԽԹԱՋ**, *ած. Աղքատ, չունևոր:*

**ՄՈՒԽԹԱՐ**, *գ. Թաղապետ:*

**ՄՈՒԽՍԻ**, *ած. Մահտեսի, մըղդըսի, Երուսաղեմի ուխտավոր:*

**ՄՈՒՀԱԲԱԹ**, *գ. Սեր:*

**ՄՈՒՂԱԹ, ՄՈՒՂՅԱԹ**, *գ. Զգուշություն, ուշադիր լինելը:* Մուղաթ կաց:

**ՄՈՒՂՆԻԿ**, *ած. Բարձրորակ, ընտիր:*

**ՄՈՒՂՈՄԵԿ**, *ած. գ. Համեստ, գլուխը կախ աշխատող:*

**ՄՈՒՃԻԿ**, *գ. Ջրաղացի վարձի չափ. չափի 1/6, կոտի 1/16-րդ մասը:*

**ՄՈՒՃԻԿ**[3], *հթ. գ. Հացահատիկ չափելու փայտե փոքր աման:* Չափ ճիչ ամանն ի, մուճիկ[յ] պըստիկն ի *(հթ.)*:

**ՄՈՒՃՈՒԿԱԹ**, *գ. Ծխնելույզից կաթող սև մրաջուր:*

**ՄՈՒՃՈՒՂԷՋ**, *գ. Գետնախնձորի տարատեսակ, որ ուտվում է հում վիճակում:*

**ՄՈՒՄԲԱՐԱՔ**, *տե՛ս* **ՄՈՒԲԱՐԷՔ**:

**ՄՈՒՆԱԹ**, *գ. 1) Իրավունք: 2) Երախտիք:*

**ՄՈՒՆԱԹ ԿՅԱԼ**, *1) Իրավունք բանեցնել: 2) Երեսով տալ:*

**ՄՈՒՆԳ**, *գ. Հարդի հողախառն մանրուք:*

**ՄՈՒՆԻՄ**, *գ. Ոչխարի ոջիլ:*

**ՄՈՒՆՋ**, *1) ած. Լռակյաց: 2) մկ. Սուսուփուս, առանց առարկելու:* Մունջ արե, էլի տո̈ւ զիկ լաճ *(սուսուփուս արի՛ ու դարձի՛ր իմ տղան):*

**ՄՈՒՆՋԽԵԽՏ**, *ած. Նեղությունները լռությամբ տանող, համբերատար:*

**ՄՈՒՆՋԿԱԹ**, *գ. Թոնրատան գերաններից կաթող մրաջուր:*

**ՄՈՒՆՏԱՌ**, *ած. Կեղտոտ:*

**ՄՈՒՇԱԲԱ**, *գ. 1) Անձրևանոց, թիկնոց: 2) Անջրանցիկ գործվածք:*

**ՄՈՒՇԹԱՐԻ**, *գ. Հաճախորդ:* Մուշթարու աչքը կոր ի:

**ՄՈՒՇ-ՄՈՒՇ**, *մկ. ած. Կանոնավոր շնչառությամբ:* Էրէխէն մուշ-մուշ քʼընուկ ի:

**ՄՈՒՇՏԻԿ**, *գ. Բռունցք:* Մուշտկօվ պինդ զա̈րկեց ինոր մէչկին *(Վն.):*

**ՄՈՒՇՏԿԱԿՌԻՎ**, *գ. Բռնցքամարտ:*

**ՄՈՒՇՏՈՒԼՈՒՂ**, *գ. Նվեր բարի լուր բերողին:*

**ՄՈՒՌՏԸՌԵԼ**, *նբ. Պղծել, ապականել, կեղտոտել:* Մէյ մուկ յոթ կարաս կըմուռտըռի:

**ՄՈՒՌՏԻԿ**, *գ. Կատվի բուրդ, որ թափվում է, երբ կատուները իրար գզում են:*

* Մուռտիկ հանել, *Վրեժը լուծել, պատժել:*

**ՄՈ̈ՒՍԱ̈ՆԴԱ̈ՐԱ̈**, *գ. Սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան:*

**ՄՈՒՍԻՐԱԹ**, *գ. Չախորդություն:*

**ՄՈՒՍՏՈՒՌԱ**, *գ. Կտորեղենի կտորտանք, որ քաշով էին վաճառում:*

**ՄՈՒՍՏՈՒՌԱՋԻ**, *գ. Կշեռքով կտորեղենի կտորտանք վաճառող:*

**ՄՈՒՐԱԴ**, *գ. Իղձ, բաղձանք, փափագ:*

**ՄՈՒՐԱԴԱՄԵՌ**, *1) ած. Բաղձանքին չհասած: 2) Անեծք. մուրազիդ չարժանանաս:*

**ՄՈՒՐԻԿ-ՄՈՒՐԻԿ**, *մկ. Բծախնդրորեն, մանրազնին, ջանասիրաբար:*

**ՄՈՒՐՈՒՍ**, *գ. Մորուք:*

**ՄՈՒՐԱԶ**, *տե՛ս* **ՄՈՒՐԱԴ**:

**ՄՈՒՐՊԱՀ**, *գ. Թոնրատան մեջ մի քիչ բարձր տեղում շինված փոքրիկ թոնիր, որի ծուխը բուխարիկով է բարձրանում:*

**ՄՈՒՔՅԱՐԱ**, *գ. Կողով, մեծ սալա:*

**ՄՈՒՖԹԱ**, *ած. մկ. Զրի:*

**ՄՕ** *(նաև՝ Լիմ), կ. Մոտ:* Կʼընա մօ քու մոքուր: Էկավ մօ ձի *(Լիմ):*

**ՄՕՋ**, *Հթ. Բմ. Կճ. Լիմ, գ. 1) Մոխրագույն մեծ ճանճ, որ խայթում է անասուններին:*

Մօզ կըծեց տավրին *(Կճ.)*։ Մօզ կըծեց կօվին, կով տըռճըկեց, փախավ *(Հթ.)*։ *2) Բոռ։*

**ՄՕՋԻԿ**, *1) կ.+դ. Ինձ մոտ։ 2) գ. Ձիթհանների փոքրիկ սպասավոր։*

**ՄՕՋ ԱՆԵԼ**, *Գործից խրտնել, խռովել ու հրաժարվել։* Տախտ կավիլեր, թօզ կաներ, ճո̈ւր ճըրճըներ, մօզ կանէր։

**ՄՕԹԱԼ**, *գ. Տկի մեջ պահած կամ կաղալիկով հողի մեջ թարս թաղած չոր պանիր։*

**ՄՕԼԱ ԴԱՇԸ**, *Արևելքի շուկաներում տարբեր տեղերում դրված մեծ քարեր, որոնց վրա բեռնակիրները (համբալները) իջեցնում են իրենց բեռը և հանգստանում։*

**ՄՕԼԼԱ**, *գ. Մահմեդական կրոնավոր։*

**ՄՕԼՈՋ**, *գ. Կոշտ, անտաշ քար։*

**ՄՕԼՈՒԿ**, *ած. Ծեփված։* Պատը մօլուկ ի։

**ՄՕԾԻԼ**, *Կճ. գ. Կայծ։*

**ՄՕՀԹԱՋ**, *ած. Աղքատ, կարոտ։*

**ՄՕՂՕՋԻԿ** *(նաև՝ Հթ. Կճ.)*, **ՄՕՂՕՋԻԿյ**, *Լիմ, 1) գ. Բարալիկ, նուրբ մողես։* Մօղօզիկ կըտաքնէր արէվի տակ *(Կճ.)*։ *2) փխբ. ած. Շատ նիհար։*

**ՄՕ̈ՇԱ̈**, *Վն. գ. Անտառ։* Կընա̈ցին մօ̈շէն փէտի *(Վն.)*։

**ՄՕՌ**[1] *(նաև՝ Լիմ), գ. Ցեխ։* Հ՚ուստին մօռ տու *(Լիմ)*։

**ՄՕՌ**[2], *ած. Մուգ, սևագույն կապույտ։* Մօռ պա̈տընջա̈ն *(Վն.)*։

**ՄՕՌՈՏ**, *ած. Ցեխոտ։*

**ՄՕՌՊԱՏԸՆՋԱՆ**, *գ. Բադրիջան։*

**ՄՕՌՎԱԾՔ**, *գ. Գութանի մաս։*

**ՄՕՏԱՆՑ**, *մկ. Մոտիկից։*

**ՄՕՏԿԸՆԱԼ**, *չբ. Մոտենալ։*

**ՄՕՐԷՄԵԿ**, *ած. Մինուճար, միամորիկ։*

**ՄՕՐԷՄԵՐԿ**, *ած. Բոլորովին մերկ։*

**ՄՕՐՄՕՐԻԿ**, *1) գ. Ձյունաթույր բարձրորակ մարմար։ 2) ած. Շատ սպիտակ և մանր։* Մօրմօրիկ ծո̈ւն կուկյա̈։

**ՄՕՐՎԵԼ**, *չբ. տղմոտվել։ Տղմակալել, մամռակալել։* Խօրի, ճըրխօրի պէրան մօրվավ։

**ՄՕՐՈՒԹՔ**, *ած. Մոր կաթի հետ յուրացրած։*

**ՄՕՐՔյՈՒՐՕՂԼԻ**, *գ. Մորաքրոջ տղա։* Մօրքյուրօղլի, էտա պա̈ն էտպէս չէլա̈վ։ *Ծան. – Գործածվում էր նաև համակրանքով, բարյացակամորեն մեկին դիմելիս։*

# Յ

**ՅԸ**, *1) ձ. Բացականչություն՝ ի՞նչ ես ասում, մի՞թե: 2) կ. Կամ:* Տըն յը յես:

**ՅԸԲԸԽՏ**, *ած. մկ. Բախտի քմահաճույքին հանձնված:*

**ՅԸԲԸՆ**, *ած. Ամայի, անմարդաբնակ:*

**ՅԸԲԸՆԻ**, *ած. Անկիրթ, անդաստիարակ:*

**ՅԸԴ**, *ած. Օտար, անծանոթ:*

**ՅԸՋԸԽ**, *վ. Մեղք, ափսոս:*

**ՅԸՋՄԸ**, *գ. Գլխաշոր:*

**ՅԸՋՋԻ**, *գ. Գրագիր:*

**ՅԱԹԱՂ**, *գ. Անկողին:*

**ՅԱԼԱԼԻ**, *գ. Գնչուական պար:* Ջիկ յալալի միա խաղօ:

**ՅԱԼԴՈՒԶ**, *գ. Ոսկեջուր:*

**ՅԱԼԴՈՒԶԵԼ**, *նբ. Ոսկեջրել, ոսկեզօծել:*

**ՅԱԼՆԻՇ**, *ած. Սխալ:*

**ՅԱԼՎԱՐ ԱՆԵԼ**, *Աղաչել-պաղատել:*

**ՅԱԽԱ** *(նաև՝ Հթ. Կճ.), գ. Օձիք:* Յախէն պըռնե, կըչըխչըփի *(Վն.)*: Յախէն պըռնե, պըձ չի թօղնի *(Կճ.)*:

* Յախա տալ, *Ենթարկվել:*

* Յախալամիշ անել, *Օձիքից բռնել, իրեն ենթարկել:*

**ՅԱԽՆԻ**, *գ. Կերակուրի տեսակ, արգանակ:*

**ՅԱԽՈ**, *գ. Արևելյան պլաստիր:*

**ՅԱՀՈՒԴԻ**, *գ. Հրեա:*

**ՅԱՂ**, *գ. Յուղ:*

**ՅԱՂԴԱՆ**, *գ. Մեքենայի յուղաման:*

**ՅԱՂԼԻ**, *ած. Յուղալի:*

**ՅԱՂՄԱ**, *գ. Թալան:*

**ՅԱՂՈՒԹ**, *գ. Հակինթ:*

**ՅԱՄԱԼԻԿ**, *գ. Մեծ կուժ:*

**ՅԱՄԱ՛Ն**, *ձ. Աղետ, փորձանք ազդարարող, օգնություն կանչող բացականչություն:*

**ՅԱՄԱՆԻ**[1], *գ. Պոչով սոլից տարբերվող հողաթափանման կոշիկ:* Չարուխով էկան, յամանով կըթըռնեն, կըպարեն:

**ՅԱՄԱՆԻ**[2], *գ. Հթ. Կապերտ:* Յամանին թըլ, պառկի վըրէն *(Հթ.)*:

**ՅԱՄՈՒՐԼՈՒՂ**, *գ. Անձրևանոց:*

**ՅԱՅԱՆ**, *1) մկ. Հետիոտն: 2) ած. Աշխատաանքի, մասնագիտության մեջ անկարող:*

**ՅԱՅԼՈՒՂ**, *գ. Թաշկինակ:*

**ՅԱՆ**[1] *(նաև՝ Հթ. Կճ.), մկ. Կողմ:* Իո՞ր յան կընաց *(Կճ.)*:

**ՅԱՆ**, *գ. Դրամական չափի միավոր:* Ոչխարի միսը կըծախին չարէքով կամ յանով:

**ՅԱՆԱ-ՅԱՆԱ**, *մկ. Բորբոքված, անհանգիստ: Ծան. – Երգերում տարածված է որպես կրկներգ:*

**ՅԱՆ ԷԼ**, *Կամ թե*։

**ՅԱՆԻ**[1], *վ. Իբրև թե, այսինքն*։ Նա՛ֆա՛ս չի խանե, յանի թէ մեռուկ ի *(Վն.)*։

**ՅԱՆԻ**[2], *շ. Կամ*։ Յանի կըսպանվիմ, յանի կըսպանեմ։

**ՅԱՆԻ ԹԷ**, *վ. Հթ. Իբրև թե*։

**ՅԱՆԻ ԿԱՐԱ**, *Անբուժելի վերք*։ Յանի կարա թա՛փվի վերետ *(անեծք)*։

**ՅԱՆԻՉԱՐԻ**, *գ. Դայի, օնբաշի, չորբաչի*։

**ՅԱՆԿՈՒՆ**, *գ. Հրդեհ*։

**ՅԱՇԱ**, *ձ. Կեցցե՛*։

**ՅԱՇՄԱՂ**, *գ. Թրքուհու երեսի քող*։

**ՅԱՍԱԿ**, *ած. Արգելված*։

**ՅԱՎԱՆ ԷԹՄԵՔ**, *Յամաք հաց*։

**ՅԱՎԱՇ** *(նաև՝ Լիմ)*, *ած. Մարմանդ, մեղմ*։ Կըրայ յավաշ ի *(Լիմ)*։

**ՅԱՎՐՈՒ**, *գ. Ձագ*։

**ՅԱՎՐՈՒՄՍ**, *գ. Որդյակս, ձագուկս*։

**ՅԱՐ**, *գ. Սիրուհի*։ Յար սիրեմ, քաչա՞լ սիրեմ։

**ՅԱՐԱ** *(նաև՝ Կճ.)*, *գ. Վերք*։ Յարից//յարայից թարախ//գ՚ըռեխ կուկ՚ա՜ *(Վն.)*։

**ՅԱՐ-ՅԱԹԱՂ**, *գ. Անկողին*։

**ՅԱՐԱԲ**, *վ. Արդյոք*։

**ՅԱՐԱԼՈՒ**, *ած. Վիրավոր*։

**ՅԱՐԱՄԱՔ**, *ած. Զարաճճի*։

**ՅԱՐԱՐ**, *ած. Օգտակար*։ Ախր օցն ի՞նչ պա՛նի յարար ի։

**ՅԱՐԱՓԱՐՈՏ**, *ած. Վերքերով ծածկված*։

**ՅԱՐԴԱՂ**, *գ. Օգնական*։

**ՅԱՐԴԸՄ**, *գ. Օգնություն*։

**ՅԱՐԴԸՄՋԻ**, *գ. Օգնական*։

**ՅԱՓԸՇԽԱՆ**, *գ. Սոսինձ*։

**ՅԱՓՄԱ**, *ած. մկ. Արհեստական, շինծու*։

**ՅԱՓՐԱՂ**, *գ. Խաղողի տերև*։

**ՅԱՓՈՒ**, *գ. Շենք, շինություն*։

**ՅԵԳԻՆ**, *մկ. Արագ, թափով*։

**ՅԵԹՄԻՇ**, *Վն. թ. Յոթանասուն*։

**ՅԵԼԱԳ**, *գ. Բաճկոնակ, ժիլետ*։

**ՅԵԼԿԱՎԱՆ**, *գ. Ժամացույցի սլաք*։

**ՅԵԼՔՅԱՆ**, *գ. Առագաստ*։

**ՅԵԽՔ**[3], *ած. Գոլ*։ Յեխք՚ ճ՛ո՛ւր։

**ՅԵՂԱԽԱԼ**, *գ. Յուղ հալելու փոքրիկ աման, որի մեջ նաև ձվածեղ էին եփում*։

**ՅԵՄ**, *գ. Անասունի կեր*։

**ՅԵՄԻՇ**, *գ. Պտուղ*։ *Ծան. – Վանում բոլոր ծառապտուղներին* յեմիշ *էին ասում, իսկ սեխին ասում էին* կլօր։

**ՅԵՌ**[1], *գ. Վն. Գիծ*։ Յեռ ք՚աշեց կ՚ետնին *(Վն.)*։

**ՅԵՌ**[2], *գ. Քոր*։

**ՅԵՌԱՆԳ**, *մկ. Մի քանի օր առաջ*։

**ՅԵՌԼԻ**, *ած. Տեղացի, բնիկ։*

**ՅԵՌԿԸԾԵԼ**, *չբ. 1) Քորվել։ 2) Շարժվել, շատ եռանդուն աշխատել։* Թա̈ժա̈ դուք$^{յ}$ան ի պա̈ց արե, առտվանից մեջ կյեռկըծա չում իրիկուն։

**ՅԵՌ ԿՅԱԼ**, *Սկսել եռալ։*

**ՅԵՐԱԲԱԽԱՆ**, *ած. գ. 1) Գետին նայող, գլուխը կախ։ 2) փխբ. Ջարակամ, նենգ։*

**ՅԵՐԲՈՒՑ**, *դ. Ո՞ր ժամանակից, երբվանի՞ց։*

**ՅԵՐՈՒՍԱՂՄԱ ՑՈՐԷՆ, ՅԷՐՈՒՍԱՂՄԱ ՑՕՐԷՆ**, *Կճ. Լիմ, Եգիպտացորեն, սիմինդ, մայիս։* Յերուսաղմա ցորնի ալրէն խաշիլ կիփեն *(Վն.)*։ Յերուսաղմա ցորեն վոր կաթ առնէր, կանաչ-կանաչ կուտին *(Վն.)*։ Յէրուսաղմա ցօրէն կաղինք, ճաշ կէփինք *(Կճ.)*։

**ՅԵՓՈՒԿ**, *ած. Եփված։*

**ՅԷԳ$^{յ}$Ա̈Ն**, *գ. Աներորդի։* Փէսէն ուր յէգ$^{յ}$ա̈նին//անէրծա̈ք$^{յ}$ուն կանչեց ուր տուն//ուր մօտ *(Վն.)*։

**ՅԷԹԻՄ** *(նաև՝ Հթ.), ած. Որբ։* Յեթըմուն խաց տըվող չէլնե, խըրատ տըվող շատ կէլնի։

**ՅԷՂԷԾԵՔ$^{յ}$**, *Հթ.գ. Եղինջ։*

**ՅԷՂԸՐԾԱ**, *Լիմ, գ. Եղինջ։*

**ՅԷՂԸՐԾԻԿ**, *Կճ. տե՛ս* **ՅԷՂԸՐԾԱ**։ Յէղըրճիկ ծեռներըս ծակըռտեց *(Կճ.)*։

**ՅԷՂՈՒՆԻԿ** *(նաև՝ Բմ.), ՅԷՂՈՒՆԻԿ$^{յ}$, Լիմ, գ. Աղավնի։*

**ՅԷՐԱՍԱ̈Ն**, *գ. Ջղջիկ։* Յէրաասան կ$^{գ}$իշեր կըթըռնի *(Բմ.)*։

**ՅՈՒԶԲԱՇԻ**, *գ. Հարյուրապետ։*

**ՅՈՒԼԱՐ**, *գ. Անասունների վզին կապվող պարան։*

**ՅՈՒՄԲՈՒԶ**, *1) ած. Պինդ։ 2) տե՛ս* **ՅՈՒՐՄՈՒՂ**։

**ՅՈՒՐՄՈՒՂ**, *գ. Բռունցք։* Մէյ յուրմուղ տամ, տեղըտ մընաս։

**ՅՈՒՍՏ**, *դ. Որտեղի՞ց։*

**ՅՈՒՎԱ**, *գ. Բույն։*

**ՅՈՒՐԴ**, *գ. Ծածկ, օթևան։*

**ՅՕԹՆՈՐԴՈՑ ՍԵՂԱՆ**, *Աստղաբաշխական տերմին։*

**ՅՕԹՇԱԲԱԹՆԵՐԱՑ**, *գ. Մեծ պասի ժամանակահատված, որ տևում է յոթ շաբաթ։*

**ՅՕԼ**, *գ. Միջոց, եղանակ, ձև։*

**ՅՕԼԱ Կ$^{յ}$ԸՆԱԼ**, *Հարմարվել, լեզու գտնել։*

**ՅՕԼ-ԱՐԴՅԱՆ**, *գ. Կարգուկանոն։*

**ՅՕԼԴԱՇ**, *գ. 1) Բառացի՝ ճանապարհի քար։ 2) փխբ. Ընկեր, ընկերակից։*

**ՅՕԼՍԸԶ**, *ած. Ճանապարհից դուրս, մեկուսի։*

**ՅՕԼՕՎ**, *մկ. Անուշությամբ, չհակառակվելով, ընդհանուր լեզու գտնելով։*

**ՅՕԽ**, *բ. Չկա։*

**ՅՕԽ ԱՆԵԼ**, *Վատնել։* Խօր թողած միրաղը մէյ տարուց յօխ արավ։

**ՅՕԽԱԼԱՄԻՇ ԱՆԵԼ**, *Խուզարկել, բան չթողնել:*

**ՅՕԽՍԱ**, *վ. Թե չէ:*

**ՅՕԽՈՒՇ**, *գ. Վերելք:*

**ՅՕՆՋԱ**, *գ. Առվույտ:*

**ՅՕՌՂԱՆ**, *գ. Վերմակ:*

**ՅՕՐՂԱ**, *գ. Ձիու վազքի տեսակ:*

**ՅՕՐՂԱՆ-ԴՕՇԱԿ**, *գ. Անկողին:*

**ՅՕՐՂՈՒՆ**, *ած. Հոգնած:*

# Ն

**ՆԱ̈**, *վ. Ո՛չ:* Նա̈ քյե, նա̈ զիկ:

**ՆԱ̈ԳՅԱ̈ՍՏԱՆ**, *մկ. Հանկարծակի:* Նա̈գյա̈ստան ինգյա̈վ-մեռավ:

**ՆԱԴԱՆ**, *ած. 1) Ազնվազարմ: 2) Արտոնյալ, հարկ չվճարող:*

**ՆԱԴԱՆԵՆՔ**, *գ. Արտոնյալները: Ծան. – Վանում դարձել էր Նաթանյաններ:*

**ՆԱԴԻՆՋ**, *ած. Անհանգիստ:*

**ՆԱԶ ԱՆԵԼ**, *Սեթևեթել, ձևացնել, թե չի ուզում:* Առաջ նազ արի, վերջը հազ արի:

**ՆԱԶԱՆԻԿ**, *ած. Նազելի, սիրելի:*

**ՆԱԶԱՐ**, *գ. Չար աչք:* Նազար տեպավ:

**ՆԱԶՅՈՒՔ**[3], *ած. Նուրբ, քնքուշ:*

**ՆԱԶՈՒԿ**, *գ. Ջուլհակի գործիք:*

**ՆԱԶ-ՏՈՒԶ ԱՆԵԼ**, *Սեթևեթել, իրեն ծանր ծախել:*

**ՆԱԹԸՐ**, *գ. Քիսաչի:*

**ՆԱԼ**, *գ. Պայտ:* Սատկած էշ կըփընդռի, վոր նալը քյաշի-խանի:

**ՆԱ̈ԼԱԹ**, *գ. Անեծք:* Նա̈լաթ չար սատանին:

**ՆԱԼԲԱՆԴ**, *գ. Պայտար:*

**ՆԱԼԵԼ**, *նբ. Պայտել:*

**ՆԱԼԻԿ**, *գ. Փայտե ոտնաման, որ հագնում էին բաղնիքում:*

**ՆԱԼՉԱ**, *գ., Կոշիկի ներբանի ծայրին խփելու պայտ:*

**ՆԱԽԸՐՉԻ**, *Հթ.*, **ՆԱԽԸՐՋԻ** *գ. Խոշոր եղջերավոր անասունների հովիվ, նախրապան:* Նախըրչին կօվեր տարավ ճո̈ր *(Վն.)*:

**ՆԱԽՐԱԽԱՑ**, *գ. Նախրորդին անասնատերերի կողմից հերթով տրվող ուտեստ:* Էսօր նախրախացի մեր դեռն ի: Շեն տուն, նախրախա՞ց *(շեն տունը միայն նախրախաց պիտի տա՞, թե՞ նաև ուրիշ ուտելիք)*:

**ՆԱԽՐՈՐԹ**, *Լիմ*, **ՆԱԽՐՕՐԹ**, *Հթ. գ. Տավարի հովիվ:* Նախրորթ տավար կըտանի *(Լիմ)*:

**ՆԱ̈ԿԱ̈ՖԻԼ**, *մկ. Հանկարծակի, անսպասելի:* Կըշըվարի էսըկընա̈ նա̈կա̈ֆիլ թայլիֆի *(անսպասելի առաջարկություն)* վերեն:

**ՆՃՀՃԽ ՏԵՂ**, *Վն. Ջուր, իգուր:*

**ՆԱՂԱՇ**, *գ. Նկարիչ:*

**ՆԱՂԱՐԱ**, *գ. Մեծ թմբուկ:* Նաղարի, զուռնի ծեն զատանց անուշ կուկ'ա:

**ՆԱՂԴ**, *մկ. Առձեռն:*

**ՆԱՂԴԵԼ**, *նբ. Սաղացնել, հաջողել վաճառել:*

**ՆԱՂԸԼ**, *գ. Պատմություն, հեքիաթ:*

**ՆՃՄ**, *ած. Խոնավ:* Փէտ նամ ի, չի վառվե:

**ՆԱՄԱԶ**, *գ. Մահմեդականի աղոթք, լվացում: Ծան. – Վանեցին անհաջողության դեպքում սիրում էր թուրքերեն ասել՝* Կըրխ սանադա բիր նամազ, օ դա շեյթան բըրախմազ *(40 տարվա ընթացքում մի նամազ պիտի աներ, էն էլ սատանան թույլ չի տալիս, խանգարում է):*

**ՆԱՄԱՑ**, *գ. Նամակ:*

**ՆՃՄՃՐԴ**, *Վն. ած. Տմարդի:*

**ՆՃՄՃՐԴՈՒԹԵՆ**, *Վն. գ. Չարություն:*

**ՆԱՄՇԵԼ**, *Հթ. չբ. Մգլել:*

**ՆԱՄՈՒՍ**, *գ. Պատիվ:*

**ՆՃՄՌՈՒԹ**, *ած. Դժգոհ դեմքով, խոժոռ:*

**ՆՃՄՔՅՕՌ**, *ած. Ապերախտ:*

**ՆԱՅՄԱ ԼԱԶԸՄ**, *Ինձ ինչ, ինչի՞ս է պետք:*

**ՆՃՆՃ**, *գ. 1) Խոտաբույս: 2) Հթ. Լիմ, Անանուխ:*

**ՆԱՇ**, *գ. Դագաղ:*

**ՆԱՇԽ**, *գ. Զարդանկար:*

**ՆՃՉՃՐ**, *ած. Անճար, խեղճ:* Նաչար կուտի բանջար: – Ինչի՞ սոխ կուտիս: – Նաչար եմ:

**ՆՃՉՃՐՃՆԱԼ**, *չբ. Խեղճանալ:*

**ՆՃՉՃՐՈՒԹ**, *մկ. Խեղճությունից, ակամայից:*

**ՆՃՋՃՐ**, *գ. Հյուսն:*

**ՆԱՍԸԼ**, *դ. Ինչպես:*

**ՆԱՍԸՐ**, *գ. Կոշտուկ:*

**ՆՃՍԻԱԹ**, *գ. Խրատ:*

**ՆԱՎ**, *Կճ., գ. Փայտյա հարմարանք, որի միջով ջուրը, սրընթաց վայր հոսելով, պտտեցնում է ջրաղացի անիվը:* Նավի մէչ պան ի մընացե, ճո̈ր չի կ'ա *(Կճ.):*

**ՆԱՎԱԶԻԼ**, *1) գ. Հարբուխ: 2) ած. փխբ. Հիվանդագին բնավորություն ունեցող, թնկթնկացող:*

**ՆՃՎԴՃՆ**, *Կճ. գ. Ջրհորդան:* Նավդանից ջ'ո̈ր կէթա *(Կճ.):*

**ՆԱՎՍԱՏ**, *ած. Որկրամոլ, ընչաքաղց, ագահ:*

**ՆԱՐԳԻԼԷ**, *գ. Կլկլակ:*

**ՆԱՐԻՆ**, *ած. Նուրբ, բարակ:*

**ՆԱՐՄԱՆԱԶՈՒԿ**, *ած. Փափկակյաց, քնքուշ:*

**ՆԱՐՕՏ**, *գ. Մետաքսյա ժապավեն, որ կապում են հարսի ու փեսայի վզին:* Նարօտն էր կանաչ, ջյուբեն էր կարմիր:

**ՆԱՔԸՋ**, *ած. Ծաղկանկար:*

**ՆԸՔՅԱՍ**, *ած. Ժլատ, կծծի:*

**ՆԱՖԱԽԿԱ**, *գ. Ապրուստ, ուտելիքի պաշար:* Ծըմռան նաֆախկէս:

**ՆԸՖԸՍ**, *գ. Շունչ, հոգի, անձ:*

**ՆԸՖԻԼԸ**, *վ. Իզուր:*

**ՆԵԽԱԽՈՏ**, *գ. 1) Բառացի՝ նեխվածի հոտ: 2) փխբ. նխտ. Անհամակրելի, անտանելի, ոչ սիրելի:*

**ՆԵԽԱԾ**, *փխբ. ած. գ. Նախանձոտ, վատ բնավորություն ունեցող:*

**ՆԵՂԸՆԱԼ** *(նաև՝ Լիմ)*, **ՆԷՂԱՆԱԼ**, *Հթ. չբ. 1) Նեղ դառնալ: 2) Վիրավորվել: 3) Հոգնել:* Լոս չըպըցված վեր կէլնիմ, պարապ չեմ մնա չում իրիկուն, ես էլ իսան եմ, կընեղանամ, կըթըլֆեմ, կինեմ տեղացս մեչ: Էսա տըղէն շատ ի պնեն, նէղացե *(Հթ.)*: Շատ պնիցի, նեղացա *(Լիմ)*:

**ՆԵՂԾԸՏԵԼ**, *չբ. Սրտնեղվել, զայրանալ:*

**ՆԵՏ**, *գ. 1) Նետ: 2) Գերանի նեցուկ:*

**ՆԵՏՎԱՆԵՂ** *(նաև՝ Հթ.)*, *գ. Նետուաղեղ:*

**ՆԵՐՍԱՆՑ**, *մկ. Ներսից:*

**ՆԷՃԻՐՎԱՆ**, *Հթ. Լիմ, գ. Որսորդ:* Նէճիրվան լապըստրակ ըսպանեց *(Հթ.)*: Իմ խըրօխպէր նէրճիրվան ի *(Լիմ)*:

**ՆԸՀԸԽ ՏԵՂ** *(նաև՝ Լիմ)*, *մկ. 1) Ջուր, իզուր:* Նըհնխ տեղ կըխօսես, էն քե ականջ չի տընե *(Վն.)*: *2) Առանց պատճառի, հանիրավի:* Նըհնխ տեղ ինոր այուրգուն արին:

**ՆԸՄՈՒՇ**, *1) գ. Տեսակ 2) ած. Նման:* Էրէխէն իսկոր խոր նըմուշն ի: *Ծան. – Գործածվում էր նաև բառաբարդմամբ՝* տեղնանմուշ՝ *դեղնավուն,* խաստանմուշ՝ *հաստլիկ:*

**ՆԸՄՈՒՇ-ՆԸՄՈՒՇ**, *ած. Զանազան, տեսակ-տեսակ:*

**ՆԸՇԱԴԻՐ**, *գ. Անուշադր:*

**ՆԸՇԱՆԼՈՒ**, *ած. Նշանված:*

**ՆԸՇԱՆՈՒԿ**, *ած. գ. Նշանված աղջիկ:*

**ՆԸՇԱՆՑ ՏԱԼ**, *Ցույց տալ, ցուցադրել:* Թէրամաշի ուռուպի կընիկ թըմբըն նըշանց կուտա տաճկի լամկըներաց:

**ՆԸՇԱՍՏԱ**, *գ. Շատ նուրբ և մանր ալյուր, որից խավիծ էին պատրաստում երեխաների համար:*

**ՆԸՇՂԸՏՐԱ**, *գ. Ցորենի ընտիր ալյուր, որ օգտագործում էին երեխաների և հատուկ խմորեղենի համար:*

**ՆԸՌՆԷԿ**, *գ. ած. Տանձի տեսակ:*

**ՆԸՍԱՖ**, *գ. Խիղճ, գութ, կարեկցություն:*

**ՆԸՍԱՖԼԻ**, *ած. Բարի, գթոտ, կարեկցող:*

**ՆԸՍԱՖՍԸՋ**, *ած. Անխիղճ, անգութ, անողորմ։* Նըսաֆսըզ, նըհախ տեղ լաճուն տըփիցիր, ինչ արիր էր, ախչիկըտ էր արել։

**ՆԸՍՏՈՒԿ**, *չբ. Նստած։*

**ՆԸՎԱՂԿԸՏԱԼ**, *չբ. Նվաղել, ցավից կամ անոթությունից սիրտը խառնել։*

**ՆԸՎԻԿ**, *գ. Բանջարի տեսակ։*

**ՆԸՎՈՑ**, *գ. Երեխայի և հիվանդի կերկերուն ձայն։*

**ՆԸՎՆԸՎՈՑ**, *տե՛ս* **ՆԸՎՈՑ**։

**ՆԸՔ**, *գ. Տնքոց։*

**ՆԸՔԱ̈Լ**, *չբ. Տնքալ։* Նըքա̈լով պեռը կտանի ճա̈ղա̈ց, կըպիրի։

**ՆԸՔՈՒՏԸՔ**, *գ. Չարչարանք։* Իսկ չես խարցուրե մեր նըքուտըքը։

**ՆԸԽՇԵԼ**, *նբ. Նկարազարդել։*

**ՆԸԽՇՈՒՆ**, *ած. Նախշուն, զարդարուն, գունավոր, գեղեցիկ։*

**ՆԻԶԱՄ**, *գ. Օրենք, կանոն։*

**ՆԻՍԲԱԹ**, *գ. Հակառակություն։*

**ՆԻՍԲԱԹՋԻ**, *գ. Հակառակվող, հակառակասեր։*

**ՆԻՍԻԱ**, *ած. Ապառիկ։*

**ՆԻՐԿԵԼ**, *նբ. Ներկել։*

**ՆԻՐՍԻ**, *մկ. Ներսի։*

**ՆՈՐ**, *Վն. մկ. Այնուհետև։* Դինջըցան, նոր խաց կերան *(Վն.)*։

**ՆՈՐԱԽԱՍ**, *ած. Երիտասարդ, նոր հասած։* Էրկու բաքաթ նորախաս պատ կտրիճներ։

**ՆՈՐԱՇԷՆ**, *գ. Վանում Այգեստանի նորաբնակ թաղամաս։*

**ՆՈՐԱՏՈՒՆԿՆԵՐ**, *գ. Վանում Այգեստանի հարավային (Կարսոնց) և արևելյան (Աղվըսկանց՝ Աղվանյանների) կողմերում նոր տնկված ծով այգիներ, որոնք ձմռանը անմարդաբնակ էին։*

**ՆՈՐԱՓՈՐԻԿ**, *գ. ած. Առաջին հղիություն։*

**ՆՈՒԲԱՐ**, *գ. 1) Առաջին համտես։ 2) Իգական անձնանուն։*

**ՆՈՒԿԱՆՈՑ**, *գ. Մոտավորապես մեկ լիտրի հավասար կավե աման՝ հեղուկ չափելու համար։*

**ՆՈՒԿԻ**, *գ. Մոտավորապես մեկ կիլոգրամանոց կշռաքար։*

**ՆՕԲԱԹ**, *գ. Հերթ։*

**ՆՕԲԱԹ ՇՅԱՔՅԱՐ**, *Բարբարիսի համ ունեցող շաքար։*

**ՆՕԽՈՒԴ**, *գ. Սիսեռ։*

**ՆՕՂՈՒԼ**, *ած. Մանր ու կլոր (շաքար)։* Նօղուլ շյաքյար։

**ՆՕՎՐՈՒԶ**, *գ. Մահմեդական նոր տարի և նոր տարվա առաջին օր՝ համապատասխան տոնակատարությամբ։* Նօվրուզ բայրամի։

**ՆՕՔՅԱՐ**, *գ. Ծառա։*

# Շ

**ՇԱԳՅԻՐԴԱ̈ՆԱ̈**, *գ. Ընծա կամ հյուրասիրություն, որ անում է հաջողություն ունեցողը:*

**ՇԱԼԵ ՇԱՊԻԿ**, *Նորահարսին հագցնելու ասեղնագործ նուրբ շապիկ:*

**ՇԱԼՋԻ**, *գ. Շալագործ:*

**ՇԱԽ**[1], *գ. 1) Շահ, օգուտ: 2) Թագավոր: 3) Խնամք:*

**ՇԱԽ**[2], *գ. Շուք:* Շախով-շո՛ւքով:

**ՇԱԽԵԼ**, *նբ. Խնամել, պահել:*

**ՇԱԽԿԱ**, *գ. Կատակ:* Շախկա արաց, սիրտըտ չըկոտրվի:

**ՇԱԽԿԱՇԷՆԼԻՔ**, *ած. Զվարթ, կատակասեր:* Շախկաշէնլիք մարթ ի, ինոր վո՞վ չոռ կասի:

**ՇԱԽԿԱՋԻ**, *ած. Կատակասեր, կատակաբան:*

**ՇԱԽ-ՊԱԽ**, *գ. Խնամք:*

**ՇԱԽՔ**, *գ. Տոկոս:* Էրէխէն մայէն ի, թոռը՝ շախքը:

**ՇԱ̈ԿԱ̈Լ**, *գ. ած. Հին, պատառոտված կոշիկ:*

**ՇԱ̈ԿԱ̈Լ ՊԷՐԱՆ**, *Մեծաբերան, շատախոս:*

**ՇԱ̈ԿԱ̈ԼՋԻ**, *ած. Հին կոշիկ հավաքող:*

**ՇԱ̈ԿԸԼՋԻ**, *տե՛ս* **ՇԱ̈ԿԱ̈ԼՋԻ**:

**ՇԱՀԲԱԶԻ, ՇԱՅԲԱԶԻ**, *գ. Հայաբնակ գյուղ Այգեստանի հյուսիսում: Ծան. – Ըստ Վանում պահպանված ավանդության՝ պարսից շահը երկար պաշարում է բերդը, մինչև մոտակա խաղողի այգին բերք է տալիս: Այդտեղ հիմնված գյուղը կոչում է Շայբազի:*

**ՇԱՂ**, *Վն. Կճ. գ. Ցող:* Վէր խոտերաց շաղ էր կապե *(Վն.)*: Խոտի վըրէն շաղ ի դ՛ըրե *(Կճ.)*:

**ՇԱՂՎԵԼ**, *չբ. 1) Գլուխը կորցնել, խառնվել: 2) Աչքերը մթնել: 3) Կաթը կտրվել:*

**ՇԱՄԱԹԱ**, *գ. Աղմուկ, կռիվ, իրարանցում:*

**ՇԱՄԱԹԱԼԻ**, *ած. Աղմկոտ:*

**ՇԱՄՇԻ**, *գ. Անձրևանոց, հովանոց:*

**ՇԱՆ ՃԱՆՋ**, *Վն. Անասուններին խայթող մոխրագույն մեծ ճանճ:* Շան ճանջ ի նըստե վէր հա̈յվընին *(Վն.)*:

**ՇԱՆՍԱՏԱԿ ԷԼՆԵԼ**, *Չարաչար մահով անժամանակ մեռնել:*

**ՇԱՆՍԸԽՏՈՐ**, *գ. Մանր սխտորուկ, որ գործածում էին ժաժիկ պատրաստելիս:*

**ՇԱՆՑ ՏԱԼ**, *Ցույց տալ:* Ինոնց տուն ընձի շաա̈նց տու *(Կճ.)*:

**ՇԱ̈Շ** *(նաև՝ Կճ.)*, *ած. Շիլ:*

**ՇԱԾ-ԲԵԾ**, *գ. 1) Նարդի խաղալիս զարերը վեց և հինգ թվերի վրա կանգնելը: 2) Աչքերի հիվանդություն, տեսողական*

*խանգարում, որի դեպքում իրերն իրենց տեղում չեն երևում։*

**ՇԸՇԽԸՆԸ**, *գ. Թուրքական բանակի հին հրացան։*

**ՇԱՇԿՈՏ**, *ած. Շշմած։*

**ՇԱՇՄԻՇ ԷԼՆԵԼ**, *Ապշած մնալ, զարմանք կտրել։*

**ՇԱՇՓԱՌ**, *1) ած. Շիլ։ 2) գ. Վեց ճյուղ հյուսած մազեր։*

**ՇԱՊԿԵԼ**, *նբ. Բազմությամբ շրջապատել և ընդհատել որևէ չարագործի, պետական պաշտոնյայի անելիքը։* Ջաքթիին *(ոստիկան)* իկել էր թաղը, ճոչ կիյտեր շապկիցին, փախուցին։

**ՇԱՌ**, *գ. Ջրպարտանք, փորձանք։*

**ՇԱՎԱՇՓՕՌ**, *գ. Թանգիֆ, մառլյա։*

**ՇԱՎԷՌ**, *գ. Քյամանչա։*

**ՇԱՎԷՌ-ԾԱՎԷՌ**, *գ. Երաժշտական գործիքներ լարելու ձայն, ճըզ-վըզ։*

**ՇԸՎՌԸՎ**, *Լիմ, գ. Ջղջիկ։*

**ՇԸՐԸՊՐԵԼ**, *նբ. Սուղ միջոցներով տնտեսությունը հաջող կառավարել, գործը լավ կազմակերպել և ղեկավարել։*

**ՇԱՐԱՖ**, *Վն. գ. Արյունախառն թարախ։* Յարից շարաֆ կուկ<sup>յ</sup>ա *(Վն.)։*

**ՇԱՐԲԱԹ**, *գ. Օշարակ։*

**ՇԸՐԲԻԿ**, *գ. Ջուր խմելու պղնձե աման։*

**ՇԸՐԴԸՂՈՒԿ, ՇԸՐՏԸՂՈՒԿ[3]**, *Հթ. գ. Դեղձ։* Շըրդըղուկ խամօվ ի *(Վն.)։ Ծան.* – Միրգ *բառը Վանում գործածական չէր։*

**ՇԱՐԻԱԹ**, *գ. Մահմեդական կրոնական օրենք։*

**ՇԸՐԻՏ**, *գ. Ժապավեն։*

**ՇԸՐԽՕՇ, ՇԱՐԽՕՇ**, *Լիմ, ած. Հարբած։* Իմ փէսէն շարխօշ ի *(Լիմ)։*

**ՇԱՐՄԱՂ**, *1) գ. Ձիու մազից հյուսված մաղ։ 2) ած. Վայելչագեղ։* Բոյ-բուսաթով, շարմաղ ախչիկ։

**ՇԱՐՄԸՂԱԾ**, *ած. Շատ գեղեցիկ։*

**ՇԱՐՄԱՇՅՈՒՂ**, *գ. Վանում տարածված միամյա ծաղկատեսակ։*

**ՇԱՐՇԱՓ**, *գ. Սպիտակ սավան, որով կանայք ծածկում էին մարմինն ու գլուխը։*

**ՇԱՐՈՒԿ**, *նբ. ած. Շարված։*

**ՇԱՐՔԻ**, *ած. Արևելյան։*

**ՇԱՓԱՂ ՏԱԼ**, *Յոլալ, լույս արձակել։*

**ՇԱՓԱՐՋԱ**, *ած. Շվարած։*

**ՇԸՔ[3]ԸՐ**, *գ. Շաքար։* Շըք<sup>յ</sup>ըրն ինգ<sup>յ</sup>ե շան պէրան *(ասում էին, երբ լավ տան ընտիր աղջիկը հարս էր գնում անվանարկված ընտանիք)։*

**ՇԸՔ[3]ԸՐԼԸՄԸ**, *գ. Քաղցրավենիքի տեսակ։*

**ՇԸՔ[3]ԸՐԼԻ**, *ած. Քաղցր։*

**ՇԵԽ**, *գ. Շէյխ, մահմեդական միաբան, առաջնորդ։* Շեխն իրիցուն կասի պախսակեր։

**ՇԵՂՊ**, *Վն. գ. Շեղբ։* Շեղպ անկոթ տանկի պէրանն ի *(Վն.)*։

**ՇԵՂՓԻԿ**$^{3}$, *Հթ. գ. Շեղբ։* Շեղփիկʲ պեր, սոխ քʲանդենքʲ *(Հթ.)*։

**ՇԵՌ** *(նաև՝ Բմ.)*, *գ. Մեզ։* Մըկան շեռ վէր ծովուն բալու կանի։

**ՇԵՓ**$^{1}$, *գ. Խարազանի ծայրին կապված կարճ կաշիների խուրձ՝ զարկն ավելի ուժգին և ցավագին դարձնելու համար։*

*ՇԵՓ*$^{2}$, *գ. Ակոսներն իրարից բաժանող հողաշերտ։*

**ՇԷԽՊԻԿ**$^{3}$, *Լիմ, ՇԸԽՓԻԿ, Կճ. գ. Բանջար հավաքելու շեղբ։* Շըխփիկօվ պանջար խանին *(Կճ.)*։

**ՇԷՄՔ**, *գ. Սյամ, սեմ։* Շիման տակ քʲար ի։

**ՇԷՄՔԵԼ**, *չբ. Դռնով անցնել։*

**ՇԷՅԹԱՆ**, *գ. Սատանա։*

**ՇԷՅԽՈՒԼԻՍԼԱՄ**, *գ. Մահմեդականների կրոնապետ։*

**ՇԷՆԼԻՔ**$^{3}$, *գ. Բարեկեցություն, առատություն։*

**ՇԷՆՔԵԼ**$^{1}$, *նբ. Վառարանի, թոնրի մեջ ցախը խաչաձև շարել հեշտությամբ վառվելու համար։*

**ՇԷՆՔԵԼ**$^{2}$, *չբ. Նստած մարդու վրայով անցնել, շենքել ու ընկնել։*

**ՇԷՆՔՈՒԿ**, *նբ. ած. Վառելու համար փայտը հարմար դարսված։*

**ՇԷՐՈՒՔ**$^{3}$, *Լիմ, մկ. Կիսրար։* Մենքʲ շէրիքʲ կըպանենքʲ *(Լիմ)*։

**ՇԷՔ**$^{3}$, *գ. Ոտքերի լայն բացվածք։*

**ՇԷՔԸՌԿԸՌԵԼ**, *չբ. Մեծ-մեծ քայլերով քայլել։*

**ՇԸԲ**, *գ. Պաղլեղ։*

**ՇԸԹԻԼ** *(նաև՝ Հթ.)*, *գ. Սածիլ։* Շըթիլ կʲարուն պացվելուն պէս կանեն *(Վն.)*։

**ՇԸԹԻԼ ԷԼՆԵԼ**, *Անսպասելիորեն հայտնվել և որևէ մեկից կպած մնալ։* Շըթիլ էլավ աչքիս մեչ, սօյը կըտըրվի։

**ՇԸԼԱԳ**, *գ. Շալակ։* Քʲո շըլագն ի՞նչ ի։

**ՇԸԼԿԵԼ**, *նբ. Շալակել։*

**ՇԸԼԿԸՏԱՐ**, *գ. Շալակտար, շալակավոր, բեռնակիր։*

**ՇԸԼՄԸԼԿԵԼ**, *նբ. Գործը մի կերպ, անբարեխիղճ կերպով կատարել, գլխառադ անել։*

**ՇԸԼՊԸԼԿԵԼ**, *նբ. Անկանոն կերպով դիզել։* Կʲիրերըտ սկուն քրդու օլամ էլնի, խառնավըռծի կըշըլպլկես վէր մէյ մէկու։

**ՇԸԼՎԱՐ**, *գ. Շալվար, գյուղական լայն տաբատ։*

**ՇԸԼՎԵԼ**, *չբ. Աչքերը շիլ դառնալ։* Անչամ ճամբախըտ իրիշկացի, վոր աչկերս շըլվավ։

**ՇԸԼՕՓԱ**, *գ. Խոշոր փաթիլներով ձյան հետ գոյացող ջրալի ցեխ։*

**ՇԸԽՇԸԽԿԱՆ**, *ած. Հնչուն։*

**ՇԸՀԱԴ**, *գ. Վկա։*

**ՇԸՂԿԸԼԴԻԿ**, *գ. Օրորոցի վրա կախված ուլունքաշար։*

**ՇԸՂԿԸԼԿԱԼ**, *չբ. Շըղկըլդիկը ձայն հանելով շարժվել։*

**ՇԸՂՋԱՆԱԿ**, *1) ած. մկ. Շեղջշեղջ։ 2) գ. Մազերի բազմաճյուղ հյուսք։*

**ՇԸՂՏՈՒԿ, ՇԸԽՏՈՒԿ**[3], *Լիմ, գ. Գորտնուկ։* Վէր ինոր մատներաց շըղտուկ էր *(Վն.)։* Մատի վըրա շըխտուկ' կա *(Լիմ)։*

**ՇԸՄԸՌՆԵԼ**, *1) նբ. Ծալել։* Էրկուշաբթի խաց կը թըխեմ, իրիքշաբթի խաց կըշըմըռնեմ։ *Ծան. – Գյուղերում ամեն օր հաց էին թխում, քաղաքում լավաշ թխում էին երեք-չորս ամսվա համար։ Թխում էին ոչ թե երկարուկ, այլ կլորավուն լավաշ, երկու կողմից վրա էին տալիս (շըմըռնում էին), ծալում, չորացնում և պահում մառանում՝ հացատան առաստաղից պարանով կախված տաշտակի մեջ։ 2) չբ. Խոժոռվել, թթու դեմք ցույց տալ։*

**ՇԸՄՇԱՏ**, *գ. Տոսախ, երկաբակյաց ծառատեսակ, որի ամուր փայտից գդալ, շերեփ էին պատրաստում։*

**ՇԸՆԱԽԱՎՈՐ** *(նաև՝ Բմ., Հթ.), ՇԸՆԱԽԱՒՈՐ, Լիմ, ած. Շնորհավոր։*

**ՇԸՆԳ**[3]**ԸԼԽԻԿ**, *ած. նխտ. Չար, բամբասաբեր (պառավ կանանց մասին)։*

**ՇԸՆԴԸԼԻԿ**, *ած. նխտ. Շնացող (տղամարդու վերաբերյալ)։*

**ՇԸՆԹԸՌԿՎԵԼ**, *չբ. 1) Շները փռված նստել։ 2) նխտ. Պառկել։* Ի՞նչ ես շընթըռկվել։

**ՇԸՆԻԿ**, *գ. 1) Արմտիքի չափ։ 2) Ցորենի փոքրիկ աման։*

**ՇԸՆԻԽԵՐ**, *գ. նխտ. Հայհոյանք, շան հայր։*

**ՇԸՆԻԽՈՏ**, *գ. Շան հոտ։*

**ՇԸՆՈՒԽՔ**, *գ. Շնորհք։*

**ՇԸՇԵԼ**, *1) նբ. Անցկացնել շշի վրա։ 2) չբ. Կանչել։* Ականջը շըշել։ *3) (նաև՝ Հթ.) չբ. Սուր և հանկարծակի ցավ պատճառել։* Կողըս կըշըշի *(Վն.)։*

**ՇԸՇԿԸՌ(Վ)ԵԼ** *(նաև՝ Հթ.), չբ. Շփոթվել։* Ջիկ վոր կըտիսնա, կըշըշկըռ(վ)ի *(Վն.)։*

**ՇԸՇԿԸՌՈՒԿ**, *չբ. ած. Շշմած, մոլորված։* Էտ շըշկռուկի մէյն ի՞նչ կուզի։

**ՇԸՇՊՌԵԼ**, *նբ. Դատափետել։*

**ՇԸՊԱՆՄԱՆԻԿ**, *գ. Վերքին քսելու կապույտ քար։*

**ՇԸՊԸԼԽԱՆ**, *ած. Շատախոս։*

**ՇԸՌԱԴ**, *ած. Ճարպիկ, ճարտար, աչքաբաց։*

**ՇԼՌԱԼ**, *չբ. Հեղուկը շառաչելով վայր թափվել:*

**ՇԼՌՃԵԼ**, *նբ. Շրջել:*

**ՇԼՌՇԼՌՈՑ**, *գ. Թափվելու ձայն:*

**ՇԼՌՇԼՌՈՒՆ**, *ած. Շողշողացող:*

**ՇԼՌՉԵԼ**, *Հթ. նբ. Շուռ տալ:*

**ՇԼՌՓՈՒՉԻԿ**, *Կճ.,* **ՇԼՌԻ ՓՈՒՉԻԿ**, *Հթ., գ. Միզապարկ:* Շլռփուչիկի մեչ ք՚ար կա *(Կճ.):*

**ՇԼՎԱՑՈՒՑԵԼ**, *Վն. չբ. Սուլել:* Ցերք՚ըմ կըշըլվացուցէր *(Վն.):*

**ՇԼՏԻԿ**, *գ. Թթված մածուն:*

**ՇԼՏԿԱՋՈՒՐ**, *գ. Թթված մածնից քամված ջուր:*

**ՇԼՐԱՓՆԵԼ**, *գ. Հրանոթի պայթուցիկ արկ: Ծան. – Այս բառը վանեցու բառարանի մեջ մտավ ապրիլյան ինքնապաշտպանության օրերին:*

**ՇԼՐԷՇՏ**, *գ. Բանջարի տեսակ, որի տերևները եփում են և յուղով տապակում, իսկ արմատները չորացնում են, աղում ու դարձնում սոսինձ:*

**ՇԼՐԷՇՏԱՃՈՒՐ**, *գ. փխբ. Աղքատի ուտելիք: Ծան. – Շըրեշտի տերևները տապակելուց առաջ եփում են և ջուրը թափում: Աղքատներն այդ ջրի մեջ հաց են բրդում և ուտում:*

**ՇԼՐԻՏ**, *գ. Լվացքի պարան:* Լըվացկի շըրիտ *(Վն.):*

**ՇԼՐՃԵԼ**, *Լիմ, 1) չբ. Ջրոսնել: 2) նբ. Շուռ տալ:*

**ՇԼՐՋՄԼՐՋԵԼ**, *նբ. 1) Շուռումուռ տալ: 2) Գիրքը թղթատել:*

**ՇԼՐՋՈՆՔ**, *գ. Հագուստի հակառակ երես:*

**ՇԼՓԱՑՈՒԿ**, *չբ. ած. Շփացած, երես առած, պարծենկոտ:*

**ՇԼՓԼՌԹԱԼ**, *չբ. Սահելով ընկնել:*

**ՇԼՓԼՌԹԻԿ**, *ած. Անփույթ, անզգույշ:* Շըփլըռթիկի մէյն ի, ինոր արածն էլ ինոր պէս կըլնի:

**ՇԼՖԱ**, *գ. Կասկած:*

**ՇԻԹԻԼ**, *գ. Սածիլ:*

**ՇԻԼԱ ՇԱՊԻԿ**, *Կարմիր կտավե շապիկ, որ հագնում էին զգեստի վրայից:*

**ՇԻԼԷԿ**, *գ. Կերակրատեսակ:*

**ՇԻԼԻՖ**, *գ. Ֆաներա, հատկապես ընկուզենու փայտի բարակ շերտ, որով կահույք էին երեսապատում:*

**ՇԻՄՇԱՏ**, *գ. Տոսախ:*

**ՇԻՄՇԻՐ**, *գ. Տոսախ, սամշիտ:* Շիմշիրի կըտէլ:

**ՇԻՆԱՑՆԻ**, *գ. Շինականի, գյուղացու:*

**ՇԻՇ**[1], *գ. Խորոված շիշ: Ծան. – Վանում* շիշ *ասում էին միայն խորովածի* շշին:

**ՇԻՇ**[2], *Հթ. Կճ. գ. Մի ծայրը ճանկավոր, մյուսը թաթի*

*ձևով երկար մետաղյա բարակ ձող, որով հաց են պոկում ու հանում թոնրից:* Շըշօվ խաց խանեց թօրվըընից *(Կճ.)*: Շիշ թըլ, խաց խան թօրվանէն *(Հթ.)*:

**ՇԻՋԻՄ**, *գ. Համեմատաբար բարակ պարան:* Շիջիմ պըրըկ էր: Շիջիմօվ ֆորթիկին կապին սընից *(Կճ.)*:

**ՇԻՎԱ ՏԱԼ**, *Գրգռել, դրդել:*

**ՇԻՎԱՐ**, *ած. Շվարած, մոլորված:* Մնացիր եմ շիվար:

**ՇԻՏԿԵԼ** *(նաև՝ Լիմ)*, *նբ. Ուղղել, շտկել:* Քյօ քօլօզ քյէթըր ի, շիտկիւ *(Լիմ)*:

**ՇԻՐԱ**, *գ. Չխմորված քաղցր գինի:*

**ՇԻՐԱԽԱՆԱ**, *գ. Հնձան:* Կյինու սիրուն շիրախանի պատ կըլիզի:

**ՇԻՐԵՓ**, *գ. Շերեփ:*

**ՇԻՐԻԴ**, *Բմ. գ. Պարան:*

**ՇԻՐԻԿ, ՇԻՐԻՔ**, *գ. Ժառանգության փայատեր:* Հալա մեռել չըթաղած, շիրիկներ հըմէն յանից էկան-ժողվան: Տու իմ շիրիքն ես:

**ՇԻՐԻՆԿԱ**, *գ. Հոգնա:*

**ՇԻՔ**, *ած. Պերճ, շքեղազգեստ:*

**ՇԻՔԵԼ**, *Բմ. նբ. Կառուցել:*

**ՇՅՈՒՇՏԵԼ**, *չբ. Տարակուսել, կասկածել:*

**ՇՅՈՒՇՏԵՄ**, *վ. Արդյոք, միգուցե, կարծեմ:* Մարեւ, շյուշտեմ, բալքի թե մըշակու կընիկ կյիտի:

**ՇՅՈՒՔ[3]**, *գ. Ստվեր, շուք:*

**ՇՅՈՒՔ[3]ԸՐ**, *գ. Գոհունակություն:*

**ՇՈՏ**, *մկ. Շուտ:* Շոտ բէ շոտ կըխասնեն, կըպիրեն ինոր ուզածը:

**ՇՈՏԸՄ**, *մկ. Անմիջապես:*

**ՇՈՒԼԱԼԵԼ**, *նբ. Խոշոր-խոշոր կարել:*

**ՇՈՒԼԱԼՎԵԼ**, *չբ. Աներեսաբար կպչել մեկից:* Վորտեղ կընացի, նրա ծեռքից չըպըրծա, շուլալվեր էր վէր զիկ:

**ՇՈՒԼՈՒԼՎԵԼ**, *տե՛ս* **ՇՈՒԼԱԼՎԵԼ**:

**ՇՈՒԼՈՒԼԵԼ**, *նբ. Խոշոր կարով կարել, բըլըրնդել:*

**ՇՈՒԿԻ ԿԱՎ**, *Աբեթ, կայծքարից բռնկվող դեղնավուն հեղուկով ներկված բամբակ՝ երիզով (զայթանով) փաթաթած:*

**ՇՈՒՂ**, *գ. Տարեկան, արմտիք:* Շըղե խաց: Ծեր կերածն ի շուղ տարեկնէն:

**ՇՕՒՂ**, *գ. Ճաղ, փայտե կամ մետաղե ամուր ձողիկ՝ գուլպա գործելու և ձեռագործ անելու համար:* Պուղօյի կընիկ (-յ) շըղօվ թաթ կըկյուծէր *(Վն.)*:

**ՇՈՒՆ ԽԱՂՑՈՒՑՈՂ**, *Անբան, դատարկապորտ:*

**ՇՈՒՆ-ՇԱՆԳՅԸԼՆԵՐ**, *գ. Անբարոյական երիտասարդներ:* Պըքվիւր *(կեր, կշտացիր)* մեր էս շուն-շանգյըլներաց խետ:

**ՇՈՒՇԱՆՑ**, *գ. Հայաբնակ գյուղ Այգեստանից արևելք:*

**ՇՈՒՇՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ**, *Երեցկնոջ մահից հետո կուսակրոնություն ընդունած վարդապետ: Ծան. – Տիրուխնու մահից հետո եթե քահանան ամուսնանում էր, այլևս իրավունք չուներ քահանայությամբ զբաղվելու: Զամուսնացողը կարող էր պահանջված քննությունը հանձնել և դառնալ վարդապետ. այդպիսի վարդապետը կոչվում էր շուշտակ վարդապետ:*

**ՇՈՒՇՓԱ**, *գ. Եկեղեցական մասունքների փաթաթան, թաշկինակ:*

**ՇՈՒՌ**, *Լիմ, մկ. Շուրջ:*

**ՇՈՒՌԹ** *(նաև՝ Հթ.), գ. Միայն թոնրի շուրթ:*

**ՇՈՒՌՋԱԼ**, *Հթ. գ. Շուրջառ:*

**ՇՈՒՌՈՒՔ**, *գ. Օշարակ, սիրոպ:*

**ՇՈՒՐԱ**, *գ. Խորհուրդ, ժողով:* Նըստեր են, շուրա կանեն:

**ՇՈ̈ՒՔʸ**, *Վն.գ. Ստվեր:* Ծառի շո̈ւքʸ էրկընցավ, օր էլա̈վ իրիկուն կʸա̈խ *(Վն.)*:

**ՇՈՒՖԱ**, *գ. Կասկած:*

**ՇՈՒՖԱԼԱՄԻՇ ԷԼՆԵԼ**, *Կասկածել, կռահել, գլխի ընկնել:*

**ՇՈՒՖԱԼԻ**, *ած. Կասկածելի:*

**ՇՕԲԱ**, *գ. 1) Գրիպ: 2) Վարակ:*

**ՇՕԼՕՖԻԿ**, *ած. 1) Քսու, շողոքորթ: 2) Լուրն իսկույն տեղ հասցնող:*

**ՇՕՂՇԸՂԱՆ**, *ած. Պայծառ, շողշողուն:*

**ՇՕՇՈՐԴ**, *ած. Ապուշ, թեթևսոլիկ, ծալը պակաս:*

**ՇՕՇՐԱՐ**, *ած. գ. Կաթնեղեն պատրաստող:* Շօշրար Արթեն պանիր ի պիրե:

**ՇՕՌՕԹԱՆ**, *Բմ. գ. Ջրհորդան:*

**ՇՕՐ**, *ած. Աղի:* Կերակուրը շօր ի:

**ՇՕՐՇՕՓ**, *գ. Վարակ, ազդեցություն:* Շօրշօփ խաաավ մե *(Վն.)*:

**ՇՕՐՎԱ**, *գ. Արգանակ:*

**ՇՕՐՕՐ-ՄՕՐՕՐ**, *մկ. Նազանքով:*

# Ո

**ՈՒԶԵԼ**[1], *Վն. նբ. Հուզել:*

**ՈՒԶԵԼ**[2], *Հթ. նբ. Սիրել:*

**ՈՒԶԸՆԿԱՆ**, *Վն.*, **ՈՒԶԸՆԳʸԱՆ**, *Հթ.*, **ՈՒԶԸՆԳʸԱ̈Ն**, *Կճ. գ. Խնամախոս:* Ուզընկաններ էկան ախչիկ ուզեն//ուզէլու *(Վն.)*: Ուզընգʸա̈ն էկան տըրկըցի տուն *(Կճ.)*:

**ՈՒԹՈՒ**, *գ. Արդուկ:*

**ՈՒԹՈՒՅԵԼ**, *նբ. Արդուկել:*

**ՈՒԼՅՈՒՐ-ՄՈՒԼՅՈՒՐ**, *ած. Ջիգզագ, ծուռումուռ:*

**ՈՒԼՆԻԿ** *(նաև՝ Հթ.)*, **ՈՒԼՆԻԿʸ**, *Լիմ*, **ՈՒԼԻՆԳ**, *Կճ.*, **Հ’ՈՒԼՆԻՆՔ**, *Բմ. գ. Ուլունք:*

**ՈՒՂՈՂ**, *Վն. գ. Ուղեղ։*

**ՈՒՂՈՄ**, *Լիմ, ՈՒՂՕՄ, Հթ. գ. Ջրաղացի արկղ, որից ջուրը թափվում է աղորիքի մեջ։* Ճնդղացպան ցօրէն լըցեց ուղօմի մէչ *(Հթ.)։*

**ՈՒՂՈՒՐ**, *գ. Պատճառ։*

**ՈՒՂՈՒՐԵՆ**, *կ. Պատճառով։* Քո ուղուրեն։

**ՈՒՂՈՒՐԼԻ**, *ած. Բարի ոտքով, հաջողություն բերող։*

**ՈՒՂՈՒՐՍՈՒԶ**, *ած. Հաջողություն չբերող։*

**ՈՒՄԲԼՐ** *(նաև՝ Հթ. Լիմ), գ. Կյանք։*

**ՈՒՄԼՐ**, *տե՛ս* **ՈՒՄԲԼՐ**։

**ՈՒՄՈՒՏ**, *գ. Հույս, ապավեն։*

**ՈՒՄՈՒՏԱՄԵՌ**, *ած. Անեծք. հուսակտուր, անապավեն։* Ումուտամեռ Պանրենց պառավ աչքով տըվեց իմ քյորփին, մըկա կըրակի մեչ կըվառվի, կանչեմ Ճըվկանց հաջի Նանին, կ՚ա աղօթի, բալքի ընցնի։

**ՈՒՄՈՒՐ**, *գ. Հոգս։*

**ՈՒՅԴՈՒՐՄԻՇ ԱՆԵԼ**, *Հարմարեցնել։*

**ՈՒՅՄԻՇ ԷԼՆԵԼ**, *Հարմարվել։*

**ՈՒՅՂՈՒՆ**, *ած. Հարմար։*

**ՈՒՅՂՈՒՆՍԸԶ**, *ած. Անհարմար։*

**ՈՒՆԹ**, *Վն. գ. Թևատակ։* Կ՚իրք ունթ//ընթըտակ տըվե, կէրթէր վարժատուն *(Վն.)։*

**ՈՒՆԾԿԸՏՈՐ ԷԼՆԵԼ**, *Սեթևեթել, կոտրատվել։*

**ՈՒՆՔ**, *գ. Հոնք։*

**ՈՒՇԻԿ** *(նաև՝ Հթ.), ած. Կամաց։*

**ՈՒՇՈՒՆՑ**, *Վն. Լիմ, գ. Հայհոյանք։* Մէ ուշունց խտուր ձի *(Լիմ)։*

**ՈՒՇՈՒՆՑ ՏԱԼ**, *Վն. Բմ. Հայհոյել։*

**ՈՒՇՈՒՐ**, *գ. Տասանորդ։*

**ՈՒՉԱԴՈՒՄ**, *գ. 1) Բառացի՝ երեք քայլ։ 2) Վանում տարածված խաղատեսակ։*

**ՈՒՉԸՆՋԻ**, *թ. Երրորդ։*

**ՈՒՌ**, *Հթ. Լիմ, գ. Մատակի, կովի, ոչխարի, այծի կուրծք։* Կովու ուռ լիք՚ կաթ ի *(Հթ.)։*

**ՈՒՌՈՑ**, *Լիմ, գ. Ուռուցք։* Խոտի վըրա ուռոց կա *(Լիմ)։*

**ՈՒՌՈՒՄ**, *գ. Հույն։*

**ՈՒՌՈՒՍ**, *գ. Ռուս։*

**ՈՒՌՈՒՍՊԻ**, *ած. Շնացող, պոռնիկ (կնոջ վերաբերյալ)։* Ուռուսպու մոմ չում լո՛ս կըվառվի։

**ՈՒՌՈՒՑՎՈՐԵԼ**, *չբ. Ուռչել։*

**ՈՒՍԵՓ**, *Վն. գ. Հովսեփ։*

**ՈՒՍԹԱ**, *գ. Վարպետ։*

**ՈՒՍԹՈՒՐԱ**, *գ. Ածելի։*

**ՈՒՍԻ**, *գ. Ձնահյուսք։*

**ՈՒՍԿՈՌ**, *գ. Ոսկոր։*

**ՈՒՍՏԸԿԵԼ**, *Կճ. նբ. Հյուսել։*

**ՈՒՍՈՒԼԲՈՎ**, *մկ. ած. Կամացուկ, մեղմորեն, կանոնավոր։*

**ՈՒՏՎՈՒԿ**, *ած. Ուտելի, ասվում*

*է մասնավորաբար վայրի կանաչեղենի մասին։*

**ՈՒՐ**, *գ. Իր։* Ուրաքն ուր կոթ չըտաշի։

**ՈՒՐԱՆՔ**[3], *գ. Իրենք։*

**ՈՒՐԵՆՑ**, *գ. Իրենց։*

**ՈՒՐԳՐԻՄ**, *վ. Կարծես թե։*

**ՈՒՐԿՈՏ**, *ած. Բորոտ։*

**ՈՒՐՄԷՆԷՆ**, *գ. Իրենից։*

**ՈՒՐՄԻՑ**, *գ. Իրենից։*

**ՈՒՐՆՈՒՐ**, *գ. Ինքնիրեն։* Տախտակ պակաս ի, ուրնուր կըկայնի ու կըխաղա։

**ՈՒՐՏԻ**, *գ. Արտը ջրելու առու։*

**ՈՒՐՐՈՑ**, *գ. Օրորոց։*

**ՈՒՐՈՒՐԵԼ**, *նբ. Օրորել։*

**ՈՒՐՈՒՐՈՑ** *(նաև՝ Բմ. Լիմ)*, *տե՛ս* **ՈՒՐՐՈՑ**։

**ՈՒՐՈՒՐՍ**, *գ. Օրոր։* Էրանէկ քի, Էփրեսիմա, Քրիստոսին ուրուրս ասիր։

**ՈՒՐՕՐԵԼ**, *Բմ. նբ. տե՛ս* **ՈՒՐՈՒՐԵԼ**։

**ՈՒՖՈՒ**, *գ. մնկ. Կերակուր։*

**ՈՓ**, *գ. Ավազան։ Ծան. – Բարակ աղբյուրների ջուրը հավաքում են արհեստական ավազանի մեջ, որպեսզի ոռոգման շրջանում ոռոգեն այգիներն ու պարտեզները։ Մեծոփա նշանավոր վանքն իր անունը ստացել է մեծ ոփից (ավազանից)։ Այգեստանում մի քանի հատ ոփ կար, որոնք* գյոլ *էին կոչվում։ Մկրտիչ Խրիմյանը ոփ էր պատրաստել Վարագա վանքի հյուսիս-արևելքում և այդ ոփի ջրով ոռոգում էր իր տնկած անտառակն ու այգին։*

# Չ

**ՉԱԲՈՒԽ**, *մկ. Շուտ, արագ։*

**ՉԱԳՈՒՃ**, *գ. Փոքր մուրճ։*

**ՉԱ̈ԴԸՐ**, *գ. Վրան։*

**ՉԱ̈ԹԱԼ**[1], *գ. Պատառաքաղ։*

**ՉԱԹԱԼ**[2], *Լիմ,* **ՉԱԹԱ̈Լ**, *Հթ. գ. Հենակ ծառերի տակ։*

**ՉԱ̈ԹԻՆ**, *ած. Կարծր, ամուր։*

**ՉԱ̈ԹԼԱՄԻՇ ԷԼՆԵԼ**, *Ճաթել, ճեղքվել։*

**ՉԱ̈ԼԱՂԱ**, *գ. ած. Խակ ծիրան։*

**ՉԱԼԱՂԱՆ**, *գ. Ցին։*

**ՉԱԼԱՂԱՊԸՏՈՒՂ**, *1) գ. Կապտականաչ աչք։ 2)փխբ. ած. Չար աչք ունեցող։*

**ՉԱԼԱՎԱՆԴ ԽԱՂԱԼ**, *Աշխուժանալ։* Կատուն տուն չի, մըկները չալավանդ կըխաղան։

**ՉԱԼԵԼ**, *չբ. Նվագել։* Չալկըչիներ չալիցին, վոր տըղներ գօվըլնդ պըռնեն *(Վն.)։*

**ՉԱԼԸՄ**, *ած. Պարծենկոտ։*

**ՉԱ̈ԼԻԳ**, *գ. Պողպատ:*

**ՉԱԼԿԻ**, *գ. 1) Նվագ: 2) Նվագախումբ:*

**ՉԱԼԿԸՉԻ**, *գ. Նվագող:*

**ՉԱԼՄԱ**, *գ. Մահմեդականի գլխանոց, փաթթոց:*

**ՉԱԼՓԱՐԱ**, *գ. Պարող գնչուների մատներին անցկացված զրնգացող մետաղ:*

**ՉԱԽԿԱԼԱ**, *Լիմ, գ. Ցոգոլ:*

**ՉԱԽՄԱԽ**, *գ. Կայծքար:*

**ՉԱԽԸՐ**, *գ. Անիվ:*

**ՉԱԽՐԱԿ**[3], *Լիմ, ՉԱԽՐԱԿ, Հթ. Կճ. գ. Ճախարակ:* Չախրակօվ թել կըմանին *(Կճ.)*:

**ՉԱԽՈՒ**, *գ. Ջմելի, գրչահատ:*

**ՉԱՂԱԼԱ** *(նաև՝ Կճ.), գ. Ցոգոլ:* Չաղալա ծիրան *(Կճ.)*: Կանաչ, խակ ծիրնին (ժուռ ծիրնին) կասեն չաղալա *(Վն.)*:

**ՉԱՄ**, *գ. Սոճի:*

**ՉԱՄԱՇՈՒՌ**, *գ. Սպիտակեղեն, փոխնորդ:*

**ՉԱՄԲԱՐ**, *գ. Անիվի շրջանակ:* Կեվոյի արաբէն էրկըթէ չամբարով ի:

**ՉԱՄՈՒՌ** *(նաև՝ Լիմ), գ. Ցեխ:*

**ՉԱՅ**, *գ. Թեյ:*

**ՉԱՅԻՐ-ՉԻՄԱՆ**, *գ. Մարգագետին:*

**ՉԱՅԼԱԽ**, *գ. Ուրուր:*

**ՉԱՅՄԱՋԱ**, *գ. Ճամպրուկի տեղ ծառայող փոքր արկղ:*

**ՉԱՆԱ**, *գ. Կզակ:* Չանէտ թուլնա *(անեծք. զրկվես խոսելու ունակությունից)*:

**ՉԱՆԱ ԹԱՓԵԼ**, *Խոսքակռվի բռնվել և դիմադրել:*

**ՉԱՆԱՂ**, *գ. Կավե խոր պնակ:*

**ՉԱ̈ՆՁ**, *Վն. կ. Քանզ:*

**ՉԱՆԹԱ**, *գ. Պայուսակ:*

**ՉԱՆԿ**, *գ. Ճանկ:*

**ՉԱ̈ՆԿՅԱ̈Լ**, *գ. Կեռ:*

**ՉԱ̈ՆԿՅԸՌԵԼ**, *նբ. Ճանկռել:*

**ՉԱՆՉ**, *գ. Ծմլած խաղողի մնացորդ, որից օղի են քաշում:* Չանչի արաղ ծուռ *(=խիստ արբեցնող)* կէլնի *(Վն.)*: Սարխօշ մարթուն չանչի արաղ թէ թըլթի, մէյ պյա̈ն ի *(Վն.)*: *Ծան. – Վանում օղի ստանում էին հիմնականում չանչի թորումից, ապա նաև պարսկական Ատրպատականից ստացվող քիշմիշից: Առավել տարածված էր չանչի արաղը: Թուրքերին՝ որպես մահմեդականների, արաղ խմելն արգելված էր: Նրանք ի տես մարդկանց բացահայտ չէին խմում, սակայն գաղտագողի կուշտ խմում էին, մեծ մասամբ հայերի տներում, հարդանոցներում՝ օղու հետ ուտելով հաց ու պանիր կամ ժաժիկ:*

**ՉԱՆՉԵԼ**, *նբ. Երկու ձեռքի մատները լայն բաց արած ուղղել մեկին՝ նրան նախատելու, հանդիմանելու համար:*

**ՉԱՆՑ**, *կ. Քան:* Ախըն չանց մախըն դէն ի:

**ՉԱՉԱԼ**, *ած. Ճաղատ:* Աստված ա̈զա̈տի կաղից, կուրուց, չաչալից:

**ՉԱՌՍՈՒ**, *ած. Քառակուսի:*

**ՉԱՎ ԱՆԵԼ**, *Լուրն ամեն կողմ տարածել:*

**ՉԱՎՈՒՇ**, *գ. Թուրքական ենթասպա:*

**ՉԱՎՐԱ**, *գ. Թաշկինակ:* Չավրէս ծոցէս խանիցիքյ:

**ՉԱՐԱ**, *գ. Ճար, հնար:*

**ՉԱՐԱՔ**, *գ. Աղանդեր:*

**ՉԱՐԳՅՈՒԼ**, *գ. Չինական զարդարուն բաժակ:*

**ՉԱՐԷՔյ** *[1]*, *թ. Քառորդ:*

**ՉԱ̈ՐԵՔյ** [2], *Կճ. Բմ.*, **ՉԱՐԷՔյ**, *Լիմ, գ. Բութ մատի և ցուցամատի միջև ընկած բացվածք:*

**ՉԱՐԽԱՓԱՆ**, *ած. Չարը խափանող: Ծան. – Այս անունով վանք կար Վանի վիլայեթում՝ Չարխափան Սուրբ Աստվածածին:*

**ՉԱՐԿԱՄ**, *ած. Թշնամի, չար կամեցող:*

**ՉԱՐ ՀՈՒԼԻԱՆՈՍ**, *ած. գ. նխտ. Դժնի, չար: Գործածում էին հատկապես կրոնասեր կանայք՝ հեթանոսությանը վերադարձած Հուլիանոս կայսերը նկատի ունենալով:*

**ՉԱՐՆԱՉԱՐ**, *մկ. Ակամայից, ինքնաբերաբար:*

**ՉԱՐՇԻ**, *գ. Շուկա:* Տան խոսքը չարշին չընցնե:

**ՉԱՐՈՑ**, *գ. Չար գործեր:* Չարոց՝ ճարտար, պա̈րոց՝ տըխմար:

**ՉԱՐՈՑ ԱՌՆԵԼ**, *Դիվահարվել:* Ինոնց լաճ չարոց ի առե, ա̈զրաիլ տա̈ոցե:

**ՉԱՐՈՒԽ**, **ՉԱ̈ՐՈՒԽ**, *Հթ.*, **ՉԱՐՕԽ**, *Կճ. գ. Տրեխ:* Չարօխ խակավ, կընա̈ց *(Կճ.):* Կյեղացին ուր չարխըներ//չարուխներ խակյա̈վ *(Վն.):*

Չարխի թել(եր), *Վն. Տրեխի քուղ:* Չարուխ խակյա̈վ, չարխի թելեր քյաշեց կապեց վոտին *(Վն.): Ծան. – Չարխի թելերը սովորաբար կաշվից էին լինում (Վն.):*

**ՉԱՐՉԸՎԱ**, *գ. Դռան, լուսամուտի շրջանակ:*

**ՉԱՐՉԻ**, *գ. Փերեզակ:* Չարչին էկավ, սարի ծամոն կըծախի:

**ՉԱՐՉԻԽՈՒՐԳԱ**, *գ. 1) Փերեզակի մանրուք: 2) Փերեզակ:* Չարչիխուրգան էկավ:

**ՉԱՐՍԱՎ**, *գ. Սպիտակ սավան, որով կանայք ծածկում էին մարմինն ու գլուխը:*

**ՉԱՐՍԱՓ**, *տե՛ս* **ՉԱՐՍԱՎ**:

**ՉԱՐՈՒԽՉԻ**, *գ. Տրեխ կարող:* Չարուխչու վոտ տընից կըտրի:

**ՉԱՓ**, *Վն.*, **ՉԱ̈Փ**, *Լիմ, գ. Հացահատիկ չափելու փայտե աման, որ հավասար է չորս կոտի:* Էտա ցորեն չափըմ չէնի *(Վն.):*

**ՉԱՓԱԼ**, *ած. Կեղտոտ:*

**ՉԱՓԱԼԱ**, *Վն.*, **ՉԱ̈ՓԱ̈ԼԱ̈**, *Լիմ, գ. Ապտակ:*

**ՉԱՓԱԼԱՄԻՇ ԷԼՆԵԼ**, *Տապլտկվել:*

**ՉԱ̈ՓԱ̈ԼԵԽ** *գ. Ապտակ:* Չա̈փա̈լեխ տըվեց տըղին *(Կճ.)*:

**ՉԱՓԻՃ**, *գ. Կրտած, ներքինացրած այծ, որի միսը արժեքավոր էր Վանում:*

**ՉԱՓԿԸՆ**, *ած. Սրիկա, անամոթ:*

**ՉԱՓՌԱՍՏ**, *1) ած. Բարեձև: 2) Կապուլ, կոճակ:*

**ՉԱՓՈՒԿ**, *1) ած. Արագաշարժ, ճարպիկ: 2) գ. Փոքրիկ կողով:*

**ՉԱ̈ՓՈՒԿ³**, *Լիմ, գ. Ջամբյուղ:* Ջա̈մբիլին կանթ կըլնի, չա̈փկյին չըլնե *(Լիմ)*:

**ՉԱՔ³Ո̈Ւ(Կ)**, *գ. Վառելիքի քանակը որոշելու չափ. մոտավորապես մեկ սամեն:*

**ՉԵՄՉԸՄԵԼ**, *չբ. Շարունակ չեմուչում անել, կոտրատվելով մերժել:*

**ՉԵՄՏԵ**, *վ. Չգիտեմ:*

**ՉԷՕԼԱԾՌԾԱԿ**, *գ. Այգիներն իրարից բաժանող հողե խուլ պատերի մեջ բացված ջրի անցք, ծռծակ: Ծան. – Ջրվորներն անցուղարձ էին անում այդ ծռծակներով, որոնք տեղ-տեղ անխնամ թողնված լինելու պատճառով քանդվել, լայնացել ու չէօլածռծակ էին դարձել:*

**ՉԷՕԼԱՊԷՐԱՆ**, *ած. Մեծխոսիկ, անպատկառ:*

**ՉԷՕՔԵԼ**, *չբ. Ծնրադրել, չոքել:*

**ՉԷՇԻԴ**, *գ. Տեսակ:*

**ՉԷՉՈՏ**, *Կճ. ած. Ծաղկատար:*

**ՉԸԲԽԵԼ**, *նբ. Բարակ փայտով բուրդը ծեծել, գզել:* Լըխեֆի պո̈ւրթ վըլա̈ց, չորցուց, չըբխեց *(Վն.)*:

**ՉԸԼ**, *գ. Արջի որջ:* Արջը չըլ մըտավ:

**ՉԸԼԴԸՐՄԻՇ ԷԼՆԵԼ**, *Խելքը թռցնել, խենթանալ:*

**ՉԸԼԸՆԳ³ԻՐ**, *գ. Փականագործ:*

**ՉԸԼՏԵԼ**, *նբ. 1) Թալանել:* Օր ցերեկով պըռնին, չըլտին: *2) Մերկացնել:* Թուրը կըչըլտի, կըզա̈նի:

**ՉԸԼՏԸՎԵԼ**, *1) չբ. Մերկանալ, տկլորվել: 2) փխբ. նբ. Կողոպտվել:*

**ՉԸԼՈՒՏ** *(նաև՝ Լիմ)*, **ՉԸԼՈՒԹ**, *հթ. ած. Մերկ:* Չըլուտ էրեխէն կայնուկ էր տո̈ւս *(Վն.)*:

**ՉԸԽԸՐԹՄԱ**, *գ. Կերակրատեսակ:*

**ՉԸԽՉԸՓԵԼ**, *նբ. Թափ տալ:* Ծառը չըխչըփիցին, ծիրանը ցած պիրին:

**ՉԸԽՉՕՐ**, *Բմ. գ. 1) Սյունից սյուն, ծառից ծառ պարանով կապած օրորոց: 2) Ճոճանակ:*

**ՉԸՄԱԽԱՎԱՆ**, *ած. Մեծամիտ, ոչ ոքի չհավանող:*

**ՉԸՄԱՆԹՕ**, *գ. Ցեմենտ:*

**ՉԸՄԲՈՒԼ**, *գ. Սանձ:*

**ԶԸՆԶԸԼՈՏ**, *ած. գ. Անպետք, չնչին մարդ։*

**ԶԸՆԶՈՏ**, *ած. Ստոր, չնչին։*

**ԶԸՊԷՏՔ**, *ած. 1) Անպետք իր, մարդ։ 2) Ամուլ։*

**ԶԸՊԵՐ**, *ած. Ամուլ կին։*

**ԶԸՌԻԿ**, *գ. Պարզունակ ծորակ, որից ջուր է հոսում, չռռում։*

**ԶԸՌՈՑ**, *գ. Զռիկից թափվող ջրի ձայն։*

**ԶԸՌՓԻԿ**, *գ. Վառելիք, ծառի չորացած բարակ ճյուղեր, որոնք օջախի, թոնրի շենքի մեջ շարվում են կ՚ազի և հաստ փայտերի արանքում, որպեսզի փայտերը հեշտությամբ վառվեն։*

**ԶԸՎԱ̈Ն**, *Վն. Հթ. գ. Բեռնակրության հաստ պարան։* Զըվնօվ ծիու պեռ կապեց *(Վն.)։*

**ԶԸՎԻ**, *գ. 1) Սեպ։ 2) Փայտե մանր մեխ, որ օգտագործվում էր կոշկակարության համար։*

**ԶԸՎԻԹ**, *գ. Լողակ։*

**ԶԸՎՆԻ ԿՈՌ**, *Փայտյա կեռ կամ ճանկ, որ կապում են թոկի ծայրին և նրանով ձգում թոկը՝ բեռ բարձելիս։* Զըվնի կոռ տոնա̈ւ զիկ *(Վն.)։*

**ԶԸՏԵՍ**, *ած. 1) Աչքածակ։ 2) Անկիրթ։*

**ԶԸՏԵՍԻԿ**, *տե՛ս* **ԶԸՏԵՍ**։

**ԶԸՐԱՂ**, *գ. Արհեստավորի աշակերտ, աշկերտ։*

**ԶԸՐԱՂՎԱՆ**, *գ. Հրավառություն։*

**ԶԸՐԱՏԵԼ**, *չբ.* Թրատել *բառը ծաղրական տառադարձությամբ. իբրև թե մի մեծ գործ է կատարել։* Էկավ, չըրատեց, կընա̈ց։

**ԶԸՐՓԻ**, *գ. Հասարակ վառելափայտ։*

**ԶԸՓԼԱԽ**, *ած. Մերկ։*

**ԶԸՓԽԵԼ**, *Կճ. նբ. Զաղկել։*

**ԶԸՓՌՈՏ**, *ած. Անպետք, կեղտոտ, վատ։*

**ԶԸՔԱՐԱ**, *գ. Ծխախոտ, գլանակ։* Բալէս ճո̈չացե, էլե չըքարա ք՚աշող։

**ԶԻԲԱՆ**, *գ. Պալար։*

**ԶԻԹ**, *գ. Տպածո, հասարակ կտորեղեն։*

**ԶԻՄ**, *Հթ.Կճ. գ. Բահով կտրած բուսախառն հողի շերտ։* Զիմ կըդրին, տըրին հ՚ա̈ռվի պէրա̈ն *(Կճ.)։*

**ԶԻՄԱՆ**, *գ. Մարգագետին։*

**ԶԻՆԳՅԱՆԱ**, *1) գ. Գնչու։* Զինգյանէն կըզա̈նի, քուրդը կըխաղա։ *2) փխբ. Ժլատ, կծծի։*

**ԶԻՆԻ**, *գ. Չինական էմալապատ ամանեղեն։*

**ԶԻՖԹ**, *ած. Զույգ։*

**ԶԻՖԹԼԻԿ**, *գ. Ագարակ, կալվածք։*

**ԶՅՈՒՐՅՈՒԿ**, *ած. Փտած, անպետք։*

**ԶՅՈՒՐՅՈՒԹՄԻՇ ԱՆԵԼ**, *1) Փչացնել։ 2) Դրամը վատնել։*

**ԶՈՂԹԸՐԻԿ**, *գ. Կավե հատուկ լայն աման՝ չորթանը ջրիկացնելու, բացելու համար։*

**ՉՈՐԹԱՆ**, *գ. Քամած ու չորացրած թան, որով ձմռանը թանապուր են պատրաստում:*

**ՉՈՐՆԱԼ**, *չբ. Ցամաքել:* Առուն չորցել:

**ՉՈՐՈՑ**, *գ. Երկու լուծով՝ չորս անասունով վար:*

**ՉՈՐՉԸՐՆԱԼ**, *չբ. Ցամաքել, սմքել, շատ նիհարել:*

**ՉՈՐ ՊԸՊԿՈ**, *Շատ չորացած, անպետքացած ու վառելիք դարձած միրգ:*

**ՉՈ՛Ի**, *ձ. Ջի, էշ քշելու ձայնարկություն:*

**ՉՈՒԹ**, *գ. Արոր:* Ա̈վա̈լներ խող չըլթօվ կըվա̈րին *(Վն.): Ծան. – Երգերում գործածական է «արոր» բառը (Վն.):*

**ՉՈՒԼ**, *գ. Հնացած, գզգզված շորեր:*

**ՉՈՒՄ** *(նաև՝ Լիմ), կ. Մինչև:* Չում Շուշան զա̈րտըրվի, ժա̈միրը կարցըկվեն: Չում աղն խասավ, մատաղ խանգյավ: Կընա̈ցին չուր մո̈շէն *(Վն.):*

**ՉՈՒՆՔԻ**, *շ. Որովհետև:*

**ՉՈՒՉՈՒ**, *գ. մնկ. Հագուստ:*

**ՉՈՒՌ**, *գ. Երկար մազ ունեցող այծ:*

**ՉՈՒՍՏ**, *ած. Արագաշարժ, ճկուն:*

**ՉՈՒՐ** *(նաև՝ Բմ. Կճ.), կ. Մինչև:* Չուր, չում չասես, քյե պա̈ց չեմ թողնե *(Վն.):*

**ՉՈՒՐՈՒԹՄԻՇ ԷԼՆԵԼ**, *1) Բառացի՝ մաշվել, ոչնչանալ: 2) Տանջվել, շատ աշխատելուց գերհոգնել:*

**ՉՕԲԱՆ**, *Վն. գ. Մանր եղջերավոր անասունների հովիվ:* Չօբան վօչխըրներ տարավ սար *(Վն.):*

**ՉՕԴԷ** *(նաև՝ Հթ.), ած. Նիհար, շատ բարակ ու երկարահասակ:*

**ՉՕԼ**, *գ. Ամայի վայր:*

**ՉՕԼ-ՉՕԼԸՍՏԱՆ**, *գ. Անապատ:*

**ՉՕԼԱԽ**, *ած. 1) Կաղ: 2) Հաշմանդամ:*

**ՉՕ՛Շ**, *ձ. Ջին, էշը կանգնեցնելու ձայնարկություն:*

**ՉՕՃՈՒԽ**, *գ. Երեխա:*

**ՉՕՌ**, *գ. Բույսերի հիվանդություն:*

**ՉՕՌՈՏ**, *ած. Ջռով վարակված:*

**ՉՕՌՈՒՑԱՎ ՈՒՏԵՍ**, *Անեծք. հիվանդանաս:*

**ՉՕՐԱԲ**, *գ. Գուլպա:*

**ՉՕ̈ՐՕ̈ՇՊԱ̈Թ**, *գ. Ջորեքշաբթի:*

**ՉՕ̈ՐՕ̈ՔՅԸՇՊԱ̈Թ**, *Վն. տե՛ս* **ՉՕ̈ՐՕ̈ՇՊԱ̈Թ**:

**ՉՕՓԼՈՒՂ**, *գ. Շատություն:*

**ՉՕՓՉԻ**, *ած. Անօրեն, մաքսանենգ:* Ավօն չօփչի էր, ավա̈զա̈կներաց խետ կընա̈ց, կուրիսավ:

**ՉՕՔԸՌՏԵԼ**, *չբ. 1) Քանիցս ծնրադրել: 2) Նվաստանալ:*

# Պ

**ՊԱԴՐԱԲԷՕ**, *գ. Ռեհանազգի կանաչու տեսակ։*

**ՊԱԶՄԵԼ**, *չբ. Բազմել, փառավորապես նստել։*

**ՊԱ̈ԶՈ̈ՒԿ** *(նաև՝ Կճ.), գ. Ճակնդեղ։* Կարմիր պա̈զո̈ւկ էփին, կէրան *(Կճ.)։*

**ՊԱ̈ԶՈՒԿ**, *գ. Բազուկ։* Անունըդ վէր պա̈զկիս կյըրեցի։

**ՊԱ̈ԶՊԱ̈ՐԱ̈Կ**, *գ. Բահի կոթին հագցվող ամուր փայտ, որպեսզի փոր անելիս կոշիկը չմաշվի և փորողի ոտքը չցավի՝ բահի երկաթին դեմ առնելով։*

**ՊԱ̈Ժ**, *գ. Հասակ։* Սիրուն պա̈ժիտ մատաղ։

**ՊԱ̈ԺԻՆ**, *գ. Բաժին։*

**ՊԱ̈ԺՆԵԼ** *(նաև՝ Հթ.), նբ. 1) Բաշխել, բաժանել։ 2) Անջատել։* Կըռվօղներաց իրարմէ պա̈ժնըցին *(Վն.)։*

**ՊԱԼ**, *գ. Ապառաժ։* Պալ-պալ քյարեր։

**ՊԱ̈ԼԱ̈ԺՈՐԵԼ**, *նբ. Տապալել, գետնին փռել։*

**ՊԱԼԱԽՆԱԼ**, *չբ. Ուժեղանալ։* Մուխ պալախցուցե, տան մեջ մըժ կոխե, առիքյ կըպեր ի տախտին։

**ՊԱ̈ԼԱ̈ՀՅԿԸՏԱԼ**, *չբ. Բոցավառվել։*

**ՊԱ̈ԼԱՆ-ՊԱ̈ԼԱՆ**, *մկ. Քուլա-քուլա։*

**ՊԱ̈ԼԱՆԱ ՊՈՑ**, *Բորբոքված բոց։*

**ՊԱԼԱՍԱՆ**, *գ. Բալասան, քաղցրաբույր ծաղիկ, որից դեղ են պատրաստում։*

**ՊԱ̈ԼԱ̈ՔՎՈՐՎԵԼ**, *չբ. Մաշը հիվանդանալ։* Էնըսկընա պա̈լա̈քվորվե, վոր ջանը պողպըճվե, տո̈ւս ի տըլվե։

**ՊԱԼԹԱ**, *գ. Կացին։*

**ՊԱ̈ԼՆԻՍ** *(նաև՝ Լիմ), գ. Բանալի։* Պէրնին պա̈լնիս տըրե, էկե նըստե։

**ՊԱ̈ԼՈՒԼ**, *գ. Խանձարուր։* Պա̈լուլ պինդ կապի, էրէխի ծեռ ու վոտ դո̈ւզ էլնի։

**ՊԱ̈Խ**, *Լիմ, գ. Բահ*

**ՊԱԽ**, *Բմ. Կճ.,* **ՊԱԽՍ**, *Հթ. գ. Պահք։*

**ՊԱԽ ՏԸՆԵԼ**, *Դարանամուտ լինել։*

**ՊԱԽԵԼ**, *նբ. Պահել, խնամել։* Ծախեց-պախեց, մըկա էլ տէր ունի։

**ՊԱԽԷԶ** *(նաև՝ Լիմ), գ. Ձմեռուկի, սեխի բանջարանոց։*

**ՊԱԽԷԶԻԿ**, *գ. Հայաբնակ փոքրիկ գյուղ Վանից դեպի արևելք։*

**ՊԱԽԷԶՊԱՆ**, *գ. Բանջարաբույծ, բոստանչի։* Պախէզպընի ախչիկ մէնակ քյո ուզածի պէս կէլնի խօրօտ։

**ՊԱԽԿԸՎԵԼ**, **ՊԱԽԿՅԸՎԵԼ**, *Հթ. չբ. Թաքնվել։*

**ՊԱԽԿԸՎՈՑԻԿ**, *գ. Մանկական խաղ։*

**ՊԱԽԿԸՎՈՒԿ**, *չբ. ած. Թաքնված, պահված։*

**ՊԱԽՄԸՏՈՑԻԿ**, *տե՛ս* **ՊԱԽԿԸՎՈՑԻԿ**։

**ՊԱԽՊԸԽԵԼ**, *նբ. Լավ թաքցնել, պահել։*

**ՊԱԽՍԱԿԵՐ**, *ած. Պահք չպահող։*

**ՊԱԽՍԱՎՈՒՐ**, *ած. Առանց կենդանական յուղի և մսի, պահքի օրվա ուտեստ։* Պախսավուր ճաշ եմ իփե։

**ՊԱԽՍԸ ԵՓԵԼ**, *փխբ. Մեկին լավ դաս տալ, լուրջ վնաս հասցնել։* Իմ մէր չըմեռնի, ես ինոր պախս իփեցի։

**ՊԱԽՎԸՏԵԼ**, *չբ. Թաքնվել։*

**ՊԱ̈Կ$^{3}$, ՊԱ̈Կ**, *գ. 1) Բակ։* Տուն մե, պա̈կ$^{յ}$՝ խավերաց։ *2) Լուսնի փայլուն շրջանակ։* Լուսնյակ պա̈կ ի պըռնե։

**ՊԱ̈ԿՅԱ̈ՔՐԵԼ**, *չբ. 1) կրակ կտրել, բարկանալ։* Էտ խոսքի վէրէն խէրըս պա̈կ$^{յ}$ա̈զրեց։ *2) Կրակը բորբոքել,* Թորվան կըրակ պա̈կ$^{յ}$ա̈զրել ի։

**ՊԱՀ$^{3}$ՎԵԼ**, *Վն. չբ. Թաքնվել։*

**ՊԱՂ**, *1) ած. Սառն։* Ճաշը պաղպաղ չի ուտվի։ *2) Նաև՝ Լիմ, գ. Սառույց։* Պաղ խալավ//խալվավ *(Վն.)։* Պաղի կտոր եմ պիրե *(Վն.)։* Ինոնց ճոռոթանից պաղ ի կախվե։

**ՊԱՂ ԱՌՆԵԼ, ՊԱՂ ԱՌՆԻԼ**, *Մրսել, սառչել։*

**ՊԱ̈ՂԱ̈ՌՃ, ՊԱ̈ՂԱՌՃ, ՊԱ̈ՂԱ̈ՐՃ**, *Լիմ, գ. Գաթա։* Պա̈ղա̈ռճի խորիս պակաս ի// էր *(Վն.)։* Պա̈ղա̈րճ խօրիզօվ ի *(Լիմ)։*

**ՊԱՂԵԼ**, *չբ. 1) Սառչել։* Կ$^{յ}$իշեր ճո̈ւր պաղիր էր *(Վն.)։ 2) Մեռնել։*

**ՊԱՂԼՈՒԼԱ**, *գ. Ջրհորդաններից կախված սառույց։*

**ՊԱՂՆԻՍ**, *գ. Բաղնիք։*

**ՊԱՂ ՏԸՆԵԼ**, *Թաքնվել՝ մեկին հսկելու, հետևելու համար։* Հըմէն սըհաթին էսօր վէրէն պաղ կըտընեն։

**ՊԱՂՈՒԼԱԿ** *գ. Կճ. Սառույց։* Պաղուլակ խալավ *(Կճ.)։*

**ՊԱՂՈՒԿ**, *չբ. Սառած։*

**ՊԱ̈ՄԲԱ̈ՍԱՆՔ$^{3}$ ԱՆԵԼ**, *Վն. Բամբասել։* Խարս ուր տալոչ պա̈մբա̈սանք$^{յ}$ կանէր *(Վն.)։*

**ՊԱ̈ՄԲԸՍԱՆՔ$^{3}$**, *Հթ. գ. Բամբասանք։*

**ՊԱ̈ՄԲԱ̈Կ**, *գ. Բամբակ։*

**ՊԱՅԹԱՐ**, *գ. Նալբանդ, պայտագործ։*

**ՊԱՅԽԸՎԵԼ**, *Վն. չբ. Թաքնվել։* Էրէխէն պայխըվիր էր թախտի տակ *(Վն.)։*

**ՊԱՅՀՎԵԼ**, *Վն. չբ. Թաքնվել։* Կ$^{յ}$ըրիկ$^{յ}$ո̈ր պայիվիր էր սա̈դըրի տակ *(Վն.)։*

**ՊԱՅՊԸՉՎԵԼ**, *չբ. Միմյանց տևական համբուրել։*

**ՊԱՅՍԵԼ**, *չբ. Պակասել։* Մուշթարին շատ ի պայսի։

**ՊԱՅՍՈՒԹԵՆ**, *գ. Պակասություն։*

**ՊԱ̈Ն**, *գ. 1) Բան, խոսք։* Տո̈ւ նըրան պա̈ն միա̈ ասե։ *2) Գործ։ 2) Հթ. Իրք, իրեր։*

* Պա̈ն պա̈նից էլե, ***Պատեհ առիթը արդեն ձեռքից բաց է թողնվել։***

* Պա̈նս պո̈ւրթ ի, ***Գործս շատ անհաջող է։***

* Պանի-կյո̈ռծի տեր ի տա̈րցե, ***Իր սեփական գործն ունի, պարապ մարդ չէ։***

* Պա̈ն տո̈ւս չի կյա̈, ***Այդ նախաձեռնությունից ոչինչ չի ստացվի։***

* Պա̈նի տըընել, ***Գործի դնել, հանձնարարություն տալ։***

* Պա̈նիտ կաց, ***Դու այդ գործին մի՛ խառնվիր, հեռո՛ւ մնա։***

* Պա̈նի մեչ պա̈ն կա, ***Առեղծվածային գաղտնիք կա այդտեղ։***

* Պա̈նի տեղ մի տընե, ***Կարևորություն մի՛ տար նրա խոսքին։***

* Կյընաա̈ պա̈նիտ, ***Դու քո գործով զբաղվի՛ր։***

* Տըղին պա̈նի տիա̈ր, խետըն արաա̈, ***Երեխային գործ հանձնարարի՛ր, բայց և նրա հետ արա՛։***

**ՊԱ̈ՆԱ̈Լ**, *նբ. Բանալ։*

**ՊԱ̈ՆԱ̈Կ**, *գ. Խաղողի թումբ։*

**ՊԱ̈ՆԱ̈ԿՈՒԵԼ**, *չբ. Հաստատվել, հիմնավորվել մի տեղում։* Ըսկունի պա̈նա̈կռի հօրենական տան մէչ, վոր ինոր տըընից խանող չէլնի։

**ՊԱ̈ՆԵԼ** *(նաև՝ Հթ. Կճ.), չբ. Աշխատել։* Օրական խինգ սըհա̈թ կըպա̈նենք *(Կճ.)*։ Էսօր քյա̈նի՞ պա̈նվոր կըպա̈նի ծեր տան վէրէն։ Մըշակ էլնի, պա̈նի, ամա խաց չուտի, շուն էլնի, խաչի, ամա վուսկոր չուզի։

**ՊԱ̈ՆԵՑՆԵԼ**, *նբ. Աշխատեցնել։*

**ՊԱ̈ՆՃԱՐ**, *գ. Բանջար։*

**ՊԱ̈ՆՃԱՐՊՈՒՍԻԿ**, *գ. 1) Գարնան սկզբին տեղացող մանր և անվնաս կարկուտ։ 2) Մեծ փաթիլներով անձրևախառն ձյուն։*

**ՊԱ̈ՆՈՑ**, *գ. Ավանդաբար հասած խոսք, հների խոսք։*

**ՊԱ̈ՆՋԸՐԽԱՆ** *գ. Բանջար հավաքելու շեղբ։*

**ՊԱ̈ՆՑՐԱԽԱՎԱՆ**, *ած. Գոռոզ, մեծամիտ։*

**ՊԱ̈ՆՑՐԱՆՑ**, *գ. Բարձր հաց, պատարագի ժամանակ եկեղեցում բաժանվող կլոր հացիկներ։*

**ՊԱ̈Շ**, *գ. Թարմ տերև։* Կյա̈րուն պա̈ցվե, ծառեր պա̈շ են տըվե *(Վն.)*։ *Ծան. – Ըստ Հր. Աճառյանի՝ «կանաչու զոխ»։*

**ՊԱՇԻՎ**, *Վն. գ. Մածնով, մածնաբրդոշով թեթև ընթրիք։*

**ՊԱ̈ՇԽԵԼ**, *նբ. 1) Բաժանել, բաշխել։ Ծան. – Քյահրեզնե-*

րի ջուրը բաշխում էին ճըր-պա̈շխները, որոնք ընտրվում էին ճաշքատերերի ժողովնե-րում: 2) Ներել:

**ՊԱ̈ՇԽԻՇ**, գ. Պարգև, ընծա:

**ՊԱՉ**, Վն. գ. Համբույր: Մէյ պաչ տու զիկ, սիրտըս խօմնա (Վն.):

**ՊԱՉՅԵԼ**, նբ. Համբուրել:

**ՊԱՊԱԾԻՆ**, գ. մնկ. Լուսին:

**ՊԱ̈ՊԱ̈ՃԻԿ**, գ. Կլոր, փափուկ, մեջը ծակ հաց:

**ՊԱՊԷՐ**, գ. Մեծ եղբայր:

**ՊԱՊԸՆՁՎԵԼ**, չբ. Պապանձ-վել:

**ՊԱՊԻԿ**, գ. 1) Հոր հայրը, պապ: Ծան. – Մոր հայրը կոչվում էր քյեռաղա (Վն.): 2) Ծերունի: 3) Մուրացկան:

**ՊԱՊԿԷ ՊԸԼՈՐ**, Կապտավուն մանր ողկույզներով բույս:

**ՊԱՊՈՒԿ**, գ. Միջատ:

**ՊԱՌԷԿ**, գ. 1) Թեքություն: 2) Կճ. Մեջք: Պառէկի վէրէն պառ-կեր ա (Կճ.):

**ՊԱՌԻԿՈՆ**, գ. Պատ, որմ:

**ՊԱՌԿՈՒԿ**, չբ. ած. Պառկած:

**ՊԱ̈ՌՆԱԼ**, նբ. Բեռնել: Քյիչ պա̈ռցի, շյոտ տա̈ռցի:

**ՊԱ̈ՌՑ**, գ. Բարձ:

**ՊԱՍ**, գ. Թանապուր: Պաս կըշի-նեն թանից, ծա̈վրից (Կճ.):

**ՊԱՍԱՀՐԵԼ**, չբ. Երկար պաս պահելուց հիվանդանալ:

**ՊԱՍՄԱ**, գ. Տպածո, չիթ:

**ՊԱՍՈՏ**, ած. Մսեղենի կամ յու-ղեղենի կպած պահոց կերա-կուր:

**ՊԱՍՊԷՐԱՆ**, ած. Հանցանքին ոչ մասնակից խեղճ մարդ:

**ՊԱՏ**, ած. Քաջ, կտրիճ, նաև բարձրահասակ և բարեձև:

**ՊԱՏԱԼՈՒՐ**, գ. Ջրաղացքա-րի չորս կողմը նստած ալյու-րի փոշի: Ճա̈ղցըպան պատալուր ժօղվեց, տըլվեց ախքըտին (Կճ.):

**ՊԱՏԷՊԱՏ ԸՆԿՆԵԼ**, Ուրա-նալ, հրաժարվել:

**ՊԱՏԸՃԵԼ**, Հթ. նբ.Պատժել:

**ՊԱՏԸՆՋԱՆ**, գ. Պոմիդոր:

**ՊԱՏԸՌՏԵԼ**, նբ. Պատառոտել:

**ՊԱՏԻ ՃԸՆՋՂՈՒԿ**, Վն. Ջղ-ջիկ: Պատի ճընջղույտեր մըթան մէչ կըթըռնեն (Վն.):

**ՊԱՏԻՃ**, Վն. Հթ. գ. Պատիժ:

**ՊԱՏԻՃ ՏԱԼ**, Վն. Պատժել:

**ՊԱՏԽԱՆ**, գ. Պատուհան: Մա-ղազի պատխան առանց շուշի կէլնի, համա փուշ-փուշ էրկըթով ծածկած, վոր կատու չըմըտնի մէչ:

**ՊԱՏԿԱՐ**, գ. Եզրակար:

**ՊԱՏ-ՊԱՏԱՌՈՒՔ ԱՆԵԼ**, Տու-նը հիմնովին մաքրել:

**ՊԱՏ-ՊԱՌԻԿՈՆ**, գ. Պատ, որմ:

**ՊԱՏՎԱՌՈՒՔ ԱՆԵԼ**, Տուն-տեղը հիմնովին մաքրել:

**ՊԱՏՐՈՒՍ**[1], գ. Պատվաստ:

**ՊԱՏՐՈՒՍ**[2], Բմ. գ. Պատրույգ:

**ՊԱՏՐՈՒՍԵԼ**, նբ. Պատվաստել:

**ՊԱՏՈՒԽԱՆ**, *գ. Սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պահարան (Կճ.)։* Պատուխանին ճըրաք կա (Կճ.)։

**ՊԱՏՈՒԽԱՍ**, *գ. Պատուհաս։*

**ՊԷՐԷԿ**[1], *գ. Բորակ, որ ստացվում է Վանա ծովակի ջրի գոլորշիացումից։*

**ՊԷՐԷԿ(Յ)**[2], *ած. Նվազ։* Պէրէյ ծառ, շըթիլ *(Վն.)։*

**ՊԷՐԷԿ ԼԸՎԸՁԻԿ**, *Շատ նիհար։*

**ՊԷՐԷԿ ՄԱՆԵԼ**, *Հյուծվել։* Պէրէկ կըմանի։

**ՊԱՐԷՅՄՈՒԹԵՆ**, *գ. Բարեկամություն։*

**ՊԷՐԵՎԱԳԻՐ**, *գ. Նամակ։*

**ՊԱՐՁԱՃԸՐԵԼ**, *Վն. նբ. Պարզաջրել։* Լըվէցկ (վըլէցկ) կըպարզաճըրէր։ Ամահ'տեր պարզաճըրեց *(Վն.)։*

**ՊԷՐԻ**, *ած. Բարի։*

* Պէրի պըտուղ չի, *Անբարոյական, սրիկայի մեկն է։*

**ՊԱՐՁՈՆ** *գ. Մածնի տոպրակ։* Մածուն քամինք պարզոնօվ *(Կճ.)։*

**ՊԷՐԿ**, *ած. Թեժ։* Պէրկ արեվ։

**ՊԷՐԿԱՆԱԼ**, *չբ. Բարկանալ։*

**ՊԷՐԿԷՆԹԱՆ, ՊԷՐԿԵՆԴԱՆՔՑ, ՊԷՐԿԷՆԹԱՆՔՑ**, *Հթ. գ. Բարիկենդան։*

**ՊԱՐՍԵՏ**, *գ. Քար նետող աղեղ, պարսատիկ։*

**ՊԱՐՏԱՊԱՆԱՑ**, *ած. Թիկնեղ, պարթև։*

**ՊԱՐՏԸԿԵԼ**, *նբ. Տեղավորել։*

**ՊԱՐՏՔՑԸՆՏԷՐ**, *գ. Պարտատեր։*

**ՊԷՐՈՒՆԱԿ**, *գ. Բարունակ, ծառանման խաղողի որթ, որ երկարացվում է և բարձրացվում։*

**ՊԷՑԽԱՑ**, *գ. Լավաշ։ Ծան. – Գյուղերում մեծ մասամբ լավաշ չէին թխում, այլ պապաճիկ, դողիկ և այլն, իսկ լավաշին անվանում էին* պէցխաց։

**ՊԱՔ**, *Բմ. Կճ. գ. Համբույր։* Մէ պաք տոէ *(Կճ.)։*

**ՊԱՔՑԵԼ**, *Վն. նբ. Համբուրել։* Մէր ուր տըղին պաք'եց *(Վն.)։*

**ՊԵ**, *նբ. Բե՛ր։* Մի պե տիսնամ։

**ՊԷՆԱԿԱԼ**, *Բմ. գ. Խցան։*

**ՊԵՏՔՑԱԿԱՆ**, *գ. Արտաքնոց։*

**ՊԵՐՔՑ ՈՒ ՊԷՐԻ**, *գ. Պաշար, ուտելիք։* Կիյտեր պիրին պերք'ն ու պէրին, էկան լըցվան մեջ արաբին։

**ՊԷԾ**, *Վն. գ. Կայծ։* Կըրայ պէծ կուտար *(Վն.)։*

**ՊԷԾԿԸԼՏԱԼ**, *չբ. Փայլփլել։*

**ՊԷՅՊԸԿՎԵԼ**, *չբ. Բեկբեկվել։*

**ՊԷՊԼԷՏԻԿ**, *գ. 1) Շատ կարճ հագուստ։ 2) Կտորեղենի կտորտանք։*

**ՊԷՊՈՏ**, *Հթ. ած. Պեպենոտ։* Խէրմէմ, պէպոտ իրեն հառս *(Հթ.)։*

**ՊԷՊՈՒԿՑ**, *Լիմ, ած. Բոբիկ։*

**ՊԷՏ**, *ած. Խոշոր:* Պէտ ք՚արըմ պեծ *(Վն.)*: Էտա աղ ծէ՞թ ի, թե՞ պէտ ի: *Ծան.* – Պէտ-*ը Վանում նշանակում է «խոշոր», բայց ոչ «շատ մեծ»:*

**ՊԷՏԸՆԱԼ**, *Վն. չբ. Մեծանալ:* Էսա տըղեն շատ ի պէտըցեւ: Էրեխէն շոտ պէտըցավ *(Վն.)*:

**ՊԷՏՆԱԼ**, *տե՛ս* **ՊԷՏԸՆԱԼ**:

**ՊԷՐԱՆ**, *գ. Բերան:*

* Պէրանըտ միծ ավրե, *Կեղտոտ խոսքեր մի՛ ասա, մի՛ հայհոյիր:*

* Պէրանըտ միծ պանա, *Իրավունք չունես խոսելու, գործին մի՛ խառնվիր:*

* Պէրանը պաց մընաց, *Սաստիկ զարմացավ:*

* Պէրնի պանածը, *Ցանկացածը:*

* Պէրնի կ՚ըղն իմցիծ, *Մտադրությունն իմացի՛ր:*

* Պէրնի ճոըրը կընաց, *Հիացավ:*

* Մէյ մէկու պէրան թըքիր են, *Իրար հետ պայմանավորվել են:*

* Կէսպէրան ասել, *Սրտանց, անկեղծորեն չասել:*

* Անէծք՚ էրկու պէրնէն թուր ի, համ դէս ի, համ դէն, *Անեծքը վնաս կհասցնի և՛ անիծողին, և՛ անիծվողին:*

* Պէրնիտ գյամ տիրը, *Խոսքերդ չափավորի՛ր:*

**ՊԷՐԱՆԱԿԱԼ**, *Կճ. Լիմ, գ. Խցան:* Կըժի պէրնըկալ տի *(Լիմ)*: Կըժի պէրան պէրնըկալ տըրին *(Կճ.)գ. Խցան:*

**ՊԷՐԱՆՊԱՑԻԿ**, *ած. Շաղակրատ, անգաղտնապահ:*

**ՊԷՐԱՆՔՍՎԵՐ**, *մկ. Բերանքսիվայր, փորի վրա պառկած:*

**ՊԷՐՆԸԿԱԼ**, *տե՛ս* **ՊԷՐԱՆԱԿԱԼ**:

**ՊԷՔՕԼ**, *գ. Ցորենի խուրձ:*

* Պէքօլ անել, *Խուրձ կապել:*

**ՊԷՕԼԸՐԵԼ**, *չբ. Բորբոքվել, բոցավառվել:*

**ՊԷՕՐՊԸՆՔԵԼ**, *նբ. Բորբոքել:*

**ՊԸՔԸՐՈՒԿ**[3], *Հթ. գ. Պզուկ:* Իրես պըզըրուկ՚ ի թափե *(Հթ.)*:

**ՊԸՔՈՒԿ**, *Վն. գ. Գարեկ:* Կոպի վէրէն պըզուկ ի տո՛ւս իկե *(Վն.)*:

**ՊԸԹԱԼ**, *չբ. 1) Կերակուրը եռալ: 2) Հասուն միրգը թափվել: 3) փխբ. Հանկարծամահ լինել:*

**ՊԸԼԵԼ**, *չբ. Փուլ գալ, քանդվել:* Պատ պըլավ *(Վն.)*:

**ՊԸԼԸՆԴՐԷԿ**, *գ. Միջնամատի հարված բթամատի օգնությամբ:* Մէյ պըլընդրէկ վոր զընի, կ՚եոտին կ՚ինի:

**ՊԸԼԸՆԿ**, *գ. Քուրձ, լաթի կտոր:*

**ՊԸԼԸՆԿԱԾ**, *ած. Վատ հագնված, խեղճ:*

**ՊԸԼԸՃԱԼ**, *չբ. Աչքին զոռ տալով անթարթ նայել:*

**ՊԸԼԸՍԹՐԱԼ**, *չբ. 1) Փայլել, պսպղալ: 2) Ակնդետ նայել:*

**ՊԸԼԻԿ**, *գ. Մանր պղնձադրամ, որ հավասար է մեկ հինգերորդական կոպեկի:* Խարիր ծո՛ւն տա՛ռցավ մէյ պըլիկ, վայ ինձմե հետո ժամ շինողին: *Ծան.* – *Եկեղեցու շաղախը պատրաստվում էր ձվի սպիտակուցով:*

**ՊԸԼՈՐ**, *գ. Ամորձիք:*

**ՊԸԼՊԸԼՈՒՆ**, *ած. Փայլուն:*

**ՊԸԼՈՒԿ-ՊԸԼՊԸԼՈՒԿ**, *ած. Քարուքանդ եղած, ավերակ:*

**ՊԸԼՕՃԻԿ**, *հմ. գ. Երիկամ:*

**ՊԸԽՔ³ՎԵԼ**, *չբ. Գոեհկորեն շատ ուտել:* Դե աա՛ռ ու պըխք'վիա՛ր:

**ՊԸԾԱՌ**, *հմ. գ. Կայծ:*

**ՊԸԿԼՕԾ**, *ած. Խոշոր աչք ունեցող:*

**ՊԸՂԻՆՁ**, *գ. 1) Պղնձե տարբեր չափերի աման: 2) հմ. Պղնձե կաթսա:*

**ՊԸՂԸՆՁԻ ՏԱԿ**, *Կաթսայի մեջ մնացած կերակրի տականք:* Ախչիկ պըղընձի տակ կէրավ *(Կճ.)*:

**ՊԸՂՈՂ, ՊԸՂՈՒՂ**, *գ. Յուղի փոքր աման:*

**ՊԸՃԵՂ**, *գ. Կճղակ:*

**ՊԸՃԻԿ**, *1) գ. Նորածին հորթ: 2) ած. Կարճահասակ, փոքրամարմին:*

**ՊԸՃԿԵԼ**, *նբ. Պոկել, փետել, փրցնել:*

**ՊԸՃԿԸՎԵԼ**, *չբ. 1) Մաշկվել, մաշկը պոկվել: 2) Շատ ուտել:*

**ՊԸՃԿՈՐԵԼ**, *նբ. Վերքը, քիթը փորել:*

**ՊԸՃԿՈՐ**, *գ. Աչքի հիվանդություն, կոնյուկտիվիտ:*

**ՊԸՃՂԱՆԻ**, *ած. Գյուղացիների սահմանած չափի միավոր:* Մեկ պճղանի, էրկու պճղանի խող:

**ՊԸՃՊԸՃԱԼ**, *չբ. Փփվող կերակուրը կամ խմորվող գինին պղպջակներով եռալ:*

**ՊԸՃՊԸՃԱՆ**, *ած. Պճպճացող:* Պըճպըճան կ'ինի, պըճպըճան մածուն:

**ՊԸՃՊԸՃՈՒՆ**, *ած. Պճպճան:*

**ՊԸՃՕ**, *1) գ. Նորածին հորթ: 2) ած. Կարճահասակ, փոքրամարմին:*

**ՊԸՄՊԸԼՈՏ**, *ած. Խլնքոտ:*

**ՊԸՄՊՈՒԼ**, *գ. 1) Խլինք: 2) Լորձ:* Ծիու պէրնից պըմպուլ կըթա՛փէր *(Վն.)*:

**ՊԸՆԱԴԱ**, *գ. Կալի ժամանակ եզների բերանը կապելու հարմարանք:*

**ՊԸՆԴՕ՛ԻԿ, ՊԸՆԴՕ՛ԻԿ³**, *հմ. գ. Կաղին:* Պընդո՛ւկ չամչօվ խամեղ կուտվի *(Վն.)*:

**ՊԸՆԿ**, *գ. Քուրջ:*

**ՊԸՆՈԹՔ**, *գ. Բնույթ, բնավորություն:*

**ՊԸՆՁԸԼՈՏ**, *Կճատ քթով:* Քի՛ո լաճ պընչըլոտ ի *(Վն.)*:

**ՊԸՇԱԼ**, *չբ. Աչքերը հառած նայել։*

**ՊԸՇՏԵԼ**, *նբ. Հանդիմանել, նախատել։* Նըհանփ տեղ պըշտիցիր, էն աղէյ մարթ ի *(Վն.)*։

**ՊԸՊՈՒԷՋ**, *ած. Մազախռիվ։*

**ՊԸՊՈՒԿ**, *Կճ. գ. Փետուր։* Կառկառի պըպուկներ սեվ ա *(Կճ.)*։

**ՊԸՌԱԿ-ՊԸՌԱԿ**, *մկ. Աչքերը զարմացած ու անթարթ հառած, ակնապիշ։*

**ՊԸՌԱՏ**, *ած. Կիսատ։*

**ՊԸՌԵԼ**, *Վն. նբ. Բռնել։*

**ՊԸՌԹՊԸՌԹԱԼ**, *չբ. Պոռթկալով ծիծաղել։*

**ՊԸՌԿԱՊԸՌՈՒԿ**, *ած. Լեփ-լեցուն։*

**ՊԸՌԿՕՇ**, *ած. Շրթունքը կախ, հաստաշուրթ։*

**ՊԸՌԾՈՏԵԼ**, *նբ. Պոկոտել։*

**ՊԸՌՆԱՎՈՐ**, *1) գ. Բանտարկյալ։ 2) գ. ած. Բռնակալ։*

**ՊԸՌՆԱՏՈՒՆ**, *գ. Բանտ։*

**ՊԸՌՆՈՒԿ**, *կբ. ած. 1) Բռնված։ 2) Խաղի մեջ կորված, տարված։* Սուրենը պըռնուկ ի։

**ՊԸՌՉՊԸՌՉ**, *գ. Ջերմորեն համբուրելու բնաձայն։*

**ՊԸՌՎԱԾԿ**, *գ. Թթու։* Փառփառի թուրշի//պըռվածկ *(Վն.)*։

**ՊԸՌՏԵԼ** *(նաև՝ Լիմ)*, *նբ. Անշնորհք կերպով քսել, կեղտոտել։* Ճիժ մածուն պըռտեց իրես *(Լիմ)*։

**ՊԸՌՏԸԿՎԵԼ**, *չբ. Փորը գետնին քսել։* Կըպըռտըկվի վէր կյերէմնի։

**ՊԸՌՏԸՎԵԼ**, *կբ. Քսվել, շփվել։*

**ՊԸՌՈՒ**, *Վն. գ. Դժվար ջարդվող ընկույզ, կաղին և այլն։* Պըռու// քյիծեփ գյոզ *(Վն.)*։

**ՊԸՌՈՒԿ** *(նաև՝ Կճ. Լիմ)*, **ՊԸՌՈՒԿ**[3], *Հթ. գ. Շուրթ։* Էրեխի վիրի պըռուկ ուռիր էր *(Վն.)*։ Պըռուկ ուռեր ա *(Կճ.)*։

**ՊԸՍԱԼ**, *չբ. Փայլել։* Աչքերը կըպըսան մըթան մեչ։

**ՊԸՍԱԿՈՒԿ**, *նբ. ած. Ամուսնացած։*

**ՊԸՍՄԱՄԱ**, *գ. Հորեղբոր կին։*

**ՊԸՍԱՑՎԵԼ**, *չբ. Ամուսնանալ։* Զում խելացին պըսայվի, ծըռու տըղէյները կըխասնեն։

**ՊԸՍՊԵՂ**, *գ. Աչքի բիբ։*

**ՊԸՍՊԸՂԱԼ**, *Վն. չբ. Փայլփլել։* Արեվու (արիվու, արեվի) տակ մատնըկի քյար կըպըսպըղէր *(Վն.)*։

**ՊԸՍՏԻԿ(Ց)**, *Վն.*, **ՊԸՍՏԻԿ**[3], *Հթ. ած. Փոքր։* Պըստիյ//ծէթիկ քյար։ Թակավորի պըստիյ լաճ *(Վն.)*։

**ՊԸՏԸՏԵԼ**, *Վն. չբ. Ջբոսնել։* Կընացիր էր տնաշտ, կըպըտըտէր *(Վն.)*։

**ՊԸՏԸՏԼԻԿ(Ց)**, *ած. Շատ փոքր։* Պըտըտլիկ էրեխէքյ *(Վն.)*։

**ՊԸՏԸՏՈՒՆ**, *ած. Բազմիցս պտտվող։* Պըտտոուն թաքյառ *(անիվ)*։

**ՊԸՏԸՏՈՒՐ** *(նաև՝ Բմ. Կճ.)*, **ՊԸՏԸՏՈՐ**, *Հթ. գ. Ոչխարի, այծի կղկղանք*: Վոչխըրի, իծու պըտըտուր մանդըր կէլնի *(Վն.)*: Օխչըրի պըտըրտուր *(Կճ.)*:

**ՊԸՏԼԻԿ**, *ած. Փոքրիկ*:

**ՊԸՏԿԵԼ**, *չբ. 1) Ծաղիկը կոկոնել: 2) Բողբոջել*:

**ՊԸՏԿԸՎԵԼ**, *չբ. Արագ ուտել*:

**ՊԸՏԿՈՒՄԷՐ**, *գ. Խաշխաշի նման կարմիր ծաղիկ*:

**ՊԸՏՂԵԼ**, *չբ. Ծնել*:

**ՊԸՏՂԸՏԵԼ**, *նբ. Ծաղիկների թերթերը պոկոտել*:

**ՊԸՏՂԻ**, *գ. Արմտիքի և կաթնեղենի տուրք վանքերին*:

**ՊԸՏՈՏ**, *գ. Պտույտ*:

**ՊԸՏՊԸՏԱԼ**, *չբ. Կամացուկ խոսել*:

**ՊԸՏՊԸՏՈՒՐԻԿ**, *ած. Խատուտիկ*:

**ՊԸՏՐԷ**, *ած. 1) Փոքր: 2) փխբ. Դատարկ, հիմար*: Պըտրէ կ'ըլօխ էլնի, խաց վաստըկող էլնի *(սավում է տղեղ փեսայի մասին)*:

**ՊԸՏՈՒԿ**, *գ. 1) Պտուկ: 2) Վայրի բույս: 3) Կոկոն*:

**ՊԸՏՈՒՂ ԱՆԵԼ**, *Վն. Այգու մնացորդ խաղողը քաղել*:

**ՊԸՏՕՏԵԼ**, *չբ. 1) Զբոսնել*: Դ՛ւշտ կըպըտօտեմ *(Կճ.)*: *2) Որոնել*: Շատ պըտօտա, չըկըրնդա *(Կճ.)*:

**ՊԸՐԱԿ**, *գ. Անտառակ*: Քըո սէրն ինգ'է մեչ իմ սըրտի պըրակին *(այսինքն՝ «այրվում եմ»)*:

**ՊԸՐԻԿ-ՊԸՐԻԿ**, *մկ. Ճարպկորեն, աշխուժորեն*:

**ՊԸՐԻՇԱԿ**, *ած. Ավերակ*:

* Պըրով-պրիշակ էլնես, *Անեծք. հիմնահատակ կործանվես*:

**ՊԸՐԾՈՒԿ**, *չբ. ած. Վերջացած*:

**ՊԸՐՑՈՒՏ**, *գ. Բրուտ*:

**ՊԸՐՊԸՏԱԼ**, *չբ. Քիչումիչ շարժվել, խլվլալ*:

**ՊԸՐՊԸՏԵԼ**, *չբ. Տակնուվրա անելով որոնել*: Շատ պըրպըտեց, ամա// համա պան չըկըրնդավ *(Վն.)*:

**ՊԸՐՏԵԼ**, *նբ. Բրդել*: Ուտողն ի՞նչ կ'իտի. պըրտողը կ'իտի:

**ՊԸՐՏՈՒՃ**, *1) գ. Բրդուճ*: Քյանի՞ պըրտուճ կէրար: *2) փխբ. Փոքր*: Էս պըրտուճ թըխթի մեչ *(այսինքն՝ նամակում)*:

**ՊԸՔԵԼ**, *չբ. Բուք անել*:

**ՊԸՔԼՈՋ**, *ած. Խարխուլ*: Պըքլոզ տուն:

**ՊԸՔՌԵԼ**, *չբ. Շատ ուտելուց ուռչել, տկռել*:

**ՊԸՔՎԵԼ**, *չբ. Չափից ավելի շատ ուտել*:

**ՊԻԹՈՒՆ**, *գ. Բոլորը*: Վոր հաջի տնռնալ Երուսաղեմ էրթալ-կ'ալով էլներ, Համադանա էշերը մըկա պիթուն հաջի կէլնեին:

**ՊԻԺ**, *գ. Մանուկներ*:

**ՊԻԾԷԿ**, *գ. Մսի որդ*: Միսը պաց մընաց, ճանճեր վէրէն ծէթուկ տըրին:

**ՊԻՃ**, *Հթ. Բմ. Լիմ, գ. Գարեկ:* Աչքʸի վըրէն պիճ ի էլե *(Հթ.)*: Աճկի վըրա պիճ իլե *(Լիմ)*:

**ՊԻՃԻԿ**, *1) գ. Նորածին հորթ: 2) ած. Կարճահասակ, փոքրամարմին:*

**ՊԻՆԴ**, *գ. Օրորոցի կապ:* Էրկնուց անանակ *(=ծիածան)* քʸո պընդին թել:

**ՊԻՆԹԱՆ**, *գ. Պինդ թան:*

**ՊԻՆՁ**, *գ. Քթածակ:*

**ՊԻՊԵՂ**, *գ. Ջուռնայի ծայրի եղեգ:*

**ՊԻՊԵՌ** *(նաև՝ Հթ. Կճ.), գ. Մեխ:* Չüքʸուչöվ պիպեռ պիպռեց պատին *(Վն.)*: Պիպեռ զüրկեց պատ *(Կճ.)*: Էտա պիպեռ պիպռիü պատ *(Հթ.)*:

**ՊԻՊԷՌԵԼ**, *Բմ. նբ. Մեխել:*

**ՊԻՊԷՋՔ**, *ած. Ճարպիկ (տղա):*

**ՊԻՊԷՋՔԱՆԱԼ**, *չբ. Աքլորանալ, գրգռվել:*

**ՊԻՊԸՌԵԼ**, *Հթ. նբ. Մեխել:*

**ՊԻՊԻԿ**, *գ. Բիբ:*

**ՊԻՊՌԵԼ**, *նբ. Մեխել:* Տախտայներ պիպռեց մէյմէկու *(Վն.)*:

**ՊԻՎՈԿ**, *գ. Մանր պալարներով քաղցր բույս, որ ուտում են հատկապես հովիվները:*

**ՊԻՎՌԵԼ**, *Լիմ, նբ. Մեխել:* Տախտըյներ պիվռի իրարու *(Լիմ)*:

**ՊԻՏՈՒ**, *ած. Պիտանի:*

**ՊԻՏՐՈՍ**, *գ. Պետրոս:*

**ՊԻՐԵԼ**, *նբ. Բերել:*

**ՊՈՁ**[1], *գ. Մեզ:* Ծըժու, շան, ձ'իու պոզ *(Կճ.)*:

**ՊՈՁ**[2], *գ. 1) Ջրամանի խողովակաձև երկրորդ բերան: 2) Եղջյուր:*

**ՊՈՁԵԼ**, *Կճ. չբ. Միզել:*

**ՊՈՁԻԿ**, *գ. 1) Պոզ ունեցող ջրաման: 2) Թեյաման:*

**ՊՈՁԿԱԼ**, *գ. Պոզավոր ջրամանի խցան:*

**ՊÖԹ**, *գ. Բութ մատ:* Üխüնէս ուր պüթ տüնկօվ կըտրիր էր *(Վն.)*:

**Պ$^{3}$ՈԽԿ**, *գ. Բողկ:*

**ՊՈԾԱՌ**, *ած. Պայծառ:*

**ՊՈՆ, Պ$^{3}$ÖՆ**, *Լիմ, գ. Բույն:*

**ՊՈՆԱՎԵՐ**, *ած. Բնավեր, ավերակ:* Ինչի խüմüր էսա խայեր ըսըսկնü պոնավեր էլեր կէրթüն:

**ՊՈՆԿԱԼ**, *գ. Բնկալ, բնի մեջ թողնված ձու, որի վրա նստում է ածան հավը:*

**ՊՈՉԻԿ**, *գ. 1) Փոքրիկ պոչ: 2) Կանանց հյուսված ծամերի ամեն մի ճյուղը, սովորաբար մեկ և երկու պոչիկ: 3) Հետույքի վերևի մասը, որտեղ նախամարդը պոչ է ունեցել:* Չիմ կանա նըստի, վոր նըստիմ, պոչիկըս կըցավա:

**ՊՈՉՈՎ ՍՕԼ**, *Հետևի մասը եռանկյունաձև երկարած պոչով կոշիկ:*

**ՊՈՌԹԸԿԵԼ**, *նբ. Պատռել (սովորաբար հագուստը մի բանի դեմ առնելով):*

**ՊՈՌՏ**, *գ. Սերունդ։*

**ՊՈՐԵԼ**, *նբ. Փորել։*

**ՊՈՐՊԸՐԵԼ**, *նբ. Փորփրել։*

**ՊՈՐՈՒԿ**, *նբ. 1) Փորված։ 2) Փորագրված։*

**ՊՈՑ** *(նաև՝ Լիմ), գ. Բոց։*

**ՊՕՒ**, *գ. Բու։*

**ՊՈՒԼԻԿ**, *գ. 1) Յուղի փոքր աման։ 2) Մանր դրամ հավաքելու աման։*

**ՊՕՒԼՕՐ**, *1) ած. Կլոր։ 2) մկ. Շուրջբոլոր։*

**ՊՕՒԼՕՐՎԵԼ**, *չբ. Լրանալ, բոլորել։* Պօ̈ւլօ̈րվավ վէր տըսնըլխինգին։

**ՊՈՒԼՈՒԼԻԿ**, *գ. Փոքրիկ ուլունք։*

**ՊՈՒԽ**, *գ. Ծոպ։*

**ՊՈՒԾ**, *գ. 1) Շեղջ, կույտ։ 2) Հավասար բաժանելու համար ցորենի, շաքարի, մրգի, ճավարի և այլնի հավասարաչափ դիզված կույտ։ 3) Պղնձեղեն ամանի վրա գոյացած փոսիկ։*

**ՊՈՒԾԱԽ, ՊՈՒԾԱ̈Խ**, *Հթ. գ. Անկյուն։* Ավել տըըրուկ էր տան պուճախ *(Վն.)*։

**ՊՈՒԾՊՈՒԾՈՏ**, *ած. 1) Ծաղկատար։ 2) Դեմքի վրա փոսիկներ գոյացած։*

**ՊՈՒԾՈՒԾԱԿ** *(նաև՝ Բմ. Կճ.), ՊՈՒՃՈՒՃԱԿ[3], Հթ. գ. Ծոծրակ։* Քյո պուճուճակ կըտխնաս, Երուսաղեմ չես տիսնա։ Ա̈խա̈նէս ուր պուճուճակ քյորեց *(Վն.)*։ Պուճուճակըս յես քորի *(Կճ.)*։

**Պ[3]ՈՒՇ**, *ած. Կարճատես։*

**ՊՈՒՊՈԹ**, *գ. Ֆեսի ծայրը, որտեղից դուրս է գալիս ծոպը պահող թելը։*

**ՊՈՒՊՈՒ[1]**, *Լիմ, գ. Հոպոպ։* Պուպուն կըլխին սանդըր ունի *(Կճ.)*։

**ՊՈՒՊՈՒ[2]**, *ած. Մեն-մենակ։* Ռէս Ավետենց տընից իըմէն մեռան, Մարկոս աղան պուպու ի մընա̈ցե։

**ՊՈՒՊՈՒՁԵԼ** *չբ. 1) Կռանալ։ 2) (նաև՝ Հթ.) Պպզել։* Թօրվան կող պուպուզիր իմ, տայնամ *(Հթ.)*։ Պուպուզիր էր մօ կըրակին, վոր տաhէնա *(Վն.)*։

**ՊՈՒՊՈՒՇ**, *գ. 1) Թռչունների գլխի փետուրների փունջ։* Պուպուի կ'ըլխուն պուպուշ կա *(Վն.)*։ *2) Աղջիկների սանրվածքի տեսակ, որ գրական լեզվում կոչվում է* հերապարծ։

**ՊՈՒՌ[1]**, *Կճ. գ. Հնձելիս մանգաղի բերանից ընկած խոտի, ցորենի շերտ։*

**ՊՈՒՌ[2]**, *գ. 1) Ձեռքի ափ։ 2) Դանակի, դաշույնի, թրի կոթ։*

**ՊՕՒՍ**, *գ. Բույս։*

**ՊՕՒՍՆԵԼ**, *չբ. Բուսնել։*

**ՊՕՒՎ**, *Կճ. գ. Բու։*

**ՊՈՒՏ** *(նաև՝ Կճ.), գ. Կաթիլ։* Մէյ պուտ//պուտըմ ճռ̈իր տու խըմեմ *(Վն.)*։ Մէյ պուտ եղ մէնակ թա̈փվավ։ Պուտըմ արուն էկավ (իրե) *(Վն.)*։ Մէ պուտ ճռ̈իր, մէ պուտ արուն *(Կճ.)*։

**ՊՈՒՏՊՈՒՏ**, *ած. Խայտաբղետ, կաթիլանման նախշերով (կտորեղեն, չիթ)։* Ախչիկներն էկան ծամերը պուպուշ, խակյին պուտպուտ չիթ։

**ՊՈՒՏՈՒԿ, ՊՈՒՏՈՒԿ**[3], *Հթ. Լիմ, գ. Կավե աման, կճուճ։* Էժան միսը պուտուկն ի ծակե։ Պուտուկ կասի՝ տակըս լիքը ոսկի ի, շիրեփ կասի՝ ես ո՞ւստ կուկյա̈մ։ Պուտկօվ փիլա̈ֆ իփիցի *(Հթ.)*։ Պուտկի մէջ ճաշ կիփեն *(Լիմ)*։

**ՊՈՒՐԱԿ**, *գ. Մանելու համար նախատեսված բրդի, բամբակի փաթույթ։*

**ՊՈ̈ՒՐԹ**, *գ. Բուրդ։* Պո̈ւրթը կըտրե, ինգյե կյա̈ռներ *(այսինքն՝ պետությունը հարկը ամբողջապես տարել է, հիմա նոր հարկեր է դնում)*։

**ՊՈ̈ՒՐՊՈ̈Ս**, *գ. Բորբոս։*

**ՊՈ̈ՒՐՊՈ̈ՍՆԵԼ**, *չբ. Բորբոսներ։* Պո̈ւրպո̈սնած ժաժիկ։

**ՊՈՒՐՊՈՒՔ**, *գ. Թոնրի կրակը բորբոքող օդ, որ մտնում է թոնրի ակից։*

**ՊՈՒՐՎԱՌ**, *գ. Բուրվառ։*

**ՊՈՒՐՈՒՃԻԿ**, *գ. Փոսիկներ ու անցքեր պատերի մեջ, որտեղ թռչունները բույն են հյուսում։*

**ՊՈ̈ՒՔ**, *գ. Բուք։*

**ՊՕԼԱՏ**, *ած. 1) (նաև՝ Լիմ) Անպոչ հավ։ 2) Ընդհանրապես պոչը կտրած հավ, շուն, գդալ և այլն։*

**ՊՕԼՕՃԻԿ**, *գ. Երիկամունք։*

**ՊՕԼՕՆԴՐԷԶ**, *գ. Բարձր բոց։*

**ՊՕՂՕՃԱԿ**, *գ. 1) Պղպջակ։ 2) Մանր պալար, ուռուցք։*

**ՊՕՂՕՃԿԵԼ**, *չբ. Մարմնի վրա պղպջականձև մանր վերքեր առաջանալ։*

**ՊՕՊՕԶ**, *գ. Սրածայր գլխարկ (հոգևորականի, զինվորականի)։*

**ՊՕՊՕԶԱՆ**, *ած. Շատ մեծ։*

**ՊՕՊՕԼՕԶ**, *1) գ. Բարձր դեզ, կույտ։ 2) ած. Լեցուն։*

**ՊՕ̈ՎԵԼ**, *Վն. նբ. Բովել։* Իմ տատիյ ցորեն ու կանափ պօ̈վեց, աղանձ շինեց *(Վն.)*։

# Ջ

**ՋԱ̈ԲԱ̈**, *գ. 1) Անվճար բաշխում։ 2) Հանցանքի ներում։*

**ՋԱ̈ԲԱ̈ՔԱ̈ՆԱ̈**, *գ. Զինատուն, արսենալ։* Սարուխանենց տուն ջա̈բա̈խա̈նա̈ ի *(այսինքն՝ բոլորն էլ զենք ունեն)*։

**ՋԱ̈ԴՎԱԼ**, *գ. Աղյուսակ։*

**ՋԱ̈ԴՈՒ**, *գ. Կախարդ պառավ, վհուկ։*

**ՋԱ̈ՋԱ̈**, *գ. 1) Պատիժ, տույժ։ 2) Պատուհաս։*

**ՋԸՋԸՄԸԹ**, *գ. Ամբոխ։*

**ՋԸՋՎԸ**, *գ. Սրճեփ։* Ղայֆէն ջըզվով կիփին՝ մարմանդ կըրակի վէրէն։

**ՋԸԼԸԴ**, *գ. Դահիճ։* Ջըլըդն էկավ թուրը ձեռին։

**ՋԱԽ**, *գ. Որպես վառելիք օգտագործվող չորացած ճյուղեր։*

**ՋԱՀԷԼ**, *ած. Երիտասարդ։* Ջահել-ջիվան խողը մըտավ *(այսինքն՝ շատ երիտասարդ հասակում մահացավ)։*

**ՋԱՀԷԼ-ՋԻՎԱՆ**, *ած. Երիտասարդ։*

**ՋԸՂԴԸ**, *գ. Մայրուղի, խճուղի։* Վէր ջըղդին կայնուկ ին *(Վն.)։* Մխկ՚ավու ջըղդեն շուկից չում Ախկ՚ա կ՚եղը կըխասնի։

**Ջ՛ԸՂՑԻ ՀԻՏԵՎ-ԸՌԷՉ**, *Բմ. գ. Ջրաղացքարի շուրջբոլորը նստած ալյուր։*

**ՋԸՄ**, *1) Ապակի։ 2) Հեքիաթային կախարդական բաժակ։ 3) Թագավոր։ 4) Ոսկերչական խանութի ապակեփեղկ սնդուկ, ցուցափեղկ՝ ոսկեղեն ցուցադրելու համար։ 5) Սարաֆի (լումայափոխ) ապակեպատ արկղ՝ դրամ ցուցադրելու համար։*

**ՋԸՄԸՍՈՂ**, *գ. Սայլի սռնիին զուգահեռ փայտ։*

**ՋԸՄԲԸՋ**, *ած. 1) Ձեռնածու։ 2) փխբ. Խաբեբա։*

**ՋԸՄԻ**, *գ. Մզկիթ։* Վընըն ք՚աղքի մէչ յոթ ջըմի կա։

**ՋԸՄԻԸԹ**, *գ. Հասարակություն։*

**ՋԸՄՈՎ**, *ած. Ապակեպատ։* Էլավ նըստավ ջըմով ք՚օշկը։

**ՋԱՄՈՒԿ**, *ած. Զույգ։*

**ՋԸՑՆԸՄ**, *գ. Դժոխք։* Ջըյնըմ էրթըս *(անեծք)։*

**ՋԸՑՆԸՄ ԴԱՐԱՍԻ**, *Դժոխքի հովիտ։*

**ՋԸՑՆՎԵԼ**, *չբ. Գնալ կորչել։* Դո՞ր ի ջըյնըրվել։

**ՋԱՆ**, *գ. 1) Հոգի։ 2) Մարմին։* Ջան ի, խո պատընջան չի՞։ *3) Կյանք։ 4) Կենդանություն։ 5) Ջերմ և սիրալիր դիմելու արտահայտություն։* Ջան ասենք, ջան լըսենք, չօռ չասենք, վոր չօռ լըսենք։

**ՋԸՆԸՎԸՐ** *1) գ. Գազան։ 2) փխբ. ած. Հսկա, աժդահա։* Ջընըվըր մարթ ի։

**ՋԸՆԴԸԿ**, *գ. 1) Մարմին։ 2) Դիակ։*

**ՋԸՆԴԸՐՄԸ**, *գ. Ժանդարմ, գյուղական հեծյալ ոստիկան։*

**ՋԱՆԸՄ**, *գ. Հոգյակս։*

**ՋԸՆԼԱԹ**, *հթ. գ. Դահիճ։*

**ՋԱՆՑԱՂԻ**, *գ. 1) Անասունի մարմնի յուղ։ 2) Ցուղոտ միս։*

**ՋԸՆՋԸԼ**, *ած. Ծույլ։*

**ՋԸՆՋԱԼՈՒԹԵՆ**, *գ. Ծուլություն։*

**ՋԱՆՍԸՋ**, *ած. Վատուժ, թուլակազմ։*

**ՋԱ̈ՆՖԱ̈Ս**, *գ. Սնդուս։*

**ՋԱՆ ՖԻԴԱՅԻ**, *գ. Հայ հայդուկ։*

**ՋԱ̈ՇՏԱՆ ՔՈՒՌԱԿ**, *Իշու կամ ձիու՝ հեծնելու հասած քուռակ։ Ծան. – Հեքիաթներում հաճախ ասվում է՝* Ջա̈շտան քուռակ տակս ի։

**ՋԱ̈ՌԱ̈Խ**, *գ. Վիրաբույժ։*

**ՋԱ̈ՌՄԱ̈**, *գ. Տույժ, տուգանք։*

**ՋԱ̈ՌՋԱ̈Ռ**, *գ. Ցորեն կալսելու ատամնավոր անիվ։*

**ՋԱ̈ՍԱ̈ՐԱ̈Թ**, *գ. Համարձակություն։*

**ՋԱՎԱՀԻՐ**, *գ. Գոհար, թանկագին քար։*

**ՋԵՂ**, *Բմ. գ. Ջիղ։*

**ՋԵՐԳԱ**, *գ. Դասավորություն, շարք։*

**ՋԷԲԿԻՐ**, *ած. Գրպանահատ։*

**ՋԷԼՕ**, *գ. 1) Լայն շալվար։* Ջէլօյի շըլվարըս էլ խանիցին, պա̈ն իրիշկացին *(ստուգեցին)։ 2) Ասորի գյուղացի։*

**ՋԷՀԷՋ**, *գ. Օժիտ։* Ախչկան իտուր մարթու՝ ճո̈չ ջէհէզօվ *(Վն.)։*

**ՋԷՅՐԱՆ**, *գ. Եղջերու, վիթ։*

**ՋԷՋԻՄ**, *գ. 1) Կարպետանման բրդե գործվածք։ 2) Ծածկոց։ 3) Բմ. Կապերտ։*

**ՋԸԲԸԼՅԱԹ**, *գ. Ցեղ, տոհմ։*

**ՋԸՋԴԱՆ**, *գ. Դրամապանակ։*

**ՋԸՋՄԱ**, *գ. Երկարաճիտ կոշիկ։*

**ՋԸՋԼԸՂ**, *Բմ. գ. Հալած դմակի կտորներ։*

**ՋԸԼԲՈՒՐ**, *գ. 1) Վռիկ, առանց միսի կերակուր։ 2) Արգանակ։*

**ՋԸԽԷՋ**, *Կճ. գ. Գիծ* Կէդին ջըխէզ քա̈շեց (Կճ.)։

**ՋԸԽՇԸՆԱԼ**, *Լիմ, չբ. 1) Իշխել։ 2) Համարձակվել։*

**ՋԸԽՏԱՆՑ**, *մկ. Երկուսով, միասին։*

**ՋԸԽՏԵԼ**, *նբ. Զույգ դարձնել։*

**ՋԸՀԷՋ**, *Հթ. Կճ. Լիմ, գ. Օժիտ։* Ախչըկան կարքէցին, ջըհէզ տըվին *(Կճ.)։*

**ՋԸՂԱ**, *գ. Հարսանիքի փեսայի գլխին խրված փետուր։ Ծան. – Փեսան կոչվում էր թագ(ա)վոր, որի գլխին թագավորական նշան պիտի լիներ։*

**ՋԸՄԲՈՒՇ**, *գ. Խնջույք, խրախճանք։*

**ՋԸՄԼԱՍՏԻԿ**, *գ. Մարմնամարզություն, գիմնաստիկա։*

**Ջ'ԸՆԱՂ**, *Բմ. գ. Հավի կրծքի երկճղի ոսկր։*

**ՋԸՆՈՏԵԼ**, *չբ. 1) Բառացի՝ սատանա դառնալ։ 2) փխբ. Սատիկ բարկանալ, գազազել։* Խօրօխպէրըս ջընոտավ *(Վն.)։*

**ՋԸՆՋԸԽԵԼ**, *նբ. Ջարդել, փշրել։*

**ՋԸՆՍ**, *գ. 1) Ցեղ, տոհմ։ 2) Սերունդ։*

**ՋԸՌԱ**, *Բմ. Կճ. գ. Կարաս:* Ջըռի մէչ կինի կըլպախեն *(Կճ.)*:

**ՋԸՎԱԼ**, *գ. Բրդե թելից գործված ցորենի, ալյուրի և այլնի մեծ պարկ:*

**ՋԸՐԱ**, *գ. Օրապարեն:* Օրէն խացըմ ջըրա կտրեցեք:

**Ջ’ԸՐԲԱ̈ԽՇ**, *Բմ. գ. Ջրաբաշխ:*

**ՋԻԲ-ՋԻԲ**, *մկ. Բոլորովին, իսպառ:* Ա՜խ, յարըս ջիբ-ջիբ զիկ մոռցեր ի:

**ՋԻԳʲԱ̈Ր**, **ՋԻԳՅԱՐ**, *Հթ. գ. 1) Լյարդ:* Տավրի ջիգʲա̈ր իփիցին *(Վն.)*: *2) փխբ. Խանդաղատանք: 3) փխբ. Սրտացավություն: 4) փխբ. Հարազատ:* Ջիգրի խաթրու մարթ դուշմընի տո̈նռն էլ կերթա̈:

**ՋԻԶ**, *գ. Գիծ:*

**ՋԻԼԱ**, *գ. Փայլ:*

**ՋԻԼԱԼԻ**, *ած. Փայլեցված, փայլ քսած:*

**ՋԻՆ**, *գ. 1) Սատանա: 2) Առասպելական կենդանի:*

**ՋԻՆԱԶ**, *Լիմ, գ. Հավի կրծքի երկճղի ոսկոր:*

**ՋԻՆԱՂ**, *Հթ. տե՛ս* **ՋԻՆԱԶ**:

**ՋԻՆՍ**[1], *գ. Բարկություն:* Ջինսըս էկավ վէրէս, զա̈րկի, կոտրիցի:

**ՋԻՆՍ**[2], *գ. 1) Ցեղ, տոհմ: 2) Սերունդ:*

**ՋԻՆՍ-ՋԸԲԸԼՅԱԹ**, *գ. Ազգուտակ, տոհմ:*

**ՋԻՎ**, *գ. Ցախավել կապելու դալար, սակայն ամուր ճյուղ:*

**ՋԻՎԱՆ**, *ած. Երիտասարդ:*

**ՋՅՈՒԲԱ**, *գ. Երկար քղանցքով վերարկու:*

**ՋՅՈՒՋԱ**, *ած. Գաճաճ:*

**Ջ’ՈԾԸՆԱԼ**, *չբ. Կճ. Մեծանալ:*

**ՋՈՆ**, *ած. Գունանուն, գունատեսակ:*

**ՋՈՒԼ**, *գ. Կճ. Անկողին:* Ախչըկան փըսակին, մէ ծերք ջուլ տըվին *(Կճ.)*:

**ՋՈ̈ՒԼ** *(նաև՝ Լիմ), գ. 1) Կապերտ:* Ջո̈ւլ թա̈լուկ էր վէր թախտին *(Վն.)*: *2) Հնամաշ շոր:* Խերիք չի՞ խայնեւ էտ ջըլեր:

**ՋՈ̈ՒԼ-ՓԱԼԱՍ**, *գ. Քուրջ, ցնցոտի:*

**ՋՈՒԽՏ** *(նաև՝ Հթ.), ած. Զույգ:* Ջուխտ տան տիկին տախտըն անավել կըմընա:

**ՋՈՒԽՏԱԿ**, *ած. Երկվորյակ:*

**ՋՈՒՂԱԲ**, *գ. Պատասխան:*

**ՋՈՒՋԻԿʲ**, *Հթ. գ. Քարկտիկ:* Ջուջիկʲ խինգʲ քʲարով կը խաղան *(Հթ.)*:

**ՋՈՒՌԱ**, *գ. Տեսակ:*

**ՋՈՒՌԱԹ**, *գ. Համարձակություն:*

**ՋՕԲ**, *գ. Գրպան:*

**ՋՕԲԿԻՐ**, *ած. Գրպանահատ:*

**ՋՕԿՈՂՈՒԹԵՆ**, *գ. Կողմնապահություն, խտրություն:*

**ՋՕՂՐԱՖԻԱ**, *գ. Աշխարհագրություն:*

**ՋՕՄԱՐԴ**, *ած. Առատաձեռն:*

**ՋՕՐԿՕՎ**, *մկ. Հերթով:*

**ՋՕՐՕՎ**, *մկ. Հազիվհազ:*

# Ռ

**ՌԱԴ ԱՆԵԼ**, *Վանել, մերժել։*

**ՌԱ̈ՋԱ̈ԹԱ̈**, *գ. Դեղատոմս։*

**ՌԱՋԻ ԷԼՆԵԼ**, *Գոհանալ, բավարարվել։*

**ՌԱՋԻԼ ԱՆԵԼ**, *Խայտառակել։*

**ՌԱՋԻԼ ԷԼՆԵԼ**, *Խայտառակվել։*

**ՌԱ̈ԽԱ̈Թ**, *ած. Հանգիստ, հարմարավետ։*

**ՌԱ̈ԽԱ̈Թ-ԼՈԽՈՒՄ**, *գ. Փափուկ շաքար, քաղցրեղեն։*

**ՌԱ̈ԽԿԱՄ**, *գ. Թվաբանություն, հաշիվ։*

**ՌԱ̈ՀՎԱՆ**, *գ. Ձիու քայլք։*

**ՌԱ̈Մ**, *գ. Կախարդանք, հմայություն։*

**ՌԱ̈ՄԱ̈ԶԱ̈Ն**, *գ. Մահմեդականների ցերեկային ծոմ՝ լուսնի 9-րդ ամսին։ Ծան. – Այդ ընթացքում մահմեդականները ցերեկը քնում են, կամ անշարժ մնում, իսկ գիշերը՝ շարունակ ուտում։*

**ՌԱՅԱ**, *գ. Օսմանյան տերության ոչ մահմեդական հպատակ։*

**ՌԱ̈ՍԸՄ**, *գ. Նկար։*

**ՌԱՍՏ ԿյԱ̈Լ**, *Հանդիպել։* Պաղ ախպըրի ռաստ կուկյա̈։ Փողան ինե ուր ինգյերոչ ռաստ էկավ (իրե) *(Վն.)*։

**ՌԱՎԱՂԵԼ**, *չբ. Հեղուկը զտվել՝ նստվածք տալով։*

**ՌԱ̈Ֆ**, *գ. Պատի ուռուցիկ մաս հին տներում, որի վրա շարում էին գեղեցիկ իրեր։*

**ՌԷԴԻՖ**, *գ. Պահեստային զինվոր։*

**ՌԷՍ**, *գ. Գյուղապետ։* – Ռէսի վէրէն լու ի կաթե, վո՞վ ի տիսե։

– Կըգյիր։

**ՌԷՎՈԼՎԷՐ**, *գ. Ատրճանակ։*

**ՌԸԲԷԿյ**, *Լիմ, գ. Հացահատիկ չափելու փայտե աման։*

**ՌԸԲԻԿ**, *գ. Կոտի մեկ չորրորդ մասը։*

**ՌԸՆԴԱ**, *գ. Տախտակ հարթեցնող քերիչ։*

**ՌԸՇՏԱ**, *գ. Լապշա, հայկական ավանդական մակարոն։*

**ՌԸՋՊԱՐ**, *գ. Ռանչպար, երկրագործ։*

**ՌԻՆԴ**, *Վն. ած. Գեղեցիկ, ընտիր։*

**ՌՅԱՆԳ**, *գ. Գույն։*

**ՌՈՒԲ** *(նաև՝ Բմ. Լիմ), տե՛ս* **ՌՈՒՊ**։

**ՌՈՒՊ**, *Կճ. գ. Դոշաբ։* Ռուպ խավողից կէնին *(Կճ.)*։

**ՌՕՄ**, *գ. Բարկօղի։*

# Ս

**ՍԱ̈ԲԱ̈Բ**, *գ. Պատճառ:* Սա̈բա̈բ էլա̈վ:

**ՍԱ̈ԲԱ̈ԲՔՅԱ̈Ր**, *գ. Պատճառ հանդիսացող անձ:* Սա̈բա̈բքյա̈րի ոտը կոտըրվէր, էն կյա̈խ էնտեղեր չէրէֆվէր:

**ՍԱ̈ԲԱ̈Թ**, *գ. Մեծ կողով:* Սա̈բա̈թներ պա̈րցին վէր ծիուն *(Վն.)*: Քյո խարսնիսին սա̈բա̈թով ճո̈ւր կըպիրեմ *(այսինքն՝ եռանդուն կաշխատեմ)*:

**ՍԱ̈ԲԱ̈ԹՉԻ**, *գ. Կողովագործ:*

**ՍԱԲԱԽ**, *գ. Առավոտ:*

**ՍԱԲԱԽՏԱՆ**, *մկ. Առավոտյան:* Սաբախտան վէր կըկէնա տո̈ւռ կըճըրճըռնի, կավլի:

**ՍԱԲԸՐ**, *գ. Համբերություն:* Սաբըր արա, տեսնենք ի՞նչ կէլնի:

**ՍԱԲԻ**, *գ. Մանուկ, երեխա:* Մօրքըրնեա̈ր, իմ սաբուն մատաղ:

**ՍԱԲԻ-ՍՈՒԲԻԱՆ**, *գ. Մանկտիք, փոքր երեխաներ:*

**ՍԱԲՐԵԼ**, *չբ. Համբերությամբ սպասել:*

**ՍԱ̈ԴԱ̈**, *ած. 1) Զուտ, անխառն: 2) Ամբողջական: 3) Պարզ:*

**ՍԱ̈ԴԱ̈ՂԱ̈**, *գ. 1) Ողորմություն, ողորմածություն: 2) Շնորհք: 3) Շնորհիվ:* Նա քյո սա̈ղա̈ղէն ի:

**ՍԱ̈ԴԱ̈Ֆ**, *գ. Սադափ:*

**ՍԱ̈ԴԸՐ**, *գ. Սենյակի պատին ամրացվող բազմոց:*

**ՍԱ̈ԴՐԱ̈ՂԱ̈Մ**, *գ. Օսմանյան կայսրության վարչապետ:*

**ՍԱԶ**, *գ. Լարային պարզ նվագարան:*

**ՍԱԶԱՆԴԱՐ**, *գ. Նվագող:*

**ՍԱԶԵԼ**, *նբ. Լարել, շտկել:*

**ՍԱԹԱՇՄԻՇ ԷԼՆԵԼ**, *1) Զոռով սիրահետել: 2) Անտեղի կռիվ անել մեկի հետ:*

**ՍԱԹԸԼ**, *գ. Կերակուր փոխադրելու հատուկ աման:*

**ՍԱԹԸԼՋԱՄ**, *գ. Մրսելուց առաջացած հիվանդություն, թոքերի բորբոքում:*

**ՍԱԹՐԻՆՋ**, *գ. Շախմատաձև տպածո չիթ:*

**ՍԱԼԱ**, *գ. Ուռենու դալար ճյուղերից հյուսված տափակ կիսազամբյուղ:*

**ՍԱԼԱԹԱ**, *գ. Աղցան:*

**ՍԱԼԱԹՄԻՇ ԱՆԵԼ**, *Սասանել, տատանել:*

**ՍԱԼԱ̈Խ**, *գ. 1) Խորհուրդ, ցուցում: 2) Բացատրություն:* Սալա̈խով տունը կընդա:

**ՍԱԼԱ̈ԽԱՆԱ**, *գ. Սպանդանոց:* Շուն սալա̈խանա մտնելով-էլնելով կա̈ասաբ չըդառնա:

**ՍԱԼԱ̈Խ-ՍՈՒԼՈՒԽ**, *գ. Բացատրություն:*

**ՍԱԼԱՄ**, *գ. Բարև:*

**ՍԱԼԱՄԱԹ**, *ած. Ողջ և առողջ, անփորձանք:*

**ՍԱԼԱՄԱԼԵՔ**, *գ. Հրեշտակների բարև:*

**ՍԱԼԱՆԱ-ՍԱԼԱՆԱ**, *մկ. Ազատ ու անկաշկանդ:*

**ՍԱԼԱՆԱ-ԲՈՒԼԱՆԱ**, *մկ. Տատանվելով, երերալով, դանդաղորեն:*

**ՍԱԼԱՆԴՐԱՆԱ**, *գ. Խեչափառ:*

**ՍԱԼԱՆԴՕՍՏԻԿ, ՍԱԼԱՆԴՕՍՏԻԿ**, *Բմ. գ. Սարդ:* Սալանդօստիյ ցանց կըկյոնծի, ճանջ կըպըռնի *(Վն.)*: Սարանդօստիկ պատօվ կէլնի *(Կճ.)*:

**ՍԱԼԱՎԱԹ**, *1) գ. Մահմեդական: 2) ձ. Հարձակման ժամանակ արձակվող ձայն. ուռա՜:*

**ՍԱԼԱՏԸՐՎԵԼ**, *չբ. Հարձակման նախապատրաստվել:*

**ՍԱԼԱՐԿԵԼ**, *նբ. Բակը, գավիթը, փողոցը տափակ քարերով սալահատակել:*

**ՍԱԼԱՐՍ**, *գ. Սալահատակ:*

**ՍԱԼԱՐՍԵԼ**, *նբ. Սալահատակել:*

**ՍԱԼԱՖ**, *գ. Օրապահիկ:* Թէ վոր օրվան սալաֆըն չըտան, կյա՛ռ չեն փարայի:

**ՍԱԼԵԼ**, *նբ. Սալահատակել:*

**ՍԱԼԹԱՆԱԹ**, *գ. Շքեղություն, պերճություն:*

**ՍԱԼԹԱՆԱԹԼԻ**, *ած. Շուքով:*

**ՍԱ՛ԼՎԻ**, *գ. Սոճի:*

**ՍԱԼՈՒԿ**, *նբ. ած. Սալահատակված:*

**ՍԱԼՕՆ**, *գ. Տան ամենամեծ սենյակը:*

**ՍԱԽԱ**, *գ. Սափոր, լվացարան:* Սախէն կոտրավ, ճո՛ւրը կ՚ընա՛ց:

*Ծան. – Վանում լվացարան չկար, սախա-սափորով ջուր էին լցնում միմյանց ձեռքերի վրա կամ լվացվում էին առվում:*

**ՍԱԽԿ**, *գ. Կարճ գուլպա:*

**ՍԱԽԿԱՏ**, *ած. 1) Վնասվածք ստացած: 2) Հաշմանդամ:*

**ՍԱԽԿԸՆ**, *1) վ. Միգուցե, չլինի թե, չլինի որ: 2) մկ. Երբեք:*

**ՍԱԽԿԸՏՎԵԼ**, *կբ. 1) Վնասվել:* Ինոր ոտը սախկտվել ի: *2) Հաշմվել:*

**ՍԱԽՍԻ**, *գ. Թաղար:*

**ՍԱԽՈՒՆ**, *ած. 1) Երեր, անկայուն: 2) փխբ. Անտուն, թափառական:* Ինձ արաց սախուն:

**ՍԱԿԱՌ** *(նաև՝ Կճ.), գ. Մեծ կողով:* Սակառի մէչ հյո՛ւրթ կըլըցին *(Կճ.)*:

**ՍԱԿԱՏ**, *գ. 1) Թոք: 2) Կուրծք: Գործ է ածվում* սիրտ *բառի հետ՝ որպես անեծք:* Սիրտ-սակատըդ մեռնի:

**ՍԱԿԱՏԱՄԵՌ**, *ած. Անամոթ, անպատկառ:* Սակատամեռ էլնես *(անեծք)*:

**ՍԱՀԱՆ**, *գ. Պղնձե բաց աման, լայն մեծ ափսե:* Ուտենքյ սահանով, ոսկոռներ խանենքյ սակռով:

**ՍԱ՛Հ³ՍԱ՛Ն**, *թ. Ուխտուն:*

**ՍԱՂ**[1], *մկ. Ամբողջ:* Սաղ ք՚առսուն տարի:

**ՍԱՂ**[2] *(նաև՝ Հթ.) ած. Ողջ:* – Սաղ եմ, – ասաց Տավիթ:

**ՍԱՂԸՐ**, *ած. Նոսր, ծանծաղ:* Աղվըսկանց (Աղվանյանների) իկ՚ու մոտ կ՚եւտը շատ նոսր ի, ոտով կընցըվի:

**ՍԱՂԼԱՄ**, *ած. 1) Չփասված, ամբողջական:* – Խավըն իփեւք՚, սաղլամ տըրեւք՚ սեղանին, – ասաց Կարապետ աղան: *2) Ողջառողջ:* Ինոր թեվ-թիկունք՚ չի կոտըրվե, էն սաղլամ մարդ ի:

**ՍԱՂՆԱԼ**, *Բմ. չբ. Առողջանալ:*

**ՍԱՂ-ՍԱԼԱՄԱԹ**, *ած. Ողջ և առողջ:*

**ՍԱՄԱՆ**, *գ. Հարդ:*

**ՍԱ̈ՄԱ̈Ր**, *գ. 1) Համետ, թամբ: 2) Աղյուս բարձրացնելու փայտե հարմարանք, որ հագնում էին որմնադիրները կռնակին և վրան աղյուս շարում:*

**ՍԱՄԸՐՁԻ**, *գ. Թամբագործ:*

**ՍԱՄԹ**, *գ. Նպատակահարմար ուղղություն, հարմար ճանապարհ, միջոց:*

**ՍԱՄԻ**, *գ. Եզ, գոմեշ լծափայտին կապող ձողիկ, որ պատրաստվում էր ամուր փայտից կամ երկաթից:*

**ՍԱՄԻԹ**, *գ. Կանաչու տեսակ:*

**ՍԱՄԻՐ**, *գ. Կաթնապուր:* Խիվընդին սամիր տոմ՚ա *(Վն.)*:

**ՍԱՄՇԻՏ**, *գ. Երկարակյաց ծառ, տոսախ:*

**ՍԱՅԱ**, *1) գ. Կոշիկի երեսացու կաշի: 2) գ. Կանացի աշխատանքային շոր: 3) կ. Շնորհիվ:* Ք՚ո սայից էտ պա̈ն էլա̈վ:

**ՍԱՅԱՎՈՐ**, *ած. Աշխատանքային շոր հագած:*

**ՍԱՅԻ**, *գ. 1) Համրանք: 2) Գումար: 3) Գործի մեջ ունեցած դրամաբաժին:* Ի՞նչ սայի ունես:

**ՍԱ̈ՅՍԱ̈Ն**, *տե՛ս* **ՍԱ̈Հ**[3]**ՍԱ̈Ն**:

**ՍԱՆԱԽԵՐ**, *գ. Սանահայր:*

**ՍԱՆԱՀԱԹ**, *գ. Արհեստ, զբաղմունք:*

**ՍԱՆԴ**, *գ. Մեջը փորած քար՝ կորկոտ ծեծելու համար:* Սանդ տըփողին տընկ ասող պիտի:

**ՍԱՆԴՈ̈ՔՅԱ̈Ր**, *գ. տե՛ս* **ՍԱՆԴ**:

**ՍԱՆԴԵՐՔ**[3], *գ. Բուրդ գզելու գործիք: Ծան. – Տախտակի վրա ամրացված են երկու շարք մետաղալարեր, որոնց վրա բուրդ են գզում:*

**ՍԱՆԴԸԽՔ**[3]**ԱՐ**, *գ. Գանձապահ: Ծան. – Օսմանյան կայսրության մեջ այդ պաշտոնը սովորաբար տրվում էր քրիստոնյաներին, Վանում՝ բացառապես հայերին: Թուրքը միշտ գեղծում էր կատարում, հայը չէր համարձակվում գեղծում կատարել:*

**ՍԱՊՈՆ**, *գ. Օճառ:*

**ՍԱՊՈՆԵԼ**, *նբ. Օճառ քսել:* Լվա̈ցք՚ը սապոնի՞ր ես:

**ՍԱՊՈՆՁԻ**, *գ. Օճառագործ:*

**ՍԱՊՈՆՋՅԱՆ**, *գ. Օճառագործյան։*

**ՍԱՋ**, *գ. Թիթեղ, որի վրա հաց են թխում հատկապես թուրքերը։*

**ՍԱՋԱՅԱՂԻ**, *գ. Երկաթե եռոտանի, որ դրվում է կրակի վրա՝ մեծ պղնձի տակ։*

**ՍԱՌԱԴ**, *գ. Մեծ անցքերով մաղ։*

**ՍԱՌԱՋ**, *գ. Թամբագործ։*

**ՍԱՌԱՓ**, *գ. Սեղանավոր, լումայափոխ։*

**ՍԱՍՈՒՄ**, *գ. Յասում, բարկություն։*

**ՍԱՎԱՅ**, *ած. Մատղաշ։* Սավայ տըղղի պես նըստա Սև կ՚ետի ափն ու կուշտըմ լա̈ցի։

**ՍԱ̈ՎԱ̈ՅԻ**, *կ. Բացի, զատ։* Քեզնա սավայի ւոչ մէկ չունի *(Կճ.)*։ Կեվորկից սա̈վա̈յի ուրիշ պաշտպան չունեմ։

**ՍԱՎԱՆ**, *Լիմ, գ. Տակաշոր։*

**ՍԱ̈ՎԴԱ̈**, *գ. 1) Սեր։ 2) Երևակայություն։*

**ՍԱ̈ՎԴԱ̈ԼԻ**, *ած. Սիրահարված, հափշտակված։*

**ՍԱ̈ՎՍԱ̈ՐԱ̈Կ**, *ած. Թեթևամիտ, թեթևսոլիկ։*

**ՍԱՏԱԿ**, *գ. Անկրունկ կոշիկ։*

**ՍԱՏԱՆԻ ՔՅԱՄԻ**, *Պտուտակահողմ, մրրկայուն, թաթառ։*

**ՍԱՏԿԵԼ**, *Վն. չբ. Պիղծ անասունը անկենդան դառնալ։*

**ՍԱՏԿՈՒԿ**, *չբ. ած. Անկենդան։*

**ՍԱՏՐԱՆՋ**, *գ. Շախմատաձև նախշերով կտոր։*

**ՍԱՐԱ**, *գ. Պալատ։*

**ՍԱՐԱԲ**, *գ. Ծածկված քարակուռ առու, որով հեռավոր աղբյուրի ջուրը հասնում էր գյուղ։*

**ՍԱՐԱԾ**, *գ. Իրերի կամ գործիքների ամբողջություն, տավարածու, որն անհրաժեշտ է որևէ գործ կատարելու համար, սարք, թախըմ։*

**ՍԱՐԱԿ**, *գ. Գյուղատնտեսական աշխատանքներում օրավարձով աշխատող բանվոր։*

**ՍԱՐԱՂՈՒՆՋ**, *գ. տե՛ս* **ՍԱՐԱՂՈՒՋ**։

**ՍԱՐԱՂՈՒՋ**, *գ. Արծաթ դրամներով և ուլունքներով զարդարված կերպաս, որ կանայք իբրև զարդ կախում են ծոծրակից մինչև գոտկատեղը։*

**ՍԱՐԱՆԴՕՍՏԻԿ** *(նաև՝ Կճ.), գ. Սարդ։*

**ՍԱՐԱՆՋԱ̈ՄՈՎ**, *մկ. Եռանդով, խնամքով, հոգատարությամբ։*

**ՍԱ̈ՐԱ̈ՍՔՅԱ̈Ր**, *գ. Սպարապետ։*

**ՍԱ̈ՐԲԱ̈ՍՏ**, *ած. Համարձակ, հանդուգն։*

**ՍԱՐԵԿ**, *գ. 1) Սարյակ։ 2) Յուղի, պանրի ամանի բերանին կապվող կաշի։*

**ՍԱ̈ՐԻՆ**, *ած. Զով։*

ՍԱՐԹ, *ած. 1) Խիստ, խստադեմ:* Էսօր շատ սարթ կէրէվաս: *2) Կարծր: 3) Թունդ:* Կ՚ինին շատ սարթ ի:

ՍԱ̈ՐԹԼԱ̈ՄԻՇ ԷԼՆԵԼ, *1) Խստանալ (մարդու մասին): 2) Կարծրանալ:*

ՍԱՐԽՕՇ *(նաև՝ Կճ.) ած. Հարբած:* Էնա մարթ սարխօշ կընաց տուն *(Կճ.)*: Սարխօշին նաա պա̈րև տու, նաա պա̈րև առ:

ՍԱՐՇԻԼ, *գ. Գութանի երկրորդ լուծը:*

ՍԱՐՄԷՆ, *գ. Դրամագլուխ:*

ՍԱՐՄԻ, *տե՛ս* ՍԱՐՄԷՆ:

ՍԱ̈ՐՍԱ̈Խ, *ած. Թեթևսոլիկ:*

ՍԱ̈ՐՍԱ̈Մ, *ած. Ապուշ, ցնորված:*

ՍԱ̈ՐՍԱ̈ՐԻ, *ած. Դատարկապորտ:*

ՍԱՐՎԱԾՔ, *գ. Գութանի ամբողջ կազմը:*

ՍԱՐՔՈՒԿ, *ած. Սարքին, սարքված:*

ՍԱՓՍԱՂԼԱՄ, *ած. Միանգամայն անվնաս, բոլորովին առողջ:*

ՍԱՔՅԻ ԹԷ *(նաև՝ Լիմ), վ. Իբր թե:* Նա̈ֆա̈ս կըպախի, սաք՚ի թէ մէռեր ի *(Լիմ)*:

ՍԱՔՅՈՒ, *գ. Տաղավարի նման հարմարանք այգում:*

ՍԱՔՕ, *գ. Եվրոպական ոճի ձմեռային վերարկու:*

ՍԱՖ, *ած. Զինջ, հստակ:*

ՍԱՖԱ, *գ. Զվարճություն, վայելք:*

ՍԱՖԱՐ[1], *գ. Պանդխտություն:*

ՍԱՖԱՐ[2], *գ. Պղնձագործ:*

ՍԱՖԱՐՅԱՆ, *գ. Պղնձագործյան:*

ՍԵԽ, *գ. Փայտե խթան՝ էշ քշելու համար:*

ՍԵԿ, *գ. Ոչխարի, այծի բարակ կաշի:*

ՍԵՄԵՐՋԻ, *գ. Թամբագործ:*

ՍԵՄԵՐՋՅԱՆ, *գ. Թամբագործյան:*

ՍԵՌԻԿ, *գ. Մածնի, յուղի երկարուկ աման:*

ՍԵՌՏ, *ած. Առույգ:*

ՍԵՎԱԳԼՈՒԽ, *գ. ծծկ. Կրոնավոր:*

ՍԵՎԱԴԻԴԱՐ, *ած. 1) Թխադեմ: 2) փխբ. Մաղձոտ:*

ՍԵՎ, *ած. Սև:*

* Սև կապել կ՚ըլխին, *Գլխին դժբախտություն բերել:*

* Սև կապոտ պիրել վէրէն, *Սաստիկ ծեծել, մարմինը կապտացնել:*

* Սև շըվար էլնել, *Թշվառության մեջ մոլորվել:*

* Սև ք՚ունը ք՚ընել, *Մեռնել:*

* Սև կապավոր, *Սգո սև զգեստ հագած:*

ՍԵՎԱԿՆԳՅՈՒՂ, *գ. ծծկ. Հոգևորական:*

**ՍԵՎԱՆԹՐՈՑ**, *ած. փխբ. Շատ տգեղ:*

**ՍԵՎԱՎՈՐ**, *ած. Սգավոր:*

**ՍԵՎԱՎՈՐՎԵԼ**, *չբ. Սգի մեջ լինել:*

**ՍԵՎԱՎՈՐՎԱԾ**, *չբ. Սգո սև զգեստ հագած:*

**ՍԵՎԻՐԵՍ ԷԼՆԵԼ**, *Ամոթահար լինել:*

**ՍԵՎՃՈՒՐ**, *գ. Աչքի հիվանդություն:*

**ՍԵՎՈՏԵԼ**, *չբ. Մռայլվել, մթագնել:*

**ՍԵՎՍԱ՛Դ**, *գ. Մինա, արծաթեղենի յուրատեսակ էմալապատում, որ հայտնի էր Վանի ոսկերիչներին:*

**ՍԵՎՍԸՐՏԵԼ**, *չբ. Տխրել, նեղանալ:*

**ՍԵՎՍԻՐՏ**, *ած. Նախանձ:*

**ՍԵՎՍՈՒԽԻՁ**, *գ. Սոնիճ, բադարջի երեսին ցանվող անուշաբույր մանր սերմ:*

**ՍԵՎՑԸՆԵԼ**, *նբ. Չկամությամբ տալ:* Սևցրոմւ ինոր:

**ՍԵՐԸՄ**, *Լիմ, գ. Սերմ:*

**ՍԷԻՍ**, *գ. Թուրքական բարձրաստիճան պաշտոնյա:*

**ՍԷԼ**, *գ. Սայլ:*

**ՍԷԼԱՄԼԸՂ**, *գ. 1) Բառացի՝ բարևի տեղ: 2) Թուրքական հարեմի մաս, որտեղ բնակվում են միայն տղամարդիկ: Տանտիրոջ ենթակաները տան այդ մասում ողջունելու էին գալիս՝ նրան ընծաներ բերելով: 3) Արքունական տոնահանդես:*

**ՍԷԼՎՈՐ**, *գ. 1) Սայլը քշող: 2) Սայլով ճամփորդություն կատարող:*

**ՍԷՅՐ**, *գ. Պտույտ, զբոսանք:* Աղան ծակից Հընդստան սէյր կանի:

**ՍԷՅՐ ԱՆԵԼ**, *Սիրով, գոհունակությամբ դիտել:*

**ՍԷՅՐԱԳ, ՍԷՅՐԱԳ**[3], *Լիմ, ած. Նոսր:*

**ՍԷՉՄԱ**, *գ. Մանր արճիճ, որ լցնում էին ազալի՝ հրացանի մեջ:*

**ՍԷՋՋԱԴԷ**, *գ. Փոքրիկ գորգ, որի վրա ծնրադիր նամազ է անում մահմեդականը:*

**ՍԷՎԱ**, *Բմ. կ. Բացի:*

**ՍԷՎ ՋԻԳՅԱՐ**, *Լիմ, Լյարդ:*

**ՍԷՐՍԸՓԵԼ**, *նբ. Մաքրել:* Տռնփողան ճըրճընել ու սէրսըփել եմ:

**ՍԷՐՍԸՓՈՒԿ**, *նբ. ած. Մաքուր:*

**ՍԷՐՍՈՒՓ, ՍԷՐՍՈ՛ՒՓ**, *Հթ. ած. Մաքուր:* Սէրսուփ ծմվըր, պըրինձ:

**ՍԷՐՎԷՐԻԿ**, *ած. 1) Կոտրատվող, սեթևեթող: 2) Թեթևսոլիկ:*

**ՍԷՖԻԼ**, *ած. Խեղճ, թշվառ, չունևոր:*

**ՍԸԹԱՐ**, *գ. Ապաստան:*

**ՍԸԹԱՐՎԵԼ**, *չբ. Ապաստան գտնել։*

**ՍԸԹԸՐՎԵԼ**, *տե՛ս* **ՍԸԹԱՐՎԵԼ**։

**ՍԸԼ**, *ած. Կասկածամիտ։*

**ՍԸԼԱ**[1], *գ. Ուռենու դալար ճյուղերից հյուսված տափակ կիսազամբյուղ։*

**ՍԸԼԱ**[2], *Կճ.*, **ՍԸԼԱ̈**, *Հթ. գ. Փլավքամիչ։* Ծäվäր քամեց սըլօվ *(Կճ.)*։ Սըլä կա՞, էտա փիլäֆ քʲäմենքʲ *(Հթ.)*։

**ՍԸԼԸՂՑՈՒՑԵԼ**, *Հթ. չբ. Սուլել։*

**ՍԸԼԸՍՏՎԵԼ**, *չբ. Զգաստանալ։* Կատուն վոր տäնկի *(դանակի)* ծէն առնի, կըսըլըստվի։

**ՍԸԼԸՏԸՐՎԵԼ**, *չբ. Նախատրամադրվել, նախապատրաստվել վեճի, կռվի և այլն։*

**ՍԸԼՍԸԼԱԼ**, *չբ. 1) Ծորել։ 2) Զեփյուռից տերևները խշխշալ։*

**ՍԸԼՎԸԼԱԼ**, *չբ. Սահելով խույս տալ, ազատվել։* Ծöւկը ծեռիցըս սըլվըլաց, ինգʲäվ ճöւր։

**ՍԸԼՎԸԼԻԿ**, *ած. Արագաշարժ, ճարպիկ։*

**ՍԸԼՎԸԼՈՒՆ ՔʲԱՄԻ**, *Զեփյուռ։*

**ՍԸԼՈՒԼ**, *գ. Սառտիկ ջուրտ, սառնամանիք։*

**ՍԸԽ**, *ած. Խիտ։*

**ՍԸԽԱԹ**, *Վն. գ. Ժամանակ։* Սըխաթին// վäխտին// կʲäխուն խասանքʲ //խասայ տեղ *(Վն.)*։

**ՍԸԽԿԵԼ**, *նբ. 1) Ծեծել։ 2) Ծեծելով մանրել։*

**ՍԸԽԿԸՐՏԵԼ**, *նբ. Ջարդոտել։*

**ՍԸԽԿԸՐՏՎԵԼ**, *Վն. կբ. չբ. Մարմինը կոտրատվել։* Մըսիր եմ, ջäնըս կըսըխկըրտվի *(Վն.)*։

**ՍԸԽԿՅԱ**, *գ. Հայաբնակ գյուղ Այգեստանից դեպի արևելք՝ Արճակ տանող ճանապարհին։*

**ՍԸԽՏՈՐ ԾԻԾԵԼ**, *Կաղալ։*

**ՍԸԽՏՈՐՈՒԿ**, *գ. Բուսատեսակ։*

**ՍԸԿԵԼ**, *չբ. 1) Խորասուզվել, ընկղմվել։ 2) Լուծույթի դիրտը նստել և պղտորությունը վերանալ։*

**ՍԸԿԸՌԵԼ**, *չբ. 1) Իջնել ջրի տակ, խորասուզվել։ 2) Սիրտը ծանրանալ, վատ աշխատել։*

**ՍԸԿԸՌՏԱԼ**, *չբ. Ջկռտալ։*

**ՍԸԿԸՌՏԱՆՔ**, *գ. Ջկռտոց։*

**ՍԸԿԸՌՏԻՔ**, *տե՛ս* **ՍԸԿԸՌՏԱՆՔ**։

**ՍԸՀԱԹ**, *գ. 1) (նաև՝ Լիմ) Ժամ։ 2) Ժամացույց։*

**ՍԸՂԱԼ**, *չբ. 1) Սողալ։ 2) Սուլել։* Ցերքʲըմ կըսըղար *(Վն.)*։ Էնա մարթ սըղաց *(Վն.)*։

**ՍԸՂԱՆԳ**, *գ. Դեղաբույսի տեսակ։*

**ՍԸՂՂԱԼ**, *Լիմ, չբ. Սուլել։* Փայախ չի, միä սըղղա *(Լիմ)*։

**ՍԸՂՍԸՂԱԼ**, *Բմ. չբ. Սուլել։*

ՍԸՄԱՎԱՐ, *գ. Ինքնաեռ:*

ՍԸՄԸՆԴԸՐ, *գ. 1) Եգիպտացորեն: 2) Ցորենի ձավարի մանրը:*

ՍԸՄՍԱՐ, *գ. Միջնորդ:*

ՍԸՄՓԱՐԱ, *գ. Հղկաթուղթ, զմռնիթ, շուշաթուղթ:*

ՍԸՆՋԱՆԻ, *գ. Պարեղանակ:*

ՍԸՆՕՌ, *գ. Սահման:*

ՍԸՊԸԼՊԵԼ, *չբ. Աշխուժանալ:*

ՍԸՊԸԼՊՈՉ, *ած. Արագաշարժ, ճարպիկ:*

ՍԸՊԼՈՒԽ, *ած. 1) Աղքատ, մերկ ու տկլոր: 2) Կողոպտված:*

ՍԸՊԸՌԹՆԵԼ, *չբ. Գունատվել:*

ՍԸՊՌԵԼ, *տե՛ս* ՍԸՊԸՌԹՆԵԼ:

ՍԸՌ, *գ. 1) Գաղտնիք: 2) Ցուրտ քամի:* Սըռ տարավ զիկ:

ՍԸՌԱԹ, *գ. Կերպարանք, դեմք:*

ՍԸՌԱԹՍԸՋ, *ած. Անկերպարան, տգեղ:*

ՍԸՌ ԷԼՆԵԼ, *Չքանալ, անհետանալ:*

ՍԸՌԹՍԸՌԹԱԼ, *չբ. Ցրտից դողալ:*

ՍԸՌԹՍԸՌԹԱՑՆԵԼ, *տե՛ս* ՍԸՌԹՍԸՌԹԱԼ:

ՍԸՌԺԵԼ, *նբ. Շրջել, շուռ տալ:*

ՍԸՌԺՈՆՔ, *գ. Հագուստի հակառակ երես, աստառ:*

ՍԸՌՆԻ, *գ. Ամուր փայտ, որի վրա հագցնում են կառքի, սայլի անիվները:*

* Սէլի սըռնուն կանաչ տալ, *Անիվը կանաչով միացնել: Ծան. – Անիվի հագցման տեղում սովորաբար օճառի թանձր լուծույթ էին քսում, որպեսզի սռնին չայրվեր: Օճառի լուծույթ չլինելու դեպքում կանաչ խոտ, առավելապես առվույտ էին կապում սռնուն:*

ՍԸՌՍՈՒՆՔ, *գ. 1) Դող, սարսուռ: 2) Ջղվանք:*

ՍԸՍԼԱԽ, *ած. Հուժկու:* Որտեղ կա միս-մըսլախ, կատուն էնտեղ վնգի սըսլախ: Ուր պէս սըսլախ մարթ էր:

ՍԸՍԿՎԵԼ, *չբ. Լռել ու մնալ որևէ անկյունում, չնկատվող տեղում:*

ՍԸՎԱՂ, *գ. Ծեփ:*

ՍԸՎԱՂԵԼ, *նբ. Ծեփել, կծկել:*

ՍԸՎԱՂՉԻ, *գ. Ծեփագործ, կծկող:* Էկավ սըվաղեց ու կընաց:

ՍԸՎՍԸՎԱԼ, *չբ. Սոսափել, շնկշնկալ:*

ՍԸՎՐՈՒԿ, *գ. Խոտի տեսակ, սեզ:*

ՍԸՐԱ, *գ. Հերթ:* Սըրէն կուկ՚ա Ջան-փոլատին:

ՍԸՐԱԽ, *գ. Սրահ:*

ՍԸՐԵԼ, *Լիմ, նբ. Ջրաղացքարը ատամնավորել:* Ճանչի ք՚ար կըռուսնօվ կըսըրեն *(Լիմ):*

ՍԸՐԻՄ *գ. Տրեխի քուղ:* Չարօխ խակավ, սըրիմ կապեց *(Կճ.):*

ՍԸՐՄԱ, *գ. 1) Սուրմա, աչքի դեղ: 2) Ոսկեթել:*

**ՍԸՐՄԱԼԻ**, *ած. Ոսկեթելով զարդարված։*

**ՍԸՐՊԱՆՔ[3]**, *Հթ. Լիմ, գ. Ընկերք։* Վօրթիկ' էկիր ի, սըրպանք' չի ինգ'ե *(Հթ.)։*

**ՍԸՐՊԵԼ**, *նբ. Մաքրել։*

**ՍԸՐՃՎԵԼ**, *կվ. Շրջվել։*

**ՍԸՐՍԸՆՔԵԼ**, *չբ. Ջուր ցանել, ջրջնել։*

**ՍԸՐՍԸՌՈՒՆ**, *ած. Մաքրությունից փայլող։*

**ՍԸՐՍԸՓԱԼ**, *չբ. Դողալ, դողդողալ երկյուղից կամ ցրտից։*

**ՍԸՐՍՈՒՌ**, *ած. Մաքուր, զուտ, հատ-հատ։* Կորկոտը սըրսուռ ի։ Սըրսուռ կարաք'։

**ՍԸՐՎԸՐԱԼ**, *չբ. Դեմ առ դեմ նայել։*

**ՍԸՐՏԱԺԱԺ**, *ած. Ակամա, անտրամադիր։* Շատ սըրտաժաժ կընաց։

**ՍԸՐՑԱՎ**, *ած. Սրտացավ։*

**ՍԸՔ[3]ԱԼ**, *չբ. Սգալ, սուգ անել։* Կուլան, կըսըքյ'ան ուրենց վորտու վէրէն։

**ՍԸՖԱԹ**, *գ. 1) Կերպարանք, տեսք։ 2) Դիմանկար, լուսանկար։*

**ՍԸՖԹԱ**, *գ. Առաջին առևտուր, վաստակ։* Օրը մըթնավ, հալա սըֆթա չեմ արե։

**ՍԸՖՏԱԿ[3]**, *Հթ. ած. Սպիտակ։*

**ՍԸՖՏԱԿ[3] ՊԱՆՋԱՐ**, *Հթ. Ծնեբեկ։*

**ՍԻԲԻԼԳ[3]Ա**, *Բմ. գ. Երեքնուկ։*

**ՍԻԼԱ, ՍԻԼԼԱ**, *Լիմ, գ. Ապտակ։* Մէ սիլա իզա'ր//խաացուց ինոր իրիսին *(Վն.)։* Մէ սիլլա իտուր ձի *(Լիմ)։* Սիլէն իրիսին կըզանեն։

**ՍԻԼԱԽ**, *գ. Զենք։*

**ՍԻԼԱԽՎՈՐՎԵԼ**, *չբ. Զինվել, կռվելու տրամադրությամբ տոգորվել։* Ի՞նչ ես սիլախվորվե, իկ'ե մեր տուն։

**ՍԻԼԻ-ԲԻԼԻ ԱՆԵԼ**, *Սիրաբանել։*

**ՍԻԼԿԻՎԻԼ**, *Լիմ, տե՛ս* **ՍԻՐԿԻՎԻԼ**։

**ՍԻԿ**, *գ. Ջրի տակ նստած դիրտ։*

**ՍԻԿԻՎԻԼ**, *տե՛ս* **ՍԻՐԿԻՎԻԼ**։

**ՍԻԿՈՒՐԹԱ**, *գ. Ապահովագրություն։*

**ՍԻՄ**, *ած. Ոսկեթել։*

**ՍԻՅՏԸՐ**, *վ. Գնա՛, կորի՛ր։*

**ՍԻՆԱՄԱԽԱՖՔ[3]**, *գ. Սիրամարգ։*

**ՍԻՆԻ**, *գ. Պղնձե սեղան։*

**ՍԻՆՈՌ**, *Հթ. գ. Սահման։*

**ՍԻՋԻՄ**, *գ. Կաշուց հանված թել, կաշեթել։*

**ՍԻՎԵՂ**, *գ. Սիբեխ։*

**ՍԻՎՏԱԿ** *(նաև՝ Կճ.), ած. Սպիտակ։ Ծան. – Յոթանասնամյա վարդապետը երգում է.* «Կընիկըմ էլներ, սիվտակ էլներ»։ *Ութսունամյան շարունակում է.* «Թող սև էլներ, թող բօլ էլներ»։ *Իննսունամյան ձայնակցում է.* «Մեռնեմ պէրնիտ, մէկ էլ ասաա»։

**ՍԻՎՏԿԸՆԱԼ**, *Վն. չբ. Սպիտակել:* Ծամեր սիվտկըցեր են *(Վն. ):*

**ՍԻՐԱԿԸՋՏԸԿՎԵԼ**, *չբ. Իբրև թե սիրահարվել և միմյանց շատ սիրել:*

**ՍԻՐԱԿԸՋՏԻԿ**, *գ. Միմյանց շատ սիրելու կեղծ ցուցադրություն:*

**ՍԻՐԵԿԱՆ**, *գ. Սիրուհի:*

**ՍԻՐԻՄ**, *գ. Կանեփի թել:*

**ՍԻՐԿԻՎԻԼ**, *գ. Սերկևիլ:*

**ՍԻՐՎԸՏԵԼ**, *չբ. Իբրև թե իրար սիրել:*

**ՍԻՔԸՄԱ**, *Գյուղերում տարածված էր այս արտահայտության հայերեն ձևը՝* նաքումեր, *որն արդեն մտել էր քաղաք՝ մոռացնել տալով* սիքըման *և* սիքա-սիքա *արտահայտությունները, որոնք կապված են առնանդամի գործածության հետ:*

**ՍԻՔԻՇ-ԿԸՌԻՇ**, *մկ. Անփութորեն, մի կերպ կատարելով:*

**ՍԻՔԻՇ ՏԸՐՄԱ**, *տե՛ս* **ՍԻՔԻՇ-ԿԸՌԻՇ**:

**ՍՅՈՒՆԱԹ**, *գ. Թլփատում:*

**ՍՅՈՒՆԱԹԼԻ**, *ած. Թլփատված:*

**ՍՅՈՒՆԳ$^{3}$ԱՐ**, *գ. Սպունգ:*

**ՍՅՈՒՆԳ$^{3}$ՈՒ**, *գ. Սվին:*

**ՍՅՈՒՍ**, *գ. Զարդարանք:*

**ՍՅՈՒՍԼԻ**, *ած. Զարդարուն, գեղեցիկ:*

**ՍՅՈՒՐԳ$^{3}$Ի**, *գ. Փլավքամիկ:*

**ՍՅՈՒՐԳ$^{3}$ՈՒ**, *գ. Նիզ:*

**ՍՅՈՒՐԳ$^{3}$ՈՒՆ**, *գ. Աքսոր:*

**ՍՈՂՆԱԿ**, *գ. Երկաթե կամ ամուր փայտից հաստ ձող՝ դուռը ներսից փակելու համար:*

**ՍՈՎՐԵԼ**, *նբ. Սովորել:*

**ՍՈՐ$^{1}$**, *ած. Կարմիր:*

**ՍՈՐ$^{2}$**, *Լիմ, գ. Հնձելիս մանգաղի բերանից ընկած խոտի, ցորենի շերտ:*

**ՍՈՐԱԴԷՐ**, *գ. Կարմրավանք, կարմիր քարով շարված վանք՝ Խանասորա (Կարմիր խանի) մոտ:*

**ՍՈՐՎԵԼ**, *տե՛ս* **ՍՈՎՐԵԼ**:

**ՍՈՐ ՏԱԼ**, *1) Ջրաղացի քարի տակից ալյուրը թափվել: 2) Պարկի անցքից ցորենը, ալյուրը թափվել:*

**ՍՊԱՆԴ**, *գ. Գերեզմանոցի խոտ:*

**ՍՏԱԿԱՆ**, *գ. Բաժակ:*

**ՍՏԵՄ**, *գ. Երկճղի կարճ փայտիկներ, որոնք ջուլհակը, գետնի մեջ իրարից հեռու խրելով, չորացնում է հինածի թելերը:*

**ՍՏԵՌՋ**, *ած. Ստերջ (անասուն, հատկապես կով):*

**ՍՏԼԻԿ**, *ած. Ստախոս (երեխա):*

**ՍՈՒԹԼԻ**, *գ. Կաթնով, սամիր:*

**ՍՈՒԼԳԻՆ**, *Լիմ, գ. Փլավքամիչ:*

**ՍՈՒԼՅՈՒԳ**, *գ. Տզրուկ։*

**ՍՈՒԼՈՒԳ ՓԱՐԱ**, *Մաշվելուց անվավեր դարձած պղնձադրամ։*

**ՍՈՒԼՖԱԹՕ**, *գ. Խինին, քինաքինա։*

**ՍՈՒԽՈՒԿ**, *գ. Ժաժիկի մեջ գործածվող կանաչու տեսակ։*

**ՍՈՒԿԵԼ**, *նբ. Շինել, կառուցել։*

**ՍՈՒԿԻՆ**, *գ. Անասունի մեջքի փափուկ միս, ֆիլե։*

**ՍՈՒՆ**, *գ. Սյուն։*

**ՍՈՒՍ**, *ած. Լուռումունջ։*

**ՍՈՒՎԱՐԻ**, *գ. Հեծյալ։*

**ՍՈՒՏԻԿ-ՄՈՒՏԻԿ**, *ած. Կեղծ։*

**ՍՈՒՐԱԹ**, *գ. 1) Տիպար, պատկեր։ 2) Դիմանկար, դեմք։*

**ՍՈՒՐԱԹՍԸԶ**, *ած. 1) Դալկադեմ, գունատ։ 2) Վախեցած։*

**ՍՈՒՐԱՀԻ**, *գ. Գինու շիշ։* Խօրօտ-խօրօտ տարահի, էրկնավըզիկ սուրահի։

**ՍՈ̈ՒՐՈ̈Ւ** *(նաև՝ Հթ.), գ. Ոչխարի հոտ։* Վոչխըրներ սարի դօշին կարածին *(Վն.)։* Մէյ սո̈ւրո̈ւ վոչխար կոտորվան *(Վն.)։* Վօխչըրի սո̈ւրո̈ւն էլավ սարի դօշ *(Հթ.)։*

**ՍՈՒՐՈՒԽ**, *ած. Սրածայր։*

**ՍՈՒՔ[3]ԵԼ**, *նբ. Զարդարել։*

**ՍՈՒՖՐԱ**, *գ. Մեծ սփռոց։*

**ՍՈՒՖՐԱԹՕ**, *գ. Խինին, քինաքինա։*

**ՍՕԲԱ**, *գ. Թիթեղյա վառարան։*

**ՍՕԼ**, *1) գ. Կոշիկ։ 2) ած. Ձախ։*

**ՍՕԼԱԽ**, *ած. Ձախլիկ։*

**ՍՕԼԿԱՐ**, *գ. Կոշկակար։* Սօլկըրի սօլ խին կէլնի։

**ՍՕԼԿԸՐՆՈՑ**, *գ. Շուկաներում կոշկակարանոցների շարք, բաժին։*

**ՍՕՂԲԱԹ**, *գ. Խնջույք, հավաքույթ, քաղցր խոսակցություն։*

**ՍՕՄՕՆ**, *գ. Հացատեսակ, որ թխվում էր հատկապես զորքի համար։*

**ՍՕՅ**, *գ. Տեսակ, ցեղ։*

**ՍՕՅՍԸԶ**, *ած. 1) Անտոհմ։ 2) Անտեր։ 3) Անպիտան։*

**ՍՕՅՍՈՓ**, *գ. Ամբողջ ցեղը, տոհմը։*

**ՍՕՆ**, *գ. Վերջ։*

**ՍՕՆԱ**, *ած. Բարձրահասակ։*

**ՍՕՎՐՈՒԹՔ[3]**, *Վն.*, **ՍՕՎՐՈՒԹ**, *Լիմ, գ. Սովորույթ։*

**ՍՕՎՐՈՒԿ**, *նբ. ած. Սովորած։*

**ՍՕՐԱ** *(նաև՝ Բմ.), մկ. Այնուհետև, հետո։* Խաց կէրան, սօրա ճա̈մբա̈խ գ'ա̈ցին *(Բմ.)։*

**ՍՕՓԱ**, *գ. Մահակ։*

**ՍՕՓԱՉԻ**, *ած. Մահակավոր։ Ծան. – Պոլսում դաշնակցականներին անվանում էին* սօփաչի։

**ՍՕՖԻ**, *ած. Մոլեռանդ մաքրակյաց, մաքրասեր։*

**ՍՕՖԹԱ**, *գ. Մահմեդական կրոնավոր։*

# Վ

**ՎԱ՛**, *ձ. Զարմանք արտահայտող բացականչություն՝ մի՞թե, ի՞նչ ես ասում:*

**ՎԱԱԴ ԱՆԵԼ**, *1) Կտակել, ավանդել: 2) Խոստանալ:*

**ՎԱԴԷ**, *գ. Պայմանաժամ, ժամկետ:*

**ՎԱ̈ԶԱՆ**, *ած. Շատ վազող:*

**ՎԱ̈Զ ԷԼՆԵԼ**, *Զանց առնել, հրաժարվել:*

**ՎԱ̈Զ ԸՆՑՆԵԼ**, *Վն. Ձեռ քաշել, հրաժարվել:* Էտ պա̈նէն վա̈զ ընցի *(Վն.):*

**ՎԱԶԻՐ**, *գ. 1) Վարչապետ: 2) Նախարար:*

**ՎԱ̈Զ ԿՅԱ̈Լ**, *Լիմ, Ձեռք քաշել:* Էտ պա̈նից վա̈զն արե *(Լիմ):*

**ՎԱ̈ԶԿԱՆ**, *ած. Վազող:*

**ՎԱ̈ԶՈՒԿ**, *չբ. ած. Վազած, երբ մանկական խաղի մեջ մեկը վազելու իր պարտականությունն արդեն կատարել է և սպասում է նոր հերթի:* Նա վա̈զուկ ի:

**ՎԱԶՎԸՌՏԿԵԼ**, *չբ. Այս ու այն կողմ վազվզել:*

**ՎԱԹԱՆ**, *գ. Հայրենիք:*

**ՎԱ̈ԼԱ̈Դ**, *գ. Ճանապարհ ցույց տվող:*

**ՎԱԼԱՀ-ԲԻԼԱՀ**, *վ. Ճշմարիտ խոսք, իրավ որ, աստված:*

**ՎԱ̈ԼՎԱ̈ԼԱ̈**, *գ. Հարայհրոց, իրարանցում, աղմուկ-աղաղակ:*

**ՎԱ̈ԼՎԱ̈ԼԱ̈ԶԻ**, *ած. Աղմկարար:*

**ՎԱԽԷՐԱԿ**, *գ. Մահվան սարսափից առաջացած հիվանդություն:*

* Վա̈խէրակը պըռնել, *Բուժել:*

**ՎԱ̈ԽԼՈՒԿ**, *Վն. ած. Վախկոտ:* Նա̈զա̈ր վա̈խլուկ էր *(Վն.):*

**ՎԱ̈ԽԸՏՍԸԶ**, *ած. 1) Ժամանակ չունեցող, զբաղված: 2) Անժամանակ, կանխահաս:*

**ՎԱ̈ԽՏ** *(նաև՝ Կճ. Լիմ), գ. Ժամանակ:* Վա̈խտին խասան տեղ *(Կճ.):*

**ՎԱԾԾՈՒՆ**, *Լիմ, թ. Վաթսուն:*

**ՎԱԿԸՖ**, *տե՛ս* **ՎԱԿՈՒՖ**:

**ՎԱԿՈՒՖ**, *գ. Բարեգործական նպատակով մահմեդականների կրոնական հաստատությանը կտակված, նվիրված հող, անշարժ սեփականություն:*

**ՎԱԿՈՒՖԱԿԱՆ**, *ած. Հարկերից ազատված:* Վակուֆական հողեր:

**ՎԱ̈Ղ**, *մկ. 1) Նաև՝ Կճ. Վաղը, էգուց:* Փէսէն վա̈ղ կուկյա̈ *(Վն.):* *2) Կանուխ:* Վա̈ղ ա̈ղօթըրնին արի մեր արտ *(Վն.):* ***Ծան.*** – ***Ավելի գործածական են*** կանուխ, շատ ***բառերը*** *(Վն.):*

**ՎԱՂԴԱ**, *գ. Ժամկետ:* Չյում վոր իմ վաղդէն թըմըմի:

**ՎԱ՜Յ**, *ձ. Ցավ, վիշտ արտահայտող ձայնարկություն:*

**ՎԱՅՆԱՁԱՐ**, *մկ. Ճարահատյալ, ակամայից:*

**ՎԱՅ-ՎԱՅ ԹԱՐԼԱՍԻ**, *Ողբ ու կոծի արտ: Ծան. – Այդպես էր կոչվում Ավանց գյուղի այգիների վերջում ընկած արտը, որտեղ կանգ էին առնում պանդխտության գնացողներն ուղեկցողների հետ և երկարատև լացով բաժանվում իրարից:*

**ՎԱՅՐԱԳ** *գ. Վայրի տանձ:* Էթա̈նք մէշէն, վայրագ քաղենք *(Կճ.): Ծան. – Վանում միայն մշակված տանձ է եղել,* վայրի տանձ *հասկացության համար կոնկրետ բառ չի եղել:* Արճ տանձ կուտի *(Վն.):*

**ՎԱ̈ՆԻՑ**, *գ. Վանքի:* Անունը տրեր ի ծուռ, վա̈նից խավերը կուտի:

**ՎԱ̈ՌՑՔ**, *գ. Ռոճիկ, աշխատավարձ:*

**ՎԱՍԱԼԱՄ**, *մկ. Վերջապես:*

**ՎԱՍՎԱՍԱ**, *ած. Կասկածամիտ:*

**ՎԱՍՎԱՍԱԼԻ**, *ած. Կասկածահարույց:*

**ՎԱ̈ՍՏԸԿԵԼ**, *նբ. 1) Շահել: 2) արհմր. Երեխա ունենալ:*

**ՎԱՏԿԵՆ**, *ած. Անհասկացող:*

**ՎԱ̈Ր**, *գ. Նավի թիակ:*

**ՎԱ̈ՐԱ̈Կյ**, *գ. Վարագ, Այգեստանից 7-8 կիլոմետր հեռու գտնվող վանք:*

**ՎԱ̈ՐԱ̈ԿՑՈՒՌ**, *գ. Վարագույր:*

**ՎԱ̈ՐԱ̈Մ**, *գ. 1) Խոց: 2) Թարախ: 3) Նախատական բառ:* Վա̈րա̈մ ուտես:

**ՎԱ̈ՐԱ̈Մ-ԹԱԼԱԾ**, *ած. նխտ. Զազրելի:*

**ՎԱ̈ՐՁԵԼ**, *չբ. Վազել:*

**ՎԱ̈ՐԹԻԾՈՑ** *(նաև՝ Հթ.),* **ՎԱ̈ՐԹ Ի ԾՈՑ, ՎԱՐԴԻ ԾՈՑ**, *Կարմրուկ:* Վա̈րթիծոց //կարմըրուկ տըղէյներաց խիվընդութէն ի *(Վն.):* Վա̈րթիծոց ճըժեր կըլխանեն *(Հթ.): Ծան. – «Վարակիչ» հասկացության համար հատուկ անվանում չկար: Կար* կըպնել, *որ նշանակում էր թե՛ «հիվանդանալ», թե՛ «վարակվել»:*

**ՎԱ̈ՐԺԱ̈ՊԵՏ**, *գ. Ուսուցիչ:*

**ՎԱ̈ՐԺԱ̈ՊԵՏԱՆՈՑ**, *գ. Վանում 1912 թվականին Եգիպտոսի հայ բարեգործական ընկերության կողմից բացված սեմինարիա, վարժարան:*

**ՎԱ̈ՐԺԱ̈ՏՈՒՆ**, *գ. Դպրոց:*

**ՎԱՐԾԵԼ**, *նբ. Վարձել:*

**ՎԱՐՀԱՍԸԼ**, *մկ. Ի վերջո, վերջապես:*

**ՎԱՐՈՑ**, *գ. Անասուններըը քշելու ճիպոտ:*

**ՎԱ̈ՐՏԷՎԱ̈Ր**, *գ. Վարդավառ:*

**ՎԱՐՑՔ**, *գ. Վարձք:*

**ՎԱ̈Քյ**, *գ. Փայտյա հարմարանք, որի միջով ջուրը սրընթաց վայր հոսելով պտտեց-*

*նում է ջրաղացի անիվը:* Վա̈քʼի մէչ խավ ի ընգʼե *(Վն.):*

**ՎԱ̈ՔԻԼ**, *գ. Փոխանորդ, տեղակալ, տեղապահ:*

**ՎԱ̈Ք$^{Յ}$ՏԵՂ**, *գ. Վագի գլուխը, ջրաղացի նավի գլխին ծառազարդ զովասուն ավազան:*

**ՎԵՐՋՆԱՑ ԿՅԱ̈Խ**, *Ուշ ժամին, գիշերվա սկզբին:*

**ՎԵՐՋՆԵԿ**, *ած. Վերջին ծնունդ:*

**ՎԵՐՏԻՐ ԱՆԵԼ**, *Խորհել, մտմտալ:*

**ՎԵՐՑՈՒՑԵԼ**, *տե՛ս* **ՎԵՐՈՒՑԵԼ***:*

**ՎԵՐՈՒՑԵԼ**, *Վն. նբ. Վերցնել:* Թըվանքʼըս վերուցի, կընա̈ցի ավի *(Վն.):*

**ՎԷԼԷԼ**, *նբ. Վայելել:*

**ՎԷԼՔ**, *գ. Վայելք:*

**ՎԷԼՕ**, *գ. Կանացի վզնոց, շարֆ:*

**ՎԷՐ**, *կ. Վրա:* Սինու վէրէն խաց չըկա: Շէն անուն վէր ավեր քʼաղքʼին:

**ՎԷՐԱԻՍԻԱ**, *տե՛ս* **ՎԷՐԱՍԻԱ***:*

**ՎԷՐԱՍԻԱ**, *1) ած. Ապառիկ: 2) վ. Եթե տա:*

**ՎԷՐԱ-ԻՍԱ**, *տե՛ս* **ՎԷՐԱՍԻԱ***:*

**ՎԷՐԱ ՏԸՆԵԼ**, *Հաշվի առնել, բանի տեղ դնել:*

**ՎԷՐԱՆ**, *գ. ած. Ավերակ:*

**ՎԷՐԱՎԸՐՋՏԻԿ**, *մկ. Հարևանցիորեն, անփութորեն:*

**ՎԷՐԳ$^{Յ}$Ի**, *գ. Տուրք, հարկ:* Պարտքʼերն ու վէրգʼիները վէր մէյ մէկու սեխչուան մընա̈ցին:

**ՎԷՐԻ**, *ած. Վայրի:* Վէրի էծ:

**ՎԷՐՈՒ**, *Կճ. ած. Վայրի:*

**ՎԷՐՈՒՑ**, *նբ. 1) Վերցրեց: 2) Սկսեց:* Վէրուց ասաց, վէրուց կընա̈ց:

**ՎԸԶԶԱԼ**, *չբ. Քամին ուժգին փչել:*

**ՎԸԶՎԸԶԱԼ**, *չբ. Քամին ուժգին փչել:*

**ՎԸԶՎԸԶՈՑ**, *գ. Ուժգին քամու ձայն:*

**ՎԸԶՆՈՑ**, *Վն. գ. Վզից կախվող զարդարանք:* Նա̈ղա̈նենց խաթուն առանց վըզնոց տընեն// տընից տո̈ւս չի կʼա̈ *(Վն.):*

**ՎԸԶՈՒԼՆԻԿ$^{Յ}$**, *Հթ. գ. Վզից կախվող զարդարանք:* Խառսին վըզուլնիկʼ կընէցին *(Հթ.):*

**ՎԸԹՎԸԹԱՆ**, *ած. Ճլվլան, անդադար խոսող:*

**ՎԸԺԱԼ**, *չբ. Ճչալ:*

**ՎԸԺՈՑ**, *գ. Ճիչ-աղաղակ:*

**ՎԸԺԸՐԿՏՈՑ**, *գ. Խառնիխուռն ձայներ:*

**ՎԸԼԱ̈Լ** *(նաև՝ Հթ.), նբ. Լվանալ:*

**ՎԸԼԱԾԿ$^{Յ}$**, *Լիմ, գ. Լվացք:*

**ՎԸԼԱ̈ՍԿ**, *Հթ. տե՛ս* **ՎԸԼԱԾԿ$^{Յ}$***:*

**ՎԸԼԱ̈ՑՔ**, *գ. Լվացք:*

**ՎԸԼՎԸԼԱՑՆԵԼ**, *չբ. Արագ-արագ անկապ խոսել, դուրս տալ:*

**ՎԸԼՎԸԼԻԿ**, *տե՛ս* **ՎԸԼՎԸԼՈՒԿ***:*

**ՎԸԼՎԸԼՈՑ**, *գ. տե՛ս* **ՎԸԼՎԸԼՈՒԿ**։

**ՎԸԼՎԸԼՈՒԿ**, *գ. 1) Աղետի, կոտորածի սպասում։ 2) Տագնապ, իրարանցում։* Վըլվըլուկն ինգ՚եր ի ք՚աղաք՚։

**ՎԸԽԿԱԼ**, *չբ. Հաճախակի հազալ։*

**ՎԸԽԿՈՑ**, *գ. Սաստիկ հազալու հետևանքով հազխեղդի ձայն։*

**ՎԸԿՎԸԿԱԼ**, *չբ. Վկայել, կանխազգալ։* Սիրտըս կըվըկվըկա։

**ՎԸՅԸՔՆԵԼ**, *չբ. Շատ ուտելուց անհանգիստ զգալ։* Շատ կէրա, վըյըքնեցի։

**ՎԸՅՎԸՅՆԳ՚ԱՑՆԵԼ**, *չբ. Քամին շառաչել։*

**ՎԸՆԳՎԸՆԳԱԼ**, *չբ. Կաղկանձել, վնգստալ։*

**ՎԸՆԳՎԸՆԳԱՑՆԵԼ**, *նբ. Լացացնել։*

**ՎԸՇ**, *վ. Ափսոս։*

**ՎԸՇ ԱՆԵԼ**, *Ափսոսալ։* Ասեղ կոտրավ, վըշ կանի, կիսուր մեռավ, թըշ կանի։

**ՎԸՇԱԼ**, *չբ. Հոսող ջուրը շառաչել։*

**ՎԸՇՎԸՇԱԼ**, *չբ. Մեղմ հեծեծալ։*

**ՎԸՇՏ-ՎԸՇՏ**, *մկ. Արագ-արագ գնալ-գալով, մտնել-ելնելով։*

**ՎԸՌ**, *գ. Սուտ։*

**ՎԸՌԱՃՆԱԼ**, *չբ. Շտապել։* Կըվըռաճզնէր, վոր շոտ խասնի տուն *(Վն.)*։

**ՎԸՌԱՃ-ՎԸՌԱՃ**, *մկ. Շտապելով։ Ծան.* – Տէր վռազ *էր կոչվում այն քահանան, որը գերեզմաններն օրհնելու օրը կարճ էր կապում օրվա աղոթքը, որպեսզի հասցնի շատ գերեզմաններ օրհնել։*

**ՎԸՌԱՆ**, *գ. Փակիչ, սեպ։*

**ՎԸՌԵԼ**, *չբ. 1) Ստել։ 2) Սեպը պինդ խրել։ 3) Խցել։*

**ՎԸՌԸՇԻԿ**, *գ. 1) Ռշտունցու պատրաստած շատ ամուր կոշիկ, որ հյուսվում էր մազե թելից, առանց կաշվի և մեխի։ 2) Առհասարակ գյուղացի։ 3) Մասնավորապես ռշտունցի, Ռշտունյաց գավառից, որը գտնվում էր Վանի հարավում՝ Մոկաց աշխարհը ներառյալ։*

**ՎԸՌԹԿԱԼ**, *չբ. Բռնկվել։* Կըրայ վըռթկաց *(Վն.)*։

**ՎԸՌԹՎԸՌԹԱԼ**, *չբ. 1) Բոցկլտալ։* Կըրակը կըվըռթվըռթա։ *2) Դողալ։* Ցըրտից կըվըռթվըռթա։

**ՎԸՌԻԿ**, *գ. Ջավարի փոշուց պատրաստվող անյուղ ու ջրիկ արգանակ, հասարակ կերակուր։*

* Վըռիկ ուտող, *Աղքատ ու խեղճ։*

**ՎԸՌՎԵԼ**, *չբ. 1) Դեմ առնել, խցանվել, ինչպես վըռանը ամրանում է ու դուրս չի գալիս։* Ջընջոցը վըռվեց շուշի մեչ, տո՛ւս չէլնի։ Ծեռը վըռվե փառչի մեչ։

**ՎԸՌՎԸՌԱԼ**, *չբ. 1) Փայլփլել: 2) Բոռբոռալ, բարկանալ:*

**ՎԸՌՏԵԼ**, *չբ. Կիսաեփ մնալուց միսը պնդանալ և դժվարությամբ եփվել:*

**ՎԸՌՏՈՒԿ**, *ած. Կիսաեփ:*

**ՎԸՌՕԾ**, *գ. Վռիկի տարատեսակ՝ ճավար, թերթերուկ և ջուր:*

* Վըռօշ կուտե՞ս, *Այնքան աղքատացել ես, որ լավ կերակուր չես կարո՞ղ ուտել:*

**ՎԸՍՎԸՍԱԼ**, *չբ. Տրտնջալ, դժգոհել:*

**ՎԸՐԱ-ԳԸԼՈՒԽԸ**, *գ. Հագուստ-կապուստը:* Վըրա-գըլուխը տեղն ի:

**ՎԸՐԱ ՀԱԶԵԼ**, *Մեկին վատաբանել, ետևից չարախոսել:*

**ՎԸՐԹԿԱԼ**, *Բմ. չբ. Բնկվել:*

**ՎԸՐԸՆՋԱԼ**, *չբ. Դողալ:* Ցրտից վըրըրնջալ:

**ՎԸՐՎԸՐԸՆՋՈՑ**, *գ. 1) Լաց, տրտունջ: 2) Ժխոր:*

**ՎԻԼԱԿ**, *գ. Թել մանելու հարմարանք:*

**ՎԻԼԱՅԵԹ**, *գ. Նահանգ, որը կառավարում էր Կ.Պոլսից ուղարկվող նահանգապետը՝ վալին: Վիլայեթը բաժանվում էր սանջակների (գավառների), որոնք նույնպես կառավարում էին մայրաքաղաքից ուղարկվող գավառապետները (մյութեսարիֆ). սանջակները բաժանվում էին գավառակների (մյուդյուրլըղ կամ կայմակամլըղ), որ կառավարում էին գավառապետներ՝ մյուդյուրներ, ինչպես տեղական քուրդ աղաներից, այնպես էլ ոչ զինվորական պաշտոնյաներից կամ աստիճանով հավասար մայորներ՝ զինվորական սպաներ՝ կայմակամներ:*

**ՎԻԼԿԵԼ**, *չբ. Ծլկել, փախչել:*

**ՎԻԾԿԱՎՈՐ**, *գ. Վիծկու մաճկալ:*

**ՎԻԾԿԻ**, *գ. Արոր:*

**ՎԻ՞Ն**, *հթ. դ. Ո՞ւմ:* Վի՞ն ազգից էք՚ *(հթ.)*:

**ՎԻՋԴԱՆ**, *գ. Խիղճ:*

**ՎԻՍԱԼ** *(նաև՝ հթ. Լիմ), չբ. Ջզվել:* Մամիկ՚ մըկնէրից կըվիսա *(Լիմ)*:

**ՎԻՍԿԻ**, *գ. Արոր:*

**ՎԻ՞Ր** *(նաև՝ Բմ.), դ. Ո՞ւմ:*

**ՎԻՐԵՎ**, *մկ. Վերև:* Ցած չի նըստե, վիրև էլ տեղ չըկա:

**ՎԻՐԻ**, *հթ. ած. Վայրի:*

**ՎԻՐԻՆ ՎԱ̈ՐԱ̈Կʒ**, *Ավերակ վանք Վարագա սարի վրա: Ծան. – Մինչև 1915 թ. գործող Վա̈րա̈կ՚ա̈ վա̈նք՚ը, որին թուրքերն անվանում էին Յեդի քիլիսե (յոթ եկեղեցի), գտնվում է ոչ թե Վարագա, այլ Կարմրվորի (Կարմըրվորի) սարի վրա, նրա հարա-*

*վային վերջավորության մոտ: Կարնվորա (Կարմըրվորա) և Վարագա զուգահեռ սարերը գտնվում են Վանի արևելյան կողմում և իրարից բաժանված են շատ նեղ կիրճով: Կարնվորա սարը հողապատ է, հիմնականում ջրավետ և կանաչապատ, իսկ Վարագա սարը վերջանում է պղնձագույն փխրուն քարերով: Հեռվից, արևի ճառագայթների տակ փայլփլելով, թողնում է ոսկեզօծվածի տպավորություն: Հավանաբար վարագել-ոսկեզօծել բառից էլ առաջացած լինի նրա անունը:*

**ՎԻՐՄԻ՞Ց**, *դ. Ումի՞ց:*

**ՎԻՐՆԻ՞Ց**, *տե՛ս* **ՎԻՐՄԻ՞Ց**:

**ՎԻՐՈՒՑԵԼ**, *Լիմ, նբ. Վերցնել:* Թըվանգʸ վիրու, կʸընա̈ նէճիր *(Լիմ):*

**ՎԻՑԿԻ**, *Հթ. Լիմ, գ. Արոր:* Խող վիցկօվ կըվա̈րենքʸ *(Հթ.):*

**ՎՈՋՄԸՑԻ ԽԱԺ ՆԱ̈ՐՈՒ ՏԷՐ**, *Առնանդամ: Ծան. – Մոկաց բարբառին բնորոշ արտահայտություն, որ տարածված էր Վան քաղաքում:*

**ՎՈՋՆԻԿ**, *գ. Ոզնի:*

**ՎՈԺ**, *գ. Ուժ:*

**ՎՈԺԵԼ**, *չբ. Ուժ տալ:*

**ՎՈԺՏՈՒՆ**, *գ. Գութանի երրորդ լուծը:*

**ՎՈԺՏՈՒՆՎԱՐ**, *գ. Վոժտուն լուծը քշող հոտաղ:*

**ՎՈԺՕՎ**, *Վն. ած. Ուժեղ:*

**ՎՈԼՈՐԿՏԵԼ**, *չբ. Աչքն այս ու այն կողմ դարձնել, պտտեցնել:*

**ՎՈԼՈՐՍՎԵԼ**, *չբ. Ոլորվել:* Վոտըս վոլորսվեց, ինգʸա:

**ՎՈԽՃՈՒՄ**, *գ. Ողջույն:*

**ՎՈԽՉ**, *ած. 1) Ողջ-առողջ:* Տուն տեղ վո՞խչ են, խիվանդ չե՞ն *(Վն.): 2) Ամեն, ամենքը:* Վոխչի ջա̈ն ցուրտ ի մըտե *(Վն.): 3) Կենդանի:* Ֆա̈յթօն ինգʸե, կոտըրվե, Կարապէտ աղէն վոխչ ի մընա̈ցե *(Վն.):*

**ՎՈԽՉԱՐ**, *գ. Ոչխար:*

**ՎՈՂԴԱ**, *գ. Ժամկետ:*

**ՎՈՂԻԱ**, *գ. Փորձանք:*

**ՎՈՂՆԸՎԵԼ**, *Վն. չբ. Կպչել, ծեփվել:* Էնա̈սկընա̈ զա̈րկեց, վոր վողնըվավ պատին *(Վն.):* Վողնըվե, կըպʸե, մընա̈ցե պատի տակ:

**ՎՈՂՈՐՄԱԾԻԿ**, *ած. Լուսահոգի: Ծան. – Վողորմածիկ ասում էին գլխավորապես իգական սեռի հանգուցյալի համար, իսկ լուսահոգի՝ արական սեռի հանգուցյալի:*

**ՎՈՂՋԱՆՔ**, *գ. Առողջության մաղթանք:*

**ՎՈՆԹԸՐԿՎԵԼ**, *չբ. Կորչել, անհետանալ:*

**ՎՈՆՁԸՆԻ**, *Հթ. գ. Ոզնի:* Վոզընկան փըշեր օց կըսպանեն:

**ՎՈՌԱՋԱՏԻԿ**, *1) գ. Հետույքով ետ-ետ գնալը: 2) ած. Հետույքի վրա ետ-ետ գնացող:*

**ՎՈՌԱԶՃՏԻԿ ԱՆԵԼ**, *Իմիջիայլոց, անփույթ կատարել*: Վոռազճտիկ արեց կ'ռոծը: Տնաշէնիճ մարթ, շատ վոռազճտիկ կ'ռոծ կանես:

**ՎՈՌ ՃԸՂԵԼ**, *Հաճոյանալ, մեծ ճիգ գործադրելով սաստիկ քծնել*: Օր-իրիկուն վոռ կըճըղի, համա պճնի տեղ տըրող չըկա:

**ՎՈՌՍՈՂ**, *գ. Սողալով ետ գնալը*:

**ՎՈՌՎԱԾՔ**[3], *գ. Սանդերքի ատամների վրա մնացած ոչ պիտանի բուրդ*: Վոռվածք' մըընացե սանդերքի վէրէն:

**ՎՈՌՏԻՏԻԿ ԱՆԵԼ**, *Մի տեղ երկար նստել ու մնալ*:

**ՎՈՌՑ**, *ած. Վորձ*:

**ՎՈՌՔ**[3], *գ. 1) Ամանի, դույլի տակ, հատակ*: Փարխըջիս (*դույլ*) վոռք'ը ծայվեր ի: Պուտկի վոռք' ծակվե (*Վն.*): Կադալիկ ինգ'ճվ կոտրվեց, մինակ վոռք'ը մըընաց: *2) Վերջ, ծայր*: Իկ'ու վոռք' զի տըփեցին, վօսլայ-վօսլայ պէյպըկեցին:

**ՎՈՍԼԱՅ-ՎՈՍԼԱՅ**, *մկ. Հատ-հատ, շերտ-շերտ*:

**ՎՈՍԿՐԻՃ**, *գ. Ոսկերիչ*:

**ՎՈՍԿԸՐՃԸՆՈՑ**, *գ. Ոսկերիչների թաղ շուկայում*:

**ՎՈՍՊԷՍԸՊԱՍ**, *գ. Ոսպով եփված արգանակ*:

**ՎՈՍՏԻՆ**, *ած. Անջրդի*:

**ՎՈ՞Վ**, *դ. Ո՞վ*: Վո՞վ ի մեր տռ՞ւռ կըծիծի:

**ՎՈՎԵՐ**, *Լիմ, դ. Ովքեր*:

**ՎՈՏ**, *գ. Ոտք*:

* Էրկու վոտը մէկ սոլ դընել, *Համառել*:

* Մեկի խետ վոտ թճլել, *Զգտել հավասարվել*:

* Վոտըդ դոշակով մեկ էրկընցու, *Չափդ ճանաչի՛ր*:

* Վոտի կայնել, *Դրությունը բարելավել*:

* Վոտ ու կ'ըլօխ շըտկել, *Լավ հագնվել*:

* Վոտը կապել, *Ամուսնացնել*:

* Վոտը կըտրել, *Գնալ-գալը դադարեցնել*:

* Վոտով-ձեռով մարդ ի, *Գործունյա է*:

* Վոտից-ձեռից ինգ'նել, *Շատ ծերանալ, անդամալույծ դառնալ*:

* Վոտը վոտի վրա դընել, *Աղայություն անել*:

* Վոտաց տըկի խողն էլնեմ, վոտաց ճ՞ւրը խըմեմ, *Նվաստ ծառադ դառնամ*:

* Աշխարհը վոտի տակ տալ, *Երկրե-երկիր թափառել*:

* Վոտ'ը ք'արին առնել, *Անհաջողության հանդիպել*:

* Վոտովն ուտել, անվոտը մեր ծառէզ ի, *Քրդերին ուղղված ասացվածք: Քուրդը սև չամիչ է առնում, որի մեջ շարժվող սև ուտիճներ են լինում: Քուրդը նախ ուտում է շարժվողները, որպեսզի չփախչեն*:

**ՎՈՏԱՊԾ**, *ած. Ոտաբոբիկ:*

**ՎՈՏԱՎՈՐ**, *ած. Հետիոտն:*

**ՎՈՏԿՈԽ**, *գ. Երեխայի չորեքթաթ սողալը:*

**ՎՈՏԿՈԽՈՒԿ**, *գ. Երեխայի չորեքթաթ սողալը:*

**ՎՈՏՆԱԽՊԵՐ**, *գ. Գուլթանի էշն ու առատամը միացնող զույգ փայտ:*

**ՎՈՏՆԱԿՈՏՈՐ ԼԻՆԵԼ**, *Շատ հոգնել:*

**ՎՈՏՆԼԸՎԱ**, *գ. Եկեղեցական տոն, ավագ հինգշաբթի:*

**ՎՈՏՆԱՏԱԿ** *ՏԱԼ, Տրորել:*

**ՎՈՏՔ³**, *գ. 1) Գութանի էշն ու առատամը միացնող փայտ: 2) Երկարության չափ:*

**ՎՈՐԵԹ**, *գ. Որդի, զավակ:*

**ՎՈՐԹ**, *գ. Հորթ:*

**ՎՈՐԹԻԿ**, *գ. Հորթիկ:*

**ՎՈՐԹԿԱԹՈՂ**, *գ. Հորթերը կաթից կտրելը:*

**ՎՈՐՈՏՈՑ**, *գ. Որոտում, ժխոր, աղմուկ:*

**ՎՈՐՏԻ**, *գ. Որդյակ:*

**ՎՈՐՊԵՎԷՐԻ**, *Վն.*, **ՎՕՌՓԷՎԷՐԻ**, *Հթ. գ. Այրի:* Վորպեվէրի կընգ'ան ծանդըր կուկ'էր ուր էրեխէք' պախել *(Վն.):*

**ՎՈՒՍԿՈՒԽԱՏ**, *գ. Ոսկեհատ:*

**ՎՈՒ-ՎՈՒ**, *ձնկ. Վերքը ցավում է:*

**ՎՕՐԹԻԿ³**, *Հթ. գ. Հորթ:*

# Տ

**ՏԱԲՂԻՆ**, *Հթ. գ. Գազար:*

**ՏԱԶ ԱՆԵԼ**, *Լռել, ծպտուն չհանել:* Էրէխէն տազ ի արե, մէյ զիան չըտա:

**ՏԱԶ Կ³ԸԼՕԽ**, *Սափրագլուխ, քաչալ:*

**ՏԸԼ**, *գ. Կաթնատու անասունների ծննդաբերությունից հետո գոյացած առաջին խեժանման կաթը, դալ:* Նորածին կօվու կաթ վոր իփեն, կէլնի տըլ *(Վն.):*

**ՏԸԼՄԸ**, *գ. Պանիր պատրաստելու մայա:*

**ՏԸԼԸԽ**, *գ. Փայծաղ:*

**ՏԸԼԸՐ**, *ած. Դալար:*

**ՏԱԼԱՑՈՒԿ**, *գ. Տալիք, պարտք:* Տըո' ք'ո տալացուկը տոըա, ուրիշ պա'ն չենք' ուզե ք'եզնից:

**ՏԱԼՎ** *(նաև՝ Բմ. Լիմ), գ. Տալ, ամուսնու քույր:*

**ՏԸԽ**, *ած. Պառաված, ծերացած:* Տըխացած ախչիկը տուն կըմընա, էլ առնող չէլնի:

**ՏԸԽԱՆԱԼ**, *չբ. Պառավել:*

**ՏԱԽՏ**, *գ. Թոնրատան մաս, բաժին: Ծան. – Թոնրատունը բաժանվում էր երկու մասի՝ վիրին տախտ և ցածի: Վի-*

*րինը՝ թոնրի շուրջ մոտ 20 սմ բարձրությամբ, ծածկվում էր խսիրով և ջուլով՝ կարպետով: Յածի տախտը թոնրատան դռան մոտի հատվածն էր:* Մէյ տուն էրկու տանտըլկին վոր էլնի, տախտըն անավել կըմըռնա։

**ՏԱԽՏ**, *Հթ. գ. 1) Գետին:* Տախտ ավիլեց *(Հթ.)։ 2) Հատակ:*

**ՏԱԽՏԱԿ ՊԱԿԱՍ**, *Խենթ, ծալը պակաս:* Մուրոյի տախտակ պակաս էր, բէօբլի արեց, ասքյարները խփիցին, սպանիցին։

**ՏԱ̈ԽՈՒԿ**, *գ. 1) Դահուկ: 2) Սահնակ:* Ծըմռան ֆա̈յթօն չէր պա̈նե, տա̈խուկով կէրթին շուկա։

**ՏԱ̈ԽՑ**, *գ. Դաղձ:*

**ՏԱԿ**, *Վն. մկ. Ներքև:* Տանըսից էճա̈ն տակ *(Վն.): Ծան. – Որևէ իրի ստորին մասը կոչվում էր* վոռքʲ:

**ՏԱՀʲԿՈՃ**, *Վն. գ. Կոճապղպեղ:* Կանաչ բիբա̈ր ու տահʲկոճ առավ// առեց *(Վն.)։*

**ՏԱՀՅՈՒՅԵԼ**, *Վն. նբ. տե՛ս* **ՏԱՅՅՈՒՅԵԼ**:

**ՏԱՂՄԱ**, *գ. Մաքսատան դրոշմ:*

**ՏԱՂՄԱՋԻ**, *գ. Մաքսատան դրոշմ դնող:*

**ՏԱ̈Ճ**, *գ. Արմտիքի դեզը դաջելու նախշազարդ գործիք:*

**ՏԱ̈ՃԵԼ**, *նբ. Տասանորդը վերցնելուց առաջ արմտիքի դեզը կնքել, որպեսզի տերն իր արմտիքից չգողանա:*

**ՏԱՃԻԿ**, *գ. Թուրք: Ծան. – Թազի (որսկան շուն) են անվանել ձիավոր արագավազ արաբներին, ժամանակի ընթացքում թազին դարձել է տաճիկ և գործածվել թուրքերին մատնանշելու համար:*

**ՏԱՃԿԱՍՏԱՆ**, *գ. Թուրքիա:*

**ՏԱՃԿԸՆԱԼ**, *չբ. Անհավատ դառնալ:*

**ՏԱՃԿԸՆԱԿ**, *մկ. Թուրքավարի:*

**ՏԱՃԿՈՒԹԵՆ**, *գ. 1) Դաժանություն, անողորմություն: 2) Երախտամոռություն:* Տաճկութեն միա̈ անե, նեղ օրի եմ, թող մի նա̈ֆա̈ս քʲաշիմ, պարտքըտ կուտամ:

**ՏԱՄԱ**, *գ. Շախմատի նման խաղի տեսակ:* Ըխթիարներ բառօժին նստել, տամա կըխաղան:

**ՏԱ̈ՄԱ̈Ղ**, *գ. Քիմք:*

**ՏԱՄԱՂԼԸՂ**, *գ. Սերնդագործ անասուն:*

**ՏԱՄԱՐ**, *գ. 1) Երակ: 2) փխբ. Տրամադրություն:* Տամարն էկավ, կանի, տամարը չէկավ, չի անի:

**ՏԱՄԲԼԱԲԱՂ**, *գ. Թմբկահար:*

**ՏԱՄԲԼԱ ՏԱԼ**, *1) Սնանկանալ: 2) Կաթվածահար լինել:*

**ՏԱ̈ՄՈՆ**, *գ. Սալորի տեսակ, դամբուլ:*

**ՏԱՅ**, *Լիմ, կ. Տակ:* Խող լից պատի տայ *(Լիմ):*

**ՏԱ̈ՅԱ̈Ղ**, *գ. Նեցուկ, հենարան:*

**ՏԱՅՆԱԼ**, *1) Տաքանալ: 2) Ծեծել:* Համա կըքʲաշի քյառեշտի կո-

թը, կուկ՚ն դեխ կընիկ, մէյ քիչ խնոր կողրանք կըտայցուցի, կառնի, կէր-թա տուն։

**ՏԱՑՑԸՆԵԼ** *(նաև՝ Բմ.), նբ. Տաքացնել։*

**ՏԱՑՑՈՑ**, *Բմ. գ. Տենդ։*

**ՏԱՑՑՈՑ-ՏՕՂՑՈՑ**, *Լիմ, տե՛ս* **ՏԱՑՑՈՑ**։

**ՏԱՑՑՈՒՑԵԼ**, *Վն. Հթ.,* **ՏԱՑՀՑՈՒՑԵԼ**, *Վն. նբ. 1) Տաքացնել։ 2) Բարկացնել։ 3) Սիրահարեցնել։* Էն ախչիյ տայցուց վէր ուր խամ տըղուն *(Վն.)*։

**ՏԱ̈ՆԱԿ**, *գ. Դանակ։* Տա̈նակն իր կոթը չի տաշի։ Տա̈նկով կըզա̈նի, պա̈մբըկով կըփակի։

**ՏԱՆԵԼ**, *Վն. նբ. Խաղը շահել։* Թավլու խաղացինք՚//խաղցինք՚, օրթաղըս զիկ տարավ *(Վն.)*։

**ՏԱՆԻՍ** *(նաև՝ Հթ. Կճ.), գ. Կտուր, տանիք։* Տանըսի վէրէն ծո̈ւն ի տըրե *(Վն.)*։ Ըլնենք տանիս, խաղանք *(Կճ.)*։ Տանսէ տանիս ք՚ե խանեմ։

**ՏԱՆԿ**, *ած. Կենտ, զույգ-զույգ բաժանելիս մնացած մեկ հատը։*

**ՏԱՆԿԱԼԱԽ**, *գ. Դեղաբույսի տեսակ։*

**ՏԱՆՏԸԿԻՆ**, *գ. Տանտիկին։*

**ՏԱՆՈՒՏՆՕՐԻԿ**, *գ. Տան համար լավ պատրաստված, ընտիր հաց, խմորեղեն, գինի, յուղ, պանիր և այլն։*

**ՏԱՆՏՕՂԻԿ**, *ած. Դողդոջուն։*

**ՏԱՆՏՈՒՆ**, *գ. Թոնրատուն։*

**ՏԱՇՏ**, *Վն. գ. Ջրաղացի արկղ, որից ջուրենը թափվում է աղորիքի մեջ։* Տաշտ իլին ջորեն ի *(Վն.)*։

**ՏԱ̈ՇՏ**, *գ. 1) Դաշտ։ 2) Տաշտակ։*

**ՏԱՇՏԱԿ**, *գ. Խմորը հունցելու, ապա թխված լավաշն ամիսներով պահելու տախտակե կիսանդուկ, որը դրվում էր աթոռակների վրա կամ պարանով կախվում հացատան առաստաղից։* Մեռնեմ էն տաշտըկին, վոր տաշտակըմ էլ կա խետ կըշտին։

**ՏԱՇՏԱՔԷՐ**, *Հթ. Բմ. գ. Ակիշ։* Տաշտի խըմոր տաշտաքէրով քէրին *(Բմ.)*։

**ՏԱՇՏԱՔԵՐԻԿ**, *գ. Տաշտակի կողքերից խմորը քերելու երկաթե գործիք։*

**ՏԱՇՏԱՔԵՐՈՒԿ**, *գ. Տաշտակի կողերից քերված խմոր, որից թխված հացը հաջող չի ստացվում։*

**ՏԱ̈ՊԱ̈ԺՈՐԵԼ**, *չբ. Սարսափահար լինել ու ճչալ։* Էրէխէն շուն տիսավ, տա̈պա̈ժորեց։

**ՏԱ̈ՊԱ̈ՆՃԱ**, *գ. Ատրճանակ։*

**ՏԱՊԼԱԿԻՐԵՍ**, *ած. Կլորիկ ու մեծ դեմքով։*

**ՏԱՊԿԵԼ**, *նբ. 1) Տապակել։ 2) Կիսել, երկու տապակ անել ծիրանը, խնձորը և այլն։*

**ՏԱՊՂԻՆ** *(նաև՝ Կճ.), գ. Գազար։* Ծիժ տապղին կուտի *(Կճ.)*։

**ՏՃՌՆ**, *ած. Դառն։*

**ՏՃՌՆԱԼ**, *չբ. 1) Վերադառնալ։ 2) Նույն դասարանում մնալ։*

**ՏՃՌՆԱՐՈՒՆ**, *ած. Անհամակրելի։*

**ՏՃՌՆԻԿ**, *մկ. Դառնորեն։* Մեղավորը տճռնիկ իլճց։

**ՏՃՌՏԸԿՎԵԼ**, *կբ. Դատարկվել։* Մեր երկիր տճռտըլկցավ։

**ՏՃՌՑՈՒԿ**, *ած. Երկտարեցի, նույն դասարանում մնացած։* Տճռցուկ Արտաշ։

**ՏՃՍ**[1], *գ. Դաս։* Վճրժճպետ ի՞նչ տճս ի տըվե։ Տճսըրն շատ կճրտըցողն ի տաճկըցե։

**ՏՃՍ**[2], *գ. 1) Տոհմ։ 2) Տոհմակիցներ։*

**ՏՃՎՕՆ ՏՈՒՆ ՉԻ**, *Խելքը գլխին չէ։*

**ՏԱՏԱ**, *գ. 1) Տատիկ բառի կոչական ձևը։* Տատաճ, մի խօրօտ խեք՚աթ ասաճ *(Վն.)։ 2) Մեծ քույր, տանը մնացած հորաքույր։* Ես կ՚իտի, թե իմ տատին ուզող էր իկ՚ե։

**ՏՃՏՃԾՃՆ**, *գ. Փարթամ աճած ճյուղեր։*

**ՏՃՏՃԾԵԼ**, *չբ. Շատանալ, ուռճանալ, աճելով տարածվել։*

**ՏՃՏՃՍՏՃՆ**, *գ. Դատաստան։* Տճտըստըռնի օրվանից վճխցի՛։

**ՏԱՏՄԷՐ** *(նաև՝ Հթ. Կճ.), գ. 1) Ինքնուս մանկաբարձուհի։* Տատմէր էկավ մօտ ծըռնըռնդկանին *(Վն.)։* Տատմէր մոտ էկավ տըղացկանին *(Կճ.)։* Չում տատմէր էկավ, կըռնիկըռն ուրնուր ճզճտվավ։ *2) Հթ. Դայակ։*

**ՏՃՏՐԵԼ**, *Կճ. չբ. Հոգնել։* Շատ պճնէցի, տճտրա *(Կճ.)։*

**ՏՃՏՐԵԼ**, *չբ. 1) Դադար տալ։ Ծան. – Պանդուխտ վանեցին գանգատվում է հայի տարագիր վիճակից՝* «Հըմէն ք՚ար ուր տեղըռն ի տճտրե»։ *2) Խափանվել։* Ծճռաց պճնից, պճնից, տճտրավ *(Վն.)։ 3) Հանգստանալ։ 4) Չխոսել։ 5) Կանգ առնել։*

**ՏԱՌԹ**, *գ. Տավարի սալացած աղբ, որ օգտագործվում է որպես վառելիք։*

**ՏՃՌՆՃՎՃՐՃՄ**, *ած. մկ. Թախծագին, ցավագին սրտով։* Էտ վոր իմցա, տճռնճվճրճմ էլճ։

**ՏՃՐ**, *գ. Բլուր։* Չում տճրըմ չըպըլի, փոսըմ չի լըցվի։ *Ծան. – Վանի թաղամասերից մեկը կոչվում էր Կըլորտճր, որը բաժանվում էր երկու մասի՝ Վիրին և Ցածի Կըլորտճր։*

**ՏԱՐԱԺԱՄ**, *գ. Անժամանակ մահ։*

**ՏԱՐԹ**, *գ. Կուանոցում չորացրած անասնաղբ, որ կտրվում էր քառակուսի կտորներով, չորացվում և օգտագործվում որպես վառելիք թոնրի մեջ։*

**ՏՃՐԻԴՈՒՋ**, *1) ած. Ջառիվայր։ 2) գ. Վայրէջք։*

**ՏՃՐԻՎԵՐ**, *1) ած. Ջառիվեր։ 2) գ. Վերելք։*

**ՏԱ̈ՐԽԱՂ**, *գ. Իր բնական դիրքից շարժված բլուր:*

**ՏԱՐՎՈՒԿ**, *նբ. ած. Խաղը, գրազը տանուլ տված:*

**ՏԱ̈ՐՏԱ̈Կ**, *ած. Դատարկ:* Տա̈րտա̈կ սուֆրին դուզա չըկա:

**ՏԱ̈ՐՏԱ̈Կʲ ՏԵԽ**, *հթ. Ջուր, իզուր:*

**ՏԱ̈ՐՏԱ̈Ր**, *գ. Մանկական գըբոսանք:*

**ՏԱ̈ՐՏԸՂՆԵԼ**, *նբ. Ցիրուցան անել:*

**ՏԱ̈ՐՊԻՆ**, *գ. Դարբին:*

**ՏԱՐՈՒԿ**, *նբ. ած. Խաղը, գրազը շահած:*

**ՏԱ̈ՐՑ**, *Նորահարսի՝ առաջին անգամ հերանց տուն գնալը:* Առճին տա̈րց թանթանալի կէլնէր:

**ՏԱ̈ՐՑՈՒՑԵԼ**, *չբ. Սիրտը խառնել:*

**ՏԱ̈ՐՑԸՎՈՐ**, *1) ած. Այլակերպ, այլանդակ: 2) գ. Հրեշ:*

**ՏԱՓԱՆ**, *գ. Փոցխ:*

**ՏԱՓԱՆԵԼ**, *նբ. Փոցխել:*

**ՏԱՓԵԼ**, *չբ. Թաքնվել:*

**ՏԱՓ ԿԵՆԱԼ**, *տե՛ս* **ՏԱՓԵԼ**: Չը կիտեմ՝ որտեղ ի մըտե, տափ կացե:

**ՏԱՓԿԸՆՈՑԻԿ**, *գ. Պահմտոցի:*

**ՏԱՓԿՈԾ**, *գ. Կոճղապղպեղ, ղանջաֆիլ:*

**ՏԱՓՌԱՂԱՉ ԱՆԵԼ**, *Տրորել ու ցիրուցան անել, գետնին հավասարեցնել:*

**ՏԱՓՏԸՓԵԼ**, *նբ. Հողը ծեծելով հավասարեցնել:*

**ՏԱՔʲՈՑՔ**, *գ. Մարմնի ջերմության բարձրանալը:* Տաքʲոցք տա̈րցավ խըռըընցավ:

**ՏԱ̈ՔՕԹՔʲ**, *հթ. գ. Տենդ:*

**ՏԵՉԵԼՔʲ**, *գ. Տեսիլք:* Մըտքամո̈լոր պա̈նի մէչ ինգʲար ու խըրվար, խոկʲով-մարմնով տեզելքʲ կընա̈ցիր:

**ՏԵՂ[1]** *(նաև՝ հթ. Լիմ), գ. 1) Թույն:* Տեղ տըվին, մեռավ: *2) Բուժման միջոց:* Խասեա̈քʲ, տեղ ու դա̈րմա̈ն արեքʲ, ծեռաց կըգʲընա: *3) Աչքի ծարիր: 4) Պանրի մակարդ:*

**ՏԵՂ[2]**, *գ. 1) Վայր: 2) Բացած, փռած անկողին: 3) (նաև՝ Լիմ) Անկողին:* Իմ տեղ իսկե՞ր իս: *4) Պաշտոն:* Քʲո տեղը տաքʲ ի:

**ՏԵՂ[3]**, *կ. Փոխարեն:* Քʲո տեղ ես կէրթա̈մ: Քʲո տեղ զիկ զա̈րկին, ծիծիցին:

**ՏԵՂՈՑ**, *կ. Փոխարեն:*

**ՏԵՂԱՎՈՐԱՆՔ**, *գ. Տան կահկարասի:*

**ՏԵՂԱՎՈՐԵԼ**, *նբ. 1) Զետեղել, իրերն իրենց տեղը դնել: 2) Աղջկան հաջող ամուսնացնել: 3) Տղային հարմար գործի դնել:*

**ՏԵՂԲԱՏԵՂ**, *մկ. 1) Նույն տեղում: 2) Իսկույն:*

**ՏԵՂԵԼ**, *նբ. Թունավորել:*

**ՏԵՂԻԿ-ՏԵՂԻԿ**, *ած. Ամեն ինչ իր տեղին, կանոնավոր:*

**ՏԵՂԻՆ**, *ած. Դեղին:*

**ՏԵՂՄԱՇԿ**, *գ. Աչքի դեղի, ծարիրի աման:* Խարսներն էկան, ժողվան տեղմաշկի խա̈մմա̈ր:

**ՏԵՂՆԱԺԵՌ**, *ած. Դեղնավուն:*

**ՏԵՂՆԱՓՈՐԻԿ**, *գ. Թռչունի տեսակ:*

**ՏԵՂՆԸՍՏԵՂ**, *մկ. Տեղնուտեղը, իսկույն:* Ասածը տեղնըստեղ կատարվեց:

**ՏԵՂՆՈՏԵԼ**, *չբ. Դեղնել:*

**ՏԵՂՈՑՏԵՂ**, *մկ. Ճշտիվ, մանրամասնորեն:*

**ՏԵՂՏԻՐ**, *գ. Դեղդիր, աչքին դեղ քսելու համար ոսկրե հարմարանք:*

**ՏԷԶ**, *գ. Դեզ:* Քյաղած ցորենը տէզի մէջ կըխաանի:

**ՏԷՂԱՋՈՒԼ**, *Բմ. գ. Անկողին:*

**ՏԷՂԻՆ**, *Լիմ, ած. Շեկ:*

**ՏԷՂՆՈՒՑԿյ**, *Հթ. գ. Դեղնուց:*

**ՏԷՄ**, *մկ. Դեմ:* Կյիշերով էկավ իմ տէմ, շատ վա̈խցա:

**ՏԷՑՆԸՍՏԵՂ**, *մկ. Իսկույն:*

**ՏԷՆԴԱՌԱՋ**, *գ. Տյառնընդառաջ:*

**ՏԷՆԸՋՏԵՂ**, *տե՛ս* **ՏԷՑՆԸՍՏԵՂ**:

**ՏԷՊՆԵԼ**, *նբ. 1) Դիպչել: 2) Վնաս հասցնել:* Գյո̈ւլէն տէպավ վէրի վոչխըրին: Խօսկի մէչ տէպավ տըրկըցուն *(Վն.)*

**ՏԷՊՈՒԿ**, *ած. Դիպուկ, անվրեպ:* Շատ տէպուկ թվանք կըզա̈րկի:

**ՏԷՍՄՈՒԽ**, *գ. Բոցավառվելուց առաջ ծխի առատ բարձրանալը:*

**ՏԷՍՔԸՆԱԼ**, *չբ. Տեսք ստանալ, գեղեցկանալ:* Մուխսի Կյըրիկյո̈րի ախչիկ շատ ի տէսքընցե, մարթու տալու կյա̈խնն ի:

**ՏԷՐԱԹԱՂ**, *ած. Անեծք. տերդ մեռնի, թոշնի:*

**ՏԷՐԱՂՕԹԻԿ, ՏԷՐԱՂՕԹԻԿյ**, *Հթ. Լիմ, գ. Սամիթ:* Թուրշու մէչ տէրաղօթիկ (-յ) տիա̈(ր) *(Վն.)*:

**ՏԷՐԲԱՏԷՐ ԱՆԵԼ**, *Իրերը տեբերին հանձնել, վերադարձնել:* Մեռնելուց առաջ ամէն ինչ տէրբատէր արավ, խանգյըստացավ:

**ՏԷՐ-ՏԻՐԱԿԱՆ**, *գ. Տեր:* Տեր-տիրական չունի:

**ՏԷՐՎՕՂՕՐՄՑԱ**, *Վն. գ. Համբիչ:*

**ՏԷՔյԸՐ**, *գ. Տագր:*

**ՏԷՔյԵՐԿԻՆ**, *գ. Տեգոր կին:*

**ՏԸԶ**, *գ. Ճանճի ձայն:* Նա քյո մեղրըն պիտի, նա քյո տըզ:

**ՏԸՄԲԸՋԵԼ**, *նբ. Ծեծել:*

**ՏԸՋԻԿ**, *գ. Մանկան ատամ:*

**ՏԸՋԿԵԼ**, *նբ. Թրջել:* Մէջ ուր արտըսո̈ւնքին կըտըզկըվի:

**ՏԸՋԿՈՒԿ**, *նբ. Թրջված:* Խացը տըզկուկ ի: Խացը տըզկի, վոր ուտվի:

**ՏԸԺԺԱԼ**, *չբ. 1) Ականջը կանչել: 2) Գնդակը սուրալով ձայնել:*

**ՏԸԺԺՈՑ**, *գ. 1) Ականջի մեջ լսվող ձայն: 2) Գնդակի արձակած ձայն:*

**ՏԸԺ$^{Յ}$ՈԽՔ$^{Յ}$**, *գ. Դժոխք:*

**ՏԸԺՏԸԺԱԼ**, *չբ. Ճենճերվող նյութերը ձայն հանել:* Քյաբաբը տըժտըժաց:

**ՏԸԺՏԸԺԱՆ**, *ած. Այրող:* Տըժտըժան շոգ, տըժտըժան ցուրտ:

**ՏԸԼԸՓԵԼ**, *չբ. Ջարաչար աշխատանքից սաստիկ հոգնած պառկել, քնել:* Արտից էկավ տուն թէ չէ, տըլըփեց խըսրի վէրէն ու ք$^{յ}$ընեց:

**ՏԸԼՈՏ**, *ած. Տիղմով կեղտոտված:*

**ՏԸԼՎԵԼ**, *չբ. Խրվել, թաղվել տիղմի մեջ:*

**ՏԸԿԱՆՑ**, *մկ. Տակից, գաղտնի:* Հըմէն պա̈ն տըկանց կանի:

**ՏԸԿԼՈԶ** *(նաև՝ Կճ.)*, **ՏԸԿԼՕԶ**, *ած. Մերկ:*

**ՏԸԿԼՈԶԵԼ**, *նբ. Մերկացնել:*

**ՏԸԿՈՒՑԿ**, *Վն. գ. Կաթսայի մեջ մնացած կերակրի տականք:* Ճաշ տու՛ կերար, տըկուցկ տըվիր ինոր *(Վն.)*:

**ՏԸՂԱ**, *գ. Զավակ:* Տըղէյներ կ$^{յ}$ան, խաց ուտինք: Վով վոր տըղա չունի, աչքի լոս չունի:

**ՏԸՂԱՍԿԱՆ**, *Հթ.*, **ՏԸՂԱՑԿԱՆ**, *Կճ. գ. Ծննդկան:* Տըղացկանին խավիծ կէրան *(Կճ.)*:

**ՏԸՂՈՂԱՆՔ**, *գ. Կերակուրի ամանը լվանալուց հետո գոյացած կեղտաջուրը:*

**ՏԸՂՈՎ** *(նաև՝ Հթ.)*, **ՏԸՂՕՎ**, *Լիմ, ած. Հղի:* Տըղով կընիկ$^{յ}$ *(Հթ.)*: Տըղով կընիկ ի, ուզածը թող ուտի:

**ՏԸՂՊԱԽԱՄ**, *գ. Խոնավությունից և հնությունից ընդեղենի ստացած տհաճ համը:*

**ՏԸՂՊԵԼ**, *չբ. Խոնավությունից և հնությունից ընդեղենը համը փոխել:*

**ՏԸՂՊՈՏ**, *ած. Պեպենոտ:*

**ՏԸՃԿԵԼ**, *չբ. 1) Ուռչել: 2) Շատ խմել:*

**ՏԸՄԱԿ**, *գ. Դմակ:* Աշխար վոր կա, տըմակ ի, տա̈նա̈կ մէչ զա̈րկուկ ի:

**ՏԸՄԲՅՈՒԶ**, *գ. Հացատեսակ, սոմոն, բոքոն:*

**ՏԸՄԲՏԸՄԲԱՑՆԵԼ**, *չբ. Բրդի գուլպայով անհաստատ քայլել, երերալ:*

**ՏԸՄԲՏԸՄԲՈՑ**, *գ. Բրդի գուլպայով անհաստատ քայլելու ձայնը:*

**ՏԸՄԸԶԿԵԼ**, *նբ. Սաստիկ թրջել:* Անձ$^{ծ}$րվու տակ ինգ$^{յ}$ա̈, տըմըզկվիցի:

**ՏԸՄԸՇԿԵԼ** *(նաև՝ Հթ.)*, *նբ. Հրել:* Տըվին ա̈ռա̈ճ, տըմըշկելով տարան:

**ՏԸՄԸՇԿԸՏԵԼ**, *նբ. Շարունակ հրել-հրմշտկել:*

**ՏԸՄԿԵԼ**, *չբ. Խոնավանալ։*

**ՏԸՄՊԸԼԻԿ**, *ած. Կլորիկ, գեր։*

**ՏԸՄՊԸՌՃԻԿ**[3], *Հթ. ած. Թմբլիկ։* Շատ խօրոտ, տըմպըռճիկ' խառս ի *(Հթ.)։*

**ՏԸՄՏԸՄԱ**, *գ. Ճահճուտ։*

**ՏԸՄՏԸՌՆԵԼ**, *չբ. Ահից կամ այլ պատճառով գույնը գցել։*

**ՏԸՄՓՌԱՆ**, *ած. գ. Հաստ, գեր մարդ, կին, կատու։*

**ՏԸՆԱԿՈԼ**, *ած. Տնաքանդ, անտեր։*

**ՏԸՆԱՎԵՐ**, *ած. 1) Տուն ավերող։ 2) Մտերմական հանդիմանական արտահայտություն, տնաշեն։*

**ՏԸՆԱՎԻՐՈՒԹԵՆ**, *գ. Տնաքանդություն։*

**ՏԸՆԱՔԱՆԴ**, *ած. 1) Տուն քանդող։ 2) Մտերմական արտահայտություն, տնաշեն։*

**ՏԸՆԳ**[3]**ՈՒԿ**, *նբ. Տնկված։*

**ՏԸՆԴԱԼ**, *չբ. Թնդալ։*

**ՏԸՆԴԸՂԵԼ**, *նբ. Շոշափել, զննել։*

**ՏԸՆԴՈՑ ՏԱԼՈՎ**, *մկ. 1) Տրտինգ տալով։ 2) Դժվարությամբ ձեռքերով լող տալով։*

**ՏԸՆԵԼ**, *Վն. նբ. Փակել։* Պատխան ու տո՛ւռ տի, տիա՛ր *(Վն.)։*

**ՏԸՆԵՑԻ**, *գ. Տան անդամներ։* Տընեցիք բիթուն ժամ են կընա՛ցե։

**ՏԸՆԸՆԷԿ**, *ած. 1) ած. Տնային։ 2) Տանը պատրաստված (ուտելիք)։ 3) Տանը նստել սիրող։*

**ՏԸՆԸՇԱՆՔ**[3], *գ. 1) Նշույլ, նմուշ։* Էս տարվա տարին նորատունկ խաղողի տընըշանք' չէլա՛վ։ *2) Հարևանցի մատնանշում։*

**ՏԸՆԸՑԻՔ**[3], *գ. Տանեցիներ։* Տընըցիք' նըստան ուրենց հալի վէրէն կուշտըմ լա՛ցին։

**ՏԸՆԻՍ**, *Բմ. գ. Տանիք։* Տընիսի վըրէն ծուն կա *(Բմ.)։*

**ՏԸՆԿՏԸՆԿԱԼ**, *չբ. Գրաստի վրա նստած՝ անհանգիստ գնալ։*

**ՏԸՆՈՐԻԿ**, *գ. Ոչ թե վաճառքի, այլ տանը գործածելու համար շինված իր, պատրաստված ուտելիք, կարված հագնելիք։*

**ՏԸՆՏԵՍ**, *գ. Դպրոցի ծառա։*

**ՏԸՆՏՈՇ**, *գ. Ալիք։*

**ՏԸՌԱԼ**, *ած. 1) Ծույլ։ 2) Ավազակ։*

**ՏԸՌԼՕՂԱՆ**, *ած. Ջրալի, ջրիկ։* Տըռլօղան վըռօշ։

**ՏԸՌԿԵԼ**, *չբ. Շատ ուտելուց կամ խմելուց ուռչել։*

**ՏԸՌԿԵՑ**, *Լիմ, գ. Հարևան։*

**ՏԸՌՃԿԵԼ**, *չբ. Շատ խմել։* Հորթիկը տըռճըկե։

**ՏԸՌՃԸԿՑԸՆԵԼ**, *նբ. Ստիպել տրտինգ տալ։* Հորթին խանգ'իստ չի տալ շան լակոտը, հա կըտըռճըկացնի։

**ՏԸՌՃՈՒԽ**, *ած. Փոքրիկ ու սիրունիկ։*

**ՏԸՄՆԸԽ³ԻՆԳ**, *թ. Տասնհինգ:*

**ՏԸՍՎԻՐԵՔ³**, *թ. Տասներեք:*

**ՏԸՍՈՒՆ ԱՆԵԼ**, *Վարելուց առաջ արտը ջրել: Ծան. – Վանի վիլայեթի հարավային գավառակների հողը շատ պինդ էր: Վարի ժամանակ գութանին լծում էին մինչև ութ զույգ գոմեշ ու եզ: Վարի աշխատանքը հեշտացնելու համար մանավանդ Հայոց ձորի՝ Շամիրամի առվով ոռոգվող դաշտերում ջուրը նախապես կապում էին կորդ հողի վրա ու փափկացնում:*

**ՏԸՎԱԾՈՒՐԻԿ**, *ած. Ի բնե տրված, բնության պարգևած:*

**ՏԸՏՄԱԿ**, *գ. Դդումից շինված ջրաման, գինու աման:*

**ՏԸՏՈ̈ԽՄ**, *գ. Դդում:*

**ՏԸՏՌԱՆ**, *ած. Հետույքից հաճախակի գազ արձակող:* Տըռան-տըտռանի մէյն ի, ինոր մոտ նըստել չէլնի:

**ՏԸՐԱԽՏ**, *գ. Դրախտ:*

**ՏԸՐԸՄՓԱԼ**, *չբ. Աղմուկով ընկնել:*

**ՏԸՐԸՄՓՈՑ**, *գ. Աղմուկով ընկնելու ձայն:*

**ՏԸՐԸՆԴԻ**, *գ. Դռան վրայի փայտ, որով կրկին փակում էին կողպեքով փակված դուռը:*

**ՏԸՐԸՆԿՈՁԻ**, *գ. Մանկական խաղ, որ նստում էին գերանի երկու ծայրին և վերուվար անում:*

**ՏԸՐԸՓԵԼ**, *չբ. Բաբախել:* Էտ խաբար որ առա, սիրտըս տըրըըփաց:

**ՏԸՐԽՈՒՆ**, *գ. Թարխուն:*

**ՏԸՐԿԵՑ** *(նաև՝ Կճ.)*, **ՏԸՐԿ³ԵՑ**, *Հթ. գ. Հարևան:* Տըրկըցի խաբրս խօրօտ կէլնի *(Վն.)*: Փիս տըրկեցը քյե մալի տէր կանի:

**ՏԸՐՈՐՍ**, *գ. Տրորելու գործողություն: Ծան. – Հայոց ձոր գավառակում ոռոգման շրջանից առաջ և մանավանդ հետո, Շամիրամա առվի ջուրը կապում էին փոքրիկ բլրակների շուրջ և ջրով տրորելով՝ բլրակն իջեցնում ու դարձնում էին հարթավայր: Այդ գործողությունը կոչվում էր* տըրորս, *իսկ ստացված հողերը՝* տըրորսի խողեր:

**ՏԸՐՍԱՆՑ**, *ած. մկ. Արտաքսուտ:*

**ՏԸՐՈՒԿ**, *նբ. Դրված:* Խացը տըրուկ ի *(սեղանը պատրաստ է)*:

**ՏԸՐՈՒՑ ՇՈՐ**, *Դրսի, հանդիսավոր օրվա պերճ հագուստ:*

**ՏԸՓԱԼ**, *չբ. Տրոփել:*

**ՏԸՓԵԼ** *(նաև՝ Հթ. Կճ.)*, *նբ. Ծեծել:* Խէր ուր էրեխուն տըփեց *(Վն.)*:

**ՏԸՓՎԵԼ**, *կբ. Իրար ծեծել:* Կուշտըմ տըփվիցին:

**ՏԸՓՈՑ**, *գ. Ծեծ:* Էնըսկընձ տըփոց տըվին, վոր մեռլի պես ինգ³ավ:

**ՏԸՓՏԸՓԱԼ**, *չբ. Մթությամբ մեջ խարխափելով քայլել:*

**ՏԸՓՏԸՓԵԼ**, *նբ. Շարունակ կամացուկ զարկել:*

**ՏԻՋԱՆԱԼ**, *չբ. 1) Դիզվել: 2) Ապշել, մազերը բիզ-բիզ կանգնել:* Թակավորու լաճու մազերը կըտիզանան:

**ՏԻՋԵԼ**, *նբ. Դիզել:*

**ՏԻԺԱՐ**, *ած. Դժվար:*

**ՏԻԼ** *(նաև՝ Հթ. Կճ. Լիմ), գ. Ջրախառն ցեխ, տիղմ:* Սօլ մընձնց տըլի մէչ *(Կճ.):*

**ՏԻԿ**, *Բմ., ՏԻԿ*[յ]*, Հթ. գ. Խնոցի:* Տիկ[յ] զնւնէնք[յ], յէղ խանէնք[յ] *(Հթ.):*

**ՏԻԿՆԱԿԸԼՈՆՃ**, *գ. Գարեկ:* Տիկնակըլոնճ կա աշկի վէրէն *(Կճ.):*

**ՏԻՄԱՆԱԼ**, *չբ. Դիմանալ:*

**ՏԻՄԱՑ**, *մկ. Դեմառդեմ:* Մեր տուն, ծեր տուն իրար տիմաց:

**ՏԻՄՆԱԼ**, *նբ. Տեսնել:*

**ՏԻՎԱՆՔ**, *գ. Դևեր:*

**ՏԻՎԱՏՕ̈ՏՕ̈Ր ԱՆԵԼ**, *1) Քունը խանգարել: 2) Սաստիկ անհանգստացնել:*

**ՏԻՎՈՏԵԼ**, *չբ. Դիվային դառնալ, կատաղել:*

**ՏԻՏԻԿ ԱՆԵԼ**, *1) Երեխան նստել: 2) Հանդիսավոր կերպով անշարժ նստել:*

**ՏԻՐ**, *մկ. 1) Նաև՝ Լիմ, Անգամ:* Մէ տիր կընձցի նէճիր *(Լիմ):* Քյննի տիր ասի: *2) Ցորեն ցանելու հատուկ եղանակ, շարքացանի հնագույն ձև, որ տարածված էր միայն Վանա ծովակից հյուսիս ընկած անջրդի հողերում:*

**ՏԻՐԱՄՈՐ ՅԱՐԱ**, *Բծավոր վերք, որը բուժելու համար ապավինում էին Տիրամոր վանքին:*

**ՏԻՐԱՄՕՐ ՔՅԱՄԻ**, *Հողացավ:*

**ՏԻՐԱՐ ԿՅԱԼ**, *Շարժվել:* Նըստած տեղից տիրար չի կ[յ]ա:

**ՏԻՐՈԽՆԻ**, *գ. Փայտե կամ արծաթե շերեփանման գործիք, որով քորում էին մեջքը:*

**ՏԻՐՈՒԽՆԻ**, *Վն. Հթ. Կճ. Լիմ, գ. Տերտերակին:* Տիրուխնին վըլնցկ//լըվնցկ կըփըռէր *(Վն.)*

**ՏԻՐՈՒՆ**, *Լիմ, գ. Տորոն:*

**ՏՈՂ-ՏՈՂԵՐՈՑ**, *գ. Դողէրոցք:*

**ՏՈՌԹԱԼ**, *չբ. Տքնել, ճիգ թափել:*

**ՏՈՐՔ**, *գ. Ջուլհակի հաստոցի մաս:*

**ՏՅՈՒՑ**, *դ. Դրանից:*

**ՏՐԱՄ**, **ՏԸՐԱՄ**, *Վն. ած. Ամուր:*

**Տ**[յ]**Ö̈Ի**, *դ. Դու:*

**ՏՈՒԼԻԿ**, *գ. Շան լակոտ:*

**ՏՈՒՇՓԷՏ**, *գ. Խաղի տեսակ:*

**Տ**[յ]**ՈՒԾԻԿ**, **ՏՈՒԾԻԿ**[յ], *Լիմ, գ. Փոքր կարաս:*

**ՏՈ̈ՒՌ**, *գ. Դուռ:* Տուն վոր կասին, տո̈ւռ պիտի ունենա:

**ՏՈ̈ՒՌ ԿՅԱԼ**, *Դիմել մեկին, օգնություն խնդրել:* Հըմէն օր մէյ մարթու տուռ կէրթա:

**ՏՅՈՒՍ**, *մկ. Դուրս:* Տո̈ւս արի էտ նեղ տեղից:

**ՏՈՒՏԼՈՒՏՈՒՋ**, *ած. Դուրս ցցված:*

**ՏՈՒՏԿ**, *գ. Ցորենի ցողուն, բարակ եղեգ:* Տուտկով իրեւս կըպաչի *(չի ախորժում, ատում է)*:

**ՏՈՒՏՈՍԽԻԿ**, *ած. Ծալը պակաս, խելառ:*

**ՏՈՒՏՌՈՒՋ**, *ած. Ուռած:* Ջեբը տուտռուզ էկավ:

**ՏՅՈՒՐԻԿ**, *գ. Բրդի փոքրիկ տոպրակ, որ գործածվում է որպես լրացուցիչ գրպան:*

**ՏՅՈՒՐ ԿՅԱԼ**, *Դուր գալ, հաճելի, ախորժելի դառնալ:*

**ՏՈՒՐՈՒՆ**, *Հթ. գ. Տորոն:*

**ՏՕԼԱԲ** *(նաև՝ Հթ. Լիմ)*, *գ. Սենյակում պատի մեջ թողած, երեսը բաց պատուհան:* Պուտուկյ տօլաբ տըրուկ ի *(Հթ.)*:

**ՏՕՄԱԹԷՋ**, *գ. Պոմիդոր, լոլիկ:*

**ՏՕՆԻԿ**, *գ. Որսորդների, պարտիզանների տնակ:*

**ՏՕՏ**, *գ. Խաշ:* Տավրի վոտներօվ լավ տօտ//փա̈չա̈ կէլնի *(Վն.)*:

**ՏՕՏԻԿ ԱՆԵԼ**, *Երեխան քայլել սկսել:*

**ՏՕՏՕԼՕՋ**, *գ. 1) Դեզ: 2) Դեզի սրածայր գագաթ:*

**ՏՕՏՕՌՎԵԼ**, *Փառավոր կերպով տեղավորվել ու նստել:*

# Ց

**ՑԱԽ**, *գ. Վառելափայտ:*

**ՑԱԽԱՏՈՒՆ**, *գ. Վառելիք պահելու տեղ:*

**ՑԱՄԱՔՅ ԽԱՑ**, *Հաց՝ առանց պանրի կամ ժաժիկի:* Ցամաքյ խաց շատ կըսիրեմ:

**ՑԱՄՔՅԵԼ**, *չբ. Ցամաքել:*

**ՑԱՆ**, *գ. 1) Փթիրի և տարթի մնացորդ, կտորտանք, որ գործածվում է ոչ միայն որպես վառելիք թոնրի կրակը բորբոքելու համար, այլև ախոռում անասունների տակ փռելու համար: 2) Հթ. Կճ. Աթար:* Ա̈վա̈լներ կյեղ տարթ, փըթիր, ցան կըվա̈ռին *(Վն.)*:

**ՑԱՆԱՆՈՑ**, *գ. Ցան պահելու տեղ:*

**ՑԱՆՈՑ**, *տե՛ս* **ՑԱՆԱՆՈՑ**:

**ՑԱՆՎԵԼ**, *չբ. Հեռանալ, այլևս չանհանգստացնել:* Ջաhիլէս տարար, ցանվիա̈, կընա̈ ա̈:

**ՑԱՆՈՒԿ**, *նբ. Ցանված:* Արտը ցանուկ ի:

**ՑԱՍՄԱՆ ԽԱՉ**, *Աստծո բարկության առաջն առնելու համար արտերի գլխին տնկված խաչքար՝ տարաժամ ձյունից,*

*ցրտահարությունից, կարկուտից և այլ պատուհասներից պաշտպանվելու համար:*

**ՑԱՔ**, *գ. Փոցխ:* Ցաքով խող ցաքինք *(Կճ.):*

**ՑԱՔ-ՑԱՔԱՆ**, *գ. Փշոտ թփերից և ծառերի ճյուղերից պատրաստված տափան՝ փոցխ:*

**ՑԸԲԼԻԿ**[3], *Հթ.*, **ՑԸՊԼԻԿ**[3], *Լիմ, գ. Լորձունք:*

**ՑԸՄԱԽ**, *գ. Ամպամած, ցուրտ օր:*

**ՑԸՆՓՈՐ**, *ած. Հաստափոր:*

**ՑԸՌԱՆ**, *ած. Փորհարինքով տառապող:* Ցըռան կով նախրի անուն կավիրի:

**ՑԸՌԹԿԵԼ**, *չբ. Փորհարինքը չկարողանալ պահել:*

**ՑԸՌՑԸՌՈՒԿ**, *գ. Վարակիչ վերք:*

**ՑԸՌՈՒԿ**, *գ. Տնկի:*

**ՑԸՌՈՒԿ**[3], *Լիմ, ած. Նվազ:* Ծառ ցըռուկ' ի, չի զօրանա *(Լիմ):*

**ՑԸՌՓԵԽ**, *գ. Ձնհալից հետո գոյացած ջրալի ցեխ:*

**ՑԸՎԸՌՏԵԼ**, *նբ. Ցիրուցան անել:*

**ՑԸՎԸՌՏՈՒԿ**, *ած. Ցիրուցան արված:*

**ՑԸՐԹԵԼ**, *Բմ. նբ. Ցնկնել:*

**ՑԸՓԸՌԹԿԵԼ**, *չբ. Փորհարինքը չկարողանալ պահել:*

**ՑԸՓՆԵԼ**, *նբ. Ցրել, սփռել:* Ցըփնած կորեկը խավը կերավ:

**ՑԻՆ**, *գ. Ձիու, էշի անասնաղբ, որ չորացնում, փռում էին անասունների տակ:*

**ՑԻՆԵԼ** *(նաև՝ Լիմ)*, *չբ. Ցնկնել:* Պարտքըս շան լակոտու պէս ցինավ ու շատըցավ:

**ՑԻՑ-ՑԻՑ ԿԱՅՆԵԼ**, *Փշաքաղվել:* Մազերըս ցից-ցից կայնան:

**ՑՈՐՆԱՏԵՐ**, *գ. Կիսրար ցանելիս սերմացու տվող:*

**ՑՈՒՑԱՆՔ**[3], *1) գ. Հրեշային երևույթ: 2) ած. Տգեղ, այլանդակ:*

# Խ

**ԽՈ՞Ն**, *Կճ. գ. Ո՞վ:*

**ԽՈՆՁՆԻ**, *Լիմ, գ. Ողնի:*

**ԽՈՐԹԻԿ**[3], *Լիմ, գ. Հորթ:*

**ԽՈՐԹԿԱՐԱԾ**, *Բմ. գ. Հովիվ*

# Փ

**ՓԸԳՅԸԽ** *(սեռ.* **ՓԱՅԽԻ**, *հոգն.* **ՓԱՅԽԸՆԵՐ**), *գ. Ախոռ: Ծան. – Արճեշի գավառակում Մեծոփա վանքի ախոռների տեղում հիմնված գյուղը կոչվում էր* Փայխընէր:

**ՓԸԳՅԸՂ**, *Հժ. գ. 1) Գոմ: 2) Ախոռ:*

**ՓԸԹ**, *մկ. Անգամ:* Մէյ փըթ: Սըխաթիդ զընջիլը քʲննի՞ փըթ ի: *Ծան. – Կանանց ժամացույցի շղթան պետք է մի քանի փաթ լիներ:*

**ՓԱԹԱ**, *գ. Ոչ-ոքի, խաղի մեջ հավասար լինելը:*

**ՓԸԹԸԹԷՋ**, *գ. Կարտոֆիլ:* Օղորմի փըթըթէզ պիրողի խօր խոկʲո̈ն:

**ՓԸԹԹՈՑ**, *գ. Մահմեդականի գլխի կապ:*

**ՓԱԹԻՇԱՀ**, *գ. Թուրքական սուլթան, թագավոր: Ծան. – 1453 թվականին Պոլիսը գրաված սուլթան Մեհմեդն արժանացել է* փաթի *«նվաճող» կոչմանը: Այդ* փաթիից *էլ առաջացել է* փաթիշահ *տիտղոսը:*

**ՓԱԹԻՍԿԱ**, *գ. Սպիտակ նուրբ կտավ:*

**ՓԸԹՈԹ**, *գ. Փաթույթ:*

**ՓԸԹՕԽԹԵԼ**, *Հժ.,* **ՓԱԹՈՒԽԹԵԼ**, *Լիմ, նբ. Փաթաթել:* Ափրաղ *(=տոլմա)* փըթօ̈խթենքʲ *(Հժ.)*: Կիհʲտեր խավողի թըփօվ տօլմա փըթօ̈խթիցին *(Վն.)*:

**ՓԸԹՎՈՐՍ ԷԼՆԵԼ**, *Շատ քծնել, ստորաքարշություն անել:*

**ՓԸԹՕԽԹՎԵԼ**, *չբ. 1) Իրար փաթաթվել:* Խավողի պարունակը փըթօ̈խթվիլ է վէր ծիրնի ծառին: *2) փխբ. Քծնել:*

**ՓԱԼԱԲԵՂ**, *ած. Խիտ և երկար բեղ ունեցող:*

**ՓԱԼԱԽՈՏ**, *գ. Մարգագետնի փափուկ խոտ:*

**ՓԱԼԱՆ**, *գ. Համետ:* Պառավ իշուն թըզըն փալա՞ն:

**ՓԱԼԱՆՎԵԼ**, *չբ. Շատ շոր հագնել:* Ծըմեռ վոր էկավ, ես կըփալանվեմ:

**ՓԱԼԱՍ**, *գ. 1) Քուրջ, ցնցոտի: 2) Լիմ, Կարպետ:* Փալաս կըթըլեն քʲո̈րսու վըրէն *(Լիմ)*:

**ՓԱԼԹՈ**, *գ. Եվրոպական վերարկու, սաքո:*

**ՓԱԼԿԸՏԱԼ**, *չբ. Թավալվել փոշու կամ կանաչ խոտի մեջ:*

**ՓԱԼՑՈՒԼԵԼ**, *նբ. Շաղախել:*

**ՓԱԼ ՏԱԼ** *(նաև՝ Հժ.), Թիկնել, փռվել:* Իրիկʲ փալ տըվե պըրցին, նըստե *(Հժ.)*:

**ՓԸԽԸՎԸՆԳ**, *ած. Շաղկրատ, դատարկապորտ:*

**ՓԱԽԸՐ**, *գ. 1) Բառացի՝ ժանի: 2) Պղնձեղեն:*

**ՓԱԽԸՐՋԻ**, *գ. Պղնձագործ:*

**ՓԱԽԸՐՓԱՐԱ**, *գ. Պղնձադրամ:*

**ՓԱ՛ԽՍ Ի**, *Հրաժարվո՞ւմ է:* Կըրըրան իր կօտից փա՛խս ի:

**ՓԱԽՈՒԿ**, *ած. 1) Պատժից ազատված, փախած: 2) Փախցրած, գողացված: 3) Թեթևակի խենթ, խև:* Փախուկի մէյն ի:

**ՓԱՀՐԷՋ**, *գ. Թուրքի ծոմապահություն:*

**ՓԱՄՓԱԼ**, *գ. Բահի կոթն ամրացնելու փոքրիկ սեպ:*

**ՓԱՄՓՈՒՍԻԿ**, *ած. Քնքուշ:*

**ՓԱՅ**, *գ. Մաս, բաժին:* Իմ փայը տըլվեճքʲ:

**ՓԱՅԱԽ**, *Բմ.*, **ՓԱ̈ՅԱ̈Խ**, *Լիմ, գ. Փարախ:*

**ՓԱՅԴԱ ԱՆԵԼ**, *Հնարել, ի հայտ բերել:*

**ՓԱՅԴՕՍՏ**, *գ. Աշխատանքի ավարտ:*

**ՓԱՅԷՆ**, *գ. Էշի, ձիու, ջորու թրիք, որ չորացնում և ախոռում փռում են անասունների տակ:*

**ՓԱՅԼԱՄԻՇ ԱՆԵԼ**, *Հասանելի չափով բաժանել:*

**ՓԱՅԼԵՎԱՆ**, *գ. Լարախաղաց:*

**ՓԱՅԽԻ ԽԱՐՋ**, *նխտ. Ախոռի արժանի, անասուն:*

**ՓԱՅՆԱՔՕՇ**, *գ. Ձեթով պատրաստված պասուց բաղարջ:*

**ՓԱՅԼՎԵԼ**, *կր. Փակվել:* Փայվանքʲ, մընացինքʲ:

**ՓԱՅՏԱՓՕՐԻԿ**[3], *Հթ.գ. Փայտփորիկ:*

**ՓԱՆԹԱԼՕՆ**, *գ. Տաբատ, նեղ շալվար:* Հեքիաթի հերոսը ամըր կանի *(կհրամայի)*, պիրել կուտա քʲառսուն ծեռքʲ լաճու խա̈լա̈վ, սաթրա *(սաթրազարդ)* փանթալօն, քʲառսուն խատ շըմշիր *(լայնաբերան)* թուր, քʲառսուն խատ պողպըտի կալխուն *(վահան)*, քʲառսուն կամա *(դաշույն)*, քʲառսուն ջուխտ նալչալ-ջըզմա *(պայտավոր երկարաճիտ կոշիկ)*:

**ՓԱՇ** *(նաև՝ Լիմ), Հաստ պարան, որ բարձած ցորենը մանեժով ամրացնում է սայլի վրա:* Սէլի փաշ *(Լիմ)*:

**ՓԱՇԱ**, *գ. Գեներալի աստիճանին հավասար զինվորական աստիճան:*

**ՓԱՇԱՓՈՐԹ**, *գ. Անձնագիր: Ծան. – Անձնագիր հանում էին միայն երկրից դուրս մեկնելիս:*

**ՓԱՉԱ** *(նաև՝ Լիմ)*, **ՓԱ̈ՉԱ̈**, *Հթ. գ. Խաշ:* Քʲէռմամայի տուն փա̈չա̈ կէրանքʲ *(Հթ.)*: Տավրի փա̈չա̈ կուտե՞ս *(Վն.)*:

**ՓԱ̈ՉԱ̈ՓԸՌՈՒԱ̈**, *գ. Ջնջոց, սրբիչ:*

**ՓԱՌԱ-ՓԱՌՉԱ**, *ած. Կտոր-կտոր, պատառ-պատառ:*

**ՓԱՌԽԱՋ**, *գ. Պղնձե դույլ:*

**ՓԱՌՓԱՌ** *(նաև՝ Հթ. Կճ. Լիմ)*,

*գ. Դանդուռ:* Փառփառի թըլթու *(Կճ.)*: Փառփառի թուրշի, պըռվածկ *(Վն.)*:

* Փառփըռան սերմ, *1) Արագ աճող գերդաստան: 2) Ամեն տարի ծննդաբերող, զույգ բերող կին:*

**ՓԱՌՓԱՐ**, *գ. Բարբառ:*

**ՓԱՌՉ**, *գ. Սափոր:* Արածըղ կավին փառչըմ ճո̈ւր էլ խէրիք ի *(ծաղրական արտահայտություն մեկի շինարարական աշխատանքի նկատմամբ):*

**ՓԱՌՉԱ**, *գ. Կտոր, պատառիկ:*

**ՓԱՌՉԱԼԱՄԻՇ ԱՆԵԼ**, *Կտրատել, մասնատել:*

**ՓԱՍԲԱՆԴԱ**, *ած. 1) Հնացած, ժանգոտված: 2) Տգեղ (աղջիկ):*

* Էդ փասբանդին խառջիցի՞ր, *Տգեղ աղջիկդ ամուսնացրի՞ր:*

**ՓԱՍԼԱՄԻՇ ԷԼՆԵԼ**, *Ժանգոտել:*

**ՓԱՍԽ**, *գ. Ժանգ:*

**ՓԱՍԽՈՏ**, *ած. Ժանգոտ:*

**ՓԱՍՈՏԵԼ**, *չբ. Ժանգոտել:*

**ՓԱՐԱ**, *գ. Դրամ:*

**ՓԱՐԱ ԱՆԵԼ**, *Օգտակար լինել, օգուտ տալ:*

**ՓԱՐԱՏԵԼ**, *նբ. 1) Վանել, ցրել, հեռացնել: 2) Ծննդկանի վրա երկրորդ օրը քահանայի կողմից «Փարատեա՛ զցավս» կարդալ:* Խաա̈, տէրտէրն իկյե, փարատեր ի:

**ՓԱՐԱՏԻԿ**, *գ. Թոնրի կողերը մաքրելու շոր: Ծան. – Հինումին շորեր ամուր կապում էին ձողի ծայրին և թոնրի կողերը մաքրում էին ածուխ դարձած հացի մնացորդներից, որից հետո զարկում լավաշը:*

**ՓԸՐԳՅԸԼ**, *գ. Կարկին:*

**ՓԱՐԴԱԽՏ**, *գ. 1) Հղկում: 2) Երկրորդ անգամ ածիլելը:*

**ՓԱՐԴԻՍԱԲԱԽ**, *գ. Նարգիզ:*

**ՓԱՐԴԻՍՕ**, *գ. Եվրոպական ոճի ամառային վերարկու:*

**ՓԱՐԻՇԱՆ**, *ած. Թշվառ, խեղճ:*

**ՓԱՐՉ**, *Կճ.*, **ՓԸՐՉ**, *Լիմ, գ. Ջուր խմելու աման:*

**ՓԱՐՎԱՋ**, *գ. Շրջանակ:*

**ՓԱՐՓԱՌ**, *տե՛ս* **ՓԱՌՓԱՌ**:

**ՓԱՓԱՋ**, *գ. Տերտեր, քահանա:*

**ՓԱՓԱԽ**, *Վն. գ. Մորթե գլխարկ: Ծան. – Վանում թաղիքե գլխարկին ասել են* քյոլոզ, *իսկ մորթե գլխարկին՝* փափախ *(Վն.)*:

**ՓԱՓՈՒՋ**, *գ. Հողաթափ, մուճակ:*

**ՓԱՖՕՌ**, *գ. Շոգենավ:*

**ՓԵՄ**, *գ. Բեմ:*

**ՓԵՆՋԱՐԱ**, *գ. Պատուհան:* Առնակային մարթասպան ա̈զա̈տվեց, փենջարից իրիշկողը կազայի *(փորձանք)* մէչ ինգյա̈վ:

**ՓԵՌ**, *գ. Լորձ:*

**ՓԵՌԿԵ ՄԱՂ**, *Մանր ծակոտկեն մաղ:*

**ՓԵՌՈՏ**, *ած. Լորձունքոտ։*

**ՓԵՐԹ**, *գ. Կեղծ ոսկի։*

**ՓԷԼՔԸՍՏԱԼ**, *չբ. Փայլփլել։* Մատընիք արէվու տակ կըփէլքըստա *(Կճ.)։*

**ՓԷԼՔԸՏԱԼ**, *չբ. Փայլել, պսպղալ։*

**ՓԷԿՌԱՏ**, *ած. Անատամ։*

**ՓԷՂԱՄ**, *Հթ. գ. Եգիպտացորեն։*

**ՓԷՂԱՎԱՆԳ**, *ած. Շաղակրատ, դատարկապորտ։* Փէղավանգին մէյն ի, ինոր խոսքին վո՞վ կըխավատա։

**ՓԷՅԴԱ ԱՆԵԼ**, *Հնարել, լույս աշխարհ հանել։*

**ՓԷՅԴԱ ԷԼՆԵԼ**, *Հայտնվել, երևան գալ։* Կասին, օր մէյ խատ թազա թակավոր ի փէյդա էլել։

**ՓԷՅՂԱՄԲԱՐ**, *գ. Մարգարե։ Ծան. – Քրիստոնեական մարգարեների անունը տալիս ասում էին* մարքարէ, *իսկ Մահմեդ մարգարեին չկամությամբ ասում էին* փէյղամբար։ *Մահմեդին երբեք մարգարե չէին անվանում։* Ինոնց փէյղամբարն ասել ի։

**ՓԷՆԴԻՐ**, *1) գ. Պանիր։ 2) ած. փխբ. Փխրուն։ Ծան. – Վանի բարբառում կար միայն* պանիր *բառը, իսկ շատ փխրուն կոնֆետի տեսակին ասում էին* փենդիր շաքյար։

**ՓԷՇ**, *Վն. գ. Քղանցք։* Փէշ կառնէր կյետին *(Վն.)։*

**ՓԷՏԱՏ**, *Հթ. Կճ. գ. Քլունգ։* Փէտատօվ խող կըփորենք *(Կճ.)։*

**ՓԷՏՌԱԾ**, *Վն. ած. Անպոչ։* Փէտռած խավ կուրուսիր էր *(Վն.)։*

**ՓԷՏՓՕՐԻԿ**[3], *Լիմ, գ. Փայտփորիկ։*

**ՓԸՋԼԻՆՔ**[3], *գ. Լորձ։* Փըզլինքյ կըլթա̈փի ճըժու պէրնից *(Կճ.)։*

**ՓԸԹԻՐ** *գ. 1) Վն. Ջվաձև կտրտած, պատի վրա չորացվող անասնաղբ։ 2) Կճ. Լիմ, Աթար։* Փըթիրօվ թունիր վա̈ռենքյ։

**ՓԸԼԸՍՏԱԼ**, *Հթ. չբ. Սայթաքել։*

**ՓԸԽԸԽԵԼ**, *Լիմ, չբ. Երեսը կարմրել (մանավանդ հիվանդագին ջերմությունից)։*

**ՓԸԼՈՒՇ**, *Բմ. գ. Ճմլած խաղողի մնացորդ, որից օղի են քաշում։*

**ՓԸԼՓԸԼԱԼ**, *չբ. Փայլել։*

**ՓԸԼՓԸՍՏԱԼ**, *չբ. Շլացուցիչ փայլել։*

**ՓԸԼՕԼ**, *գ. Դդումով բորանի։ Ծան. – Վանում դդումից մուրաբա չեն եփել։ Վանի դդումը համեղ չի եղել։ Դդումը աղքատի կերակուր է եղել կամ անասնակեր (Վն.)։*

**ՓԸԽՐԵԼ**, *նբ. 1) Փխրուն դարձնել։ 2) Մեկին համոզել, փափկացնել։*

**ՓԸՂՁԿԵԼ**, *չբ. Սիրտը խառնել։*

**ՓԸՄՓՅՈՒՍ**, *ած. Քնքուշ, փափուկ։*

**ՓԸՆԹՈՐ**, *ած. 1) Սուտ, կեղծ։*

*2) Խառնակ, խառնափնթոր։*

**ՓԸՆՉԵԼ**, *չբ. Անկանոն շնչել։*

**ՓԸՆՉՓԸՆՉԱԼ**, *չբ. Շարունակ մեղմ փնչալ։*

**ՓԸՆՏԸՌՏԵԼ**, *չբ. Որոնումներ կատարել։*

**ՓԸՇԱՄՂԵԼ**, *չբ. Սոսկալ, սարսափահար լինել, սարսռել։*

**ՓԸՇԸՐԿԵԼ**, *նբ. Մարդակի՝ տանիքի գերանների վրա շարվող ուռենու ճյուղերի վրա փռված եղեգները ցեխով ծածկել։*

**ՓԸՇԻ՛-ՓԸՇԻ՛**, *ձ. Կատու կանչելու ձայնարկություն։*

**ՓԸՇՄԸՏԵԼ**, *չբ. Փշաքաղվել։*

**ՓԸ՛ՇՏ**, *ձ. Կատու քշելու ձայնարկություն։*

**ՓԸՇՏԱ՛**, *ձ. Կատու քշելու ձայնարկություն։*

**ՓԸՇՏԵԼ** *(նաև՝ Հթ.), նբ. Նախատել, կարգի հրավիրել։*

**ՓԸՇՐՈՒԿ**, *1) գ. Հասարակ կերակրատեսակ։ 2) նբ. ած. Ջարդված, փշրված։*

**ՓԸՇՈՒՄ**, *ած. մկ. Քիչ։* Փըշում մընա̈ց, ւոր խասնենք տեղ *(Կճ.)*։

**ՓԸՇՈՒՐԸՄ**, *Վն. ած. Մի քիչ։* Փըշուրըմ պանիր տոռա̈ւ *(Վն.)*։

**ՓԸՇՕ**, *գ. մնկ. Կատու։*

**ՓԸՇՕ՛-ՓԸՇՕ՛**, *ձ. Կատու կանչելու ձայնարկություն։*

**ՓԸՉԵԼ**, *Վն. չբ. Նվագել։* Զուռնա կըփըչէր *(Վն.)*։

**ՓԸՌԸՑՆՔՏԱԼ**, *չբ. Փռշտալ։*

**ՓԸՌԸՆԳՏԱԼ**, *տե՛ս* **ՓԸՌԸՑՆՔՏԱԼ**։

**ՓԸՌԹԱԼ**, *չբ. Բռնկվել։*

**ՓԸՌԹՆԵԼ**, *չբ. 1) Պոկվել։ 2) Ազատվել։ 3) Ծողոպրել։ 4) Հորդել։*

**ՓԸՌՈԽՔ**[3], *գ. Ոխ։* Կա̈զա̈ր ինոր վէրէն փըռոխքյ ունէր *(Վն.)*։

**ՓԸՌՔԵՐ**, *գ. Ծոպեր։*

**ՓԸՌՔԸՎԵԼ**, *չբ. Երեսնիվայր փռվել։*

**ՓԸՌՔՎԸՑՈՒՑԵԼ**, *նբ. Գետին տապալել։* Կյա̈ցողին մէյ զա̈նելով կյետին կըփըռքվըցուցի։

**ՓԸՌՕԴ**, *գ. ած. Բողոքական։*

**ՓԸՌՕԴԱՐԱՆ**, *գ. Բողոքականների շրջանակ, որ գտնվում էր Ավօյի տա̈րի (բըրի) մոտ՝ շուրջ կես կիլոմետր տարածքով։*

**ՓԸՍԱԿ**, *գ. Պսակ։*

**ՓԸՍԱՑՎԵԼ, ՓՍԱՑՎԵԼ**, *Վն. չբ. Ամուսնանալ։* Միրզօյենց տըղէն փըսայվէ, խօրօ(տ) խարսըմ ի պիրե ուրենց//ուրանց տուն *(Վն.)*։

**ՓԸՍԻԿ**, *գ. 1) Շատ փխրուն խնձորի տեսակ։ 2) Կատվի ձագ։*

**ՓԸՍՈՐՎԵԼ**, *չբ. Կորվել, փչանալ։* Ծամոնը պէրնիս մէչ փսորվեց։

**ՓԸ՛Ս-ՓԸ՛Ս**, *ձ. Կատու կանչելու ձայնարկություն։*

**ՓԸՍՏԱԼ**, *Կճ. չբ. Սայթաքել:*

**ՓԸՏԸՌՏԵԼ**, *Բմ. նբ. Որոնել:*

**ՓԸՏՈՒԿ**, *չբ. ած. Փտած:* Կ³էրա-նը փըտուկ ի:

**ՓԸՐՉ** *գ. Ճակնդեղի տերև:* Պ³ճզկի փըրչ տապկին, կէրան *(Կճ.):*

**ՓԸՐՓԸՇԵԼ**, *չբ. Կակղել:*

**ՓԸՐՓՈՒՌ**, *Լիմ, գ. Լորձ:* Ծիյան պէրնից փըրփուռ կըթա̈փի *(Լիմ):*

**ՓԸՐՓՕՇ**, *գ. ած. Կակուղ հող:*

**ՓԸՑԸԽՆԵԼ**, *չբ. Հյուսվածքը, գործվածքը մաշվելուց քանդվել:*

**ՓԸՖԻԿ**, *գ. Հասարակ կերակրատեսակ: Տան. – Նոր շինված խեցեղեն ամանը ջնարակում էին նաև մեջը* փըֆիկ *եփելով:*

**ՓԻՆՁ**, *Վն. գ. Սեպ:*

**ՓԻՍ**, *Վն. ած. Անմաքուր, պիղծ:*

**ՓԻՏԵԼ**, *Բմ. նբ. Փետրել:*

**ՓԻՏՈՒՐ**, **ՓԻՏՈՒՌ**, *Հթ. գ. Փետուր:* Կըռկէ փիտուրներ սեվ կէլնի(ն) *(Վն.):*

**ՓԻՏՐԱԹՒ̈Փ**, *գ. Փետուրները թափվելը:* Խավեր բիթո̈ն փիտրաթա̈փ էլա̈ն:

**ՓՈԼԱՆԴ**, *գ. Ադամանդ:*

**ՓՈԽԻՆԴ**, *գ. Խորիզ:* Կ³ա̈տի մէչ փոխինդ տ⁰իա̈ր *(Կճ.):*

**ՓՈԽՆԱԿ**, *գ. Առաջին կնոջ մահվանից հետո նրան փոխարինող երկրորդ կին:*

**ՓՈԽՍՐԱՐ**, *գ. Մանված բամբակը փոխող անձ: Տան. – Ջուլհակների համար բամբակ իրենց տներում մանում էին աղքատ որբևայրի կանայք: Մանողներին կշռելով բամբակ հանձնողը և կշռելով ստացողը կոչվում էր* փոխսրար:

**ՓՈՂ**, *գ. 1) Դրամ: 2) Դուդուկ, սրինգ:* Չօքան ուր փող կըփըչէր *(Վն.):* Փող փըչող Կարոն ժա̈մու տըռան նըստած ի օրնիփուն:

**ՓՈՂՔՑԱԴԱՐ**, *գ. Կանացի գլխանոց, ծածկոց:*

**ՓՈՆԹ** *(նաև՝ Լիմ), գ. Փոթ, անհարթություն նոր կարված զգեստի վրա:*

**ՓՈՇԻ**, *Վն. գ. Ալյուրի փոշի: Տան. –* Փոշի *իմաստի համար գործածում էին* թօզ:

**ՓՈՐՑՎՈՐ**, *ած. Հղի:*

**ՓՈՐ-ՓԸՍՈՐ**, *գ. Որովայն:*

**ՓՒ̈ՈՒՔ** *(նաև՝ Հթ.), գ. Փուքս:*

**ՓՒ̈ՈՒԹԱԿ**, *գ. Քուրա, հալոցք, կաղճին կոչվող հատուկ կավից պատրաստած հալոցք, որով կալ էին անում:*

**ՓՈՒԹԿԱ ՍԸՊ Կ³ԵՎՈՐՔ³**, *Փութկա սուրբ Գևորգ, վանք՝ Եղերով սարի հարավային լանջին, որ ծառայում էր որպես իջևանատուն Մոկաց աշխարհից Վան գնացողների համար: Տան. – Եղերով*

*սարը դժվարանցանելի լեռնանցք ուներ: Տարբեր ազգերի ուղևորներ իջևանում էին վանքում և սպասում նպաստավոր եղանակի: Նրանք արթնանում էին Վանքի աքաղաղի կանչից: Վանքի Փութկա անունը ժողովուրդը կապում էր* պուտուկ *բառի հետ: Ասորերենում* փութակ *նշանակում է «իջևանատուն, պանդոկ»: Ըստ ժողովրդական ավանդության՝ պուտուկ-դագաղը և պուտուկանման կավե դագաղում գտնվող սրբի մարմինը ևս լույս էին արձակում:*

**ՓՈՒԼ**, *գ. Նկարադրոշմ, մարկա:*

**ՓՈ̈ՒԼ**, *գ. Գետի, ծովի քանդված եզր:*

**ՓՈ̈ՒՌ**, *հթ. ած. Անհամար, բյուր:*

**ՓՈ̈ՒՍՔՅՈ̈ՒԼ**, *գ. Ծոպ:*

**ՓՈՒՂՈՑ, ՓՈՒՂՈ̈Ց**, *հթ. Կճ. գ. 1) Արտաքնոց: 2) Աղբանոց:*

**ՓՈՒՆՋ**, *գ. Ջերմօղի: Ծան. – Հայ վաճառականները սիրում էին մի քանի տեսակ օղի իրար խառնել-փնջել: Հավանաբար հայերեն* փունջ-*ն է Եվրոպայում դարձել* պունշ:

**ՓՈՒՇԻ**, *գ. Կերպասե ծոպավոր թաշկինակ, որ կապում են գլխին, գլխարկի շուրջը:* Տանը չըկա թանի փոշի, կ՚ըլխին կապել ի խաս փուշի: Փերթ ի, ք՚ե էլնի, ամա տո̈ւ փուշին թա̈լ: *Ծան. – Այսպես էր կանչում տուժողը, երբ գողը պոկում էր նրա ճակատի զարդուսկին:*

**ՓՈՒՇՏ**, *ած. Սրիկա, իգամոլ:*

**ՓՈ́ՒՇՏ**, *ձ. Կատու քշելու ձայնարկություն:*

**ՓՈՒՉԱԽ**, *գ. Ջմելի, ձեռքի փոքրիկ դանակ:*

**ՓՈՒՉԻԿ**, *Վն. գ. Միզապարկ:* Ինոր փուչկի մէչ ք՚ար կա *(Վն.)*:

**ՓՈՒՉՔՅ**, *գ. Մաս:*

**ՓՈՒՉՔՅ ԹԱԼԵԼ**, *Վիճակ գցել: Ծան. – Բաժանելիքը նախ բաժանում են հավասար մասերի, ապա վիճակ գցում:*

**ՓՈՒՌԹԸԿԵԼ**, *Լիմ, նբ. Փետրել:* Կընիկ՚ խավ փուռթըկեց *(Լիմ)*:

**ՓՈՒՌԹԻԿ**, *գ. Շան, կատվի մազ:*

**ՓՈՒՌԹԸԿԵԼ**, *նբ. Շներն ու կատուներն իրար գզելով միմյանց մազահան անել:*

**ՓՈՒՌԹՔ ՀԱՆԵԼ**, *տե՛ս* **ՓՈՒՌԹԸԿԵԼ**:

**ՓՈՒՌՎԱՐ**, *հթ. գ. Բուրվառ:*

**ՓՈՒՐԹԸԿԵԼ**, *Բմ. նբ. Փետրել:*

**ՓՈՒՑԵԽ**, *Կճ. գ. Փայծաղ:*

**ՓՈՒՔ**, *գ. Ձյունախառն քամի:*

**ՓՕՋՄԻՇ ԱՆԵԼ**, *Փչացնել:*

**ՓՕԹԻԿ**, *գ. Եվրոպական ոճի կոշիկ:*

**ՓՕԼԻՍ**, *գ. Քաղաքային ոստիկան:*

**ՓՕԾԵԽ**, *Լիմ, գ. Փայծաղ:*

**ՓՕԿԷՄԱՂ**, *Լիմ, գ. Մեծ անցքերով մաղ:*

**ՓՕՂԱՆ**, *գ. Փողոց:*

**ՓՕՂՈՑ**, *Կճ. գ. 1) Աղբանոց:* Խավեր փօղոց քըջեջ կանեն *(Կճ.): 2) Զուգարան (Կճ.):* Ճիժ կընաց փօղոց *(Կճ.):*

**ՓՕՂՊԱՏ**, *Լիմ, գ. Օձիք:* Քյö փօղպատ պաց ի *(Լիմ):*

**ՓՕՂՕՔ**, *գ. Բողոք:*

**ՓՕՆՏՈՒՌ**, *գ. Փողոցի վրա բացվող դուռ:* Փօնտըռան առաճ ճըրճընիլ, ավլի՛լ ես։

**ՓՕՇԻ** *(նաև՝ Հթ. Կճ.), գ. 1) Մոխիր:* Փօշին թօրվընից խանինք *(Կճ.): 2) Հթ. Թոնրի մոխիր: 3) Կերակուրը, հատկապես թանապուրը թանձրացնելու ալյուր:*

**ՓՕՇԻՆԱ**, *գ. Փողոցներից հավաքված նուրբ հողափոշի, որ փռում էին հողե կտուրներին՝ կաթելու դեմն առնելու համար:*

**ՓՕՇՄԱՆ ԷԼՆԵԼ**, *Զղջալ:* Աչկերըտ աղեյ խան տըղէյներաց վէրէն, վերջ փօշման կէլնես, փարա չանե *(օգուտ չի ունենա):*

**ՓՕՇՏ**, *գ. Փոստ:*

**ՓՕՇՏԱԽԱՆԱ**, *գ. Փոստատուն:*

**ՓՕՌ**, *գ. Կանացի հագուստի բոլորածալ:*

**ՓՕՍՏ** *(նաև՝ Հթ.), գ. Էժանագին մորթի:*

**ՓՕՍՏԸ ԽԱՆԵԼ**, *Շատ տանջել:*

**ՓՕՐԹԱ ԶԱՆԵԼ**, *Հպարտ-հպարտ քայլել:*

**ՓՕՐԹՈՒԳԱԼ**, *գ. Նարինջ:*

**ՓՕՐՈՎ**, *Հթ.ած. Հղի:* Փօրով կընիկյ *(Հթ.):*

**ՓՕՐ-ՓՕՇՄԱՆ**, *մկ. Խորապես զղջացած:* Փօր-փօշման էկավ տուն։

**ՓՕՐՓՕՇ**, *գ. 1) Չնստած հող, ալյուր: 2) Փքուն խմոր:*

**ՓՕՐՓԸՇՆԵԼ**, *չբ. 1) Փքվել, ուռչել:* Խըմոր փօրփըշներ ի: *2) Շատ չորանալ:* Փօղանը փօրփըշներ ի, ճըրճընվել կուզի։

**ՓՕՐՕԶԱ**, *գ. Փիրուզ: Ծան. – Ուրբաթ առվի դաշտում ընկած էր մի մեծ սպիտակ քար, որ ժողովուրդը կոչում էր Փօրօզքյար:*

**ՓՕՑԵԽ**, *Հթ. տե՛ս* **ՓՕԾԵԽ**:

**ՓՕՔՐՈՒԹ**, *մկ. Փոքր հասակից:*

# Ք

**ՔԱԼ**, *ած. Անհաս:* Քալ խըընձոր *(Կճ.):*

**ՔԱԼԻԼԷԱ**, *գ. Գալիլեա: Ծան. – Վարագա սարի ամենաբարձր գագաթներից մեկը՝ Երուսաղեմի Գալիլեա գագաթի համաբանությամբ: Երիտասարդները գիշերով բարձրանում էին Քալիլէա գագաթը, որպեսզի առավոտյան՝ արևածագին, կարողանան գոնե մեկ ակնթարթով տեսնել Մասիսը և կուշտ լաց լինել: Դա նրանց հաջողվում էր միայն անամպ օրերին:*

**ՔՅԱՄԱՔՅԱՇ**, *գ. ած. Քամուց փչացած արմտիք:* Քյամաքյաշ ցորեն:

**ՔԱՆՈՆ**, *գ. Տավիղի հայկական տեսակ:*

**ՔԱՆՑԱՆԱԿ**, *գ. Գանձանակ:*

**ՔԱՆՔՈՒՐ**, *Վն. ած. Գանգուր:*

**ՔԱՐԱԼԷԽԵԼ**, *Բմ. նբ. Քարկոծել:*

**ՔԱՐԿԸՃԻԿ**, *Բմ. գ. Քարկտիկ:*

**ՔԱՇԻ**, *գ. Պարսկաստանի Քաշան քաղաքում պատրաստված գեղեցիկ սափոր:*

**ՔԱՌՆԻԿ**, *գ. Գառնիկ անձնանուն:*

**ՔԱՐԿԻՃ**, *գ. Կրունկի վրա գոյացող թարախոտ կոշտ վերք:* Քարկիճ ա էլե ոտի տակ *(Կճ.):*

**ՔԱՐՌՈՒԿ**, *Վն. գ. Քարկտիկ:* Քարռուկ խիյ խաա կըլոր, ծէթ քյառով կըխաղան *(Վն.):*

**ՔԱՑԱ**, *գ. Կասսա, երկաթե դրամարկղ:*

**ՔԵ**, *Լիմ, գ. Քեզ:* Կուզի քե *(Լիմ):* Քե(զի) կըթըփեմ *(Լիմ):*

**ՔԵՐՈՑ**, *գ. Հացհան, եփված լավաշը թոնրի կողից պոկելու և հանելու գործիք:*

**ՔԷՋԱԲ**, *գ. Ծծմբաթթու:*

**ՔԷՋԱՐ**, *գ. Կալի միացորդ:*

**ՔԷՐԻԿ**, *գ. Ակիշ:* Տաշտի խըմոր քէրիկօվ քէրեց *(Կճ.):*

**ՔԷԹԸՐ**, *ած. Ծուռ, թեք (հատկապես պատ):*

**ՔԷԹԸՐՎԵԼ**, *չբ. Ծռվել, թեքվել:*

**ՔԷԹՐԱՁԱՆԱ**, *ած. Ծնոտը ծուռ:*

**ՔԷԹՐԱՊԷՐԱՆ**, *ած. 1) Բերանը ծուռ: 2) Շատախոս:*

**ՔԷԹՐԱՎԻՋ**, *ած. Վիզը ծուռ:*

**ՔԷՅՌԸՍՏԱՆ**, *գ. Քեռիների ընտանիքը:*

**ՔԷՇԻՇ**, *գ. Քահանա:*

**ՔԷՕՂՔՅ**, *գ. Քող:*

**ՔԷՕՆԹԻԿ**, *ած. Կեղտոտ, անպետք:*

**ՔԷՕՏԻ**, *ած. 1) Անդամալույծ: 2) Թշվառական:*

**ՔԷՕՇԿ**, *գ. 1) Պատշգամբ: 2) Պալատ:*

**ՔԷՕՌՓԱ**, *գ. Երեխա:*

**ՔԷՕՓԱԿ**, *1) գ. Շուն: 2) ած. հյհ. Շնացող:*

**ՔԷՕՓՕՂԼԻ**, *գ. հյհ. Շուն, շանորդի:*

**ՔԷՕՔ**[ց], *գ. Արմատ:* Քէօքʹըտ կըտըրվի:

**ՔԷՖ**, *գ. Ուրախություն, խնջույք:*

**ՔԸԹՈՑ**, *Վն. գ. Զամբյուղ:* Քըթոցի մէչ շւ̈րդւ̈ղուկ, խավող, մէկ էլ թուզ կէր *(Վն.)*:

**ՔԸՑԻՊ**, *Կճ. ած. Ժլատ:*

**ՔԸՑՄԵԼ**, *չբ. Ձեռքի կամ ոտքի մատները ցրտից ու մրսելուց կուչ գալ:* Ձ'եռաց մատերըս քըցմե *(Կճ.)*:

**ՔԷՖՈՎՆԱԼ**, *չբ. Խմիչքից տրամադրությունը բարձրանալ:*

**ՔԷՖՈՎՈՒԹԵՆ**, *գ. Զվարթ տրամադրություն:*

**ՔԸԼՄԸՋՈՐԵԼ**, *նբ. Վարպետորեն խաբել:* Կʹըլօ̈խը քըլմըզորեց, ճւ̈մբխեց:

**ՔԸԼՄԸՍՏՈՐԵԼ**, *նբ. Խաբելով ճանապարհ դնել:*

**ՔԸԼՔ**[ց], *գ. Արծաթ հալելու ժամանակ շիկացած հեղուկի երեսին օտար մետաղներից գոյացած կեղտ:*

**ՔԸՆԱՋԸՂԵՁ**, *ած. Քունը գլխին:*

**ՔԸՆԱԽԱՐԱՄ**, *ած. Քունը խանգարված:*

**ՔԸՆԹՈՒԿ**, *գ. Կերած տանձի, խնձորի մնացորդ:*

**ՔԸՇ ԱՆԵԼ**, *Հավերին քշել:*

**ՔԸՇԱ՛-ՔԸՇԱ՛**, *ձ. Հավ վանելու ձայնարկություն:*

**ՔԸՇՏԵԼ**, *նբ. 1) Ծառի, հատկապես բարդու ներքևի ճյուղերը կտրատել, որպեսզի բնից գերան ստացվի:* Մըկոյին կանչեքʹ, վոր ծառեր քըշտի: *2) Թևքերը և փեշերը վրա հավաքել:* Շորերըս քըշտած ճո̈ւր կանեի:

**ՔԸՇՏՈՒՆ**, *ձ. Դեպի տուն: Ծան. – Այսպես էին ասում երեխաները, երբ մութն ընկնելիս դադարեցնում էին խաղը և տուն գնում:*

**ՔԸՇՈ՛Ի-ՔԸՇՈ՛Ի**, *ձ. Ձի, էշ կանչելու ձայնարկություն:*

**ՔԸՇՔԸՇԵԼ**, *չբ. Շներին գրգռել մեկի վրա:*

**ՔԸՌԹՈՒՆՑԿ**[ք], *գ. Այրված կաթի նստվածք:*

**ՔԸՌՈՒԿ**, *գ. ած. Բարձրորակ ցորեն:*

**ՔԸՌՈՒՍԻԿ ՏԱՆՁ**, *Բմ. Վայրի տանձ:*

**ՔԸՍ ԱՆԵԼ**, *Շներին գրգռել մեկի վրա:*

**ՔԸՍՎԵԼ**, *չբ. Քծնել:*

**ՔԸՎՐԵԼ**, *Կճ. չբ. Հայհոյել:*

**ՔԸՐԱՎ**, *գ. Գրավ:*

**ՔԸՐԱՎԱԹ**, *գ. Փողկապ:*

**ՔԸՐԱՎԷԹ**, *գ. Հաստ տախտակ:*

**ՔԸՐԹՈՇ**, *ած. Տգեղ:* Քըրթոշ ախչիկ: Դէլ չէր էլեր տաշտ դըմբոց, շոտըմ էլա̈վ թորվան քըրթոշ:

**ՔԸՐԹՈՑ**, *գ. Հացհան, եփված լավաշը թոնրի կողից պոկելու և հանելու գործիք:*

**ՔԸՐՇԱ**, *գ. Եղիրճ, ձյան երեսին գոյացած հաստ շերտ, որի վրա հնարավոր է տրեխով կամ վրըըշիկով քայլել՝ չթաղվելով ձյան մեջ: Ծան. – Վանում ձմռանն առատ ձյուն էր տեղում, և ձյան շատ հաստ շերտով ծածկվում էին արտերն ու այգիները: Երբ ձյունը դադարում էր, պայծառ արև էր լինում, որից ձյան վերին շերտը հալվում էր, իսկ գիշերը սառչում՝ ձյան երեսին գոյացնելով սառույցի բարակ շերտ, որ կոչվում էր* քըրշա *կամ* եղիրճ:

**ՔԸՑՄԵԼ**, *չբ. Մատները ցրտից ընդարմանալ:* Մատներըս քըցմիր են, կյա̈լյա̈մ չեմ կանա պըռնե *(Վն.):*

**ՔԸՑՄԱԾ**, *չբ. ած. 1) Ընդարմացած (մատներ): 2) փխբ. Անճարակ,ծեռքից բան չեկող (կին):*

**ՔԻԲԱՐ**, *ած. Հպարտ, պատվախնդիր, ազնվաբարո:*

**ՔԻՇԷՐՎԱ ՇԱՌՎԱՌ**, *Չղչիկ:* Քիշէրվա շառվառ քիշեր կըթըռնի *(Կճ.):*

**ՔԻՇՄԻՇ**, *գ. Չորացրած խաղողի ամենաքաղցր տեսակը:*

**ՔԻՍ**, *գ. Հացաբույսերի վարս, մազ:*

**ՔԻՐԵԼ** *(նաև՝ Կճ.), նբ. 1) Քերել: 2) Կճ. Անասունը մորթելուց հետո մորթին հանել:*

**ՔԻՐԷՋԽԱՆԱ**, *գ. Գաջի գործարան:*

**ՔԻՐՈՒՉՔ**, *Լիմ, գ. Կաթսայի մեջ մնացած կերակրի տականք:*

**ՔՅԱ**, *ձ. Կոչական բառ:* Քյա, էտա տո̈ւ ե՞ս: *Ծան. –* Քյա-*ն գործածվում էր կանանց դիմելիս՝* քյա կընիկ, *իսկ ամուսնուն դիմելիս ասում էին՝* ծօա̈, մարթ:

**ՔՅԱԲԱԲ, ՔՅԱ̈ԲԱ̈Բ**, *հթ. գ. Խորոված:* Էշ կըդաղեն, տո̈ւ կʸիտես թէ քյաբա՞բ կիփեն: Իշու մըսից քյաբաբ չելնե, չէա̈, ամա իշու կʸընից քյաբաբ էլ կէլնի, խարսնիս էլ վէրէն:

**ՔՅԱԹԸԲ**, *գ. Քարտուղար, գրագիր:*

**ՔՅԱԼԱ**, *1) գ. Գլուխ: 2) ած. Գլխավոր, մեծ:* Քյալա խաթո̈ւն, խաց պեա̈ր, ուտեմ:

**ՔՅԱԼԱԳՅՈՁ**, *1) ած. Բառացի՝ աչքը գլխին: 2) գ. Հեքիաթային միաչքանի հրեշ:*

*3) ած. Խաբեբա։ 4) ած. Ճարպիկ, հնարագետ։*

**ՔՅԱԼԱՇ**, *ած. 1) Կորիճ։ 2) Կայտառ, վառվռուն։*

**ՔՅԱԼԱՎԷՐ**, *1) ած. Լայն, մեծ։* Քյալավէր պէրան։ *2) Մեծ պատռվածք շորի վրա։*

**ՔՅԱԼԲԱԹԻ**, *գ. Աքցան։*

**ՔՅԱԼԽՕԴ**, *ած. 1) Հին։ 2) Փչացած։ 3) Ավերված։*

**ՔʲԱ̈ԽԱ̈ՆԱ**, *գ. Քահանա։*

**ՔʲԱ̈ԽՑԸՐ**, *ած. Քաղցր։*

**ՔʲԱ̈ԽՑՐԱՐՈՒՆ**, *ած. Համակրելի։*

**ՔʲԱ̈Ծ**, *ած. Քած։*

**ՔʲԱԿԵԼ**, **ՔʲԱ̈ԿԵԼ**, *Լիմ, նբ. Քանդել։* Թիլի խանգʲո̈րց քʲակեց *(Վն.)*։ Էտ մարթ իմ տուն կըքʲա̈կի *(Լիմ)*։

**ՔʲԱ̈ԿՈՌ** *(նաև՝ Լիմ), գ. Աթար, պատի վրա չորացրած փթիր։*

**ՔʲԱ̈ԿՈՒԿ**, *նբ. Քանդված։* Խին տուն զաթի քʲա̈կուկ ի։

**ՔʲԱ̈ՀԼԱՆ**, *գ. Նժույգ։*

**ՔʲԱ̈ՀՐԷԶ**, *գ. Արհեստական աղբյուր, որ հանում էին քանքանները՝ ստորերկրյա ջրերը բարձրացնելու և ոռոգմանը ծառայեցնելու համար։*

**ՔʲԱՂ**, *Հթ. գ. Հունձ։ Ծան. – Այգեկութին ասում էին* կութ, կիթ *(Վն.)*։

**ՔʲԱՂԱՔʲ**, *գ. Քաղաք։*

* Շէն անուն վէր ավեր քʲաղքʲին, *Որևէ մեկին ծաղրելու համար հաճախակի գործածվող արտահայտություն։*

**ՔʲԱ̈ՂԵԼ**, *նբ. Քաղել։*

**ՔʲԱՄԱԿ** *(նաև՝ Հթ.), գ. Կռնակ, մեջք (գոտկատեղին ասում են* մէշկ*)։*

* Քʲա̈մակ ունի, *Զորեղ պաշտպան ունի։*

**ՔʲԱ̈ՄԱ̈Ր**, **ՔʲԱ̈ՄԱՐ**, *Կճ. գ. Գոտի։* Խաս քʲա̈մար։ Տըղամարթու քʲա̈մա̈ր, կընոչ//կընգʲա̈ քʲա̈մա̈ր մէճկի շալ, կաշվի քʲա̈մա̈ր, առծըթի քʲա̈մա̈ր *(Վն.)*։ Քʲա̈մար արծըթից էր *(Կճ.)*։ *Ծան. – Վանում գործած գոտի չեն կապել, այլ կաշվե, արծաթե կամ ոսկյա (Վն.)։*

**ՔʲԱ̈ՄԲԱ̈Խ**, *ած. Ավերակ։* Քʲա̈մբախ էլնի քʲո տուն-տեղ։

**ՔʲԱ̈ՄԵԼ**, *նբ. Քամել։*

**ՔʲԱ̈ՄԻ**, *գ. Քամի։* Քʲա̈մու պէրածն քʲա̈մին էլ կըտանի։

**ՔʲԱ̈ՄԻԼ**, *ած. Կատարյալ։* Քʲա̈միլ մարթ։

**ՔʲԱՄՈՏ**, *գ. Քամի օր։*

**ՔʲԱ̈ՄՈՑ**, *Լիմ, գ. Մածնի տոպրակ։*

**ՔʲԱ̈ՅՇՈՐ**, *Վն. գ. Տակաշոր։* Էրեխի քʲա̈յշոր փոխի՛ *(Վն.)*։

**ՔʲԱ̈ՆԱ̈Ր**, *գ. Եզր։* Առվի քʲա̈նրով կընա̈ա̈։

**ՔʲԱ̈ՆԱ̈Ֆ**, *Վն. ած. Սոոր, չնչին։*

**ՔʲԱ̈ՆԴԱ̈Լ**, *գ. Փոս, խանդակ։*

**ՔʲԱ̈ՆԴԵԼ**, *նբ. Քանդել։*

**ՔʲԱ̈ՆԴԻՐ**, *Հթ. գ. Պարան։*

**ՔʲԱ̈ՆՑ**, *կ. 1) Քանց։ 2) Բացի։ 3) Նման։* Քʲանց մյե։ Ախը քʲանց մախ դէն ի։

**ՔʲԱ̈ՆՔʲԱ̈Ն**, *գ. Գետնուղի փորելով արհեստական աղբյուր՝ քյահրեզ պատրաստող արհեստավոր։*

**ՔʲԱՇԵԼ**, *Հթ. նբ. 1) Զգել։ 2) Քարշ տալ։ 3) Ատամը հանել։ 4) Կտրել տանել։ 5) Նկարել։ 6) Ծխել։ 7) Վն. Թորել։ 8) Կշռել։*

**ՔՅԱՇԿԱ**, *գ. Հարիսայի տեսակ, որի մեջ միսը չի քայքայվում։*

**ՔʲԱ̈ՇԿԷԿ**, *վ. Երանի թե։* Քʲա̈շկեկ էտ պա̈ն էլնի։ Քʲա̈շկէկ կʲար տուն։

**ՔʲԱ̈ՇՄԸՇՎԵԼ**, *չբ. 1) Ամաչելով, քաշվելով կծկվել, անհամարձակ լինել։ 2) Ծերությունից դեմքը կնճռոտվել։*

**ՔʲԱ̈ՇՈՐ**, *գ. Երեխայի տակաշոր։*

**ՔʲԱ̈ՇՔԸՇՈՐԵԼ**, *նբ. Քաշքշել։*

**ՔʲԱ̈ՉԱ̈Լ**, *ած. Ճաղատ։*

**ՔʲԱՌ**, *ած. Խուլ։* Քʲառ խալիվոր *(Վն.)*։

**ՔʲԱ̈ՌԱ̈ԿԱՆՋ**, *ած. Խուլ։*

**ՔʲԱ̈ՌԱ̈ՍՏԱ̈**, *գ. Ատաղձ, փայտանյութ։*

**ՔʲԱ̈ՌԱ̈ՍՏԱՁԻ**, *գ. Ատաղձագործ։*

**ՔʲԱՌԷՇՏ**, **ՔʲԱ̈ՌԷՇՏ** *(նաև՝ Հթ. Լիմ), գ. Եղան։* Խոտ քʲառէշտով կըպա̈րցէր վէր սէլին *(Վն.)*։ Քʲա̈ռէշտ խոտերու մէչ կորավ *(Հթ.)*։ Քʲա̈ռէշտով կալ կանեն *(Լիմ)*։ Քʲա̈ռէշտով հէրան արեց։

**ՔʲԱ̈ՌԹԱ̈ԹՈՇ**, *գ. Մեծ մողես։* Քʲա̈ռթա̈թոշ պորտ տըվիր//տըվեր էր արեվուն, կըտահʲնէր *(Վն.)*։

**ՔʲԱ̈ՌԻ**, *կճ. գ. Քեռի։*

**ՔʲԱՌԿԱՊ ԱՆԵԼ**, *Վն. Թելը հանգուցել։*

**ՔʲԱ̈ՌՍՈՒՆ**, *թ. Քառասուն։*

**ՔʲԱ̈ՍԱ**, **ՔԱՍԱ**, *կճ. գ. Կավե խոր աման։* Շատ շյոքʲ էր, մէյ քʲա̈սա մածուն կէրա, խռվցա։ Ինչ վոր պըրտիս ուրիշի քʲա̈սէն, կուկʲա̈ քʲո կըտէլ։

**ՔʲԱ̈ՍԱ̈Դ**, *ած. Զունևոր, նեղված։*

**ՔʲԱ̈ՍԱ̈ԴԱՆԱԼ**, *չբ. Աղքատանալ։*

**ՔʲԱ̈ՍԱ̈ԴՈՒԹԵՆ**, *գ. Զքավորություն։*

**ՔʲԱ̈ՍԻԲ**, *ած. Աղքատ։*

**ՔʲԱ̈ՎԳԻՐ**, *գ. Փրփրաքաշ, փրփրահավաք։*

**ՔʲԱ̈ՎՈՐ**, *գ. Կնքահայր։* Տէրտէր էրեխին իտուր քʲա̈վորի ծեռ *(Վն.)*։

**ՔʲԱ̈ՎՈՐԱԿԻՆ**, **ՔʲԱՎՈՐԿԻՆ**, *գ. Կնքամայր։* Քʲա̈վորկին մըկըրտած էրեխի շորեր խայցուց *(Վն.)*։

**ՔյԱ̈ՎՈՐՏԱՆՔ**, *գ. Քավորի տնեցիներն ու մոտիկ բարեկամները, որոնք մասնակցում են հարսանիքին։*

**ՔյԱ̈Ր**[1], *գ. Քար։* Քյա̈րն ուր տեղ ծանդըր ի *(այսինքն՝ օտարության մեջ աննշան կորչում են, իսկ հայրենիքում արժևորվում)։*

**ՔյԱ̈Ր**[2], *Վաստակ, օգուտ, շահ։* Էտ պա̈նի մէչ քյա̈ր ունի՞ս։

**ՔՅԱՐԱ ԱՆԵԼ**, *Օգուտ տալ։* Քյարա չարավ։

**ՔյԱՐԱԼԵԽ ԱՆԵԼ**, *նբ. Քարկոծել։* Շան քյարալեխ արին *(Վն.)*։ Ծիրնի ծառ քյարալեխ արին *(Վն.)*։

**ՔյԱ̈ՐԱՄԱԹ**, *գ. Ուժ, կարողություն։* Քյո քյա̈րամաթն էտ ի, չկարցար փետի վէրէն։

**ՔյԱՐԱՓՈՍԻԿ**, *գ. Մանկական խաղի տեսակ հողի հետ։*

**ՔյԱ̈ՐԱՓՈՒՌ**, *գ. Կաշառք։*

**ՔյԱ̈ՐԲԱՐ**, *գ. Սաթ։*

**ՔյԱ̈ՐԳՅԱԽ**, *գ. Փայտե շրջանակ ասեղնագործելու համար։*

**ՔյԱ̈ՐԷ ՔՐԻՉ**, *Քարե տախտակի վրա գրող քարե գրիչ։*

**ՔյԱ̈ՐԷ ՏԱԽՏԱԿ**, *գ. Սև քարի շերտ, որի վրա գրում էին քարե գրիչով, ապա հեշտությամբ ջնջում և նոր բան գրում։*

**ՔյԱՐԿԻԾ**, *Վն. հթ. գ. Թարախոտ կոշտ վերք կրնկին։*

**ՔյԱ̈ՐԿԸՏԻԿ**, *գ. Մանկական խաղ։*

**ՔյԱՐԿԸՏՈՑ**, *Վն. գ. Թարախոտ կոշտ վերք կրնկին։*

**ՔյԱ̈Ր-ՃԱՐ ԱՆԵԼ**, *Ամեն միջոցի դիմել, ամեն դուռ ծեծել։*

**ՔյԱ̈ՐՃԻԿ**, *գ. Թռչունների երիկամունք։*

**ՔյԱ̈ՐՈՎ ՔյԱ̈ՐԱՏԱԿ ԷԼՆԵԼ**, *1) Քարկոծվել։ 2) Անեծք. տունդ քանդվի և քարերի տակ մնաս։*

**ՔյԱ̈ՐՍԻՐՏ**, *ած. Քարասիրտ, անողորմ։* Էրկու քյո̈ւրդ մէյ քյա̈րվան, էրկու կընիկ մէյ դիվան։

**ՔյԱ̈ՐՎԱՆ**, *գ. Քարավան։* Շուն խաչի, քյա̈րվանն ընցնի։

**ՔյԱ̈ՐՎԸՆՋԻ**, *գ. Քարավանող։* Քյա̈րվընջու էթա̈լ-կյա̈լը չեն խարցուցի, վաստակ կըխարցուցեն։

**ՔյԱ̈ՐՈՒՓՈՍ**, *ած. Քարքարոտ, խորդուբորդ։*

**ՔյԱ̈ՓԱՆԱԿ**, *գ. Հովվի թաղիքե վերարկու։*

**ՔյԱ̈ՔյԱՇՈՐ** *գ. Տակաշոր։* Ճըժի քյա̈քյաշոր վըլա̈ց *(Կճ.)*։

**ՔյԱ̈ՔյԱ̈ԿԵՐ**, *ած. գ. Վախկոտությունից քծնող և բացասական այլ հատկություններով բնորոշ ստոր անձ։*

**ՔյԱ̈ՔյԱՂԷՐԱՆ**, *ած. Հայհոյող, բերանը միայն հայհոյանքով բացող։*

**ՔյԱ̈ՔՅՈՒԼ**, *գ. Ճակատի վրա կախված մազափունջ։*

**ՔյԱ̈ՔՎՈՌ**, *ած. Խեղճ, թշվառական։*

**ՔյԱ̈ՖԹԱՌ**, *ած. Պառավ։*

**ՔՅԱՖԻԼ**, *գ. ած. Երաշխավոր։*

**ՔՅԱՖԻՐ**, *ած. Անողոք, դաժան։*

**ՔՅԱՖՈՒՐ**, *ած. Բազմաթերթ և բուրավետ (վարդ)։*

**ՔյԱՖՔյ**, *գ. Հալվող յուղի, եփվող մսի երեսի քափ։*

**ՔյԵԹԸՐ**, *ած. 1) Ծուռ, թեք։* Կյըտա̈կըտ քյեթըր ի, դըզի՛ *(Վն.)։ 2) Լիմ, Շիլ։*

**ՔյԵԹՐՈՇ**, *ած. Ծուռ, թեք։*

**ՔՅԵՂԸՐԹԵԼ**, *նբ. Քերելով ճանկռտել։*

**ՔյԵՊԸՌՆԵՄ**, *վ. Ենթադրենք։*

**ՔյԵՌԱՇԱ**, *գ. Մորական պապ։*

**ՔյԵՌԱՆՔ**, *գ. Քեռու ընտանիքը։*

**ՔյԵՌԿԻՆ**, *գ. Քեռակին։*

**ՔյԵՌՄԱՄԱ**, *հթ. գ. Մոր մայր, տատ։*

**ՔյԷԼԵԼ**, *չբ. Քայլել։*

**ՔյԷԼԷԽ**, *գ. Հոգեհաց։* Կա̈զա̈ր ուր մեռելի//մեռլի խոկյո̈ւ խա̈մա̈ր քյէլէխ տըվեց//պա̈ժնեց *(Վն.)։*

**ՔյԷԼՔ**, *գ. Քայլվածք։*

**ՔյԷՄՈՒՌ**, *հթ. գ. Ածուխ։*

**ՔյԷՇՄԱ**, *հթ. գ. Զուգարան։*

**ՔյԸԲԸՍԵԼ**, *նբ. Սեղմելով, հրելով տեղավորել տոպրակի, ջվալի, այբա-խուրջինի մեջ։*

**ՔյԸԲԸՍՈՒԿ**, *նբ. Լիքը, լեցուն։*

**ՔյԸԲՐԻԹ**, *գ. Լուցկի։*

**ՔյԸԶՈՒԽ**, *ած. Թզուկ, գաճաճ։*

**ՔյԸԼՔ**, *գ. Արծաթագործի խանութի թափոնների կալի ժամանակ ստացված մաքուր արծաթի վրա տերևակալած կեղտ։*

**ՔյԸԽ**, *մկ. ած. Կեղտոտ։*

**ՔյԸՄՈՒՆ**, *դ. Քոնը։*

**ՔյԸՆՈՍ ԿՅԱԽ**, *Քնելու ժամանակը։*

**ՔյԸՆՈՑ ԿյԱ̈Խ**, *գ. Քնելու ժամանակը։* Քյընոց կյա̈խն ընցիր ի, ճժեա̈ր։

**ՔյԸՆՈՒԿ**, *չբ. ած. Քնած։*

**ՔյԸՌԱ**, *ած. Քարոտ, քարքարոտ։* Ճա̈մբա̈խ չի, քյար ու քյըռա ի։

**ՔյԸՌԸՍՏԱԼ**, *չբ. 1) Թեթևակի հպվել։* Էկավ, քյըռըստալով ընցավ։ *2) Կաշառք խոստանալ։* Մի քյըռըստա̈, տեսնենք։ *3) Ակնկալել, սպասել։* Կովը տյե, կաթը քյըռըստա̈ *(կովը տե՛ս, որ նրանից ստացվող կաթն էլ ակնկալես)։*

**ՔյԸՌԸՍՏՈՑ**, *գ. Հպման մեղմ ձայն։*

**ՔյԸՌՆԱԾ** *(նաև՝ Լիմ), Ծաղկատար։* Ինոր իրես ծաղիյ խանելուց քյըռնած էր մընա̈ցե *(Վն.)։* Իրես քյըռնած ի *(Լիմ)։*

**ՔյԸՌՆՈՒԿ**, *հթ. ած. Ծաղկատար։*

**ՔյԸՌՏԸՆԵԼ**, *չբ. Քրտնել։*

**ՔյԸՌՏՆՈՒԿ**, *չբ. մկ. Քրտնած։* Բալէս քյըռտնուկ էկավ տուն։

**ՔյԸՌ-ՔՅԱՇ**, *մկ. Մի կերպ քայլելով, ոտքերը հազիվ հետը տանելով։*

**ՔյԸՌ-ՔյԸՌԱԼ**, *չբ. Հռհռալ։*

**ՔյԸՐԱ**, *գ. Վարձ։*

**ՔյԸՐԱՄԻԹ**, *գ. Կղմինդր։*

**ՔյԸՐԱՎԱԹ**, *վն. գ. Սպիտակ, օսլայած, շարժական օձիք։* Ստամբօլա իկյե, քյըրավաթ կըտըռնի *(Վն.)։*

**ՔյԸՐԳյԱԽ**, *գ. Քարգահ։*

**ՔյԸՐԳԸԼԽՈՒՆ**, *ած. Քարգահի վրա ասեղնագործված։*

**ՔյԸՐԵՂԱՆ**, *գ. Կավե լայնաբերան աման։ Ծան. – Վանում և Վանի որոշ գյուղերում ասում էին* քյասա։

**ՔյԸՐԹՈՑ**, *վն. գ. Մի ծայրը ճանկավոր, մյուսը թաթի ձևով երկար մետաղյա բարակ ձող, որով հաց են պոկում ու հանում թոնրից։*

**ՔյԸՐՅԱՁԻ**, *գ. 1) Վարձակալող։ 2) Փոխադրող։*

**ՔյԸՐՔյԸՐՎԵԼ**, *չբ. Տանջվել, չարչարվել։*

**ՔյԸՖՐԵԼ**, *չբ. Հայհոյել։*

**ՔյԻԾԵՓ**, *ած. 1) Դժվար ջարդվող ընկույզ, կաղին և այլն։* Քյիծեփ գյոզ։ *2) փխբ. Ժլատ, կծծի։*

**ՔյԻՍԻԿ**, *գ. Քսակ։*

**ՔյԻՐԵԼ**, *Լիմ, նբ. 1) Քերել (տաշտ)։ 2) Քորել։*

**ՔյՈ**, *գ. Քո։* Կյընա պըռնի քյե խնամի, վոր քյո պոչին նըմանի։

**ՔյՈ ՏԱՅՎԵՐԵՎ**, *Ամեն բան, թաքցրածն ու չթաքցրածը, ունեցած-չունեցածը։*

**ՔյՈՆԹԱԼ**, *չբ. Շունը տոփոտել։*

**ՔյՈՌ**, *հթ. գ. Ցեխ։*

**ՔյՈՐ**, *գ. 1) Քոր։ 2) Քույր։* Քյորն էրթվավ ախպօր արվով, ախպերն ասաց քյոր չունեմ։ Էն ինչ չես ուզե քըրոչըտ, կուզես տալոչըտ։ *3) փխբ. Ծեծ։* Ջանը քյոր կուզի։

**ՔյՈՐԵԼ**, *նբ. Քորել։*

**ՔյՈՐՎԵԼ**, *կբ. 1) Քորվել։ 2) փխբ. Ծեծվել։*

**ՔյՈՐՓԱ**, *ած. Փոքր (երեխա)։*

**ՔյÖՔյ**, *հթ. գ. Արմատ։*

**ՔյՈՒԹՈՒԿ**, *գ. Կոճղ, հատկապես ընկուզենու բուն, որից շիլիֆ էին հանում։*

**ՔյÖԻԼ**, *գ. Մոխիր։*

**ՔյՈՒԼԱԽ**, *գ. Գլխարկ։*

**ՔյÖԻԼԱՇ**, *Լիմ, գ. Ծղոտ։*

**ՔյՈՒԼԲԱՍՏԻ**, *գ. Խորոված։*

**ՔյՈՒԼՖԱԹ**, *գ. Ընտանիք, կինն ու երեխաները։*

**ՔյՈՒՄԲԵԹ**, *գ. Գմբեթ։* Քյöնի կեր, պատանք չըկեր, վոր մեռավ, քյումբեթ կապեցին։

**ՔյՈՒՄՈՒՆ**, *դ. Քոնը։* Տöւ իմըս կյիտես, ես քյումունը, տէրտէրը՝ մեր էրկըսուն։

**ՔյՈՒՆ**, *գ. Քուն։* Տըղի քյուն տարավ։

**ՔՅՈՒՆՃ-ՊՈՒՃԱԽ**, *գ. Անկյուններ։* Քյունճ-պուճախ չըլթողեց, իրիշկավ, պա̈նըմ է չըկընդավ։

**ՔՅՈՒՇՏԻԿ**, *գ. Գոտեմարտ։*

**ՔՅՈՒՌԱԿ**, *գ. Քուռակ։*

**ՔՅՈՒՌՍԻ**, *գ. Քառակուսի ցածլիկ սեղան, որի տակ դնում էին փայտածուխի կրակով լեցուն, մոխրով ծածկած կրակարան՝ մանղալ, սեղանի վրա մեծ վերմակ էին փռում ու շուրջը բոլորած՝ ոտները մեկնում էին քյուռսու տակ ու ձմռանը տաքանում։*

**ՔՅՈՒՖԹԱ**, *գ. Կոլոլակ։*

**ՔՅՈՒՖՈՒՐ**, *գ. Հայհոյանք։*

**ՔՅՈՒՖՈՒՐԲԱՋ**, *ած. Հայհոյաբերան։*

**ՔՅՕԹԱԿ**, *գ. Ծեծ։*

**ՔՅՕԼ**, *Լիմ, ած. Դժվար ջարդվող (ընկույզ, կաղին և այլն)։* Գյո̈զ քյօլ ի, կըլթուն տո̈ւս չիկյա̈ *(Լիմ)։*

**ՔՅՕԼՕՋ**, *Վն. գ. Թաղիքե գլխարկ։*

**ՔՅՕՄՈՒՐ** *(նաև՝ Բմ.)*, **ՔՅՕՄՈՒՐ**, *Լիմ, գ. Փայտածուխ։* Քյօմուր լըցու վէր կըրակին *(Վն.)։* Քյօմուր լից կըրակի վըրէն *(Բմ.)։* *Ծան. – Վանում քարածուխ չկար։*

**ՔՅՕՇՕ**, *գ. Անկյուն։*

**ՔՅՕՌ**, *ած. Կույր։*

**ՔՅՕՌԱՖԱԻՄ**, *ած. Կռահելու մեջ կույր, հիմար, ապիկար։*

**ՔՅՕՌՓՕՇՄԱՆ**, *ած. Ուշ զղջացած։*

**ՔՅՕՍԱ**, *ած. Անմազ։*

**ՔՅՕՍԱԼԱ**, *գ. Ներբանի կաշի։* Ինոր իրես քյօսալա ի, ինոր ճեռից պըռծնել կէլնի։

**ՔՅՕՔՅ**, *Վն. Բմ. Լիմ, գ. Արմատ։* Ծառի քյօք խորն ի կընա̈ցե *(Վն.)։*

**ՔՅՕՔՅԵԼ**, *նբ. Լարել։*

**ՔՅՕՔՅ ՏԱԼ**, *Արմատակալել։* Խավողի մատ քյօքյ ի տըվե։

**ՔՅՕՔՅ ՔՅԸՑԵԼ**, *Լիմ, Արմատակալել։* Էս ծառ քյօքյ ի քյըցե *(Լիմ)։*

**ՔՈ՛Ւ**, *ձ. Թռչուն քշելու ձայնարկություն։*

**ՔՈՒՄԵԼԱՍՏԻԿ**, *գ. Ռետին։*

**ՔՈՒՆՋ**, *գ. Անկյուն (Կճ.)։* Ավել դ՚ըրուկ ի դ՚տըռա̈ն քունջ։

**ՔՈՒՆՋ-ՊՈՒՃԱԽ**, *գ. Տան ամենամթին տեղերը։*

**ՔՈՒՉ**, *Կճ. գ. Թռչունների ստամոքս-պարկ, որտեղ հավաքվում է կերած կուտը։* Խավլի քուչ դ՚տա̈րտա̈կ ա, պա̈ն չի կէրե *(Կճ.)։*

**ՔՈՒՌՈՒ՛-ՔՈՒՌՈՒ՛**, *ձ. Քուռակ կանչելու ձայնարկություն։*

**ՔՈՒՖԸՐ**, *Կճ.*, **ՔՈՒՖՈՒՐ**, *Բմ. գ. Հայհոյանք։* Պապին քուֆըր կէնի *(Կճ.)։*

**ՔՕԼ**, *գ. 1) Անտառ։ 2) Մացառուտ։ 3) Թփերի արմատ։*

**ՔՕԼՕՋ**, *Հթ. գ. Թաղիքե սրածայր տաք գդակ։*

* Քօլօզ դրնել գըլխին, *Խաբել ու ճամփու դնել:*

**ՔՕՄԻՍԻԱ**, *գ. Որոշակի տոկոս եկամուտ վաճառականին՝ ծառայության համար:*

**ՔՕՄԻՍԻՆՋԻ**, *գ. Վանեցի վաճառականների լիազոր Պոլսում:*

**ՔՕՄԻՍՕՆՋԻ**, *տե՛ս* **ՔՕՄԻՍԻՆՋԻ**:

**ՔՕՄԻՍՕՆՋՈՒԹԵՆ**, *գ. Վանեցի վաճառականների՝ Պոլսում լիազորություն անելը:*

*Ծան. – Վանի վաճառականները Պոլսում ունեին իրենց լիազորը՝ քօմիսինջին, որին հանձնարարում էին գնումներ կատարել և ապրանքն ուղարկել Վան: Այդ ծառայության համար նրանք որոշ տոկոս (քօմիսիա) էին ստանում: Քօմիսինջիները պետք է անվանի ընտանիքի զավակ և ազնիվ լինեին: Այդպիսին էր, օրինակ, հայտնի թարգմանիչ Վահե Միքայելյանի (Թերլեմեզյանի) հայրը՝ Միքայել Թերլեմեզյանը՝ «Չէ՛, չի լինիր» տարածված բանաստեղծության հեղինակը:*

**ՔÖՆԹԻԿ(Յ)**, *Վն. ած. Անպետք, կեղտոտ, վատ:*

**ՔՕՌՊՕ̈Ի**, *Հթ.*, **ՔՕՌ ՊՈՒՎ**, *Կճ. գ. Բու:* Քօռ պուվ ցիրեկ չի տըսնա *(Կճ.)*:

**Ք^յÖՐÖՇՊԸ̈Թ**, *Վն. գ. Չորեքշաբթի:*

**Ք^յÖՐÖՔ^յԸՇՊԸ̈Թ**, *տե՛ս* **Ք^յÖՐÖՇՊԸ̈Թ**:

**Ք^յՕՔ^յՌՌՋԱՆԱԼ**, *չբ. Հպարտանալ, քիթը վեր տնկել:*

# Օ

**ՕԴԱ**, *գ. 1) Բառացի՝ սենյակ: 2) Գյուղերում՝ ախոռների մի անկյունում շինված բարձրություն՝ սաքու՝ գյուղական ակումբ, որտեղ ձմռան երկար գիշերներին հավաքվում էին գյուղացիները և լսում աշուղների երգն ու նվագը, հեքիաթասացների կամ քաղաքից եկած մարդկանց պատմությունները:*

**ՕԴԱԲԱՇԻ**, *գ. Սենեկապետ, խանի՝ իջևանատան սենյակները վարձու տվող:*

**ՕԴԱԲԱՇՈՒԹԵՆ**, *գ. Սենեկապետություն:*

**ՕԹԱԿ** *(նաև՝ Բմ. Լիմ), գ. Սանդի թակ:*

**ՕԼԱՄ**, *գ. Ջրի աշխատանք, պարհակ:*

**ÖԼՐԵԼ** *(նաև՝ Հթ. Կճ.), նբ. Ոլորել:*

**ՕԼՈՒՂ-ՉՕՃՈՒՂ**, *գ. Երեխաներ, զավակներ։*

**ՕԼՕԽՆԵԼ**, *նբ. Նետել։*

**ՕԽԷ՜Շ**, *ձ. Բավականություն արտահայտող բացականչություն։*

**ՕԽԿԱ**, *գ. Ծանրության չափ, մոտավորապես մեկ կիլոգրամ։ Ծան. – Կար պետական* օխկա, *որ կոչվում էր* դրամդաշ, *և փոքր-ինչ պակաս էր կիլոգրամից, կար նաև քաղաքացիական օխկա, որ կոչվում էր* կարադաշ. *դա փոքր-ինչ ավելի էր մեկ կիլոգրամից։*

**ՕԽՆԵԼ**, *Հթ. Կճ. նբ. Օրհնել։*

**ՕԽՆԻՔ**, *Կճ. գ. Օրհնանք։*

**ՕԽՏԱՆԱՍՈՒՆ**, *Լիմ, թ. Յոթանասուն։*

**ՕԽՏԸ**, *Լիմ, թ. Յոթ*

**ՕՂԻՍ**, *գ. Աղյուս։*

**ՕՂՈՐԹ**, *Կճ. ած. Ճիշտ։*

**ՕՂՕՂԵԼ**, *Հթ. նբ. Ողողել։*

**ՕՂՕՐՄԱԾԻԿ**, *ած. Հանգուցյալ։*

**ՕՃՕՌՔ³**, *գ. Թոնրատան առաստաղ։*

**ՕՅՄԱ**, *գ. Քղանցք։* Շոր̈ի օյմէն հ'էրկէն ի *(Բմ.)։*

**Օ՜ՇՏ**, *ձ. Շուն վանելու ձայնարկություն։*

**ՕՌՕՍՊԻ**, *Վն. գ. Շնացող (կնոջ վերաբերյալ)։*

**ՕՐԹԱ**, *գ. Կենտրոն։*

**ՕՐԹԻԿ**, *Կճ. գ. Հորթ։*

**ՕՐԽՆԵԼ**, *նբ. Օրհնել։*

**ՕՐԽՆԷՔ³**, *գ. Օրհնություն։*

**ՕՐԽՆՈՒԿ**, *նբ. ած. Օրհնված։*

**ՕՐՇՆԱՆՔ**, *Բմ. գ. Օրհնանք։*

**ՕՐՇՆԵԼ**, *Բմ. նբ. Օրհնել։*

**ՕՐՊԷՎԷՐԻ**, *գ. Այրի։* Օրպէվէրին ճըժէրին տըժա̈ր պախեց *(Կճ.)։*

**ՕՐՕԽԿԵԼ** *(նաև՝ Կճ. Լիմ), նբ. Ուղարկել։*

**ՕՐՕԽԿՈՒԿ**, *նբ. ած. Ուղարկված։*

**ՕՐՕՃԱԼ** *(նաև՝ Բմ.), չբ. 1) Որոճալ։ 2) Ուտել։* Տըղի պատճառ, մոր օրօճալ։

**ՕՐՕՃԿԸՏԱԼ** *(նաև՝ Կճ. Լիմ), չբ. Հորանջել։*

**ՕՐՕՇԿԸՏԱԼ** *(նաև՝ Հթ.), տե՛ս* **ՕՐՕՃԿԸՏԱԼ**.

**ՕՐՕՓԵԼ**, *նբ. Եռացող հեղուկը շերեփով վերցնել ու նորից լցնել ամանի մեջ, որպեսզի հեղուկը եռալիս չփրփրի ու չթափվի։*

**ՕՐՕՓՏԵԼ**, *նբ. Լավաշ թխելուց առաջ փայտի ծայրին ամրացված լաթով տաք թոնրի կողերը հիմնավորապես մաքրել։*

**ՕՑ**, *գ. Օձ։* Օցը վէր ճըրին խարամ *(խայթ)* չունե։ Պաղ օց վոր տայցուցիր, դաշ քյե կըկըծի։

**Ö ՔՅ ԿՅÜԼ**, *Օգնել։*

**ՕՔՅՈՒՋ**, *գ. Եզ։*

* Օքյուզի մէյ, *նխտ. Անհասկացող, հաստակող ու դանդաղաշարժ մարդ։*

# Ֆ

**ՖԱՁԼԱ**, *ած. Ավելորդ։*

**ՖԱԼ**, *գ. Գրբացություն։*

**ՖԱ̈ԼԱ̈Գ**, *գ. 1) Երկինք, երկնակամար։ 2) փխբ. Բախտի անիվ, կյանքի հարափոփոխություն։ Ծան. – Վանում* Չախրի ֆա̈լա̈գ *էր կոչվում ուրարտացիների շինած լաբիրինթոսը Զըմփ-զըմփ Մաղարայի սարի վրա՝ հյուսիսարևելյան կողմում։*

**ՖԱԼՋԻ**, *գ. Գրբաց։*

**ՖԱ̈ՅԴԱ̈**, *գ. Օգուտ։* Էլ նա ֆա̈յդա̈, կընա̈ց վոր կընա̈ց։

**ՖԱ̈ՅԴԱ̈ԼԻ**, *ած. Օգտակար։*

**ՖԱ̈ՅԴԱ̈ՍԸԶ**, *ած. Անօգուտ։*

**ՖԱՅԻԶ**, *գ. Տոկոս։*

**ՖԱՅՀՄ**, *գ. Կռահում։*

**ՖԱՅՀՄԵԼ**, *չբ. Կռահել։*

**ՖԱՅՄ**, *Լիմ, գ. Հասկացողություն։*

**ՖԱՅՏՈՆ**, *Լիմ, գ. Կառք։*

**ՖԱ̈ՆԱ̈Ր** *(նաև՝ Լիմ), գ. Լուսարձակ, լապտեր։*

**ՖԱՆԴ**, *Լիմ, գ. Ձև, եղանակ։*

**ՖԱՆԵԼԱ**, *գ. Տաք ներքնաշոր։*

**ՖԱՆՖԱՌ**, *գ. Փողոցային նվագախումբ։*

**ՖԱ̈ՌԱ̈Խ**, *ած. 1) Զվարթ։ 2) Բացօթյա։ 3) Զովասուն։*

**ՖԱ̈ՌԱ̈ԽԼԱՄԻՇ ԷԼՆԵԼ**, *1) Զվարթանալ։ 2) Մաքուր օդ շնչել։*

**ՖԱՌԱՋԽԱՆԱ**, *գ. Աղբանոթ, աղբը հավաքելու գոգավոր թիակ, խանքյանդազ։*

**ՖԱՌԿԵՆ ԷԼՆԵԼ**, *Խելքի ընկնել, խելքի գալ։*

**ՖԱ̈Ս**, *գ. Ծոպավոր կարմիր գլխարկ, որ ներկայումս կրում են միայն արաբական երկրներում։*

**ՖԱՍՈՆ**, *Լիմ, գ. Տեսք, կերպ։*

**ՖԱՍՈՒԼՅԱ** *(նաև՝ Հթ. Լիմ), գ. Լոբի։* Կանաչ ֆասուլյէն կըխաշեն ու կըտապկեն *(Վն.)*։ Վա̈ն կանաչ ֆասուլյա ուտելու ա̈դա̈թ չըկար *(Վն.)*։ Ֆասուլյէն մըսի խէտ կիփեն *(Լիմ)*։ Սըֆտա̈կ[յ] ֆասուլյա իփեք[յ], ուտենք[յ] *(Հթ.)*։

**ՖԱ̈ՐԱ̈ՂԱ̈**, *վ. Իբրև թե, ենթադրենք, զորօրինակ։*

**ՖԱ̈ՐՂ**, *գ. Տարբերություն։*

**ՖԱ̈ՐՂԱ**, *վ. Թեկուզ և։* Ֆա̈րղա ասի, դու էլ ավատացիր։

**ՖԱ̈ՐԿ**, *գ. Տարբերություն։*

**ՖԱ̈ՐՄԱ̈Ն**, *գ. Հրամանագիր, հրովարտակ։*

**ՖԵՍ**, *գ. տե՛ս* **ՖԱ̈Ս**։

**ՖԵՐՄԱՆ**, *տե՛ս* **ՖԱ̈ՐՄԱ̈Ն**։

**ՖԷԼ**, *գ. Հնարք։*

**ՖԷԼ-ՖԱՆԴ**, *գ. Խորամանկություն։* Ինչ ֆէլ-ֆանդ վոր պա̈նեցրեց, քյարա չարեց։

**ՖԸԹԻԼ**, *գ. Պատրույգ։*

**ՖԸԹՖԸԹԱԼ**, *չբ. Հուզմուն-*

*քից սիրտը տրոփել։* Էտ խաբարի վէրէն սիրտը ֆըթֆըթաց։

**ՖԸԼԱՆ**, *դ. Այսինչ։*

**ՖԸԼԱՆՔՅԱ̈Ս** *(նաև՝ Լիմ), դ. Այսինչ, ոմն։* Տըղեյներ կյա̈րտա̈լո՞ւ կէրթա̈ն, թէ ֆըլանքյասներաց պէս ըստեղ-էնտեղ լիպոզ-լիպոզ ման կուկյա̈ն։

**ՖԸԼԱՆ-ՖԸՍՏԱՆ**, *դ. Ոմն։*

**ՖԸՆԴԸԽ**, *Բմ. գ. Կաղին։*

**ՖԸՇԱԼ**, *չբ. Օձը սուլել։* Օցը ֆշալով կըզա̈րկի։

**ՖԸՇԱՆԳ**, *գ. Փամփուշտ։* Ֆըշանգով իզա̈րկ, սպանեց ծուռ Մուրոյին։

**ՖԸՇՆԱ**, *գ. 1) Բալ։ 2) Բալենի։* Ֆըշնէն իկուց խան թա̈լ տո՞ւս, ֆուկարի ոտ՝ տըընից։

**ՖԸՌ**, *գ. Ումպ։* Մէյ կում//ֆըռ ճո՞ւր//չայ խըմեմ *(Վն.)։* Ֆըռ՝ խինգ փարա։ *Ծան.* – Ֆըռ-*ը* ***երբեմն սավում է կաթակով։***

**ՖԸՌԱԼ**, *չբ. Պտտել, զբոսնել։* Արթունը չի ֆըռա քընած մարթու իտև։

**ՖԸՌԱՆ**, *ած. Զբոսասեր։*

**ՖԸՌԵՆԿԻ**, *ած. Ֆրանսիական։*

**ՖԸՌԸԼԴԱՂ**, *գ, Խարդախություն։*

**ՖԸՌԸԼԴԱՂՋԻ**, *ած, Խարդախ։*

**ՖԸՌԸՆՉԻ**, *գ, Հացագործ։*

**ՖԸՌԹԸՆԱ**, *գ. Փոթորիկ։* Ֆըռթընա ի, գյամի ծով չէլնի։

**ՖԸՌԹՕՆԱ**, *Հթ. գ. Ալեկոծություն, ալեբախություն։*

**ՖԸՌԻԿ** *(նաև՝ Բմ.)*, **ՖԸՌԻԿ³**, *Հթ. գ. Հոլ։* Ֆըռիկ ուր տեղ կըֆըռէր *(Վն.)։*

**ՖԸՌԻՉ**, *Կճ. գ. Հոլ։* Ֆըռիչ կըֆըռա մէ տեղ *(Կճ.)։*

**ՖԸՌՈՆ**, *գ. Փուռ։*

**ՖԸՌՉԱ**, *գ. 1) Խոզանակ։* Ֆըռչով շորերը սրպեց, տո՞ւս էկավ, կընա̈ց։ *2) Վրձին։*

**ՖԸՌՍԱՆԳ**, *գ, Պատեհություն։* Մըկա ֆըռսանգը մերն ի։

**ՖԸՌՖԸՌԻԿ**, *գ. Հոլ։*

**ՖԸՐՍԱՆԳ**, *տե՛ս* **ՖԸՌՍԱՆԳ**։ Էտ պա̈ն անելու խա̈մա̈ր ֆըրսանգ ի պետքյ։

**ՖԸՍՏԱՆ**, *գ. Շրջազգեստ։*

**ՖԸՍՏԸՂ**, *գ. Պիստակ։* Վան ֆըստըղ չըկա, տըրսից կըպիրեն, կըծախեն։

**ՖԸՐԱՆԿԱԽՏ**, *գ. Սիֆիլիս։*

**ՖԻԴԱՆ**, *Լիմ, գ. Հայ հայդուկ։*

**ՖԻԴԱՅԻ**, *տե՛ս* **ՖԻԴԱՆ**։ Ֆիդայիները սարերից ցած իջան։

**ՖԻԹԻԼ**, *գ. Պատրույգ։* Ֆիթիլը մուր ի պըռնի, ծէրը կըտրի։

**ՖԻԼ**, *գ. Փիղ։*

**ՖԻՆՋԱ̈Ն** *(նաև՝ Լիմ), գ. Սուրճի փոքրիկ բաժակ։* Ղայֆէն ֆինջանով կըխըմեն։

**ՖԻՐԱՐ**, *գ. Փախստական։* Էնկյա̈նդա̈ր արին, վոր տըընից փախավ, ֆիրար ինգյա̈վ։

**ՖՈՒԿԱՐԱ**, *ած. Աղքատ, մուրացիկ։* Ծեռը կարճ ի, ֆուկարի մէյն ի։

**ՖՈՒՐԿՈՒՆ**, *գ. Ֆուրգոն:* Բուռնազի ֆուրկուն էկավ: *Ծան. – Իգդիրցիները ռուսական արդյունաբերական ապրանքներն ու նավթը դրոգով էին Վան բերում: Նրանցից մեկի դրոգը Վանում կոտրվում է: Իգդիրցին շատ էժան գնով դրոգը ծախում է Բուռնազյան Գևորգին (Բուռնազի Գևոյին): Այս մարդը նորոգում է դրոգը և բանեցնում: Վանում ընդամենը երկու ֆուրգոն կար՝ ամերիկացիներինը և շվեյցարական՝ գերմանացիներինը: Նրանց ֆուրգոնների անիվները ռետինե շրջանակ ունեին և աղմուկ չէին հանում: Բուռնազի Գևոյի դրոգը, որ վանեցին անվանում էր Բուռնազի ֆուրկուն, աղմուկով լցնում էր շրջապատը և զայրացնում անաղմուկ փողոցի սովոր վանեցուն:*

*Բուռնազի Գևոյի ֆուրկունի մասին կա մի երգ, որն ունի հետևյալ պատմությունը:*

*Կրոկե Տիքրանը հայտնի ոսկերիչ էր՝ բանաստեղծ Տիգրան Ամիրջանյանի փեսան: Շատ կատակաբան, կենսուրախ մարդ էր և պնդում էր, որ ինքն է հնարել այդ երգը, որ Վանում ամենից ավելի տարածված երգն էր 20-րդ դարի սկզբին՝ մինչև 1915 թվականը: Փաստը իսկապես տեղի է ունեցել այսպես: Վանեցիները սիրում էին ընտանիքով Վարագ գնալ: Մեծ ընտանիքի տեր Կրոկե Տիքրանը վարձում է Գևոյի ֆուրկունը, որպեսզի տան մեծ ու փոքրին էլ տեղավորի կառքի մեջ: Սակայն ուղևորությունն անհաջող է անցնում: Դրան ի հեճուկս նա հնարում է այս երգը, որպեսզի անվանարկի Բուռնազի Գևոյի ֆուրկունը: Սակայն ոսկերիչ Կրոկե Տիքրանի համար աշխատող փորագրիչները (կալամքյարներ)՝ Դավիթ և Հովհաննես Տեր-Հովհաննիսյան եղբայրները, որոնցից Դավիթը նույնպես սրամիտ մարդ էր, ասում էին, որ իրենք են հնարել այդ երգը, որովհետև Կրոկե Տիքրանն այլևս* կյӧրծ՝ *փորագրական աշխատանք չէր տալիս իրենց և գտել էր ավելի էժան փորագրություն անողի: Հաստատ չեմ կարող ասել, թե ով է երգի առաջին տարբերակի հեղինակը, սակայն հաստատ գիտեմ, որ շուրջպարի ժամանակ շարունակ սրբագրվում, խմբագրվում ու լրացվում էր երգը: Այստեղ զետեղում ենք այդ երգը նաև որպես բարբառային նմուշ:*

Ուրպաթ առտու աղօթըրնին
Ասինքյ՝ էրթանք Վանից իկյին,
Մեր խուրուզուն տըփենքյ կյետին,
Ուտենքյ-խըմենքյ խյետ մեր քյէֆին։

Կըռկէ Տիքրան ափալ-թափալ
Կընաց խասավ Խաչի փօղան,
Էստեղ թըռավ, էնտեղ թըռավ,
Արաբաջի Կէվօն կընդավ։

Պարի լուս քյե, Կյէվօրքյ աղա,
Ասսու պարին, Տիքրան աղա,
Խէր էլնի, ի՞նչ կա, ասա,
Քյո արաբէն կուտա՞ն քյըրա։
Թողզ արաբէն ես քյե ծառա։

Ծիանքըմ ունեմ թևավոր խավքյ,
Արաբէս ի խրեղէն կառքյ,
Բազար արին քյառսուն կուրուշ,
Խաթրիդ խամար քըսան կուրուշ։
Խաբար արա թող խազըրվեն,
Զում մըշակներ ծիանքյ ճըրեն։

Կիյտեր պիրին պերքն ու պարին,
Էկան լըցվան մէչ արաբին,
Արաբաջի Կյէվօն զօռեց,
Բօլի փօղան մէյ լար քըշեց։

Կյընացին, խասան Ավօյի տար,
Ռասստ էկավ մէյ ճոչ քյանդալ,
Արին-չարին չում խանիցին,
Արաբի թաքյառն էլ կոտրիցին։

Շալէ թելով պատրուսիցին,
Իրենց ճամպախ պըռնին կընացին։
Էկան խասան Ուրպաթ առուն,
Ուր մոռցիր ին խետ կէս ճամպխուն։
Մարթ ճամպիցին, կընդան, պիրին,
Պիրին կապին իտեմն արաբին,
Էն էլ արին պեռն արաբին։

Արաբաջի Կյէվօն զօռեց,
Կարնըրվորա ճամպախ պըռնեց,
Կյընացին խասան Բօրօզաքյար։

Դէ, էլեքյ, էճեքյ, վոր ես քըշեմ,
Քյարեր ժողվեքյ ճամպխու վէրվէն,
Չպեյպիկվի իմ արաբեն,
Էն ծին կըխատնի, տայաղ կացեքյ։

Օրն իրիկուն վերճնայ կյախ,
Արաբէն մընաց գյօ կէս ճամպախ,
Աստղերն էլան, լուսին ինկավ,
Խըրեղէն կառքյ էլ չէրէվցավ։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

# ՍՈՒԹԱՍԱՆ

*Կէլնի չէլնե մէյ թակավոր։ Էսա թակավոր ուր յերկրի մէչ ջուաբ կուտա. «Վով էնըսկընա̈ սութըմ ասի, վոր ասեմ՝ սո՛ւթ ի, իմ թակավորութնի կէս կուտամ ուր (ինոր)»։*

*Խօվիվըմ կուկʼա̈, կասի.*

*– Թակավո՛ր ապրած կէնա(ս), իմ խէր կօռըմ ունէր, վոր էսա-տեղից կըպարզեր, յերկինքʼ ինե աստղեր կըխառնէր։*

*– Կէլնի՛,– կասի թակավոր,– իմ պապիկն էլ չիբուխըմ ունէր. մէյ ծէր կըտընէր ուր պէրան, մէկէլ ծէր կպարզէր, արիվուց կըկըպու-ցէր։*

*– Սութասան ուր կʼըլօ̈խ քʼորէլօվ կէրթա̈ (կէթա̈ տո̈́ւս)։*

*Մէյ թա̈րգի կուկʼա̈, կասի.*

*– Ներօղ մընա(ս), թակավո՛ր, յես շոտ պիտի կʼի, ա̈նկʼընցա։ Էրէկ շատ անձրեվ էկավ (իրե), կէծայներ զա̈րկին (զա̈նին), էր-կինքʼ ճըղվավ, կընա̈ցեր ի կարկըտնէլու։*

*– Խա՛, լավ ես արե,– կասի թակավոր,– ամա աղէկ չիր կար-կըտնե, էս առտուն մէյ քʼիչ անձրեվ թա̈փավ։*

*Էսան էլ կէրթա̈ (տո̈́ւս)։*

*Ախքʼատ (անկուտ) շինականըմ կուկʼա̈ ներս՝ կօտ ընթատակ (ընթի տակ) տըրուկ։*

*– Տո̈́ւ ի՞նչ կուզես, ա՛յ մարթ,– կըխառցուցի թակավոր։*

*– Ջի (ձի, ձիկ) մէյ կօտ վոսկի ես պառքʼ, իկիր եմ (վոր) տանեմ (էկա՝ տանեմ)։*

*– Մէյ կօտ վոսկի՞,– կըզարմանա թակավոր։– Սութ կասես, յես քʼե վոսկի պառքʼ չեմ։*

*– Վոր սութ կասեմ, թակավորութնիտ կէս տո՛ւ։*

*– Չէ՛, աղորթ (դո̈́ւզ) կասես,– (ուր) խոսկ կըփոխի թակավոր։*

*– Աղորթ կասեմ՝ մէյ կօտ վոսկին տո՛ւ։*

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՇՅԱՆ

# ԲԱՌԱՐԱՆ
## ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ

Աշխատասիրությամբ
ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆԻ

Տպագրությունը՝ օֆսեթ, ծավալը՝ 17 տպ. մամուլ,
տպաքանակը՝ ??? օրինակ։

Տպագրվել է